**120. Ո՞ր նախադասության մեջ վերաբերական չկա:**

- 1) Սիայն մի ցավ էր նրան տանջում՝ որդու ամուսնությունն այլադավանի հետ:
- 2) Նա երկի մոռացել է, որ ժամադրված է:
- 3) Մի՞թե դժվար է ճիշտ ժամին ներկայանալ աշխատավայր:
- 4) Տարիներն ամեննին չեին խաթարել նրա գեղեցկությունը:

**121. Ո՞ր շարքում վերաբերական չկա:**

- 1) մշտապես, փոքր-ինչ, տնետուն, լոկ
- 2) անտարակույս, այլուր, բազմիցս, նաև
- 3) սոսկ, երբեք, գլխովին, շուտ-շուտ
- 4) մասամբ, հոտնկայս, երբեկցե, զատ

**122. Ո՞ր շարքի բոլոր բառերն են վերաբերականներ:**

- 1) ահա, իիրավի, անգամ, անկասկած
- 2) սոսկ, մասամբ, հավասար, մի՞թե
- 3) գուցե, իրավամբ, թեկուզ, ա՞նս
- 4) հապա, ցավոր, նույնիսկ, երից

123. Ո՞ր շաբթի բոլոր վերաբերականներն են հաստատական:

- 1) իրավ, անխոս, իսկապես, անտարակույս
- 2) անշուշտ, այնուամենայնիվ, հարկավ, արդարև
- 3) ահավասիկ, իսկեփակ, անպատճառ, մանավանդ
- 4) հիրավի, ինչ խոսք, մինչև անգամ, նոյնիսկ

124. Տրված նախադասության մեջ ընդգծված բառը որպես ի՞նչ խոսքի մաս է գործածվել:

**Համզիստ** կտիրես և Թմուկ բերդին,  
Որ չես կարենում էսքան ժամանակ:

- 1) ածական
- 2) կապ
- 3) գոյական
- 4) մակրայ

125. Տրված բառերի ձևաբանական վերլուծություններից ո՞րն է սխալ:

**Թումներից մեկում բանաստեղծը պատմում է, թե ինչպես էր քշնամին մշակում մինչև կեսօր քաղաքը գրավելու իր ծրագիրը:**

- 1) **թե** -ստորադասական շաղկապ
- 2) **գրավելու** - ապակատար ձևաբայ
- 3) **մշակում** - անկատար ձևաբայ
- 4) **մինչև** -կապ

126. Տրված բառերի ձևաբանական վերլուծություններից ո՞րն է սխալ:

**Եթե տակալին չէր կորցրել հոգին, ապա պետք է ներեր բնկերոջը:**

- 1) **տակալին** - ժամանակի մակրայ
- 2) **հոգին** - ու հոլովում
- 3) **եթե** -ստորադասական շաղկապ
- 4) **պետք է ներեր** -բաղադրյալ դիմավոր ձև

127. Ո՞ր շաբթում բառի ձևաբանական վերլուծության սխալ կա:

**Նա սովորություն ուներ ուշ աշնանը վերջին անգամ այզին մտմելու, դուռ ու ցանկապատ ամրացնելու, որպեսզի ծմբան ցուրտ գիշերներին գայլ ու զազան չպատսպարվեն ներսում:**

- 1) **նա** - անձնական դերանուն, ուղարկան հոլով, **ուներ** - պակասավոր բայ, սահմանական եղանակ
- 2) **այզին** -գոյական, **ու** հոլովում, որոշյալ առում, **մտմելու** - անորոշ դերբայ, սեռական հոլով
- 3) **դուռ** - գոյական, **ծմբ** արտաքին հոլովում, եզակի թիվ, **որպեսզի** - ստորադասական շաղկապ
- 4) **գիշերներին** - գոյական, **զա** հոլովում, ուղարկան հոլով, **չպատսպարվեն** - չեզոք սեռի բայ, ընձական եղանակ

## ԲԱԺԻՆ 4 ԾԱՐԱՀՅՈՒՄՈՒԹՅՈՒՆ

#### 1. Ընդգծվածներից քանի՞ւն են նախադասություն:

- **Ահա, եղբայր, քեզ մի դրոշ, Որ իմ ձեռքով գործեցի:**
  - **Տասնութիւն:** Թվական կյանքիի:
  - **Ելնել ճանապարհ,** խնդրուն հեռանալ...
  - **Թափառում ենք փողոցներով,** ես՝ քո սիրով, **դու` ուրիշի:**

1) երկուսը  
2) երեքը  
3) բոլորը  
4) մեկը

## 2. Նախադասություններից քանի՞ւն են համառոտ:

- Երազում էի մի անկյուն:
  - Այնտեղ կարողանայի ներանձնանալ:

1) մեկը  
2) երկուսը  
3) երեքը  
4) ոչ մեկը

  - Ուսուցիչ էր դարձել:
  - Թղթին հանձնեց մտքերը:

3. Տրված հատվածներում քանի՞ թերի նախադասություն կա:

- Նորից անձըն՝ մշո՞ւշ, ա՞մպ, թախի՞ծ անհուն, տիլքանք հեզ:
  - Սիրտս անուշ խոցեցիր Արևավառ քո սիրով:

1) մեկ  
2) երկու  
3) երեք  
4) չորս

  - Աշնան մշուշում շշուկ ու շրջյուն. Բարդիներն են բաց պատուհանիս տակ:
  - Լճափին քննել, քննվ եմ անցել... Մնացածն ասի թող Որոտանը:

#### 4. Ո՞րք անդեմ նախադասություն չէ:

- 1) Նորից անձրևում է տխուր, միապաղադ:
  - 2) - Ողջո՞ւյն քեզ, պայքա՞ր, կյա՞նք ու տառապա՞նք:
  - 3) Չսիրել, չտենչալ, չկանչել ...
  - 4) Երկրաշարժից փլատակված քաղաք. անմեղ զոհեր:

5. Ո՞ր նախադասությունն է բարդ (նախադասությունները կետադրված չեն):

- 1) Ամբողջ հորիզոնը ծածկված էր ամպերով այգու գողտրիկ տաղավարը թթենու փարթամ սաղարթներով:
  - 2) Օ հիմար տղետ համբակ մարդ դու խոսում ես իմ հոր և արքայից արքայի մասին:
  - 3) Արենացիները հռոմեացիների նման ի պատիվ իրենց կաճառներում մեծ նշանակություն էին տալիս զրուցելու արվեստին:
  - 4) Գրիչները իրենց սեղաններին լուռ ու ինքնասույզ խոնարհված հայոց սքանչելի տառերը դրոշմում են մագաղաքին իրենցից հետո եկողներին հաղորդելու:

6. Ո՞ր նախադասությունն է բարդ (նախադասությունները կետադրված չեն):

- 1) Դարձյալ մնում է մի բուռ հողի խորհուրդը իսկ հինգ միլիարդից միայն մեկ մարդու ներաշխարհը:
  - 2) Բոլրի հետ զնում էր եկեղեցի փորձելով հանապազոյա աղոքքներով փոքր-ինչ քավել մեղքերը:
  - 3) Ամեն մեկը յուրովի պատկերացնելով կատարելությունը ափսոսանքով մերնում է ձգտելով դրախտի:
  - 4) Տեսնես հիմա որ երկրում է իմ սիրելին անցկացնում իր օրերը:

## 7. Ո՞ր նախադասությունը բարդ չէ:

- 1) Մտնելով իր ննջասենյակը՝ մթուրյան մեջ գտավ ինչ-որ տուփ և բացելով կողպեքը՝ հանեց նամակների մի խորձ:
- 2) Համոզվելով, որ գիշերը ճակատամարտը չի սկսվի՝ Վարդանը հրամայեց հերթով քննել, իսկ արթուն գրագնդերին՝ պատրաստ լինել ամեն անակնելալի:
- 3) Հոգեկան մեծ խոռվքի մեջ ընկած՝ Վարդանը դարձյալ ու դարձյալ անդրադառնում էր սիրտը բզկտող մտքին՝ գազանին խոցելուն՝ ներքուստ զգալով մեծ պատասխանատվություն:
- 4) Մահացու հրավառությունը, խորձ-խորձ բարձրանալով, տարրապուծքում էր, ցրվում՝ տեղը զիշելով ավելի խոշոր խրձերի:

## 8. Ո՞ր նախադասությունն է բարդ համադասական:

- 1) Ընթրեցինք շատ տխուր, ոչ ոք չեր խոսում, բոլորս ջանացինք շուտ վերջացնել և վեր կենալ:
- 2) Ընթրիք վերջացնելուց հետո Գրիգորը մայրիկի համար բերեց շինական մեծ գավաթով սուրճ, այն գավաթով, որով միայն հայրը էր խմում:
- 3) Եթք մայրս բռնեց գավաթը, արցունքի մեծ-մեծ կարիլները կախվեցին նրա շագանակագույն խոշոր աչքերից:
- 4) Հանկարծ տեսնելով, որ Գրիգորն էլ է լաց լինում՝ մենք էլ միացանք այդ արցունքներին, լուս, մորմոքիչ արցունքներին:

## 9. Ո՞ր նախադասությունն է ներգործական կառուցվածքի:

- 1) Իր չկշռադատված արարքով նա խորապես կվիրավորի ընկերոջը:
- 2) Իշխանն դեռ երկար նայում էր անորոշ մի կետի:
- 3) Երկու շաբաթ անց երիտասարդը հանդիպեց քահանային:
- 4) Մառախլապատ լուսադեմին հաջորդեց արևային մի եղանակ:

## 10. Ո՞ր հատվածում են ընդգծված բոլոր բառերը նախադասության անդամ:

- 1) Ամայի փողոցում մեզ-մշուշ,  
Լուրջյուն է մնուած,  
Կարուտ է իմ սիրտը **քո** անուշ  
Գզվանքին, ի՞ն **երազ**...
- 2) Լոել է հենովում երգը ցնծության  
Եվ **զուցե** չկար իմ ծնված ժամից,  
Գուցե ես **ինքս** եմ հնարել նրան,  
Որ սուս հուշերով միսիթարեմ ինձ...
- 3) Այսօր եղի՛ր որպես մայր,  
Բարի, **քնքուշ**, նրբազգաց,  
Նստի՛ր խաղաղ մահճիս մոտ,  
**Սուրբ** զիշերին հետս լաց...
- 4) Մենք բաժանված ենք: Օրերի փոշին  
**Դեռ** չի աղոտել քո դեմքը գունատ,  
**Բայց** ես օտար եմ արդեն այն հուշին,  
Ուր վեհ էր երազը, ու բախտը՝ ժատ:

## 11. Ո՞ր նախադասության մեջ բաղադրյալ ստորոգյալ կա:

- 1) Գիտեր, որ իրեն օրեր շարունակ տանել-բերելու են:
- 2) Նա արդեն ձեռք էր բերել օլիմպիադային մասնակցելու իրավունք:
- 3) - Անանի ջուրը խմելո՞ւ է,- հարցրեց զրոսաշրջիկը:
- 4) Ընկերոջը տուն գնալիս էր հանդիպել:

## 12. Ո՞ր հատվածում բաղադրյալ ստորոգյալ չկա:

- 1) Թանապորի տաք գոլորշին  
Գերանին առնում  
Եվ սյունն ի վար գլոր-գլոր  
Ուլունք էր դաշնում:
- 2) Ես ու դու էլ շղթայված ենք իրարու,  
Հավերժաբար երազում ենք միշտ իրար...
- 3) Երկի բան է պատահել.  
Երևի տարիներն անսիրտ  
Իմ սրտի կրակը տարել,  
Տարել են ու հետ չեն բերել...
- 4) Այստեղ է լացել իմ մայրը  
Մորմոքն իր և իր օրորը,  
Այստեղ այնպես անձայր է  
Թախիծը և այնպես խոր է:

## 13. Ո՞ր հատվածում բաղադրյալ ստորոգյալ կա:

- 1) Ու պետներ, որ չեն պղծել իրենց շուրբերն անեծքով,  
Պիտի գովեն քո նոր կյանքը նոր երգերով, նոր խոսքով:
- 2) Ինձ համար հերիք էր արդեն  
Ժայռալդ ու լալդ...
- 3) Ո՞վ իմանա, պետք է անցնեն  
Մութ աշխարհից, սև ջրից.  
Ո՞վ իմանա, պետք է փախցնեն  
Յոթգլխանի դներից:
- 4) Նայի՛ն, դստրի՛կ, իշխանազուն  
Ես քաջերին լայնալանց,  
Այժմ պիտի հանդես դուրս գան,  
Պայքար մտնեն քո առաջ...

## 14. Ընդգծվածներից ո՞րը որոշիչ է:

- 1) Ես հիճգ հազար մղոն հեռացել եմ տնից, միշտ հեռու եմ եղել և միշտ կլինեմ:
- 2) Ես կուգենայի ձեզ համար մի նոր երգ նվագել այս ոսկեփող շեփորով:
- 3) Նա լուր ու հանդարտ կանգնել էր արտի եզրին:
- 4) Քո հայրը մեր ժամանակի ճանաչված բանաստեղծներից մեկն է:

## 15. Ո՞ր նախադասության մեջ ածականով արտահայտված որոշիչ կա:

- 1) Կապարի նման ծանրացած լրությունը ինձ ավելի անշարժ դարձեց:
- 2) Անցնում էր ոսկի ամառը, անցնում էր ունայն ինձ համար:
- 3) Երբ հիշում եմ մեր փողոցը, ամենից ավելի իմ աշքի առաջ պատկերանում են իմ մանկության ընկերները:
- 4) Ինձ այնպես էր թվում, թե հոռնեական զորքերն անցել են հենց մեր դռան առջևից:

## 16. Նշված համարներով բառերից ո՞րն է հատկացնիչ:

**Նա միանգամից զլիսի(1) ընկալ, որ այդ զրբերի(2) մասին ամրող խոսակցությունը իր(3) ուշադրությունը շեղելու համար է, ուստի սկսեց ուշադրություն չդարձնել հյուրերի(4) վրա:**

- 1) առաջինը
- 2) երկրորդը
- 3) երրորդը
- 4) չորրորդը

**17. Ո՞ր նախադասության մեջ բացահայտիչ չկա (նախադասությունները կետադրված չեն):**

- 1) Ասորեստանի քազուի Շամիրամը լսած լինելով Արայի բոլորին ապշեցնող արտառոց գեղեցկության մասին տոշորփում էր նրան տիրանալու անհազ ցանկությամբ:
- 2) Այդ առեղծվածային դրամները իբրև արծաթյա և ոսկյա բախտավորության խորհրդանիշներ հասուն կտրվել էին նոր տարվա համար:
- 3) Նրան մեծ պատիվներով ու շուրջով առաջնորդեցին Աշոտ արքայազնի հոր Գագիկի նստավայրը:
- 4) Միակ մարդը որ կողմնակից էր բյուզանդական կայսեր Կեսարի հրամանին նրա հավատարիմ զինակիցն էր:

**18. Ո՞ր նախադասության մեջ բուն բացահայտիչ կա (նախադասությունները կետադրված չեն):**

- 1) Արենքում հնագույն քաղաքակրթության օրրանում գիտաժողով տեղի ունեցավ:
- 2) Ակրոպոլիսում եղան կիրակի օրը ժամը տասին:
- 3) Երեկ ուշ երեկոյան տեսա Օլիմպոսը:
- 4) Այդ օրը այդ ճակատագրական օրը երկինքը պայծառ կապույտ էր:

**19. Ո՞ր հատվածում ուղիղ խնդիր չկա:**

- 1) Քո գլխի վերև ծածանվող ամպի  
Թավշյա ստվերով  
Սրբիք ճակատիդ քրտինքը մաքուր:
- 2) Ես կզամ, կնատեմ հողիդ,  
Եվ հողդ գորանալ կտա,  
Ամեն մի քարդ ինձ կառնի,  
Մտքիս մեջ խորանալ կտա:
- 3) Երբ հոգնում էին օրվա հոգսերից,  
Փարարփում էին մի կարիլ մուրով,  
Երկինքներն էին մտնում երազի  
Եվ հատիկ-հատիկ աստղ էին ուտում:
- 4) Հոգնել եմ հետ նայելուց...  
Դեռ աստղեր կան առջևում,  
Որոնք կարող են շողալ  
Իմ աշքաբաց աչքերում:

**20. Ո՞ր նախադասության մեջ ուղիղ խնդիր չկա:**

- 1) Որքան ենք մենք խաղացել,  
Իրաք սիրել ու ծեծել:
- 2) Ես ու դու էլ շղայված ենք իրարու:
- 3) Թաղի կանայք, միմյանց տներ գնալով, պատմում էին օրվա իրադարձությունները:
- 4) Ծիծաղում էնք միմյանց վրա, և նա ինձ ծաղրում էր, զայրացնում:

**21. Ո՞ր նախադասության մեջ դերբայական դարձված չկա:**

- 1) Կանաչության անուշ բույրերով հագեցած թմրաբեր օդից նա քայլում էր հաճելի մի զիսապտույտով:
- 2) Այդ նշան էր, որ նրան դուր էր գալիս հեղինակի մտքերով ապրելը:
- 3) Սնդիկի փայլ արձակող ջրային հեռուներում ուրվագծվում էին լեռնային կղզիները:
- 4) Հիվանդը լուր նայում էր գորշագույն առաստաղին զարմացած ու ակնապիշ:

**22. Տրված նախադասություններում ընդգծված դեբբայական դարձվածների շարահյուսական պաշտոնները պատասխանների ո՞ր շարքում են ճիշտ նշված:**

- ա. Շանապարհորդները ճշտեցին վերելքից առաջ մի փոքր հանգստանալու վայրը:
- բ. Նոր իմացվեց խմբի՝ արտասահմանից վերադառնալը:
- գ. Օդանավակայանում բարձրախոսով հայտնեցին Քեյլութից ժամանող ինքնարիոի վայրէջք կատարելը:
- դ. Նոր ձախողման պատճառը ուսուցչի հանձնարարությունները ժամանակին չկատարելն էր:

1. Ենթակա, 2. ստորոգելի, 3. որոշիչ, 4. ուղիղ խնդիր

- 1) ա -3, թ - 4, զ - 1, դ - 2
- 2) ա - 2, թ - 4, զ - 1, դ - 1
- 3) ա - 3, թ - 1, զ - 4, դ - 2
- 4) ա - 4, թ - 4, զ - 1, դ - 3

**23. Ո՞ր տարրերակում է ստորադաս նախադասությունը ենթակա:**

- 1) Զգում եմ, որ մենք կհանդիպենք:
- 2) Ծերունուն զարմացնում էր այն, որ իրեն շատ հոգատարությամբ էին վերաբերվում:
- 3) Նորան, ում երբեք չի ցանկանա հանդիպել դեմ առ դեմ, տեսա փողոցում:
- 4) Թիթեռը շտապում էր դաշտ, որ երկար մնար ճերմակ շուշանների մեջ:

**24. Ո՞ր տարրերակում է ստորադաս նախադասությունը ենթակա:**

- 1) Իմացի՛ր, որ մեր օրերի խորքում ես ել եղել կրքերի գերին:
- 2) Ու թվում է, որ ողջ կյանքս է հավերժական զառանցանք:
- 3) Զգում էինք, որ շար սովու կա մի:
- 4) Միայն գիտեն, որ կյանքում ինչ-որ երգեր եմ երգել:

**25. Ո՞ր տարրերակում ենթակա ստորադաս նախադասություն կա:**

- 1) Երբ ընկերս լրեց, իմձ թվաց, թե գետակը նույն հանգով է պատմում:
- 2) Խոսում էին հողի մասին, զանգատվում էին, որ հողը առաջվա բերքը չի տալիս:
- 3) Գիտի, որ ինքը զառամյալ է արդեն, քայլելիս հենվում է փայտին:
- 4) Ամենազարմանալին այն էր, որ ոչինչ չէր փոխվել իմ մանկության գյուղում:

**26. Ո՞ր տարրերակում է ստորադաս նախադասությունը ենթակա:**

- 1) Իմքս ել չիմացա, թե ինչու պատճառ բռնեցի գիրքը և հրաժարվեցի ճաշի գնալուց:
- 2) Աշակերտներին պատվիրել էի, որ շատ մարդ կանչեն հանդեսին:
- 3) Եվ ոչ որ չզիտեր, որ Լառ-Մարգարը առվի հումը սարքելիս մտքով ուրիշ տեղ էր:
- 4) Ինչից է, որ չի սպառվում երգի քո ալաշարը:

**27. Ո՞ր տարրերակում ստորադաս նախադասությունը ենթակա չէ:**

- 1) Պատահում էր, որ զայրութից փայլատակում էին Լևոնի աշքերը:
- 2) Ո՞վ ստիպեց եղնիկին, որ պապակ սրտով մազլցի սեզ ժայռերը:
- 3) Պարզ է, որ վարսավիրը անհույս սիրահարված է մի երգչուհու:
- 4) Ստույգ է միայն այն, որ Մյուղը հնուց ի վեր իր տեղում է:

**28. Ո՞ր տարրերակում ստորոգելի ստորադաս նախադասություն կա:**

- 1) Ես գիտեմ, որ դու մի քանի լեզու հրաշալի գիտես:
- 2) Իսկական հայրենասերը նա է, ով իր կյանքը չի խնայում հանուն հայրենիքի:
- 3) Դու պարտական ես նորան, ով թեզ կյանք է պարզեել:
- 4) Հենց դա է այն, ինչ ես երկար ժամանակ փնտրել եմ:

**29. Ո՞ր տարրերակում հատկացուցիչ ստորադաս նախադասություն կա:**

- 1) Մեզ վաղուց էին պատմել նրա մասին, ով բազում քաջագործություններ էր կատարել և ազատել երկրոր քշնամիներից:
- 2) Մառախուղն ինձ բաքցրեց նրանց աչքից, ովքեր արդեն շուրջ երեք օր կրնկակոյն հետևում էին ինձ:
- 3) Մուշեղը մտավ այն արհեստանոցը, որ գտնվում էր քաղաքի կենտրոնական շուկայում:
- 4) Այս գավաթը նրանն է, ով հաղթանակ կտանի սրամարտում:

**30. Քարդ ստորադասական նախադասություններից ո՞րն ունի բացահայտիչ ստորադաս նախադասություն:**

- 1) Մարգարը նայեց ծովեզրի լեռնաշղթային, որի գագաթներին ամպը նստել էր խխունջի պես:
- 2) Անչափ շնորհակալ եմ քեզ, որ ինձ այդ բոլոր փորձությունների միջով անցկացնողն ես:
- 3) Այն օրը, երբ ձեռք պիտի մեկնեի իմ ընկերություն, պատահեց անակնկալ մի դեպք:
- 4) Ինչ լա՝ կ է, Սոնա, որ քո կրակում վառվում եմ ես ել:

**31. Ո՞ր քարդ ստորադասական նախադասության մեջ տեղի պարագա ստորադաս նախադասություն կա:**

- 1) Ես կուզեի արևավառ անապատը ամայի, ուր մեն-մենակ ու վշտահար քավլառեի ու լայի:
- 2) Ես հետ չեմ դառնա ժանտ քաղաքները, որոնցում քազմաժխոր կրքերն են եռում:
- 3) Տա՛ն ինձ, իմ սի՛րտ, այնտեղ, ուր բնավ չեն եղել մարդիկ:
- 4) Որտե՞՞ն է ընկած այն քարը հիմի, որ հողիս վրա շիրմ պիտ լինի:

**32. Ո՞ր տարրերակը տեղադրելու դեպքում քերականորեն և տրամադրանորեն ճիշտ նախադասություն կստացվի:**

*Գիշերների պես սևաբոյր են և արևի պես ոսկի են այդ աղջկների մազերը, որ փոթորկվում են նրանց նազելի .....:*

- 1) պարանոցով
- 2) պարանոցներին
- 3) պարանոցներում
- 4) պարանոցները

**33. Ո՞ր հոլովաճելը կամ կապային կառույցը պետք է տեղադրել նախադասության մեջ:**

*Պրոմեթսը պատմում է նրան իր ծանր ..... և գուշակում, թե իրեն դեռ ինչ քաջագործություններ են վիճակված անելու:*

- 1) ճակատագրի առնչությամբ
- 2) ճակատագրից
- 3) ճակատագրի շուրջ
- 4) ճակատագրերը

**34. Ո՞ր տարրերակը տեղադրելու դեպքում քերականորեն և տրամադրանորեն ճիշտ նախադասություն կստացվի:**

*Ամայի արտերի ..... անցնում էր Հառ-Մարգարը, ջուր տալիս ծարավ հասկերիմ:*

- 1) մեջերից
- 2) միջով
- 3) մեջ
- 4) միջն

35. Ո՞ր տարրերակը տեղադրելու դեպքում քերականորեն և տրամաբանորեն ճիշտ նախադասություն կստացվի:

*Ամրոխը, ..... ծով էր կապել հրապարակում և ալիք-ալիք կանգնել, մի մարդու պես գետին խոնարհեց:*

- 1) երք
- 2) մինչ
- 3) քանի դեռ
- 4) ոլ

36. Ո՞ր տարրերակը տեղադրելու դեպքում քերականորեն և տրամաբանորեն ճիշտ նախադասություն կստացվի:

*Քայց այդ մեծ քարայրում, ..... սև ջուր է լուրս հորդում, իբրև թե ասլում է օձերի քազավորը՝ զոհարապատ քազր զլիսին:*

- 1) ինչով
- 2) որից
- 3) քանի որ
- 4) թեև

37. Ո՞ր տարրերակը տեղադրելու դեպքում քերականորեն և տրամաբանորեն ճիշտ նախադասություն կստացվի:

*Եվ ..... ամեն մեկը ճգնում էր իր հոգու գեղեցկությունը դրսնորել:*

- 1) նրանցից
- 2) նրանց մեջ
- 3) նրանց
- 4) նրանք

38. Ո՞ր տարրերակը տեղադրելու դեպքում քերականորեն և տրամաբանորեն ճիշտ նախադասություն կստացվի:

*....., որը զտնվում էր Արենքի մոտակայրում՝ դիցարանական հերոս Ակադեմոսի անոնք կրող պարտեզում:*

- 1) Հին Հունաստանում Պլատոնի հիմնած փիլիսոփայական դպրոցը կրում էր Ակադեմիա անոնք
- 2) Ակադեմիա անոնք էր կրում Պլատոնի հիմնած փիլիսոփայական դպրոցը Հին Հունաստանում
- 3) Հին Հունաստանում Ակադեմիա անոնք էր կրում Պլատոնի հիմնած փիլիսոփայական դպրոցը
- 4) Ակադեմոսի փիլիսոփայական դպրոցը Հին Հունաստանում հիմնել էր Պլատոնը

39. Ո՞ր տարրերակը տեղադրելու դեպքում քերականորեն և տրամաբանորեն ճիշտ նախադասություն կստացվի:

*Եվ դառնագին ողբում էր Անանդան անհույս ու հոգեմաշ և լայիս էր առանց արցունքի, .....*

- 1) թե մի՞թե իրավ վատ է մահը, մի՞թե այն այդքան տաժանելի է:
- 2) քանի որ իմքը նզովել է կյանքը:
- 3) սակայն հեղձամաղձուկ էր աշխարհը և տաղտկալի:
- 4) որովհետև վաղուց է, որ քարացել էին արցունքները նրա աշքերում:

40. Ո՞ր տարրերակը տեղադրելու դեպքում քերականորեն և տրամաբանորեն ճիշտ նախադասություն կստացվի:

*Տարերային ահեղ ուժերը մեզ կիսեցին, բաժանեցին առժամանակ,* .....

- 1) շնայած բոհութոհի մեջ էին ժամանակի ու տարածության բոլոր իրերը:
- 2) որոնք անցան մի վայրկյանի պես:
- 3) որ անպարտելի կարոտով համակված՝ անթիվ դարերից հետո նորից գտնենք իրար:
- 4) քայց միշտ անբաժան ու միացած, անմեկին սիրով, իրարից անհագ:

**41. Ո՞ր տարրերակը տեղադրելու դեպքում քերականորեն և տրամաբանորեն ճիշտ նախադասություն կստացվի:**

*Սուտիկ էլեկտրակայանից մոռացել էին միացմել Ծմակուտի լույսերը, իսկ մեծ լուսինը միայն փայլում էր և չէր ողողում տները, որովհետև.....*

- 1) բանձր անտառը քնած էր:
- 2) մարդիկ հնաձից եկել էին ու քնել, և հարկավոր չէր ո՛չ լույս, ո՛չ զրույց:
- 3) գյուղը տար պատուհաններով նայում էր կայարանի խաղաղությանը:
- 4) մթում վարարել էր հեղեղատը:

**42. Ո՞ր տարրերակը տեղադրելու դեպքում քերականորեն և տրամաբանորեն ճիշտ նախադասություն կստացվի:**

*Երբ Լուսաստղը դժգումացավ ու կորավ կապույտի մեջ, .....*

- 1) որ շուտով արել պիտի ծագի:
- 2) ձորի բարձր ժայռերը մանրանում են, նոսրանում:
- 3) նրա առջև բացվեց անեզր տափաստանը:
- 4) օդը մաքուր և թափանցիկ էր լինելու, ինչպես սրբած ապակի:

**43. Ո՞ր տարրերակը տեղադրելու դեպքում քերականորեն և տրամաբանորեն ճիշտ նախադասություն կստացվի:**

*Լիլիթը, աղբյուրի մոտ նստած, ....., նայում էր դրախտի աստղագարդ երկնքիմ:*

- 1) և աստղերի հրաբորք ողկույզները արբեցնում էին նրա սիրտը մի խորհրդավոր տեսնչանքով
- 2) ականջը դրած նրա բյուրեղյան նվազին
- 3) զարքնեց սխակների սիրահոյզ դայլայլներից
- 4) անհամբեր մի քանի անգամ անցնել-դառնալով աղբյուրի շուրջը

**44. Ո՞ր տարրերակը տեղադրելու դեպքում քերականորեն և տրամաբանորեն ճիշտ նախադասություն կստացվի:**

*..... , որ մեր պատմության մեջ առաջիմ անգամ հայրական ավարտ էին ունենալու:*

- 1) Պատերազմական գործողություններ էին ծավալվում Արցախի ռազմաճակատներում այդ ժամանակ
- 2) Պատերազմական գործողություններն այդ ժամանակ ծավալվում էին Արցախի ռազմաճակատներում
- 3) Արցախի ռազմաճակատներում ծավալվում էին պատերազմական գործողություններ այդ ժամանակ
- 4) Այդ ժամանակ Արցախի ռազմաճակատներում ծավալվում էին պատերազմական գործողություններ

**45. Ո՞ր տարրերակը տեղադրելու դեպքում քերականորեն և տրամաբանորեն ճիշտ նախադասություն կստացվի:**

*Զայնը ալիքվելով հասսավ ամձավին, ....., և նորից տիրեց լարված լուրջում:*

- 1) ինչքան էլ լեռնալանջը բուսականությունից գորկ էր
- 2) իսկ վերին այրերի մոտ, ցից-ցից քարերին թառած, հեռուներին են նայում հպարտ արծիվները
- 3) որ ահարկու երախի պես կլանեց նրան
- 4) որ զրնգուն երգի պես տարածվեց շրջակայքում

**46. Ո՞ր տարրերակը տեղադրելու դեպքում քերականորեն և տրամաբանորեն ճիշտ նախադասություն կստացվի:**

*Պատահեց այնպես, ..... , որն օժտված էր բովանձով, բայց զորկ էր կանացի պարկեշտությունից:*

- 1) որ Դալիլա անունով մի կնոջ սիրահարվեց Սամսոնը
- 2) ինչպես Սամսոնը սիրահարվեց Դալիլա անունով մի կնոջ
- 3) որ Սամսոնը սիրահարվեց Դալիլա անունով մի առաքինի կնոջ
- 4) որ Սամսոնը սիրահարվեց Դալիլա անունով մի կնոջ

**47. Ո՞ր տարրերակը տեղադրելու դեպքում քերականորեն և տրամաբանորեն ճիշտ նախադասություն կստացվի:**

*....., որն ակնթարթորեն կկուրացնի և ակնթարթորեն էլ կանիետանա:*

- 1) Հրավառության նման է մարդու տաղանդը՝ առանց աշխատանքի
- 2) Առանց աշխատանքի հրավառության է նման մարդու տաղանդը
- 3) Առանց աշխատանքի մարդու տաղանդը նման է հրավառության
- 4) Առանց աշխատանքի հրավառության է նման տաղանդը մարդու

**48. Ո՞ր տարրերակը տեղադրելու դեպքում քերականորեն և տրամաբանորեն ճիշտ նախադասություն կստացվի:**

*Նա լսում էր անտուն, հալածական քամուն, .....*

- 1) որ հավաքել էր իր անկայան, անհատնում ճանապարհները անցնելիս:
- 2) որը հնչում էր զօրուգիշեր հազար-հազար մեղուշ ձայներով:
- 3) որովհետև նրա հոգին լսում էր նրանց երգերը:
- 4) որ բուրմունքի մորմորով գեղգեղում էին սերն ու բյուրեղային արցունքները:

**49. Փակագծերում տրված բառերի ձևափոխության և նախադասության մեջ տեղադրման ո՞ր տարրերակն է ճիշտ:**

*Հրամեցու ..... նկատեցի մի բան. Լևոնը անհոյս ..... էր ..... , սակայն չէր տեսնում ..... բաժանող անջրպետը:*

(1.օրիորդ, 2.ինքը , 3.տալ, 4.սիրահարվել)

- 1) տալով, օրիորդին, սիրահարվել, իրենց
- 2) տալուց, օրիորդին, սիրահարված, իրենցից
- 3) տալիս, սիրահարվում, օրիորդին, իրենց
- 4) տալիս, սիրահարված, օրիորդին, իրենց

**50. Փակագծերում տրված բառերի ձևափոխության և նախադասության մեջ տեղադրման ո՞ր տարրերակն է ճիշտ:**

*Երբ երեխաներից մեկը բարձրացավ լուսամուտը և սկսեց ..... բակել, հաջի Սողոմոննը, արագ կերպով ..... լուսամուտը, բռունցքի ..... վայր զորեց .....:*

(1. բարձրանալ, 2. աղմուկ, 3. բաց անել, 4. հարված)

- 1) աղմուկով, բաց անելով, հարվածով, բարձրացողին
- 2) բաց անելով, աղմուկով, հարվածով, բարձրացրին
- 3) հարվածեց, բաց արեց, բարձրացավ, աղմուկին
- 4) բարձրանալով, բաց անելով, հարվածով, աղմկողին

**51. Փակագծերում տրված բառերի ձևափոխության և նախադասության մեջ տեղադրման ո՞ր տարրերակն է ճիշտ:**

Սի անմարդաբնակ ժայռոտ վայր կա .... հեռավոր ծայրում՝ սկյութների երկրում, որ դժմատեսիլ ժայռերմ իրենց սուր .... անկերջ .... ամպերի մեջ, իսկ հեռվում .... թեթև մշուշով պարուրված՝ Կովկասյան լեռների զագաքները:

(1. աշխարհ, 2. գագաթ, 3. միարձվել, 4. սպիտակին տալ)

- 1) աշխարհի, գագաթներով, միարձվում են, սպիտակին են տալիս
- 2) աշխարհում, գագաթներով, միարձվում են, սպիտակին տվեցին
- 3) աշխարհի, գագաթները, միարձվում են, սպիտակին տվեցին
- 4) աշխարհի, գագաթներով, միարձվելով, սպիտակին են տալիս

**52. Փակագծերում տրված բառերի ո՞ր հերթականությունն է համապատասխանում նախադասության մեջ դրանց տեղադրման ճիշտ կարգին (բառերը տրված են ուղիղ ձևով):**

Դա մի ..... գեղեցկատես, ..... կազմվածքով երիտասարդ էր, ձեռքերն ու ոտքերը ..... էին, ..... կիներ քսանիհնգ-քսանվեց տարեկան:

(1. հիանալի, 2. արտաքուստ, 3. մկանուտ, 4. բարձրահասակ)

- 1) 1, 3, 2, 4
- 2) 4, 1, 3, 2
- 3) 1, 2, 4, 3
- 4) 3, 2, 4, 1

**53. Փակագծերում տրված բառերի ո՞ր հերթականությունն է համապատասխանում նախադասության մեջ դրանց տեղադրման ճիշտ կարգին (բառերը տրված են ուղիղ ձևով):**


Սարոյանը զրում էր՝ ..... իր .... արվեստագետներից մեկի՝ Անսոն Չեխովի .... սկզբունքին. «Իրավացի է նա, ով անկեղծ .....»:

(1. եմ, 2. հետևել, 3. սիրել, 4. հոչակել )

- 1) 4, 2, 1, 3
- 2) 2, 4, 1, 3
- 3) 4, 3, 2, 1
- 4) 2, 3, 4, 1





**54. Ո՞րն է տրված նախադասության գծապատկերը:**

Թեև լեռներից իջնող վարար ջրերը չորս կողմից շրջապատել են մեզ, իողը երերում է դարձել բայց, այնուամենայնիվ շատ հաճախ ենք գնում զրուանքների, որ ծառերի տակ՝ քաղցրահամ աղբյուրների ակունքներում խնջույքներ անենք:







**55. Ո՞րն է տրված նախադասության գծապատկերը:**

Հենց զյուղից դրու եկամբ ու մտամբ մարզագետին, այն քոչումը դարձյալ եկավ ու սկսեց քրնել ու գետնին զարնվել մեր ոտքերի տակ:







**56. Ո՞րն է տրված նախադասության գծապատկերը:**

Ուզանք չգիտեր՝ ինչ է ստեղծագործելլ, չէր հավատում, որ կան մարդիկ, որոնց ուղեղի ծալքերում գեղեցիկ զանձի նման քանակութեք բան է լինում քաքնած:







**57. Ո՞րն է տրված նախադասության գծապատկերը:**

Հայրս ինձ պատում էր քաղաքացիական կոհիվներից, որոնց մասնակցել էր Ուսաստանում, և նա զոնում էր, որ պատերազմի ամենածանր տեսակը քաղաքացիական պատերազմն է:







**58. Ո՞րն է տրված նախադասության գծապատկերը:**

Թող ես տգեղ լինեմ, ոչինչ, բայց ինչ-որ մեկը՝ գեղեցիկ, թող ես աղքատ լինեմ, բայց ինչ-որ մեկը՝ հարուստ, թող ես դժբախտ լինեմ, բայց ինչ-որ մեկը՝ երջանիկ:







## 59. Ո՞րն է տրված նախադասության գծապատկերը:

Թեև բարի էիմ իրենք, բայց չէիմ սիրում վաս մարդկանց և դժկամությամբ էիմ մրանց տեղափոխում իրենց մոտ:







## 60. Ո՞րն է տրված նախադասության գծապատկերը:

Արքան բառերը ձգեց, որպեսզի իր խոսքերի ճշմարտությունը երկար հնաեր օդի մեջ, չխամրեր հանկարծ, չկորցներ համոզությունը:







## 61. Ո՞րն է տրված նախադասության գծապատկերը:

Արքան զիտեր, որ Դրաստամատն այն մարդկանցից չէր, որոնց կարելի էր համոզել, խնդրել կամ ստիպել:




## 62. Ո՞րն է տրված նախադասության գծապատկերը:

Նա, ով չորել էր գետնիմ ու ծնոտը հենել էր ցամկապատիմ, կանգնեց անսպասելի, լարվածությունից քրոնեց՝ կարծես հիշելու, թե ինչու ոտքի ելավ:




**63. Ո՞րն է տրված նախադասության գծապատկերը:**

Թվում էր, թե ահա որ որ է կլուանա, զետնից կվերցնի մի մեծ քարի կտոր ու կշարուի փախչողի ուղղությամբ:




**64. Ո՞րն է տրված նախադասության գծապատկերը:**

Կարծես ինքը զառամյալ մի ծերուկ լիներ, որ հաճույք էր ստանում՝ տեսնելով, թե ինչպես են ջահելները ախտժակով ոչնչացնում սեղանի քարիքները:




**65. Ո՞րն է տրված նախադասության գծապատկերը:**

Նա ավելի քան վստահ էր, որ ընդունարանի երկրորդ դրան վարագույրից այն կողմ շրեղ սենյակներ կային, որոնք նախատեսված էին միայն այն մարդկանց համար, ովքեր արքային հավատարիմ էին:




**66. Ո՞րն է տրված նախադասության գծապատկերը:**

Նա, ով իր ամբողջ կյանքում երազել էր հոգևորական դառնալ ու աստծուն նվիրաբերվել, իրենից անկախ ականջ դրեց արյան հեռավոր կանչերին և հասկացավ, որ իր իսկական կոչումը սկզբից ևեր եղել էր Նանեի պաշտամունքին ծառայելը:




## 67. Ո՞րն է տրված նախադասության գծապատկերը:

Քանի որ հայրս ուրախ խառնվածք ուներ, ու խործ էլ պատկերավոր էր, միշտ նա էր ղեկավարում հայկական առաստ սեղանները, որ բացվում էին հատկապես աշնանը:




## 68. Ո՞րն է տրված նախադասության գծապատկերը:

Երբ ես լսեցի Գարիբալդիի մարտահրավերը, սիրու թնդաց, բողեցի ծնողներիս, զինավառվեցի ու բազեի այն բռա նրա մոտ:




## 69. Ո՞րն է տրված նախադասության գծապատկերը:

Սինչև առաջին օքնանը հասանը, ես այնքան խոռված էի, որ ամենին չնկատեցի, որ մեր ընկերներից մեկը պակաս էր:







## 70. Ո՞րն է տրված նախադասության գծապատկերը:

Երբեք չեմ մոռանա՝ ինչպես առաջին անգամ ներս մտանք և սեղանի մոտ շարված աթոռների շարքում երկու ազատ տեղ գտնելով՝ նստեցինք:







## 71. Ո՞րն է տրված նախադասության գծապատկերը:

Իսկ մի օր նա, եթե սպիտակ ձիմ հեծած՝ շրջում էր քաղաքում, տեսավ, որ հրապարակում ահազիմ բազմություն էր հավաքվել:







## 72. Ո՞րն է տրված նախադասության գծապատկերը:

Հաստ հիասքափիեցինք և ապշեցինք, որովհետև միշտ լսվ իրեր էր բերում, բայց վիորձեցինք հնարավորինս չդրսնորել մեր դժգոհությունը:







## 73. Ո՞րն է տրված նախադասության գծապատկերը:

Ես բացառեցի՝ ինչու եմ եկել, և ասացի, որ հետո օտարերկրացի հյուր կա, որմ ուզում է ծանորանալ իրենց հետ:







## 74. Ո՞րն է տրված նախադասության գծապատկերը:

Այժմ բվում էր՝ ամրոցը սուզ է մտել, և նրա արտաքին պատկերը ոչ բե զորություն, այլ լքածություն ու հուսահատություն էր արտահայտում:







**75. Ո՞րն է տրված նախադասության գծապատկերը:**

Միակ ուղղորդ, որ լույսային նստած էր լաստանավի աջ եզրին, մի ձեռքով խաղում էր նավակողի հետ, մյուսով՝ ջրի ալիքների հետ և ասես շոյում էր չարաճճի ալիքները, որոնք հրում էին իրար ու մի վայրկյանում անհետանում:




**76. Ո՞րն է տրված նախադասության գծապատկերը:**

Բացեցի բակի ճռացող դուռը և նոյն ակնթարքին տեսա, որ երիտասարդ մի կին կարմրատակած կրացել է բռնի վրա, իսկ կողքին նստած է մի շիկահեր աղջիկ:




**77. Ո՞ր նախադասությունն է համապատասխանում տրված գծապատկերին:**




- 1) Հանկարծ անծանոր գեղեցկուիհն դեպի նրանց շրջվեց, և նրա հայացքը հանդիպեց տիկնոց հայացքին, որը, նստած օքյակի անկյունում, զբաղված էր ինչ-որ ազդագրի ընթերցանությամբ:
- 2) Նրա կինը, որ քանիհետ տարեկանից ավելի չէր կարող լինել, այնքան քաքու էր, որ առաջին հայացքից ավելի մանկահասակ աղջկա էր նմանվում, քան կնոջ:
- 3) Շուտով նրանցից մեկի դուռը բացվեց, և ներս մտան մի տղամարդ ու մի կին, որոնք անմիջապես նստեցին իրենց արոռներին և լուս սկսեցին նայել հանդիսականներին:
- 4) Այն եղանակը, որով նա մի առանձին արագությամբ արտասանեց այդ բառերը, իսկույն ցույց էին տալիս, որ նա հասարակ մարդու կին չէր:

**78. Ո՞ր նախադասությունն է համապատասխանում տրված գծապատկերին:**




- 1) Եվ քննության ձայնն է միայն, որ ընդունակ է ցույց տալու ուղիղ ճանապարհը, միայն թե մարդ պետք է ականջ ունենա լսելու, հոգի ունենա ըմբռնելու և խելք ունենա հասկանալու:
- 2) Մի փոքր դիմիքը քո առողջ բանականությանը, այն կրթությանը, որ ստացել ես, այն գրքերին, որ կարդում ես, և կտեսնես, որ այդ ցնդաբանությունները ժանգոտ գրոշի արժեք անգամ չունեն:
- 3) Ուրեմն մոռանանք իսպառ, որ աշխարհի երեսին եղել է մեկը, որն իր սեփական արյունով հանել է մարդկությանն անասնականությունից, փրկել նրան հեթանոսության կապանքներից, բարձրացրել նրան մինչև երկնքի աստղերը:
- 4) Քո վարմունքով դու միայն հաստատում ես, որ իմ ասածը ճշմարիտ է, որ քո հոգին ու միտքը շղբայված են այն աստիճան, որ չես ուզում թույլ տալ ոչ մի ազատ քննադասություն և ոչ մի այլընտրանք:

**79. Ո՞ր նախադասությունն է համապատասխանում տրված գծապատկերին:**




- 1) Դրանք կամ անմիտ բառեր են, կամ դրանցից յուրաքանչյուրը հուշում է, որ ոչինչ անիմաստ չէ, քանի որ ոչինչ անհետ չի կորչում:
- 2) Սուս մի ժամ տեեց, մինչև նա շուռումուու եկավ անկողնում, նստեց, հետո նորից պառկեց ու վերջապես հորանչելով քննեց:
- 3) Այդ պատմությունը վերին աստիճանի անախորժ էր նրա համար, նա չէր ուզում, որ Մարտիրյանն այդպես վարված լիներ իր եղրոր հետ, որը նրա համար քիչ բան չէր արել:
- 4) Յնորքները դառնում են հրաշալի, դառնում են իմաստավորված, երբ դրանց ստեղծում է այն մարդկանց երևակայությունը, որոնց մեջ գործելու եռանդ ու կրակ կա:

**80. Ո՞ր նախադասությունն է համապատասխանում տրված գծապատկերին:**




- 1) Տիրացուի կարճ ու գիրուկ մարմինը, որ նստած լինելու պատճառով կորացել էր, նմանվում էր մի տաճ կիսագնդի, որի վրա գլուխը շարժվում էր կարծես առանց պարանցի:
- 2) Պետրոսը, ուշիուղով նայելով ուղեկցին, զգաց այնպիսի մի անհանգստություն, որ պաշարում է մարդուն զգվանք զգալուց առաջ:
- 3) Խճուղու մի քանի կեռմաններ անցնելուց հետո հորիզոնը դարձյալ փակեցին նոր, կանաչ սարպանջեր, որոնք, հետզհետեւ դեպի վեր բարձրանալով, ձգվում, հասնում էին մինչև հեռվում երևացող արերը:
- 4) Պատվիրելով, որ ուտելիքի կապոցը տանեն դեպի կայարան, ինքը ևս իր քայլերն ուղղեց դեպի այն մենավոր տունը՝ հովանավոր պատշգամբ և շորջը ծառերի ստվեր ունեցող:

**81. Ո՞ր նախադասությունն է համապատասխանում տրված գծապատկերին:**




- 1) Եվ ինչպե՞ս չկարուեմ, քանի որ ամբողջ երկու տարի է անցել այն օրից, երբ դու վերջին անգամ եկար մեր տուն, որպեսզի հրաժեշտի ողջույն տաս մեզ:
- 2) Մայրս իմ գլուխն առել էր իր ձեռքերի մեջ, և ես զգում էի, որ նա նույնպես արտասվում է և քննչորեն համբուրում մազերս:
- 3) Ուզում եմ, որ այդ անցյալը զննե մի բոպե վերադառնա, և ես ջերմ զգացմոնքներով հատուցեմ քեզ այն անկեղծ բարեկամության փոխարեն, որ դու տածել ես իմ նկատմամբ:
- 4) Գուցե բարեգործական նպատակն էր պատճառը, որ բոլոր տոմսերը սպառվել էին, որովհետև արդեն հայտնի իրողություն է, որ մյուս ներկայացումներին դահլիճը գրեթե դատարկ է լինում:

**82. Ո՞ր նախադասությունն է համապատասխանում տրված գծապատկերին:**




- 1) Ի բնե հպարտ լինելով՝ նա առավել ևս գոռողացավ, երբ տեսավ, որ տղամարդիկ իր վրա այդքան մեծ ուշադրություն են դարձնում և խմբվում իր շուրջը:
- 2) Խորհուրդ ես տալիս, որ շատ չիուզվեմ, և խնդրում ես, որ եղբորս հիշատակարանն ուղարկեմ քեզ, որպեսզի այլևս տեղիք չունենամ հուզվելու:
- 3) Երևակայում եմ, թե որքան դժվար է մի տնից մյուսը տեղափոխվել, թե որքան անտանելի է, երբ տանտիրոջից անարգվում ես վարձը ժամանակին շվճարելու պատճառով:
- 4) Մեր «քարեկամն» էլ վրնիք նրան և իրավունք ուներ, որովհետև եղբայրս դարձյալ սկսել էր խմել, ստացած ոռճիկից էլ ոչ մի կոպեկ տուն չեր բերում:

**83. Ո՞ր նախադասությունն է համապատասխանում տրված գծապատկերին:**




- 1) Ինչպես սկզբից գցվել են կյանքիս հիմերը, այնպես էլ պետք է շարունակվի մինչև վերջ և հասնի իր տրամարանական ավարտին:
- 2) Կյանքիս մեջ դեռ այդպես լաց չէի եղել. արտասուրի յուրաքանչյուր կաթիլը կարծես թույն լիներ, որ քաղվում էր ուղղակի սրտից:
- 3) Կարծես ամբողջ մարդկությունն աշխարհի բոլոր ծայրերից, նաև տան չորս պատերը, որոնցից այլևս դուրս չեմ գալիս, ծաղրելով մատնացույց են անում ինձ և ծիծաղում ինձ վրա:
- 4) Թե՛ ինչպես եմ անցկացնում օրերս, ես քեզ անպայման կգրեմ և հետև էլ կուղարկեմ վերջին լուսանկարներիցս մեկը:

84. Ո՞ր նախադասությունն է համապատասխանում տրված գծապատկերին:




- 1) Խոսակցությամբ տարված՝ նրանք չնկատեցին, թե ինչպես ժամանակն անցավ, սակայն եքք Զաքարը վերադարձավ պաշտոնատեղից, նրանք բոլորովին այլ նյութի մասին էին խոսում:
- 2) Սեղանը հավաքելուց հետո նա աղախնին ասաց, որ Արամիկին տանի զրուանքի, բայց հետո կրացավ, հենց ինքն էլ ուղղեց երեխայի հագուստը:
- 3) Էմման, որ հավաքում էր խաղարդի սեղանը, կարմրեց և մի տեսակ թերեւ ամորխիածությամբ և միևնույն ժամանակ բարեկամաբար ժպտալով՝ նայեց Զազունյանին:
- 4) Գեղեցիկ պիեսի վերջին ակորդները, արձագանք տալով ընդարձակ հյուրաքարահի մեջ, լրեցին նրա մատների տակ և նա, բողնելով դաշնամուրը, վեր կացավ տեղից:

85. Ո՞ր նախադասությունն է համապատասխանում տրված գծապատկերին:



- 1) Եթե ամուսինն այդ հարցումը տված լիներ այդքան շարությամբ, տիկին Ռենալը, անկասկած, պիտի վրդովկեր, բայց նա զգաց, որ այդ պահին պետք է հանգստություն պահպանի:
- 2) Հրացանի երկրորդ հարվածը երկի փշրեց շներից մեկի թարը, որովհետև նա սկսեց ողբագին կաղկանձել, բայց տղամարդը ոստնեց պատի վրայով և սկսեց վազել այլ ուղղությամբ:
- 3) Ես նրան ասացի, որ իմ մոտ ազգականներից մեկն եք և գալսի եք հեռվից, բայց նա ոչինչ չուզեց լսել:
- 4) Մինչ Ժյուլիենն ընթրում էր մեծ ախորժակով, և նրա բարեկամուիկին հանաքներ էր անում սեղանի պարզության պատճառով, հանկարծ սեմյակի դրույլ ուժգնորեն ցնցվեց, և ներս մտավ տանտերը:

86. Ո՞ր նախադասությունն է համապատասխանում տրված գծապատկերին:



- 1) Այդ վերջին մտքերը նրան ստիպեցին խորհել. դրանք արթնացնում էին ծանր հիշողություններ և ընկճում իր ողջ հանգնությունը:
- 2) Այդ բովելին նա ոչ միայն չէր մտածում պաշտպանվել, այլև ինքն սկսեց արհամարհել իրեն՝ լսելով, թե ինչպիսի քամահրանքի արտահայտություններ էին թափվում իր վրա:
- 3) Բեմը, որ Սուրբ ծննդյան տոնների առթիվ սարքված էր փողոցի մեջտեղում, չափազանց զարմացրեց նրան, և ինչ-որ անորոշ մտքեր պարուրեցին նրան՝ հիշեցնելով վաղ մանկության տարիները:
- 4) Եղբոր խոսքերը նրան սարսափեցրին և մեծ մտատանջություն պատճառեցին, բայց հաջորդ օրն իսկ դրանք իրեն ամենաբարձր գովեստ բվացին:

**87. Ո՞ր նախադասության մեջ խնդրառության սխալ կա:**

- 1) Վերակացուն ամբողջ օրը պետք է հսկեր տունը վերանորոգող արհեստավորներին, ինչպես նաև բանջարանոցում քաղհան անողների աշխատանքը:
- 2) Ես երախտապարտ եմ Ձեզնից այդպիսի օգնության համար:
- 3) Լուսնի խավարումը համընկավ այդ ահեղ ճակատամարտի սկզբելուն:
- 4) Ոստիկանները կատարված հանցանքի մեջ այդ բարձրահասակ երիտասարդին էին կասկածում:

**88. Ո՞ր նախադասության մեջ խնդրառության սխալ կա:**

- 1) Բրուտանցից ութուն-իննուն մետք հեռավորության վրա արևի ցոլքերով ոսկեորված ձորն էր:
- 2) Հաջորդ վայրկյանին սրափվեցին մարդիկ, և ծափերը փշրեցին դահլիճի քար լուսունը:
- 3) Ծեր արծվի պես քաց արեց աչքերն ու իրեն դիմաց տեսավ դժվան մահը:
- 4) Պատանին եղավ շատ երկրներում, քայց ի վերջո վերադարձավ և մեզ համար հյուսեց իր հոգեզմայլ երգը:

**89. Ո՞ր նախադասության մեջ խնդրառության սխալ կա:**

- 1) Հուշ-երեկոյի ժամանակ ներկաները կրկին զմայլվեցին մեծ դերասանի խաղացած դերերի դրվագներով, որոնք անընդհատ հայտնվում էին էկրանին:
- 2) Դատական գործի այդ դրվագով փաստաբանը փորձում էր ցույց տալ իր այաշտպանյալի անմեղությունը:
- 3) Նա անտեղյակ էր այդ գործում:
- 4) Հանգամանքներն են մեզ մղել ծայրահեղ քայլի:

**90. Ո՞ր նախադասության մեջ խնդրառության սխալ չկա:**

- 1) Դասական արվեստը միշտ ունի իր հետևողդներին:
- 2) Մի՛ անհանգստացիր, ես վարձահատույց կլինեմ քեզանից:
- 3) Տան շեմուն միայնակ կանգնած էր Մարանը:
- 4) Հուսով եմ՝ ծանոթ եք այդ ավանդույթին:

**91. Ո՞ր նախադասության մեջ խնդրառության սխալ չկա:**

- 1) Անդրադառնալով այդ հարցով՝ գեկուցողը ցանկացավ խնդիրը ներկայացնել բոլոր մանրանասներով:
- 2) Բոլորս երախտապարտ էիմք նրանից իր անգնահատելի ծառայության համար:
- 3) Արևմտյան Հայաստանում շատերը հարկադրված էին կարողիկություն դավանելու՝ թուրքերի վայրագություններից ինչ-որ չափով պաշտպանվելու համար:
- 4) Կապված գործում ի հայտ եկած նոր հանգամանքներից՝ դատական նիստը հետաձգվեց:

**92. Ո՞ր նախադասության մեջ խնդրառության սխալ չկա:**

- 1) Նա իր կարիքներին բավարարելու համար պատրաստ էր ամեն ինչի:
- 2) Ներկաներից մի մասը խիստ զարմացած էր:
- 3) Արածդ սխալի համար պիտի ներողություն խնդրես հորդ:
- 4) Խրանելով տնտեսության զարգացում՝ պետությունը փորձում է լուծել սոցիալական խնդիրներ:

**93. Ո՞ր նախադասության մեջ խնդրառության սխալ չկա:**

- 1) Էրենբուրգը երկար ու հիացած նայում էր Սարյանի նկարների վրա:
- 2) Սուշեն բերդակալը ավելորդ համարեց կանանց զրոյցներին մասնակցելու:
- 3) Աշոտի խիլճը տանջում էր, որովհետև զրպարտել էր վաղեմի ընկերոջը:
- 4) Բարձրաբերձ լեռան զագաթը շատ հաճախ ծածկված է լինում ամպերի կողմից:

**94. Ո՞ր նախադասության մեջ համաձայնության սխալ կա:**

- 1) Նվիրելանդները բարեկամական կապեր է հաստատել հարևան պետությունների հետ:
- 2) Թվում էր, թե արևի բարեկ ճառագայթներից ամեն ինչ հալվում է, այրվում ու անեանում:
- 3) Հասարակությունն ընդդիմացավ անօրինությանը:
- 4) Ամեն ինչ՝ միջօրեի շոգը, սորեն ու գաղզ օդը, անտանելի էին դարձել:

**95. Ո՞ր նախադասության մեջ համաձայնության սխալ կա:**

- 1) Նա այն մարդկանցից է, որ, հասնելով մեծ փառքի, բնավ չեն մեծամտանում:
- 2) Սուստուրը զարգանում է, հարկավոր է նոր շուկաներ:
- 3) Կան բաներ, որոնց մասին պետք է լրել:
- 4) Համայն մարդկությունը միշտ էլ ձգտել է խաղաղության:

**96. Ո՞ր նախադասության մեջ համաձայնության սխալ կա:**

- 1) Ֆիլիպիններն ունի հետաքրքիր բուսական աշխարհ:
- 2) Աշոտ Բոնավորին՝ իրև հայրենիքի դավաճանի, ներում չկար:
- 3) Եվ ինվը, որ շնկշնկում էր Մասիսի փեղերին, և զիշերը, որ խարիսափելով փոռում էր իր մթամած շղարշները, և կրակը, որ մարմրում էր նրա շուրջը, բախիծով էր լցնում Արտակի հոգին:
- 4) Ոչ մի առարկություն չկա այդ հարցի վերաբերյալ:

**97. Ո՞ր նախադասության մեջ համաձայնության սխալ կա:**

- 1) Հիմա միայն Պարրոտը հասկացավ, որ Արարատը հայության հավատքի անխախտ այունն է և սրբություններից ամենանվիրականը, որին երեք չի կարեի դավաճանել:
- 2) Անձրևը, խոնավությունը կարում է մամուռների վրա, ծառերի վրա և քարափների լանջին:
- 3) Այդ գիտարշավն ու վերելքը մեր գիտության և մշակույթի համար բախտորոշ նշանակություն ունեցան, և դրանցով սկիզբ դրվեց Արևելյան Հայաստանի բնական հարստությունների հետազոտությանը:
- 4) Այդ վերելքներից ստացած անջնջելի տպավորություններից ու խանդական ոգերություններից ծնունդ առան Աբովյանի բանաստեղծական տաղանդի փայլաստակումներից մի քանիսը:

**98. Ո՞ր նախադասության մեջ համաձայնության սխալ չկա:**

- 1) Զորքի նիզակների ու մերկ սրերի խիստ անտառը արևի ճառագայթների տակ հոլիրում է:
- 2) Հանելուկների և առածների շարքն անմիջականորեն ուղղված են մանուկներին:
- 3) Անընքնելի է տիեզերքը. անհամար աստղեր ու արև ծնվում ու մեռնում է, ինչպես վայրկենական երևոյթներ հավերժության մեջ:
- 4) Այսօր մեզ հայտնի դարձավ, թե ինչ կարգի աշխատանքներ է իրականացվելու մեր ներկայացրած ծրագրի շրջանակներում:

**99. Ո՞ր նախադասության մեջ համաձայնության սխալ չկա:**

- 1) Մի քանի ժամից Գառնու ամրոց հասավ և՛ Հռվիաննես կաթողիկոսը, և՛ Սուշեն բերդակալը:
- 2) Ամբոխը բաժանեցին երեք հավասար մասի. նրանցից ամեն մեկը պետք է քոնեին հովտի մի զառիվայրը:
- 3) Ամենքն էլ քաղցր քուն էին մտել, բայց մի քանիսը, եկողների քայլատրովը լսելով, վեր թռան տեղներից:
- 4) Հետևյալ առավոտ իշխանի հրամանով Տրդատի հովանոցի առաջ հավաքվեց Գառնիում գտնվող բոլոր զորքերը:

### 100. Ո՞ր նախադասության մեջ շարադասության սխալ կա:

- 1) Մոտակայքում Զանգեզուրի լեռնաշղթան դեպի զառիվայր Արաքսի կիրճն է իջնում լանջերով, որոնք ապշեցնում են իրենց տարօրինակ ձևերով:
- 2) Տարիներ առաջ Իջևանը շրեթ բնության մեջ ծվարած աննշան մի բնակավայր էր՝ հայտնի միայն այստեղով անցնող ճանապարհորդներին:
- 3) Դիլիջանի բնության գեղատեսիլ վայրերից է քաղաքից ոչ հեռու՝ սաղարթախիտ անտառի խորությունը Պարզ լիճը, որի մոտակայքում կան ճարտարապետական բազմաթիվ կոթողներ:
- 4) Ջերմուկ քաղաքի՝ տարբեր խորություններից բխող հանքային ջրերն ունեն բուժիչ նույն հատկությունները, ինչ և աշխարհին հայտնի Ժելեզնովոդսկի ջրերը:

### 101. Ո՞ր նախադասության մեջ շարադասության սխալ չկա:

- 1) Աշխարհի սպասվող ըմբշամարտի առաջնությունը, անտարակույս, կգրանցի նոր անուններ, նոր հաղողներ:
- 2) Յանկացած մրցույթի միջազգային դաշնամուրային հաղորդ գուցե չկարողանա այնպես նվազել Շոպեն, ինչպես Արքուր Փափազյանը:
- 3) Նա վարակի ոգևորությամբ էր պատմում իր ամառանոցի անկրկնելի ափամերձ բնանկարների մասին, արտասովոր իտալական սովորույթների մասին:
- 4) Ինչն էր նրան մտահոգել զիշերվա այդ ուշ ժամին՝ չկարողացա գուշակել, բայց նրա՝ մեր տուն զալը նշան էր, որ իս նկատմամբ ինչ-ինչ կասկածներ ուներ:

### 102. Նախադասություններում առկա սխալներից ո՞րն է խնդրառական:

- 1) Պատգամավորի բոլոր առաջարկությունները, որ արվեց, հանձնաժողովի կողմից մերժվեց:
- 2) Հարցը կայանում է նրանում, որ մենք չենք ուզում ոչ մեկին վնասել:
- 3) Հունիսի հինգին կայանալիք Գավառի քաղաքապետի լուսորությունները հետաձգվեցին:
- 4) Նա այնքան էր սիրահարվել իր գործի վրա, որ ամբողջ օրն անցկացնում էր աշխատավայրում:

### 103. Ո՞ր տարբերակում է տրված քարդ ստորադասական նախադասությունը ճիշտ փոխակերպված պարզի:

*Կյանքում կարևոր այն է, որ ամեն արարած երջանիկ լինի:*

- 1) Կյանքում կարևոր է ամեն արարածի երջանիկ լինելը:
- 2) Կյանքում կարևոր երջանիկ եղած ամեն արարածն է:
- 3) Կյանքում կարևոր ամեն արարածի երջանիկ լինելն է:
- 4) Կյանքում կարևոր այն ամեն արարածի երջանիկ լինելն է:

### 104. Ո՞ր տարբերակում է տրված քարդ ստորադասական նախադասությունը ճիշտ փոխակերպված պարզի:

*Հայրս, քանի որ շատ ընդունակ էր լեզուների հարցում, հնարավորություն ուներ անկաշկանդ զրուցելու օտարազգի զինվորների հետ:*

- 1) Լեզուների հարցում շատ ընդունակ հայրս հնարավորություն ուներ անկաշկանդ զրուցելու օտարազգի զինվորների հետ:
- 2) Հայրս լեզուների հարցում շատ ընդունակ լինելու դեպքում հնարավորություն ուներ անկաշկանդ զրուցելու օտարազգի զինվորների հետ:
- 3) Հայրս, շատ ընդունակ լինելով լեզուների հարցում, հնարավորություն ուներ անկաշկանդ զրուցելու օտարազգի զինվորների հետ:
- 4) Հայրս լեզուների հարցում շատ ընդունակ լինելուց բացի հնարավորություն ուներ անկաշկանդ զրուցելու օտարազգի զինվորների հետ:

**105. Ո՞ր տարրերակում է տրված բարդ ստորադասական նախադասությունը ճիշտ փոխակերպված պարզի:**

Ծանր բանավեճից հետո դեռ ոչ ոք չէր համարձակվում գլուխը բարձրացնել, չնայած կարողիկուր հեռացել էր դահլիճից:

- 1) Քանի որ բանավեճը ծանր էր, դեռ ոչ ոք չէր համարձակվում գլուխը բարձրացնել՝ չնայած կարողիկուր՝ դահլիճից հեռանալուն:
- 2) Ծանր բանավեճից հետո դեռ ոչ ոք չէր համարձակվում գլուխը բարձրացնել՝ չնայած դահլիճից հեռացած կարողիկուրին:
- 3) Չնայած կարողիկուր՝ դահլիճից հեռանալուն՝ ոչ ոք չէր համարձակվում գլուխը բարձրացնել ծանր բանավեճի պատճառով:
- 4) Ծանր բանավեճից հետո դեռ ոչ ոք չէր համարձակվում գլուխը բարձրացնել՝ չնայած կարողիկուր՝ դահլիճից հեռանալուն:

**106. Ո՞ր տարրերակում է տրված բարդ ստորադասական նախադասությունը ճիշտ փոխակերպված պարզի:**

Այն պահին, երբ ձին թռչում էր օղակի վրայով, նրանք չէին թաքցնում իրենց հրճվանքը:

- 1) Զիու՝ օղակի վրայով թռչելու պահին նրանք չէին թաքցնում իրենց հրճվանքը:
- 2) Նրանք չէին թաքցնում իրենց հրճվանքը օղակի վրայով ձիու թռչելու դեպքում:
- 3) Նրանք չէին թաքցնում օղակի վրայով ձիու թռչելու պահի իրենց հրճվանքը:
- 4) Օղակի վրայով ձին թռչելիս նրանք չէին թաքցնում իրենց հրճվանքը:

**107. Ո՞ր տարրերակում է տրված բարդ ստորադասական նախադասությունը ճիշտ փոխակերպված պարզի:**

Թփերի խշողը լսեցին թե չէ, կաքավներն իսկույն մի քանի պտույտ արին օդում, իջան արևախանձ արտերի վրա:

- 1) Կաքավները թփերի խշողը լսելու ժամանակ իսկույն մի քանի պտույտ արին օդում, իջան արևախանձ արտերի վրա:
- 2) Կաքավները թփերի խշողը լսելուց հետո իսկույն մի քանի պտույտ արին օդում, իջան արևախանձ արտերի վրա:
- 3) Թփերի խշողը լսելուն պես կաքավներն իսկույն մի քանի պտույտ արին օդում, իջան արևախանձ արտերի վրա:
- 4) Կաքավների՝ թփերի խշողը լսելու պահին նրանք իսկույն մի քանի պտույտ արին օդում, իջան արևախանձ արտերի վրա:

**108. Ո՞ր տարրերակում է տրված բարդ ստորադասական նախադասությունը ճիշտ փոխակերպված պարզի:**

Եթե Լուսաստղը դուրս գալուց առաջ ճանապարհենն, իրիկնադեմին, հնարավոր է, քաղաք հասնեն:

- 1) Լուսաստղը դուրս գալուց առաջ ճանապարհենն իրիկնադեմին, հնարավոր է, քաղաք հասնեն:
- 2) Լուսաստղը դուրս գալուց առաջ ճանապարհենն ունալու դեպքում իրիկնադեմին հնարավոր է քաղաք հասնելը:
- 3) Լուսաստղը դուրս գալուց առաջ ճանապարհենն ունալում իրիկնադեմին, հնարավոր է, քաղաք հասնեն:
- 4) Լուսաստղը դուրս գալուց առաջ ճանապարհենն շնորհիվ հնարավոր է՝ իրիկնադեմին քաղաք հասնեն:

**109. Ո՞ր տարրերակում է տրված բարդ ստորադասական նախադասությունը ճիշտ փոխակերպված պարզի:**

Եղնիկը, թեև ընտելացավ մեզ, մեկ-մեկ մեզնից քաքուն քարձրանալով պատշգամբ, լոիկ նայում էր անտառածածկ սարերին:

- 1) Եղնիկը, չնայած մեզ ընտելանալուն, մեկ-մեկ մեզնից քաքուն քարձրանալով պատշգամբ, լոիկ նայում էր անտառածածկ սարերին:
- 2) Չնայած եղնիկի՝ մեզ ընտելանալուն՝ մեկ-մեկ մեզնից քաքուն քարձրանալով պատշգամբ, լոիկ նայում էր անտառածածկ սարերին:
- 3) Մեզ ընտելանալուց հետո եղնիկը, մեկ-մեկ մեզնից քաքուն քարձրանալով պատշգամբ, լոիկ նայում էր անտառածածկ սարերին:
- 4) Մեզ ընտելացած եղնիկը, մեկ-մեկ մեզնից քաքուն քարձրանալով պատշգամբ, լոիկ նայում էր անտառածածկ սարերին:

**110. Ո՞ր տարրերակում է տրված բարդ ստորադասական նախադասությունը ճիշտ փոխակերպված պարզի:**

Երբ ճյան շերտով պատաժ կատարները ոսկերովեցին արևի առաջին շողերով, արշավախմբի փորձառու դեկավարը շարժվելու հրահանգ տվեց:

- 1) Զյան շերտով պատաժ կատարներն արևի առաջին շողերով ոսկերովելուց արշավախմբի փորձառու դեկավարը շարժվելու հրահանգ տվեց:
- 2) Արշավախմբի փորձառու դեկավարը շարժվելու հրահանգ տվեց արևի առաջին շողերով ճյան շերտով պատաժ կատարների ոսկերովելու պատճառով:
- 3) Արևի առաջին շողերով ճյան շերտով պատաժ կատարների ոսկերովելուն պես արշավախմբի փորձառու դեկավարը շարժվելու հրահանգ տվեց:
- 4) Զյան շերտով պատաժ կատարներն արևի առաջին շողերով ոսկերովելուց հետո արշավախմբի փորձառու դեկավարը շարժվելու հրահանգ տվեց:

**111. Ո՞ր տարրերակում է տրված բարդ նախադասությունը ճիշտ փոխակերպված պարզի:**

Ոչ մի խոսք չէի ասել, թեկուզ մի քանի անգամ տեսել էի նրան ցանկապատի հետևում:

- 1) Ոչ մի խոսք չէի ասել նրան՝ չնայած մի քանի անգամ ցանկապատի հետևում տեսնելուս:
- 2) Ոչ մի խոսք չէի ասել՝ չնայած մի քանի անգամ ցանկապատի հետևում նրան տեսնելուս:
- 3) Սի քանի անգամ նրան տեսա ցանկապատի հետևում՝ ոչ մի խոսք չասելով:
- 4) Նրան մի քանի անգամ ցանկապատի հետևում տեսնելու դեպքում էլ ոչ մի խոսք չէի ասել:

**112. Տրված բարդ ստորադասական նախադասություններից ո՞րն է ճիշտ փոխակերպված պարզի:**

- 1) Նրա երազանքն այս էր, որ դասերը քողմի որ գյուղ վերադառնա: Դասերը քողմնելու ու գյուղ վերադառնալը նրա երազանքն էր:
- 2) Սարերում այնքան լուս է, որ շշուկը մի կիրառությունունից անգամ լսվում է: Սարերում շշուկը մի կիրառությունունից անգամ լսվելու չափ լուս է:
- 3) Նրան պառկեցրին, որ մի քիչ հանգստանա, հետո ճանապարհ զցեցին: Նրան պառկեցրին՝ մի քիչ հանգստանելու և հետո ճանապարհ զցելու համար:
- 4) Երեք մի քիչ ավելի հեռու լիներ, նրա շարժումները չէին երևան: Սի քիչ ավելի հեռու լինելով՝ նրա շարժումները չէին երևան:

**113. Տրված բարդ ստորադասական նախադասություններից ո՞րն է ճիշտ փոխակերպված պարզի:**

- 1) Երեք հեռանալը հեշտ լիներ, գրիգորյանը վաղուց հեռացած կլիներ գյուղից: Գյուղից հեռանալը հեշտ լինելու դեպքում գրիգորյանը վաղուց հեռացած կլիներ:
- 2) Ինչ որ իրեն պետք էր լինում, նա այդպես կատակով վերցնում էր: Իրեն պետք եղածը նա այդպես կատակով վերցնում էր:
- 3) Նա հետևում էր, թե ինչպես է աղջիկը շշերը դասավորում սփոռցի վրա: Նա հետևում էր շշերը սփոռցի վրա դասավորող աղջկան:
- 4) Երևում էր՝ ինչպես է հանդերի վրա աղեղ տալիս հնձվորի գերանդին: Երևում էր հնձվորի՝ հանդերի վրա աղեղ տվող գերանդին:

**114. Ո՞ր տարրերակում է տրված պարզ (դերբայական դարձվածով) նախադասությունը ճիշտ փոխակերպված բարդի:**

*Հայրենիքից հեռացած, բայց նրա կարոտից մաշվող հայերը մշուշված հայացքով նայում էին Մասիսի նկարին ու հառաջում:*

- 1) Մշուշված հայացքով հայերը, որ հայրենիքից հեռացել, բայց նրա կարոտից մաշվում էին, նայում էին Մասիսի նկարին ու հառաջում:
- 2) Այն հայերը, որոնք հայրենիքից հեռացել, բայց նրա կարոտից մաշվում էին, մշուշված հայացքով նայում էին Մասիսի նկարին ու հառաջում:
- 3) Հառաջում էին այն հայերը, որոնք, հայրենիքից հեռացած, նրա կարոտից մաշվում էին ու մշուշված հայացքով Մասիսի նկարին նայելով՝ հառաջում:
- 4) Նրանք, որ հայրենիքից հեռացել, բայց նրա կարոտից մաշվում էին, մշուշված հայացքով Մասիսի նկարին նայող ու հառաջող հայերն էին:

**115. Ո՞ր տարրերակում է տրված պարզ (դերբայական դարձվածով) նախադասությունը ճիշտ փոխակերպված բարդի:**

*Բեռլինյան այս տան լուսամուտների տակով անցնելիս օտարերկրացիները հաճախ էին կանգ առնում:*

- 1) Եթե օտարերկրացիները բեռլինյան այս տան լուսամուտների տակով էին անցնում, հաճախ էին կանգ առնում:
- 2) Հենց բեռլինյան այս տան լուսամուտների տակով էին անցնում, օտարերկրացիները հաճախ էին կանգ առնում:
- 3) Օտարերկրացիները, եթե անցնում էին բեռլինյան այս տան լուսամուտների տակով, հաճախ էին կանգ առնում:
- 4) Օտարերկրացիները հաճախ էին կանգ առնում, եթե բեռլինյան այս տան լուսամուտների տակով էին անցնում:

**116. Ո՞ր տարրերակում է տրված պարզ (դերբայական դարձվածով) նախադասությունը ճիշտ փոխակերպված բարդի:**

*Մըրկածուի ալիքների պես արշավեցին դեպի ամրոցը՝ հիմնիվեր ավերելու այն և մաքրելու աշխարհը բռնությունից:*

- 1) Մըրկածուի ալիքների պես արշավեցին դեպի ամրոցը, որպեսզի հիմնիվեր ավերեն այն և մաքրեն աշխարհը բռնությունից:
- 2) Այնպես, ինչպես մըրկածուի ալիքներ, նրանք արշավեցին դեպի ամրոցը, որպեսզի հիմնիվեր ավերեն և մաքրեն աշխարհը բռնությունից:
- 3) Մըրկածուի ալիքները, որ պիտի հիմնիվեր ավերեն և մաքրեն աշխարհը բռնությունից, արշավեցին դեպի ամրոցը:
- 4) Մըրկածուի ալիքների պես արշավեցին դեպի ամրոցը, որովհետև ուզում էին հիմնիվեր ավերել այն և մաքրել աշխարհը բռնությունից:

**117. Ո՞ր տարրերակում է տրված պարզ (դերբայական դարձվածով) նախադասությունը ճիշտ փոխակերպված բարդի:**

*Աղջիկը այդ պահը հիշելիս դարձյալ շիկնում էր:*

- 1) Եթե աղջիկն այդ պահը հիշում էր, դարձյալ շիկնում էր:
- 2) Աղջիկը, եթե այդ պահը հիշեց, դարձյալ շիկնեց:
- 3) Հենց որ աղջիկը այդ պահը հիշում էր, դարձյալ շիկնում էր:
- 4) Աղջիկը, եթե այդ պահը հիշում էր, դարձյալ շիկնում էր:

**118. Ո՞ր տարրերակում է տրված պարզ (դերքայական դարձվածով) նախադասությունը ճիշտ փոխակերպված բարդի:**

Նախքան նրանց տեղ հասնելը բոլորն արդեն հավաքվել էին գյուղի մթնող փողոցներում:

- 1) Հենց որ նրանք տեղ հասան, բոլորն արդեն հավաքվել էին գյուղի մթնող փողոցներում:
- 2) Երբ նրանք տեղ էին հասնում, բոլորն արդեն հավաքվել էին գյուղի մթնող փողոցներում:
- 3) Նախքան նրանք տեղ կհասնեին, բոլորն արդեն հավաքվել էին գյուղի մթնող փողոցներում:
- 4) Մինչ նրանց տեղ հասնելը բոլորն արդեն հավաքվել էին գյուղի փողոցներում, որոնք մթնում էին:

**119. Ո՞ր տարրերակում է տրված պարզ (դերքայական դարձվածով) նախադասությունը ճիշտ փոխակերպված բարդի:**

Ուոքը շեմից դուրս դնելուն պես ասես ջրվեժ խշաց ականջներում:

- 1) Հենց որ ուոքը շեմից դուրս դրեց, ասես ջրվեժ խշաց ականջներում:
- 2) Երբ ուոքը շեմից դուրս դրեց, ասես ջրվեժ խշաց ականջներում:
- 3) Մինչ ուոքը շեմից դուրս կդներ, ասես ջրվեժ խշաց ականջներում:
- 4) Երբ որ ուոքը շեմից դուրս էր դնում, ջրվեժ խշաց ականջներում:

**120. Ո՞ր տարրերակում է տրված պարզ (դերքայական դարձվածով) նախադասությունը ճիշտ փոխակերպված բարդի:**

Զնայած չորանոցի դռան ծածկված լինելում՝ լսվում էր Մամոյի՝ ականջ ծակող ձայնը:

- 1) Քանի որ չորանոցի դռուղ ծածկված էր, լսվում էր Մամոյի՝ ականջ ծակող ձայնը:
- 2) Երբ չորանոցի դռուղ ծածկված էր լինում, լսվում էր Մամոյի՝ ականջ ծակող ձայնը:
- 3) Զնայած չորանոցի դռուղ ծածկված էր, լսվում էր Մամոյի՝ ականջ ծակող ձայնը:
- 4) Զնայած չորանոցի դռան ծածկված լինելուն՝ լսվում էր Մամոյի ձայնը, որն ականջ էր ծակում:

**121. Ո՞ր տարրերակում է տրված պարզ (դերքայական դարձվածով) նախադասությունը ճիշտ փոխակերպված բարդի:**

Ծերունին խաղողի վազերն էտելիս այգում նկատեց կծիկ դարձած թունավոր օձեր:

- 1) Երբ ծերունին այգում խաղողի վազերն էր էտում, նկատեց կծիկ դարձած թունավոր օձեր:
- 2) Ծերունին, որ այգում խաղողի վազերն էր էտում, նկատեց կծիկ դարձած թունավոր օձեր:
- 3) Այգում խաղողի վազերն էտելիս ծերունին նկատեց թունավոր օձեր, որոնք կծիկ էին դարձել:
- 4) Ծերունին, երբ խաղողի վազերն էր էտում, այգում նկատեց կծիկ դարձած թունավոր օձեր:

**122. Ո՞ր տարրերակում է տրված պարզ (դերքայական դարձվածով) նախադասությունը ճիշտ փոխակերպված բարդի:**

Պերսևը աշխարհով մեկ ճանապարհորդելուց հետո գլուխը կորցրած եկավ հավերժահարսերի մոտ:

- 1) Պերսևը, երբ ճանապարհորդել էր աշխարհով մեկ, գլուխը կորցրած եկավ հավերժահարսերի մոտ:
- 2) Երբ Պերսևը ճանապարհորդում էր աշխարհով մեկ, գլուխը կորցրած եկավ հավերժահարսերի մոտ:
- 3) Պերսևը, որ գլուխը կորցրել էր, աշխարհով մեկ ճանապարհորդելուց հետո եկավ հավերժահարսերի մոտ:
- 4) Պերսևը, որ ճանապարհորդեց աշխարհով մեկ, գլուխը կորցրած եկավ հավերժահարսերի մոտ:

**123. Ո՞ր տարրերակում է տրված պարզ (դերքայական դարձվածով) նախադասությունը ճիշտ փոխակերպված բարդի:**

Ստվար և հզոր բանակի գլուխն անցած փառատեսչ իշխանը հարձակվում է մի բազավորությունից մյուսի վրա:

- 1) Փառատեսն իշխանը, որ մի բազավորությունից մյուսի վրա էր հարձակվել, ստվար և հզոր բանակի գլուխն է անցնում:
- 2) Փառատեսն իշխանը, որ ստվար և հզոր բանակի գլուխն էր անցել, հարձակվում է մի բազավորությունից մյուսի վրա:
- 3) Մի բազավորության փառատեսն իշխանը, որ ստվար և հզոր բանակի գլուխն էր անցել, հարձակվում է մյուսի վրա:
- 4) Փառատեսն իշխանը անցել էր ստվար և հզոր բանակի գլուխը, որպեսզի հարձակվեր մի բազավորությունից մյուսի վրա:

**124. Տրված պարզ (դերբայական դարձվածով) նախադասություններից ո՞րն է ճիշտ փոխակերպված բարդի:**

- 1) *Ուսուցիչ ներս մտնելուց հետո երեխաների զվարք աղմուկը դադարեց:*  
Հենց որ ուսուցիչը ներս մտավ, երեխաների զվարք աղմուկը դադարեց:
- 2) *Ամենամեծ հայրենասերը իր հայրենիքը երբեք չլրողն է:*  
Նա, ով երբեք չի լրում իր հայրենիքը, ամենամեծ հայրենասերն է:
- 3) *Արամի պարտության մասին գիտեին բոլորը՝ մրցության պահին այնտեղ ներկա եղած մարդիկ:*  
Արամի պարտության մասին գիտեին բոլոր մարդիկ, ովքեր մրցության պահին այնտեղ ներկա են:
- 4) *Ամբողջ գիշեր մայրն անհամբեր սպասում էր տղայի՝ տուն վերադառնալուն:*  
Ամբողջ գիշեր մայրն անհամբեր սպասում էր, որ տղան տուն վերադառնալաւ:

**125. Տրված պարզ (դերբայական դարձվածով) նախադասություններից ո՞րն է ճիշտ փոխակերպված բարդի:**

- 1) *Երկի քո ուզածը հենց դա է:*  
Երկի հենց դա այն է, ինչ դու ուզում ես:
- 2) *Լիլիքը ամեն անզամ այդ պատմությունը հիշելիս չէր կարողանում զսպել հուզմունքը:*  
Երբ Լիլիքն ամեն անզամ այդ պատմությունը հիշում էր, չէր կարողանում զսպել հուզմունքը:
- 3) *Այդ մասին պատմում էին բոլորը՝ իրադարձություններին ականատես եղած մարդիկ:*  
Այդ մասին պատմում էին բոլոր այն մարդիկ, ովքեր ականատես են եղել իրադարձություններին:
- 4) *Ես գիտեմ քո՝ հայրենիք վերադառնալը:*  
Ես գիտեմ, որ դու հայրենիք ես վերադառնալել:

**126. Տրված պարզ (դերբայական դարձվածով) նախադասություններից ո՞րն է սխալ փոխակերպված բարդի:**

- 1) *Որքա՞ն լավ է մարդկանց՝ քեզ լիովին վստահելը:*  
Որքա՞ն լավ է, եթե մարդիկ քեզ լիովին վստահում են:
- 2) *Թատրոնը չափից ավելի շատ սիրողը ի վերջո խեղդում է իր սիրելիին:*  
Նա, ով չափից ավելի շատ է սիրում թատրոնը, ի վերջո խեղդում է իր սիրելիին:
- 3) *Հրատապ խնդիր է երկու քունելախորշերի միանալը ճիշտ ժամկետում:*  
Հրատապ խնդիրն այն է, որ երկու քունելախորշերը միանան ճիշտ ժամկետում:
- 4) *Նրան հայտնի էր իր հիմնական գնացքը՝ իրեն ստորաբար խարելը:*  
Նրան հայտնի էր, որ իր հիմնական գնացքը ստորաբար խարել են:

**127. Տրված պարզ (դերբայական դարձվածով) նախադասություններից քանի՞սն են սխալ փոխակերպված բարդի:**

- *Դժվար թե հնարավոր լինի հանդիպել երեք տարի սովորելուց հետո պաշտոն ստանալու մասին շմտածող մեկին:*  
Դժվար թե հնարավոր լինի հանդիպել մեկին, ով երեք տարի սովորելուց հետո չի մտածում պաշտոն ստանալու մասին:
  - *Ջո ընտրածը հավանաբար այդ երիտասարդը չի եղել:*  
Նա, ում դու ընտրել ես, հավանաբար այդ երիտասարդը չի եղել:
  - *Ի՞նչ է դանիացի արքայորդու շուրթերը անելության շեմին զմռուղ այդ լուսությունը:*  
Ի՞նչ է այն լուսությունը, որ զմռուղ է դանիացի արքայորդու շուրթերը անելության շեմին:
  - *Պարապ մի՛ մնա նոյնական հարուստ լինելուդ դեպքում:*  
Պարապ մի՛ մնա, եթե նոյնական հարուստ ես:
- 1) Երկուսը
  - 2) Երեքը
  - 3) Չորսը
  - 4) Մեկը

### 128. Ուղղակի խոսքի փոխակերպման ո՞ր տարրերակն է ճիշտ:

- Իմչո՞ւ ես կանխագուշակում բախտը, Վարդա՛ն, - հարցրեց սպարապետը. - մեր բախտը տնօրինում է Աստված:

- 1) Սպարապետը հարցրեց Վարդանին, թե ինչու է նա կանխագուշակում իր բախտը. իրենց բախտը տնօրինում է Աստված:
- 2) Սպարապետը հարցրեց, թե ինչու է Վարդանը կանխագուշակում նրա բախտը. նրանց բախտը տնօրինում է Աստված:
- 3) Սպարապետը հարցրեց Վարդանին, թե նա ինչու է կանխագուշակում իր բախտը. նրանց բախտը տնօրինում է Աստված:
- 4) Սպարապետը հարցրեց Վարդանին, թե նա ինչու է կանխագուշակում իր բախտը, երբ նրա բախտը տնօրինում է Աստված:

### 129. Ուղղակի խոսքի փոխակերպման ո՞ր տարրերակն է ճիշտ:

- Ենք պատահմամբ ենք ողջ մնացել, պարո՞ն, - ասաց Երիտասարդը և ապա ավելացրեց, - այս ամենի մասին հավանաբար մարդիկ Զեզ կպատմեն:

- 1) Երիտասարդն ասաց պարոնին և ապա ավելացրեց, որ իրենք պատահմամբ են ողջ մնացել, որ այս ամենի մասին հավանաբար մարդիկ նրան կպատմեն:
- 2) Երիտասարդն ասաց պարոնին, որ իրենք պատահմամբ են ողջ մնացել, և ապա ավելացրեց, որ այս ամենի մասին հավանաբար մարդիկ նրան կպատմեն:
- 3) Երիտասարդն ասաց պարոնին, որ մենք պատահմամբ ենք ողջ մնացել, և ապա ավելացրեց, որ այս ամենի մասին հավանաբար մարդիկ նրան կպատմեն:
- 4) Երիտասարդն ասաց պարոնին, որ նրանք պատահմամբ են ողջ մնացել, և ապա ավելացրեց, որ այս ամենի մասին հավանաբար մարդիկ իրեն կպատմեն:

### 130. Ուղղակի խոսքի փոխակերպման ո՞ր տարրերակն է ճիշտ:

Երրորդ ճիշտութիւնը պայուսակից պահածոյի տուփ հանեց և ասաց կնոջը.

- Մենք սոված ենք. թե մածում ունես, տո՛ր, համ էլ թեյ պատրաստիր. շաքար ունենք:

- 1) Երրորդ ճիշտութիւնը պայուսակից պահածոյի տուփ հանեց և կնոջն ասաց, որ իրենք սոված են. թե մածում ունի, թող տա, համ էլ թող թեյ պատրաստի. իրենք շաքար ունեն:
- 2) Երրորդ ճիշտութիւնը պայուսակից պահածոյի տուփ հանեց և ասաց կնոջը, որ իրենք սոված են. թե մածում ունի, թող տա, համ էլ թեյ պատրաստի. նրանք շաքար ունեն:
- 3) Երրորդ ճիշտութիւնը պայուսակից պահածոյի տուփ հանեց և ասաց կնոջը, որ նրանք սոված են. թե մածում ունի, թող տա, համ էլ թեյ պատրաստի. իրենք շաքար ունեն:
- 4) Երրորդ ճիշտութիւնը պայուսակից պահածոյի տուփ հանեց և ասաց կնոջը, որ մենք սոված ենք, թող նա, եթե ունի, մածում տա, համ էլ թող թեյ պատրաստի. իրենք շաքար ունեն:

### 131. Ուղղակի խոսքի փոխակերպման ո՞ր տարրերակն է ճիշտ:

- Մնա՛ ուղտի հետ, մինչև համառությունն անցնի, - հրամայում է ուղտապահին քարավանի տերը, - հետո կհասնես մեր հետևից:

- 1) Քարավանի տերը հրամայում է ուղտապահին, որ մնա ուղտի հետ, մինչև ուղտի համառությունն անցնի, հետո հասնի նրանց հետևից:
- 2) Քարավանի տերը հրամայում է ուղտապահին, որ մնա ուղտի հետ, մինչև համառությունն անցնի, հետո հասնի նրանց հետևից:
- 3) Քարավանի տերը հրամայում է ուղտապահին, որ մնա ուղտի հետ, մինչև համառությունն անցնի, հետո կհասնի իրենց հետևից:
- 4) Քարավանի տերը հրամայում է ուղտապահին, որ մնա ուղտի հետ, մինչև համառությունն անցնի, հետո կհասնի նրանց հետևից:

### 132. Ուղղակի խոսքի փոխակերպման ո՞ր տարրերակն է ճիշտ:

-Դուք երեկոյան ինչո՞վ եք գրադարձելու, -հարցրի ես ընկերներիս ու պատասխանի չսպասելով՝ հեռացաւ:

- 1) Պատասխանի չսպասելով՝ հեռացաւ՝ հարցնելով ընկերներիս, թե իրենք երեկոյան ինչով են զբաղվելու:
- 2) Ես ընկերներիս հարցրի, թե իրենք երեկոյան ինչով են զբաղվելու, ու պատասխանի չսպասելով՝ հեռացաւ:
- 3) Ընկերներիս հարցրի ես, թե դուք երեկոյան ինչով եք զբաղվելու, ու պատասխանի չսպասելով՝ հեռացաւ:
- 4) Ես ընկերներիցս հեռացաւ՝ պատասխանի չսպասելով, և հարցրի իրենց, թե երեկոյան ինչով են զբաղվելու:

### 133. Ուղղակի խոսքի փոխակերպման ո՞ր տարրերակն է ճիշտ:

-Հոգիս չի հանդարտվում, -հետ ու առաջ քայլելով՝ կիսաձայն ասաց սեպուիր, ապա ավելացրեց.  
-Արանցից միայն դավադրություն եմ սպասում:

- 1) Հետ ու առաջ քայլելով՝ սեպուիր կիսաձայն ասաց, ապա ավելացրեց, որ իր հոգին չի հանդարտվում. նրանցից միայն դավադրություն է սպասում:
- 2) Սեպուիր կիսաձայն ասաց՝ հետ ու առաջ քայլելով, թե իր հոգին չի հանդարտվում, ապա ավելացրեց, որ միայն դավադրություն է ինքը սպասում մեզանից:
- 3) Հետ ու առաջ քայլելով՝ սեպուիր կիսաձայն ասաց, որ իր հոգին չի հանդարտվում, ապա ավելացրեց, որ նա նրանցից միայն դավադրություն է սպասում:
- 4) Հետ ու առաջ քայլելով՝ սեպուիր կիսաձայն ասաց, որ իր հոգին չի հանդարտվում, ապա ավելացրեց, որ ինքը նրանցից միայն դավադրություն է սպասում:

### 134. Ուղղակի խոսքի փոխակերպման ո՞ր տարրերակն է ճիշտ:

-Ի՞նչ նոր հրաման ունեն ինձ տալու, իշխան, -հարցրեց բանքերը և նայելով նրա ձեռքի նամակին՝ անվատահ ասաց. -լավ կիմն՝ լուր բերանացի տանեմ, քան նամակով:

- 1) Նայելով նրա ձեռքի նամակին՝ անվատահ ասաց բանքերը, թե ինչ նոր հրաման ունի իշխանն իրեն տալու, և ասաց, որ լավ կիմն՝ ինքը լուր բերանացի տանի, քան նամակով:
- 2) Բանքերը հարցրեց իշխանին, թե նա ինչ նոր հրաման ունի իրեն տալու, ապա անվատահ ասաց՝ նայելով նրա ձեռքի նամակին, թե լավ կիմն՝ լուր բերանացի տանեն, քան նամակով:
- 3) Բանքերը հարցրեց և նայելով նրա ձեռքի նամակին՝ անվատահ ասաց, թե իշխանն ինչ նոր հրաման ունի տալու. լավ կիմն՝ լուր բերանացի տանի, քան նամակով:
- 4) Բանքերը հարցրեց իշխանին, թե նա ինչ նոր հրաման ունի իրեն տալու, և նայելով նրա ձեռքի նամակին՝ անվատահ ասաց, որ լավ կիմն՝ ինքը լուր բերանացի տանի, քան նամակով:

### 135. Ուղղակի խոսքի փոխակերպման ո՞ր տարրերակն է ճիշտ:

-Դու խոսիր տնօրենի հետ, տես՝ ինչ է մտածում, -ասաց Արամն ընկերոջը, ապա մտախոհ ավելացրեց. -Եթե տնօրենը համաձայն չէ առաջարկին, ստիպված ենք այլ կազմակերպության դիմել:

- 1) Արամն ընկերոջը ասաց, ապա մտախոհ ավելացրեց, որ նա խոսի տնօրենի հետ, որ տեսնի՝ նա ինչ է մտածում. Եթե համաձայն չէ առաջարկին, ստիպված ենք պրիվատ կազմակերպության:
- 2) Արամը մտախոհ ավելացրեց՝ ասելով ընկերոջը, որ նա խոսի տնօրենի հետ, տեսնի՝ նա ինչ է մտածում. Եթե համաձայն չէ առաջարկին, ստիպված ենք այլ կազմակերպության դիմել:
- 3) Արամն ասաց ընկերոջը, որ նա խոսի տնօրենի հետ, տեսնի՝ նա ինչ է մտածում, ապա մտախոհ ավելացրեց, որ եթե տնօրենը համաձայն չէ առաջարկին, իրենք ստիպված են այլ կազմակերպության դիմել:
- 4) Արամը մտախոհ ասաց ընկերոջը, որ նա խոսի տնօրենի հետ, տեսնի՝ նա ինչ է մտածում, ապա ավելացրեց, որ եթե համաձայն չեն առաջարկին, ստիպված են այլ կազմակերպության դիմել:

### 136. Ուղղակի խոսքի փոխակերպումներից ո՞րն է ճիշտ:

- 1) -*Ձո՞ք գործն է,-ասաց տղամ փորդիկ երեխային,-ուստում ես՝ կեր, բայց հետո չասես, թե փորդ ցավում է:*  
Տղան փորդիկ երեխային ասաց, որ նրա գործն է, ուստում է՝ թող ուտի, բայց հետո թող չասի, թե փորդ ցավում է:  
2) -*Չատիկ եմ ուզում,-լացակումած ասաց երեխամ եղրորդ,-խնձորում եմ, ինձ համար մի զատիկ զայիր:*  
Երեխան լացակումած ասաց, որ նա զատիկ է ուզում, և խնձորեց եղրորդ, որ իր համար մի զատիկ զտնի:  
3) -*Ձեզ ձի կնասուցնեմ, ես ու դու ձիով կգնանք կայարան, հայրիկին կայարանից կրերենք,-ասաց մնեն եղրայրը:*  
Մեծ եղրայրը ասաց, որ նրան ձի կնասուցնի, իրենք ձիով կգնան կայարան, հայրիկին կայարանից կրերեն:  
4) -*Դրանք ձմեռվա համար չե՞ն,- նայելով իրեն մեկնված կոշիկներին՝ զարմացած հարցրեց տղամ:*  
Նայելով իրեն մեկնված կոշիկներին՝ տղամ զարմացած հարցրեց, թե դրանք արդյոք ձմեռվա համար չեն:

### 137. Ուղղակի խոսքի փոխակերպումներից ո՞րն է սխալ:

- 1) *Հայրս ինձ հաճախ ասում էր. «Խելքդ գլուխու հավաքիր և ուրիշի դուրուկի տակ մի՛պարիր»:*  
Հայրս ինձ հաճախ ասում էր, որ խելքս գլուխս հավաքեմ և ուրիշի դուրուկի տակ չպարեմ:  
2) *-Ի՞նչ է անունդ, - հարցրեց ինձ գործավարը ու կոսմալով ցուցակի վրա՝ ասաց. - բարեկիրք ես երևում. կփորձեմ տնօրենին առաջ քեզ ճիշտ ներկայացնել:*  
Գործավարը ինձ հարցրեց, թե ինչ է իմ անունը, ու կոսմալով ցուցակի վրա՝ ասաց, որ բարեկիրք ես երևում. նա կփորձի տնօրենին առաջ ինձ ճիշտ ներկայացնել:  
3) *-Ե՞րբ ես ավարտելու աշխատանքդ, -բարկացավ վրաս տնօրենը և կիսաձայն ավելացրեց.- իմ համբերությունն էլ սահման ունի:*  
Տնօրենը վրաս բարկացավ, թե երբ ես ավարտելու աշխատանքս, և կիսաձայն ավելացրեց, որ իր համբերությունն էլ սահման ունի:  
4) *- Սիրելին, մենք տանող տվեցինք ամեն ինչ,- հուսահատ ասաց եղրայրը նրամ:*  
Եղրայրը նրան հուսահատ ասաց, որ իրենք տանող տվեցին ամեն ինչ:

### 138. Անուղղակի խոսքի փոխակերպման ո՞ր տարրերակն է ճիշտ:

*Սոնան պատանուն ասաց, որ նա տեղ չունի իր սրտում, և ավելացրեց, որ հեռանա, կորչի իր աշքից. ինքն այլևս չի ուզում խոսել նրա հետ:*

- 1) -*Դու տեղ չունես իմ սրտում, հեռացի՛ր, կորի՛ր աշքիցս,- ասաց Սոնան և ավելացրեց,- ես այլևս չեմ ուզում խոսել քեզ հետ:*  
2) *Սոնան պատանուն ասաց և ավելացրեց.*  
-*Դու տեղ չունես իմ սրտում, հեռացի՛ր, կորի՛ր իմ աշքից, ես այլևս չեմ ուզում տեսնել նրան:*  
3) *-Դու տեղ չունես իմ սրտում,- ասաց Սոնան պատանուն և ավելացրեց,- հեռացի՛ր, կորի՛ր աշքիցս. ինքն այլևս չի ուզում խոսել նրա հետ:*  
4) *-Դու տեղ չունես իմ սրտում,- ասաց Սոնան պատանուն և ավելացրեց,- հեռացի՛ր, կորի՛ր աշքիցս. ես այլևս չեմ ուզում խոսել քեզ հետ:*

### 139. Անուղղակի խոսքի փոխակերպման ո՞ր տարրերակն է ճիշտ:

*Նայելով պապանձված վանականներին՝ Լենկրեմուրի մերձավորներից մեկն ասաց, որ նա թող այրի ձեռագիր մատյանները, և ավելացրեց, թե այդ ժամանակ հայերի լեզուները կրացվեն:*

- 1) -*Այրի ի ձեռագիր մատյանները. այդ ժամանակ հայերի լեզուները կրացվեն, - ասաց և ավելացրեց Լենկրեմուրի մերձավորներից մեկը՝ նայելով պապանձված վանականներին:*  
2) *Նայելով պապանձված վանականներին՝ Լենկրեմուրի մերձավորներից մեկն ասաց.*  
-*Այրեք ձեռագիր մատյանները,- և ավելացրեց.- այդ ժամանակ հայերի լեզուները կրացվեն:*  
3) *Նայելով պապանձված վանականներին՝ Լենկրեմուրի մերձավորներից մեկն ասաց և ավելացրեց.*  
-*Այրի ի ձեռագիր մատյանները. այդ ժամանակ հայերի լեզուները կրացվեն:*  
4) *-Այրի ի ձեռագիր մատյանները, -նայելով պապանձված վանականներին՝ ասաց Լենկրեմուրի մերձավորներից մեկը և ավելացրեց.- այդ ժամանակ հայերի լեզուները կրացվեն:*

#### 140. Անուղղակի խոսքի փոխակերպման ո՞ր տարրերակն է ճիշտ:

*Աղջիկը շփոթահար հարցրեց պատանուն, թե նա չէր արդյոք բոլորի ներկայությամբ իրեն գրպարտողը, ապա ավելացրեց, որ ինքը չի ընդունում նրա գոյությունը:*

- 1) -Դո՞ւ չէիր բոլորի ներկայությամբ ինձ գրպարտում,- շփոթահար հարցրեց աղջիկը պատանուն, ապա ավելացրեց,- ես չեմ ընդունում նրա գոյությունը:
- 2) -Մի՞թե դու չէիր բոլորի ներկայությամբ ինձ գրպարտողը,- հարցրեց շփոթահար աղջիկը պատանուն, ապա ավելացրեց,- ես չեմ ընդունում քո գոյությունը:
- 3) Շփոթահար հարցրեց աղջիկը պատանուն, ապա ավելացրեց.  
-Դո՞ւ չէիր բոլորի ներկայությամբ ինձ գրպարտողը. ես չեմ ընդունում քո գոյությունը:
- 4) -Դո՞ւ չէիր բոլորի ներկայությամբ ինձ գրպարտողը,- շփոթահար հարցրեց աղջիկը պատանուն, ապա ավելացրեց,- ես չեմ ընդունում քո գոյությունը:

#### 141. Անուղղակի խոսքի փոխակերպման ո՞ր տարրերակն է ճիշտ:

*Պապը ասաց իր պալատականներին, որ Շապուհը որոշել է իրենց հանգիստ չտալ, և իրենք կանեն այն, ինչ պարտավոր ենք:*

- 1) Պապը ասաց իր պալատականներին.  
- Շապուհը որոշել է մեզ հանգիստ չտալ, և մենք կանենք այն, ինչ պարտավոր ենք:
- 2) Պապը ասաց իր պալատականներին.  
- Շապուհը որոշել է ձեզ հանգիստ չտալ, և մենք կանենք այն, ինչ պարտավոր ենք:
- 3) Պապը ասաց իր պալատականներին.  
- Շապուհը որոշել է ձեզ հանգիստ չտալ, և դուք կանեք այն, ինչ պարտավոր եք:
- 4) Պապը ասաց իր պալատականներին.  
- Շապուհը որոշել է մեզ հանգիստ չտալ, և դուք կանեք այն, ինչ պարտավոր եք:

#### 142. Ո՞ր նախադասության մեջ ընդգծվածը պիտի տրոհվի:

- 1) Սմբատը երկի չէր էլ մտածել, թե ինչ չնչին մասնամասներից կարող են կազմված լինել ազգակցական փոխհարաբերությունները:
- 2) Յավոք այնքան էլ չէի հավատում նրա խոսքերին, ու հետագա բացատրություններն անհմաստ էի համարում:
- 3) -Պալատական դավերն ինձ ու գուցե ամենից շատ քեզ են մտահոգում,- ասաց արքան:
- 4) Միմիայն մի ցանկություն ուներ՝ լվացվել, անձրևից բրգված հագուստը փոխել ու զգալ տաք անկողնու փափկությունը:

#### 143. Ո՞ր նախադասության մեջ բացահայտչից հետո սոորակետ չպիտի դրվի (նախադասությունները կետադրված չեն):

- 1) Նրանց քաղցրահմչյուն անտառների դողանջներն ասես անդրբություն են սփռում հեռվում հուսքի դաշտերի վրա և զնում-խառնվում սարերի մշուշին:
- 2) Գոռը դեռափիքի կտրիճը տոգորվելով հաղթության զգացումով ինքնամոռաց նետվեց մարտի:
- 3) Կրտսեր որդուն Անդրեասին արդեն ամուսնացրել էր և մտածում էր տուն կառուցելու մասին:
- 4) Պատերին կախված էին ամեն տեսակի զենքեր աշտեներ տեղեր դաշույններ նախշազարդված և բանկարժեք քարերով զարդարված:

#### 144. Ո՞ր նախադասության մեջ բութ պիտի դրվի (նախադասությունները կետադրված չեն):

- 1) Տվյալ իրավիճակում լոելը նշանակում էր ուղղակի ընդունել սեփական պարտությունը:
- 2) Մարգարիտը հափշտակությամբ վերընթերցեց գրքի այդ առավոտ կարդացած էջերը և խորասուզվեց մտքերի մեջ:
- 3) Արագածի բարձունքից զբոսաշրջիկների առջև բացված տեսարանը հիասքանչ էր անկրկնելի ու եղակի:
- 4) Բայց անապատի մարդու հրային ու արևաշող նայվածքը ուղղված էր դեպի հեռուները:

**145. Ո՞ր նախադասության մեջ բութ պիտի դրվի (նախադասությունները կետադրված չեն):**

- 1) Եթք եմ այսքան գործը հասցնելու շեմ էլ ուզում մտածել պարզապես հանգամանքները երբեմն այսպիսի անսպասելի ընթացք են ստանում:
- 2) Իմ ծրագրերը շատ էին ուզում էի լինել Վենետիկում հիանալ դոմերի հինավորց քաղաքով:
- 3) Արքան թվում է հուսահատված է իր բանակի անհաջողություններից:
- 4) Ահա ինչ էր նա ակնարկում երբ անցած օրը խոսում էր մեզ հետ:

**146. Ո՞ր նախադասության մեջ բութ պիտի դրվի (նախադասությունները կետադրված չեն):**

- 1) Դուք ասում են այնքան էլ շահագրգուված չեք որ աշխատանքներն արագ ավարտվեն:
- 2) Նրան մնում էր միայն մի ելք դա պայմանագրի վավերացումը հետաձգելն էր:
- 3) Ինչ էր նրան պատահել մենք երկար ժամանակ չզիտեինք:
- 4) Զբոսաշրջիկների աշքերի առջև բացվեց մի հիանքան տեսարան զարմանահրաշ ջրվեժը ցած էր զահավիժում ահոելի արագությամբ:

**147. Ո՞ր նախադասության մեջ բութ չպիտի դրվի (նախադասությունները կետադրված չեն):**

- 1) Կիսավեր վանքի ամբողջովին մամուսակալած պատերի տակ կուչ էր եկել մի պառավ և աղործում էր:
- 2) Կնոջ գուսազ ու առաքինի վարքագծի մասին վկայում էին նրա առատ մագերը գուրկ որևէ զարդարանքից:
- 3) Իսրոն մեր հին ֆիդայիններից մեկը կոտորածից հետո քրդերից մեկ ոսկով հայ մանուկներ էր առնում և ուղարկում Մուշի Խնուսի Բասենի մանկատները:
- 4) Նա նստել էր մի հինավորց ծառի հողից դուրս եկած օճագալար արմատներին ու դիտում էր մայր մտնող արևից ոսկերված շրջապատը:

**148. Ո՞ր նախադասության մեջ բութ չպիտի դրվի (նախադասությունները կետադրված չեն):**

- 1) Անկարելի է սովորական բառերով նկարագրել մեր այցելած հրաշք քաղաքներ Հռոմը Վենետիկը Վիեննան Փարիզը:
- 2) Սասունում կար մի գավառ Նիշ անունով:
- 3) Մեքենան անցնելով քարե նեղ կամուրջը արագացրեց ընթացքը ծանր հևալով բարձրացավ լեռնային ճանապարհով:
- 4) Արարատ լեռան հավերժական ձյունով ծածկված գագաթին էր ուղղված անծանոթի կարոտակեզ հայացքը:

**149. Ո՞ր նախադասության մեջ բութ չպիտի դրվի (նախադասությունները կետադրված չեն):**

- 1) Մթության խորքից դուրս է վազում քաղցած գազանը բրդոտ մի սարդ և ամենի արագությամբ պտույտ է անում ոսկեզույն թելերի վրա:
- 2) Չոր ցեխից տախտակ դարձած գոզնոցը թխկիսկացնելով մեր հետևից քայլում է շոլախ Եգորը:
- 3) Ավան ամին մեծ դանակը ձեռքին շտապում էր այգուց այզի պատվաստներն ստուգելու:
- 4) Եթք ավարտեց համալսարանը գրողի առջև բացվեցին նոր ուղիներ ազգի լուսավորության գործն իրեն էր սպասում:

**150. Ո՞ր նախադասության մեջ բութ չպիտի դրվի (նախադասությունները կետադրված չեն):**

- 1) Ինձ համար շատ անսպասելի էր իմ ընկերոջ Արմանի առաջարկը:
- 2) Հայաստանում զարգացել են բանափրության այդ երկու բաժինները իրար սերտորեն կապված և փոխադարձաբար ներգործելով միմյանց վրա:
- 3) Նրա այդ բացառիկ հիշողություն ունեցող մարդու շնորհիվ ես սկսեցի աշխարհը ճանաչել այլ կողմերով:
- 4) Հայ բանաստեղծական մտքի մեծ հանճարներն են Նարեկացին Թումանյանը Չարենցը Պարույր Սևակը և այլք:

**151. Ո՞ր նախադասության մեջ միջակետ պիտի դրվի (նախադասությունները կետադրված չեն):**

- 1) Երկար ուղևորության ընթացքում այդ ուղևորությունը նրան պարտադրված էր վերևից փորձում էր հասկանալ ինչ նպատակով են իրեն հեռու պահում հաշվեմատյաններից:
- 2) Նրանք ամբողջ ամառ քաղանում էին տարածքը բայց մոլախոտերին վերջ չկար մինչև մաքրելով հասնում էին վերջին մարգերին առաջին մարգերում նորերն էին ծոյն:
- 3) Արևելյան քաղաքում փոշոտ փողոցի ստվերոտ անկյուններից մեկում այդքան կեղտոտ սովորաբար արևելյան շուկաներն են լինում միջօրեի տապին պառկել էր մի ծերուկ դերվիշ:
- 4) Վերևում աստղազարդ երկինքն էր ներքեսում ծովի հազիվ նշմարվող արձաբազօծ մակերևույթը:

**152. Ո՞ր նախադասության մեջ միջակետ պիտի դրվի (նախադասությունները կետադրված չեն):**

- 1) Եվ որովհետև նա խոսում էր ոգեշնչված և անկեղծորեն ամբոխը հուզվեց փովեց նրա ոտքերի առաջ ծովի պես ալիքվելով:
- 2) Թող կորչեն այդ ըմբռատները նրանք կործանում են մեր թագավորությունը:
- 3) Երբ եկավ մեծ հաղթանակի օրը և ծածանվեցին ժիրանավառ դրոշակներ ժողովուրդը ազատության հզոր երգեց:
- 4) Եվ ամեն օր նայում էր աշխարհին և ամեն օր զարմանում այնպես կարծես առաջին անգամ էր տեսնում աշխարհը:

**153. Ո՞ր նախադասության մեջ միջակետ չպիտի դրվի (նախադասությունները կետադրված չեն):**

- 1) Այս հարցը կարող է անհերեք ու տարտկալի թվական կամ էլ ապշեցնել ու համկարծակի բերել չէ որ միշտ մեր մոլորակի մի կողմում ցերեկ է մյուս կողմում զիշեր:
- 2) Հենց որ դասագրքերը բաժանեցին ուսուցչուհին նա մի նիհար սուր քրով օրիորդ էր պատվիրեց բացել ուրսունիններորդ էցը:
- 3) Մյուս դանդաղաբժիշկ ամրակուու կրիան փոքր-ինչ գերազանցում է խխունչին նա ունի յոթ մետր-ժամ արագություն:
- 4) Նա փղձկաց վաղուց կարիք էր զգում ազատվելու հոգեկան ծանր բեռից:

**154. Ո՞ր նախադասության մեջ միջակետ չպիտի դրվի (նախադասությունները կետադրված չեն):**

- 1) Այս նամակի հետ ուղարկում եմ նաև դրամ երք ծախսես հիշիր որ այն հայրդ է ուղարկել:
- 2) Մուշեղը մտածում էր կարգի բերել իր ընտանեկան գործերը նա նույնպես մի քանի օրից պետք է քողներ Ողական ամրոցը:
- 3) Սամվելի հայրն ուներ մի նայատակ որդուն դարձնել հայոց այրուճի հրամանատար:
- 4) Մղձավանջ համառորեն հետապնդում էր նրան այդ մարդը ամեն զիշեր երազում տեսնում էր կորցրած բնօրրանը:

**155. Ո՞ր նախադասության մեջ փակագծեր չպիտի դրվեն (նախադասությունները կետադրված չեն):**

- 1) Հնում ալյումինն այնքան բանկ արժեք մի ժամանակ այն ուսկուց շատ քիչ էր էժան որ օգտագործում էին միայն զարդեր պատրաստելու համար:
- 2) Սոտ երկու հարյուր տարի առաջ երկու շվեյցարացիներ առաջին անգամ հասան Ալպերի Սոնրյան գագաթը դա Եվրոպայի ամենաբարձր լեռներից մեկն է:
- 3) Մի լազ ծերունուց լազերը վրացիներին ցեղակից ժողովուրդ են Աճառյանը սովորում է լազերենը գրում նրա քերականությունը:
- 4) Արշիլ Գորկին իսկական անուն-ազգանունը Ռուսանիկ Ալոյան համաշխարհային հոչակի արժանացած ամերիկահայ գեղանկարիչ է:

**156. Ո՞ր նախադասության մեջ կետադրական սխալ կա:**

- 1) Նա հիպնոսացած էր, կախարդված և զգիտեր՝ ուր է տանում իրեն կյանքը:
- 2) Շրջում են Վերսալի արքայական պալատի բակերում՝ հոյակապ ծառութիներ, մարմարյա ավազաններ, հախճապակյա ծաղկամաններ, հեթանոս աստվածների կիսանդրիներ:
- 3) Իշխանի վրա իրենց հրացայտ աչքերն էին հառել երկու ըմբռատ դեռատիներ, որոնք, շրջապատի լուրջունից գրգռված, կարծես կամենում էին սլանալ դեպի իշխանը:
- 4) Տղան այդ հանդիպումից հետո անդադար մտածում էր. «Տեսնես ի՞նչ է նրա անունը»:

### **157. Ո՞ր նախադասության մեջ կետադրական սխալ կա:**

- 1) Լիլիթը ծնվի եկած դիտում էր. կարապները ճերմակափետուր թևերով էին, պացիկ պարանոցներով:
- 2) Շուտով մի ոսկեզօծ գավարի վրա նկարել տվեց վեհանձն սպարապետի պատկերը՝ ճերմակ ձի հեծած, և խնջույքների ժամանակ այս դնում էր իր առջեւ:
- 3) Վերջերս երազների մեջ իրեն հաճախ էր այցի գալիս գեղեցիկ դրացուիհն՝ Վարդուիհն և խայտում քշնակի պես:
- 4) Չղիմանալով ստորգետնյա զարհուրելի ցնցումներին՝ ծնկներից կոտրվեց ու տապալվեց Հելիոսի՝ աշխարհին հիացնող ու ապշեցնող արձանը:

### **158. Ո՞ր նախադասության մեջ կետադրական սխալ կա:**

- 1) Չնայած մենք էինք կատարվածից վրդովված, մեղավորն էր ձայնը գլուխը գցել:
- 2) Ամրոցը հին էր, բոլորերյան շրջապատված անդնդախոր կիրճներով, անանցանելի մացառուտներով:
- 3) -Եժան ես պրծել,-լրջորեն վրա բերեց նա՝ տեղեկանալով, որ ինձ տասը տարով են ազատազրկել, հետո ավելացրեց.-քեզ ո՞վ ասաց՝ բանաստեղծ դառնաս:
- 4) Շապուիհ՝ պարսից երկարակյաց շահը, հասցրել էր փորձել հայոց չորս քագավորներին և համոզվել, որ հայոց արքաների բյուզանդական կայսրերի հետ ունեցած մտերմության գլխավոր կովաններից մեկը կրոնն է, մյուսը՝ մշակույթը:

### **159. Ո՞ր նախադասության մեջ կետադրական սխալ կա:**

- 1) Նավը տաշեղի պես ելնում էր վերև, և, տեսնողին թվում էր, որ որ է կխորտակվի:
- 2) Նա, թվում էր, շփորչած է և չի կարողանում մտքերը հստակ ձևակերպել:
- 3) Թվում էր՝ հասել էր հաղթանակի պահը. թշնամին խուճապահար փախչում էր:
- 4) Հաղթանակը բոլորին թվում էր անհասանելի ու անիրականանալի:

### **160. Ո՞ր նախադասության մեջ կետադրական սխալ չկա:**

- 1) Լինելով շափից դուրս անմիջական բնավորության տեր, ունենալով զգայուն հոգի՝ աղջիկը չէր կարողանում կեղծել իրեն, և նստել էր՝ ատամներն իրար սեղմած, տխուր:
- 2) Բայց մի քանի րոպե շանցած՝ կամաց առավ սարսափած. նրան թվաց, թե երկու կին, թև թևի տված, շտապում են հասնել իրեն:
- 3) Աղջիկը հեռանում է՝ բարակ մեջքը թեքած կմի ծանրության կողմը, ու թվում է՝ նրա ուսերն անզոր են պահելու այդ ծանր կուժը՝ աղջկական երազներով ու հույզերով լցված:
- 4) Անկողնում պառկած՝ կարդում եմ, և գրքի էջերից ինչ-որ միտք հիշեցնում է ինձ իմ մորք՝ վաղուց աշխարհից հեռացած և օտար ափերում դեգերող եղբորս:

### **161. Ո՞ր նախադասության մեջ կետադրական սխալ չկա:**

- 1) Դպրոցը գյուղի ցածրադիր մասում է՝ գետափին. մի քանի անգամ հեղեղը ներս էր լցվել, պատերը խոնավ էին ու տեղ-տեղ մզլած՝ քայլայված:
- 2) Երկար վեճից հետո՝ ի վերջոն հայրս զիջեց և համաձայնեց, որ որդին եկեղեցում պատկվի:
- 3) Պատահում էր՝ աշքերի փայլատակումին հաջորդում էր դանակի փայլատակում, և այդ երկու փայլակներին ընդառաջ էր գնում նա սրերից ավելի հզոր իր խոսքով, և տիրում էր խաղաղություն:
- 4) Չնայած նախընթաց ամբողջ օրը ճանապարհորդել էի՝ երեկ շատ վաղ արթնացաւ:

### **162. Ո՞ր նախադասության մեջ կետադրական սխալ չկա:**

- 1) Դիլան դային տեսավ՝ ինչպես արնոտ միրիավը մամուս քարից վայր ընկավ թփուտների մեջ և ափսոսանքով նայեց միրիավի հետևից:
- 2) Միրիավն էր. քուջուզ անելով փոխում է արնագույն տոտիկները և կտուցով փորփում է լորենու՝ վաղուց դեմնած տերեւները:
- 3) Լուսնիկա զիշերներին ծովափին՝ խարույկի մոտ, երիտասարդը ձկնորսների հետ ունկնդրում էր նրանց քաղցրահունչ սազի հոգեհմա ելեկցները, ծովի անուշ ձայնը:
- 4) Երբեմն նրա աչքին ընկնում էր մի շքեղ բգեղ կամ թիթեղ՝ գունավոր թևերով և ակնապիշտ դիտում էր, թե ինչպես են մրջյուններն անընդհատ աշխատում:

### 163. Ո՞ր նախադասության մեջ կետադրական սխալ չկա:

- 1) Հեռավոր անտառներում՝ անծայրածիր օվկիանոսի ու լեռկ ժայռերի վրա, մաղում էր ձյունը:
- 2) Այգին հին էր, չխնամված ծառերով լի, շրջապատված փշերով ու մոլախոտերով:
- 3) Նա նստել էր գետի ափին ու ակնդետ նայում էր հոսող ջրին, և անընդհատ փոխվող ալիքների հետ՝ փոխվում էին խառնիճաղանց մորքերը:
- 4) Հանդիսատեսները կամաց-կամաց հոգնեցին ու դժգոհեցին, բայց աճպարարն այլևս ոչ ոքի չէր տեսնում, և ոչինչ չէր լսում:

### 164. Ո՞ր նախադասության մեջ կետադրական սխալ չկա:

- 1) Ուշադիր էր արդյոք նա իր ծննդների նկատմամբ, չեմ կարող ասել, բայց այդպես էր ցույց տալիս:
- 2) Տեսա, որ կայազորի՝ լայն-լայն ցուցափեղկերով խանութի հետևից դուրս եկան մի զինվորական, ու մի մարդ՝ քաղաքացիական հազուստով:
- 3) Երբ գորքն ընկրկեց և սկսեց հետ-հետ շրջվել՝ շփորչած, բաժան-բաժան, և փղերն էլ սկսեցին դեսուլին վազվել՝ կնճիրները վեր պարզած, իրանանատարը մի պահ երկմտելուց հետո որոշեց անցնել հակահարձակման:
- 4) Զգալով, որ իր գործը լավ է կատարել՝ Ամալյան մի անգամ էլ անբաքույց հաճույքով զննեց սեղանը՝ բաց շրողնելով ոչ մի մանրուր:

### 165. Պատասխանների ո՞ր տարբերակում են ճիշտ նշված այն թվերը, որոնց տեղում ստորակետ պիտի դրվի:

Հորիզոնի վրա շողաց լուսաբացի կաթնազույն ժապավենը (1) հետո բարձրացավ արևը (2) և իր ուկեզօծ շողերով ողողելով կիրճի արևահայաց լամշերը բարի ժպտաց աշխարհին:

Հեռվում կապտարույր մշուշի մեջ (3) երևում էր մի սար փեշերը պատած խիտ թվուտներով (4) և անձայրածիր անտառով: Թվում էր թե դա մի առասպելական հովիկ է հակայսական փափախ որսած (5) և այծենական ուսերին զցած: Հենց այդ կողմն էլ ըստ պայմանավորվածության (6) դիմեցին որսորդները:

Առջևից զնում էր Ավետը իսկ Գարեգինը անձայն (7) շունչը պահած (8) հետևում էր նրան: Կածանից պոկվող քարերը դրդյունով գլորվում էին ներքև (9) և տեղահան անում ուրիշ քարեր (10) ու մինչև ձորը հասնելը մեկը դառնում էր հազար:

- 1) 1, 2, 3, 6, 7, 9, 10
- 2) 1, 3, 6, 7, 10
- 3) 2, 3, 4, 6, 8, 10
- 4) 2, 4, 5, 6, 9

### 166. Պատասխանների ո՞ր տարբերակում են ճիշտ նշված այն թվերը, որոնց տեղում ստորակետ պիտի դրվի:

Ինձ նույն օրն էլ տեղավորեցին մի տան մեջ որտեղ և պիտի ապրեի: Տանտերը (1) Օհան ապերը (2) նահապետական քարքով մի մարդ էր որի նման մարդիկ հիմա մեր գյուղերում այլևս չկամ: Չմեռը նստում էր սենյակի անկյունում (3) բուխարու մոտ (4) չոր փայտը դարսում կողքին փայտները մեկ-մեկ զցում էր կրակի մեջ (5) պատմություններ անելով շահի ժամանակից (6) անցած-զնացած օրերից որսից և անտառից: Իսկ (7) եթե ոչ ոք չէր լսում նրան (8) մենակությունից (9) կամ ձանձրույթից բուխարու առաջ բաց էր անում շարակամի գիղըքը:

Տանը չորս հոգի էինք եւ Օհան ապերը (10) նրա պատավ կիմը և տասը տարեկան Աշոտը որ հավատարիմ ընկերու էր:

- 1) 1, 2, 4, 6, 8, 9
- 2) 3, 5, 7, 9, 10
- 3) 2, 4, 6, 8, 10
- 4) 3, 4, 6, 7, 9, 10

**167. Պատասխանների ո՞ր տարբերակում են ճիշտ նշված այն թվերը, որոնց տեղում ստորագետն պիտի դրվի:**

Աշխարհի ամենադանդաղաշարժ կենդանիներից երկուսի խխունջի և ամրազրահ կրիայի կողքին որոնց մասին անթիվ-անհամար հինավուրց առասպելներ կան (1) մարդը (2) բվում է (3) ժիր ու առույգ է բայց այլ կերպ կերևա եթե առանց կեղծ հապատության մեզ բաղդատենք (4) ավելի արագ շարժվողների հետ: Ճիշտ է մարդը կարող է հաջողությամբ մրցել հարթավայրային մեղմասահ գետերի մեղմ կոհակվող հոսանքի հետ բայց սովորական ճանձի հետ որը տղղալով (5) ընդամենք մեկ ակնքարքում (6) բռչում է հինգ մետր մարդը կարող է հաջողությամբ մրցել թերևս միայն լայն տախտակներից պատրաստված դահուկներով: Գորշ նապաստակից կամ որսորդական շնից մարդը (7) որքան էլ ճգնում է (8) առաջ չի անցնում նոյնիսկ քառատրոփ վարզող ձիով իսկ բարձրաքոյիք արձվի հետ կարող է մրցել միայն արծաթափայլ ինքնաթիռով:

Բայց մարդը որպես մոլորակի ամենախնդացի էակ (9) հայտնագործել է բազմաթիվ յուրօրինակ մեքենաներ որոնք նրան դարձնում են աշխարհի ամենասրազրնթացը (10) և մարդը հապատ է դրանով:

- 1) 1, 2, 3, 4, 7, 8, 9
- 2) 1, 2, 3, 7, 8, 9, 10
- 3) 2, 3, 7, 8, 9, 10
- 4) 1, 2, 3, 5, 6, 7, 8, 10

**168. Պատասխանների ո՞ր տարբերակում են ճիշտ նշված այն թվերը, որոնց տեղում բութ պիտի դրվի:**

Երբ մենք մտանք արվեստանոց (1) Սինասը վառեց բոլոր լամպերը և մեզ նայեցին նրա (2) ասես լուսից ծնված աշխատանքները: Ես շարունակ փորձում էի բնորոշել ինձ հետ կատարվածքը բայց այլպես էլ չկարողացաւ: Այդ բայց միայն եկամուտ շատ տարիներ անց (3) հազար ինք հարյուր ութունինգ թվականին երբ արդեն վաղոց չէի փնտրում այն: Վենետիկում էր: Մենք (4) համերգային խմբի անդամներս դուրս գալով հյուրանոցից (5) ուղղվեցինք դեպի Սուրբ Սարկոսի հրապարակ (6) մեր ուղերթք ծատելով բազմաթիվ ուղենաշներով (7) գրված եվրոպական գրեթե բոլոր լեզուներով (8) անգլերենով ֆրանսերենով գերմաներենով... Եվ հենց այնտեղ (9) Սուրբ Սարկոսի հրապարակում են ականա հիշեցի Սինասի նկարները և հասկացաւ որ նրա արվեստանոցում պայմանական էր եղել (10) գոյնի պայման:

- 1) 2, 3, 4, 5, 6, 7, 8, 9
- 2) 1, 2, 4, 6, 10
- 3) 2, 3, 4, 6, 7, 8, 9
- 4) 3, 4, 7, 9, 10

**169. Պատասխանների ո՞ր տարբերակում են ճիշտ նշված այն թվերը, որոնց տեղում բութ պիտի դրվի:**

Մի օր մի կառք կամք առավ Անդրեասի որդի (1) Երեմիայի հիմ տան դրանք: Կառքից իջակ մի չափահաս մարդ (2) ծամերի մեջ արդեն սպիտակ ալիքներով ընտանի քայլերով մոտեցավ դրանք բախեց դրան Երկարը (3) երեք անգամ (4) լստ վաղեմի սովորության: Դուրս բաց մի անձանոր կիմ: Տեսնելով անձանոր կնոջը (5) չափահաս մարդը ամեն ինչ հասկացավ (6) հին տունն անցել էր օտարների ձեռքը: Նա հարցրեց (7) որտեղ են այդ տան հիմ քանիշները: Կինը խաչակնեց (8) առանց խաչակներու չէր կարելի (9) հիշել անցածներին:

- Որտեղ է Սարգարիսը հարցրեց մարդը:
- Նա այժմ կինն է մետարսագործ Գրիգորի (10) Թաղեւուի որդու:

- 1) 1, 2, 4, 5, 6, 7, 10
- 2) 2, 4, 5, 7, 10
- 3) 2, 4, 5, 6, 7, 10
- 4) 3, 5, 6, 8, 9

**170. Պատասխանների ո՞ր տարրերակում են ճիշտ նշված այն թվերը, որոնց տեղում բռնը պիտի դրվի:**

Այժմ եքք ամեն ինչ գիտես սիրելիս կասեմ (1) ինչու եկա և ուր եմ գնում: Երկու սիրելիներ կանգնած են իմ առջև: Մեկը (2) իմ բզեզված հայրենիքն է մյուսը (3) վտանգի մեջ գտնվող սիրելի կինը(4) դու: Երկուստեք կանչում են ինձ և ես երկմտում եմ (5) դեպի ուր զնամ որովհետև երկուսի համար էլ ոխտել եմ անձնազոհություն: Իմ սրտագին իղձերը իմ ամենաջերմ փափազներն ահա (6) բացում եմ քո առջև սիրելիս դու ցույց տուր ճանապարհը թե դեպի որը զնամ: Աշխենք համակ ուշադրություն դարձած (7) ունկնդրում էր սիրած երիտասարդի խոստովանությունը (8) հիացմունքով լի հայացքը սևեռած նրա դեմքին: Լսելով վերջին խոսքերը(9) օրիորդի (10) կրակի պես բոցկտում աչքերն արցումքով լցվեցին:

- 1) 1, 2, 3, 5, 7, 9
- 2) 1, 3, 4, 5, 8, 9, 10
- 3) 2, 4, 7, 8, 9, 10
- 4) 1, 3, 4, 5, 7, 8, 9, 10

**171. Պատասխանների ո՞ր տարրերակում են ճիշտ նշված այն թվերը, որոնց տեղում բռնը պիտի դրվի:**

Այս արգահաստելի մարդը (1) Հոհան եպիսկոպոսը ոչ միայն ազահ էր այլ նաև ինքնասեր: Պատահում էր (2) գնում էր քագավորի պալատ և իրեն պահում էր (3) ինչպես խեղկատակ (4) չամաշելով իր տարիքից և կոչումից: Չորեքրաք վազելով (5) ծամածություններ անելով ու կենդանիների ձայներ հանելով (6) ծիծաղեցնում էր քագավորին (7) ուղտի պես սողալով նրա սորքերի առջև:

Եվ ուղտի սապատի պես մեջքը ուղրած(8) վազվում էր սրահում ապա մոտենում քագավորին (9) կրկնում նոյն խոսքերը: Իսկ քագավորը կամ իշխանները նրա մեջքին դնում էին կնքված հրովարտակներ (10) իրը թե քորափելով իրենց մեղքերը:

- 1) 1, 2, 3, 4, 6, 8, 10
- 2) 1, 2, 4, 6, 7, 8, 10
- 3) 2, 5, 7, 8, 9
- 4) 1, 2, 5, 4, 6, 7, 8, 10

**172. Պատասխանների ո՞ր տարրերակում են ճիշտ նշված այն թվերը, որոնց տեղում բռնը պիտի դրվի:**

Կարկաչուն գետակի զմրուխտյա ավիհն մի խեղճ ջրաղաց կար: Ջրաղացի դրան առջև(1) թիկն էր տվել ջրաղացանք: Զիրուխը թերմին (2)անէացած աշխարհից(3) նա ծխում էր: Կողքին նստել էր երեսնամյա կինը իսկ նրանց աչքերի առջև մի չքնաղ մանուկ (4) նրանց որդին խաղում էր անհոգ: Վաղորդյան սյուրից մեղմիկ սոսափում էր ընկուզնին և ջրաղացը բվում է (5) հերիաք էր պատմում (6) անուշ մտմտալով: Մի օր այդ չքնաղ մանուկը վազվելով (7) հեռացավ ջրաղացից և կորցնելով սունդարձի ճանապարհը (8) նստեց ու լաց եղավ աղեկսուր: Կողքից անցնում էր մի քարավան և ուղևորներից մեկը տեսմելով լացող մանկանը (9) խղճաց տարավ իր տուն և որդեգրեց նրան:

Սակայն սղայի հարազատ ծնողները շարունակում էին սպասել իրենց որդուն ով գիտե (10) նա մի օր հայտնի գուցե:

- 1) 1, 2, 4, 6, 9, 10
- 2) 3, 4, 5, 6, 7, 8, 10
- 3) 3, 4, 6, 8
- 4) 2, 5, 6, 8, 9

**173. Պատասխանների ո՞ր տարրերակում են ճիշտ նշված այն թվերը, որոնց տեղում բութ պիտի դրվի:**

Մի օր (1) կրկին հայտնվում է մահվան աստվածը (2) ահազարիոր ու սարսագորու և Սիզիփոսի (3) մեղքերի մեջ խարխափող հոգին (4) արդեն անվերադարձ հայտնվում է ստորերկրյա խավարում ուր նրան դաժան պատիժ էր սպասվում: Նա պետք է վիրիարի ապառաժը (5) գլորելով քարձրացներ երկնամուխ լեռան զագարը: Շիզ քափելով (6) արևածագից մինչև մայրամուտ գլորում է Սիզիփոսը հսկա ժայռաբեկորը (7) դեպի լեռան (8) ամպերի մեջ կորած քարձրունքը: Ու երբ թվում է (9) ահա կավարտի գործը քարը դուրս է այրծնում ձեռքերից և գլորվում ցած (10) դեպի անդունդը:

- 1) 1, 5, 6, 7, 9
- 2) 1, 2, 3, 8, 9, 10
- 3) 2, 3, 7, 9, 10
- 4) 2, 3, 8, 9, 10

**174. Պատասխանների ո՞ր տարրերակում են ճիշտ նշված այն թվերը, որոնց տեղում բութ պիտի դրվի:**

Ծնողմերի քածանոթյան լուրը խորապես հուզել էր երեխային քայց ինչ կարող էր ամել դեռափերիք մի մանուկ որև ընդհանրապես չգիտեր (1) ինչ է ամուսնական հավատարմության ուխտը: Ու հիմնա տարարախտ երեխան կաղնեփայտն շագանակագոյն քաղկարողի մեջ կծկված (2) խորհում էր մահվան մասին նաև պատկերացնում էր օվկիանոսի (3) մուր ու քողարկված հատակը (4) ականակիր գիշերվա պես սարսագորու և անսահման մի սարսափ ինչ-որ անդրորության հետ միաձուլված (5) մուայլորեն պարուրում էր նրա (6) պատանեկան ջինջ հոգին: Թվում էր (7) ինքն էլ վառվող մի մոմ է որ սուզվում է օվկիանոսի հատակը:

Վերջապես դուռը քացվեց երեխան մղձավանջի տեսիլքից սրափիված (8) ըմբոշինեց մոր ներկայությունը: Նա խւկոյն փակեց աչքերը բոլոր նյարդերով զգալով (9) ինչպես է մոտենում նա (10) լուսավոր ալիք դարձած և իրենք քարձրանում են խավարչունի օվկիանոսի հատակից:

- 1) 4, 6, 7, 9, 10
- 2) 1, 2, 3, 4, 5, 7, 8, 10
- 3) 1, 4, 5, 7, 9, 10
- 4) 1, 4, 7, 9, 10

**175. Պատասխանների ո՞ր տարրերակում են ճիշտ նշված այն թվերը, որոնց տեղում բութ պիտի դրվի:**

Առավոտյան երբ քանձր աղջամուղը աստիճանաբար տարրալուծվում էր ու տեղի տալիս խոտասաղարթ ծառերի (1) քարձրուղեց ճյուղերի արանքից քափանցող շողերին քացատներում ճյան (2) սպիտակարույր սփոռոցի վրա լերդացած արյան շիրեր էին երևում ու այստեղ-այնտեղ (3) խառնիճաղանջ հետքեր կոկորդը կրծած խեղդած գայլի դիակ կոտրատված ճյուղեր: Սինչն շների (4) որսի կենդանու միսն ուտելը (5) Պանինը լոելյայն նստում էր մի փշակի մոտ ամշարժանում (6) կարծես անէանալով իր դժինեմ քմահաճույքին հազորդ տված այդ վայրից:

Պանինի սարսափը հեռուներում էր տարածված և նրա մասին քերներերան պատմություններ էին անում սարսում (7) նրան տեսնելիս: Ասում էին նախկին սպա և մարդ և սպանել ձերբակալվել խսկ քանալից ազատվելուց հետո (8) զնացել է անտառ: Ասում էին նաև (9) հյուսիսի անտառներից մեկում նա իր կնոջն էր սպանել պարզապես հրամայել էր շներին (10) զզզեն նրա մարմինը:

- 1) 1, 2, 3, 4, 8, 10
- 2) 3, 4, 6, 9, 10
- 3) 1, 3, 4, 5, 6, 8, 9
- 4) 2, 3, 4, 6, 7, 9

**176. Պատասխանների ո՞ր տարրերակում են ճիշտ նշված այն բվերը, որոնց տեղում բութ պար պիտի դրվի:**

Չքնար է Սևամբ տարվա բոլոր եղանակներին (1) թե զարման արևոտ օրը թե ամռան աստղագարդ գիշերին թե աշնան հողմերին երբ մոնչում է (2) փրփրարաշ ալիքները առավիճայ ժայռերին զարկելով: Պիտի ապրես նրա ափին (3) պարզորոշ տեսնելու համար (4) ինչպես է շարունակ փոփոխում իր երանգները (5) քննուշ նազում հետո քիչ-քիչ մռայլվում (6) խոժող շանթեր արձակելով իսկ երբեմն էլ քեզ բվում է (7) արեգակը (8) երկնքից իջնելով (9) ցոլում է նրա պաղպաջում ջրերում: Երբ անվրդով նիրհում է իր զմրուխտ ափերի մեջ չես կարող որոշել (10) երկինքն է իշել հանգստանալու գեղամա հսկաների շարքում թե ինքն է ցոլանում երկնքի կապույտում:

- 1) 1, 3, 4, 5, 6, 7, 10
- 2) 2, 3, 5, 7, 8, 9
- 3) 1, 2, 3, 4, 6, 7, 10
- 4) 2, 4, 5, 8, 9, 10

**177. Նախադասություններից քանիսո՞ւմ բութ պիտի դրվի (նախադասությունները կետադրված չեն):**

- Ուսկանը քափ-քրտինք մտած վանքի ստվերի միջով դիմեց վանականների խուցերի կողմը հոգնած ընդարձացած:
  - Երիտասարդ վանահոր մորուքի մեջ արդեն արծաթե թելեր էին երևում լայն ճակատը ակոսվում էր և գնալով մքնում:
  - Նորատունկ ծառերի հետևից պարիսպների աշտարակները նորաշեն և վեհաշուք իրենց ստվերն էին փոել քարակարկառների վրա:
  - Փողոցի շրջադարձում նա հանկարծ կանգ առավ հեռվում տարօրինակ ստվերներ էին երևում:
- 1) մեկում
  - 2) երկուսում
  - 3) երեքում
  - 4) չորսում

**178. Նախադասություններից քանիսո՞ւմ և-ից առաջ ստորակետ պիտի դրվի (նախադասությունները կետադրված չեն):**

- Ծաղկեները երկար վիճեցին և նրանք բաժանվեցին երկու խմբի մեկը վարդին էր ուզում ընտրել քսագավոր մյուսը մեխակին:
  - Տաք շունչ ես զգում երբ տեսնում ես բացվել է ձնծաղիկը առաջին սիրո խորիրդանիշը և ժպտում է իր լուրթ աշխեներով:
  - Թագուհին վերցրեց մազադարձա մատյանը բաց արեց նշան դրած էջը որ կարդա և նստեց օրոցին:
  - Ծառերի վրա ոստից ոստ թռչկոտում և իրենց զավակներին թռչելու գաղտնիքներն էին սովորեցնում ճնճղուկները:
- 1) մեկում
  - 2) երկուսում
  - 3) երեքում
  - 4) չորսում

**179. Ո՞ր նախադասության մեջ կետադրական սխալ կա:**

- 1) Լևնը, տատանվելով ու վախենալով, բայց ներքին վճռականությամբ մոտեցավ Գոզոյին և փարավեց նրան:
- 2) Միասին գնացել էինք Օշական՝ հայ հանճարի՝ Սեպոպ Մաշտոցի՝ ուխտատեղի դարձած շիրիմը տեսնելու:
- 3) Երբ երեխանները դժվարանում էին կարդալ, պարոն Ստեփանն այդ դժվարությունը վերացնելու համար ուներ մի շատ պարզ միջոց՝ փայտի հարվածը:
- 4) Քրիստինն սաստիկ շիկնում էր աստիճանների վրա ինձ հանդիպելիս:

**180. Ո՞ր նախադասության մեջ կետադրական սխալ կա:**

- 1) Մարությանը, չնայած իր վատ տրամադրությանը, հավատարիմ է մնացել իր ամենօրյա սովորությանը՝ թեյ խմելիս լրազիր կարդալուն:
- 2) Փողոցում կանգ առավ մի կառք, մի քիչ հետո ներս մտավ մի օրիորդ՝ ձեռքին թղթի արկղեր, և սկսեց վերև վազել՝ շուրջը ոչինչ չնկատելով:
- 3) Թվում էր, թե դա մոռացված մի անկյուն է այն օրից, երբ դեռ մարդը չկար և բրածո դինոզավրը անսահման ազատ էր զգում իրեն:
- 4) Հետո խելառ ու շար քամին, թերը թափահարելով, սուլելով ու շվշպացնելով փախավ, թռավ հեռուները:

**181. Ո՞ր նախադասության մեջ կետադրական սխալ կա:**

- 1) Մտածեցի՝ նամակը տիկին Արաքսյայից է (ես նրան նամակ էի գրել), ու հայշտապ բացեցի նկարազարդ ծրարը, որ կարդամ գրությունը:
- 2) Գյուղի եզրին խմբված հետաքրքրասերները քար կտրած հետևում էին բոցազույն նժույզի գազազած ընթացքին:
- 3) Չնայած իշխանի՝ քրտինքի մեջ կորած նժույզը հոգնած էր, իսկ ճանապարհը՝ զարիվեր, այնուամենայնիվ նա անընդհատ շտապեցնում էր խեղճ կենդանուն, որպեսզի ամրոց հասնի մի քանի վայրկյան առաջ:
- 4) Այդտեղ էր և նշանավոր պալատական բանաստեղծը, որը երգելով Ֆարիսի հաղթանակներն ու փառահեղ գործերը՝ արժանացել էր նրա ջերմ համակրանքին:

**182. Ո՞ր նախադասության մեջ կետադրական սխալ կա:**

- 1) Հովհանս Կեսարի՝ դեպի Բրիտանական կղզիներ կատարած արշավանքներից հետո այդ սովորությունը տարածվեց մինչև Սկանդինավիա:
- 2) Կատերինան, որ վլորվված էր և խիստ հոգնած, և որին արդեն ձանձրացրել էր հոգեհացը, իսկույն ընդհատեց նրան:
- 3) Մեզ հայտնի հին օրենսդրություններից ամենակատարյալը հելլենականն է, որը, ինչ-ինչ փոփոխությունների ենթարկելով, ծնունդ տվեց հոռմեական իրավունքին:
- 4) Բայց մինչ իշխանը լուրջ տեսք կընդուներ և ինչ-որ քան կփնքինքար՝ ակամա նայեց նրան և այլևս չկարողացավ զայտել ծիծաղը:

**183. Ո՞ր նախադասության մեջ կետադրական սխալ չկա:**

- 1) Սարսափելի է. գրեթե ոչինչ չարած դառնում ես քննադատության թիրախ:
- 2) Մյուս քրմավետերի խորհրդակը՝ նա որդուն տարավ բոլոր աստվածների տաճարները:
- 3) Դրսում վատեցին խարույկները, սակայն ցուլերին դեռ չմորթած, մրրկաշունչ քամի բարձրացավ:
- 4) Մեր տիրուհին ջերմագին խնդրում է Ձեզ՝ քաջ և ազատար ասպետիդ՝ այցելեք իրեն:

**184. Ո՞ր նախադասության մեջ կետադրական սխալ չկա:**

- 1) - Իմ հայրը՝ ծովի աստվածը, ուղարկել էր ինձ իմանալու, թե դու ինչ ես մտածում, - ասաց նա:
- 2) Մի անգամ (վաղուց նման դեպք չէր եղել), փողոցում վեճի բռնվեցի անձանոր մեկի հետ:
- 3) Բայց Շապուհ թագավորի կանանց որևէ անարգանք չհասցնելով՝ Մուշեղը հրամայեց՝ բոլորին ազատ արձակեն և ապահով ուղարկեն Պարսկաստան:
- 4) Ոչ ոք նրան չէր ճանաչում. չգիտեին որտեղից էր նա գալիս:

**185. Ո՞ր նախադասության մեջ կետադրական սխալ չկա:**

- 1) Տղան դարձյալ կանգնեց, հետո մի քիչ վարանելով, նայեց լանջն ի վեր բարձրացող արահետին:
- 2) Ծիրանի ծառի ստվերն ու արևի դեղին բծերը թրթում են իմ տետրակի վրա, օրորվում՝ ինչպես ջրածտի ճոճքը:
- 3) Մի անգամ վառատենչ իշխանը, հանկարծակի խուժելով մի հեռավոր իշխանության սահմաններից ներս, ամրոցից ամրոց գրավելով՝ հասնում է երկրի մայրաքաղաքի փակ դրսներին:
- 4) Այստեղ թիակն առավ Ուրաշիման, մյուս թիակն առավ ծովի թագավորի աղջիկը, ու երկար թիավարեցին, մինչև հասան վիշապների ապարանքը:

**186. Նախադասություններից քանիսո՞ւմ շեշտ պիտի դրվի (նախադասությունները կետադրված չեն):**

- Աղստևի ալիքները մերը ուռչում բարձրանում էին ու խոլ վշշոցով իրար վրա փլվում մերք մոտենում բլիի ստորոտին:
- Պետք չէ անհն անգամ հիշեցնել արածոյ լավությունը:
- Մի անգամ էլ Ավին հետ նայեց անցած ճանապարհին ոչ Պանիմը երևաց ոչ շունը:
- Նա սպանած ոչ մի կենդանու ոչ մի թռչունի ձեռք չեր տալիս և շներին կերակրելուց հետո վերադառնում էր զյուղ:

- 1) Երկուսում
- 2) Երեքում
- 3) ոչ մեկում
- 4) մեկում

**187. Նախադասություններից քանիսո՞ւմ տրոհվող դերքայական դարձված կա (նախադասությունները կետադրված չեն):**

- Իշխանուի հիմները թագուհու մոտ հավաքված զանազան գուշակություններ էին անում քնության այդ խորհրդավոր երևույթի մասին:
- Կիրառ նվազելով Օրիենուր մոտեցավ Հարեսի զահին և խոնարիվեց նրա առաջ:
- Մեր աչքերի առջև հառնեց սենյակի գմբեթարդ ձեղունը սև և կարմիր քարերի ծաղկածն շարվածքներով զարդարված:
- Նա դիտում էր հեռվում աղոս կերպով նշմարվող լեռների մքապատ շղթան մեկ անգամ ևս մտաբերելով իր բնօրրանը:

- 1) մեկում
- 2) երկուսում
- 3) երեքում
- 4) բոլորում

**188. Նախադասություններից քանիսո՞ւմ ուղղակի խոսք կետադրության սխալ կա:**

- - Բուժիր Աստծու ծառային, ծերոնկ, - կցկտուր բարբառեց բռնակալը, - և փոխարենը ինչ-ոք բան պահանջիր:
- - Բանաստեղծի համար բառը մի աշխարհ է, - զրել է Թումանյանը:
- Իսահակյանն այսպես է նկարագրում Զավախյալը. «Հոգնած արևը թեքվում է դեպի Աբովլ լեռը՝ հրդեհելով երկնահուաց զագաթները»:
- - Բարձրանո՞ւմ ես, - ապէց հնօրյա կաղնին: - Խելազա՞ր, իսկույն ևեթ իջի՞ր ձորը, ուր սառնորակ ջուր կա:

- 1) մեկում
- 2) երկուսում
- 3) երեքում
- 4) չորսում

**189. Նախադասություններից քանիսո՞ւմ կետադրական սխալ կա:**

- Հատկապես այդ տարածքում զարմանալիորեն առատ են տարբեր դարաշրջանների հուշարձանները, եկեղեցիներ, տաճարներ, ամրոցներ:
- Պար գալով հանդիսավոր իշնում են ձյան խոշոր փաթիլները անապատի մարդու սարսափած աչքերի առաջ:
- Իշխանը մտասույզ կանգ առավ, մտածեց, մտածեց, և անկարող եղավ լուծելու այդ գաղտնիքը:
- Այս անշուր սենյակում աչքի էր ընկնում Գարիբալդիի՝ ոսկեզօծ շրջանակի մեջ դրված՝ մեծադիր պատկերը:
- Նա շատ անգամ էր կռվի դաշտ ելել թե՛ մեր հայրենիքի, և թե՛ ուրիշ ճնշված ժողովուրդների համար:

- 1) Երկուսում
- 2) Երեքում
- 3) չորսում
- 4) բոլորում

**190. Նախադասություններից քանիսո՞ւմ կետադրական սխալ կա:**

- Միքայելը՝ միջնեկ տղան, անուղելի է. փողերը շռայլում է՝ մաշելով օրերը թղթախաղերի սեղանների մոտ:
  - Քանի չէինք հասել լեռնանցքին, ճամփան հարթ էր և ուղղաձիգ, բայց երբ մոտեցանք բարձունքին՝ դարձավ ոլորապույտ:
  - Ամրոցի բարձրաբերձ պարիսպները ոչ միայն հուսալի պատճեց էին բնության արհավիրքների դեմ, այլև ծառայում էին որպես պաշտպանական միջոց թշնամիների հարձակման ժամանակ:
  - Հրաշեկ արևը, երկնքից անընդհատ կրակ մաղելով, առավոտից կիզում էր, ինչպես միջօրեին:
  - Նորեկը, վերցնելով իր հարդե գիշարկը, բարեեց աշ ու ձախ և քայերը փոքր-ինչ արագացնելով՝ մտավ հիվանդի ննջարանը:
  - Կիրակի օրը՝ առավոտյան ժամը յոթին (կարծեմ հենց այդ ժամին էլ մենք պայմանավորվել էինք), ընկերներս եկան մեր տուն:
- 1) մեկում
  - 2) երկուսում
  - 3) երեքում
  - 4) ոչ մեկում

**191. Նախադասություններից քանիսո՞ւմ կետադրական սխալ կա:**

- Երբ ծառերի արանքից դուրս էր զալիս, երևաց նրանց լուսավոր մեքենան, իսկ մեքենայի մեջ՝ ուղիղուն էր երգում:
  - Սինչև ծառուղին հասնելը՝ տղան հետ չնայեց:
  - Կինը զարդարում էր եղանակին՝ իջնում էր գյուղ:
  - Մատնահարում էին մառանի սյուներն ու պատերը՝ ստուգելու՝ դրանցում ինչ կա պահած:
  - Հարկավոր է ամսագրի խմբագրություն գնալ և կարդալ վեաի գրախոսությունը, քանի դեռ չի տպագրվել:
  - Պատերազմները բնական են նոյնքան, ինչքան ինքը՝ աշխարհը:
- 1) երկուսում
  - 2) երեքում
  - 3) չորսում
  - 4) մեկում

**192. Նախադասություններից քանիսո՞ւմ կետադրական սխալ կա:**

- Տաքանում էի՝ հիացած աչքերս չհեռացնելով այդ երկնային գեղեցկությունից, երբ զգացի մի քաղցր հոտ՝ մինչ այդ անծանոք մարդկային հոտոտելիքին:
  - Զանցած մի պահ՝ նորից սկսեց երգել սոխակը՝ հաղթական երգիչը:
  - Մի գիշեր՝ մի քամոտ գիշեր, սարերից անսանձ փշում էր քամին, ծեծում դուռն ու պատուհանները:
  - Օր ու գիշեր ճանապարհ կտրելով՝ անապատների տատասկներից զգզգված՝ հասավ նա մի օր քաղաքի պարիսպներին:
  - ‘Դրսում վատեցին խարույկները՝ ցլերին ողջակիզելու, սակայն, մրրկաշունչ հողմ բարձրացավ, և բոցերը հանգան:
- 1) մեկում
  - 2) երեքում
  - 3) չորսում
  - 4) հինգում

**193. Նախադասություններից քանիսո՞ւմ կետադրական սխալ կա:**

- Դահլիճից հեռանալով՝ թագուհին մտավ իր առանձնարանը՝ հուզված ու լարված:
  - Վարդուհին՝ որպես նորահարս, գլուխը կրծքին խոնարհած՝ գնում էր:
  - Աստղերը՝ երկնքի այդ վառ-վառ ծաղկները, շողում էին եթերային ոլորտում:
  - Իբրև փորձված լեռնեցի՝ հին զինվոր Արքենը կովում էր ճարպիկ վագրի պես:
  - Ղազար Փարպեցին իր գրքում ասել է.  
- Խոհեմ ինաստությամբ կարելի է հաղթել մեծ զորությանը:
- 1) մեկում
  - 2) երկուսում
  - 3) երեքում
  - 4) չորսում

**194. Նախադասություններից քանիսո՞ւմ կետադրական սխալ կա:**

- Ու եթե երբեւ մեկը զգուշությամբ բափանցել է այնտեղ, ունկնդիրն նրա ձայները բազմազան, կիամոզվի, որ դա, անշուշտ, մի ուրույն աշխարհ է:
- Հասմիկը սրտատրով սպասում էր այն օրվան, եթե օտարությունից կվերադառնար իր սիրելին և կամուսնանային, տուն ու տեղ կրնեին:
- Գյուղից վերև՝ լեռան գագաթին՝ ավերակ մատուռի մոտ, կանգնած էին մի աղջիկ՝ երկար շրջազգեստով և լայնեզր գլխարկով մի տղա:
- Եթե անտառում հողմ է լինում, ծառերը, մեջք մեջքի տված, օրորվում են ու ճռնչում, թփերը՝ խշում:
- Կարմիր պառավ ծին աշքերը չեր թարբում. եթե թարթեր, զայլը տեղից տեղ կցատկեր, և ինքը չեր հասցնի նկատել, ինչպես թշնամին մոտեցավ քուսակին:

- 1) Երեքում
- 2) չորսում
- 3) հինգում
- 4) երկուսում

**195. Նախադասություններից քանիսո՞ւմ կետադրական սխալ կա:**

- Նրանք հեռանում էին, և նրանց հետ հեռանում էր կյանքը՝ տեղը թողնելով դատարկություն և ափսոսանքի զգացում:
- Մենք վազում ու վազում էինք, բայց արդեն թվում էր՝ այդ վազքը եղել է վաղուց, և հիմա սկսվել է երազը:
- Ես տեսա, որ այլևս ոչնչով կապված չեմ նրանց հետ՝ ո՛չ նախանձով, ո՛չ առաջինը լինելու ցանկությամբ:
- Ինչպես էլ նրանց նժույգները սուրային՝ նրանց մարտակառքերի անհվները փուլ չեն գալիս. շրջանակված էին երկարով:

- 1) մեկում
- 2) երեքում
- 3) երկուսում
- 4) ոչ մեկում

**196. Նախադասություններից քանիսո՞ւմ կետադրական սխալ կա:**

- Քանի տարի էր, ինչ Թուրքանուա Քղորն և Փալանձի Գրիգորն ամուսնացած էին, բայց հակառակ բուռն ջանքերի՝ զավակ չունեցան:
- Թորիկին հետաքրքրում էր փողոցում ամեն բան. եթե արջ էին խաղացնում, դիտում էր, եթե տեսնում էր, որ մի դրան առաջ հավերը կուտ են ուտում, կանգ էր առնում ու երկար դիտում:
- Տակավին լսում էր նա երգը, և նրան, թվում էր, թե լեռնային լանջերի ծաղիկներն են երգում:
- Նրա հայացքը մի վայրկյան ընկավ լուսամուտից դուրս. մի մեղմ զիշեր էր և աստղերը մտերիմ աշքերի պես թարբում էին:
- Այնտեղ ծաղիկներ կային, չքնար ու բյուրազան ծաղիկներ՝ թիթեռների պես սփռված ու բրռուն:
- Սի որք ու աղքատ մանուկ էր ապրում այդ մարդկանց մեջ, զիշերը տեղ չուներ՝ զլուխը դնելու և հաց չուներ՝ ուտելու:

- 1) մեկում
- 2) երկուսում
- 3) երեքում
- 4) չորսում

**197. Նախադասություններից քանիսո՞ւմ կետադրական սխալ կա:**

- Օրեր շարունակ քննեցին ստեղծված վիճակը, սակայն անզոր և անկարող հայտարարելով մարդկային միտոք, ձեռնունայն հեռացան:
- Հանկարծ բարձրացավ մի սաստիկ քամի, որ, պտույտ գալով, այս ու այն կողմ էր վազվում:
- Սատված տեսնելով Արամի մենակությունը՝ որոշեց ստեղծել նրա համար մի քննուչ ընկեր, որ նա միայնակ չվայելի դրախտի հրապույրները:
- Խայամը մեկ զայրացած նայում էր հեռացող քամուն, մեկ ափսոսանքով նայում էր կենսաբաշխ կարմիր հեղուկին, որ ծարավ գետինը ներծծեց մի վայրկյանում:
- Հրաժարվելով աշխարհի հաճույքներից՝ ամփոփվեց մի աղքատիկ խցի մեջ և խորհեց օր ու գիշեր՝ ուղի գտնելու թշվառների փրկության համար:
- Ինչ եղավ այդ մարդը, ուր անհետացավ, ոչ ոք չիմացավ:

- 1) մեկում
- 2) երկուսում
- 3) չորսում
- 4) ոչ մեկում

**198. Նախադասություններից քանիսո՞ւմ կետադրական սխալ կա:**

- Աճապարում էր հանկարծ բաց չքողնի արևածագի ամենօրյա ակնքարթային հրդեհը Վարազա զագարին, իսկ արփին ուր որ է դուրս կլողար գրեթե ցրված աղջամուղի միջից:
- Մեղադրո՞ւմ էր, ապաշխարա՞նք էր հայցում, թե՞ շանքեր էր ուղարկում ինչ-որ մեկի գլխին, դժվար էր գուշակել:
- Մտածեցի, որ նամակը տիկին Արաքսյայից է (ես նրան նամակ էի գրել) ու հապշտապ բացեցի նկարազարդ ծրաբը, որ կարդամ՝ ինչ է գրում:
- Թեև մութք գնալով թանձրանում էր, այնուամենայնիվ մենք շարունակում էինք ճանապարհը՝ բնավ ուշադրություն շղարձնելով անտառի կողմից եկող չարագուշակ ձայներին:
- Իմ ասածն էլ հենց այն է, որ իմաստուն ազգը չալետը է բողներ այդպես մարդիկ խաղան իր բախտի հետ և ամենածանր աղետների դուռը հասցնեն իրեն, - դառնացած ասաց մեզ գրողը:

- 1) երեքում
- 2) չորսում
- 3) երկուսում
- 4) քոլորում

**199. Նախադասություններից քանիսո՞ւմ կետադրական սխալ կա:**

- Արևմտահայաստանը, փորորկված ծովից դուրս նետված ավագի նման, ահազին բազմություններ էր կուտակել Արարատյան դաշտում. քանդված և այրված իրենց քաղաքներից և զյուղերից փախած այդ մարդիկ անվերջանալի խմբերով անցել էին սահմանը և քայլել անեծք թափելով:
- Հայերը դյուրին կերպով տարվում են բանաստեղծական պատկերներով. այն, ինչից կտրված են՝ միշտ էլ դրախտի մի կտոր է:
- Նվազում էր այս անգամ ոչ թե լեռնականների մարդկանց սրտերը շարժող կորովի երգը, որից բորբոքվում էր արյունը, այլ հովվական պարզ մի երգ:
- Ես բացում եմ ուղեգործությունների իմ տետրը. նրա մեջ՝ սուսամբարի երկու տերևն՝ գորշ ու չոր՝ ինչպես հանգած մոխիր:

- 1) մեկում
- 2) երկուսում
- 3) երեքում
- 4) չորսում

**200. Նախադասություններից քանիսո՞ւմ կետադրական սխալ չկա:**

- Ինչ է սպասում մեզ, ոչ որ չի կարող գուշակել, բայց կարծում եմ՝ ամեն ինչ դեռ կորած չէ:
  - Մայրաքաղաքն ուներ երեք գոտի. առաջինը արվարձաններն էին, որոնք գտնվելով ցանկապատից դուրս՝ շրջապատված էին խաղողի, դեղձի ու ծիրանի բերքի այգիներով:
  - Մեր առջև բացվեց անհունության մի ակնապարար տեսարան՝ ուս երկնամերձ լեռների, ցածրադիր բլուրների, սարահարթերի մի լայնածավալ տարածություն էր, որի միջից մի ընդարձակ ձոր՝ տեղ-տեղ անտառապատ, ձգվում էր հյուսիսից հարավ:
  - Օդը, սակայն, այստեղ ցուրտ էր, գետինը՝ խոնավ, բուսականությունը՝ նոսր:
- 1) բոլորում
  - 2) մեկում
  - 3) երկուսում
  - 4) երեքում

## ԲԱԺԻՆ 5 ԿԱՊԱԿՑՎԱԾ ԽՈՍՔ

1. Նախադասությունները նշող թվերի դասավորության ո՞ր տարրերակն է համապատասխանում այդ նախադասությունների տրամաբանական և քերականական ճիշտ հաջորդականությանը:

1. Մրսում էր միայնակ թռչունը. փշանման ցցվել էին նրա փետուրները:
2. Եվ ինքնասույզ խորհում էր նա, որ կյանքը տառապանք է, սակայն ապրելու կամքը՝ է լ ավելի:
3. Զյունապատ բարձունքներից և դեղնած լեռնալանջերից բավարար էր սառնաշունչ քամին:
4. Քաղցած էր նա, և քաղցն ավելի էր տանջում նրան, քան ցուրտը:

- 1) 3, 1, 4, 2
- 2) 3, 2, 4, 1
- 3) 2, 1, 4, 3
- 4) 2, 3, 1, 4

2. Նախադասությունները նշող թվերի դասավորության ո՞ր տարրերակն է համապատասխանում այդ նախադասությունների տրամաբանական և քերականական ճիշտ հաջորդականությանը:

1. Այդ հարվածները լսվում էին երբեմն կարճ և երբեմն երկար ընդհատումներով, և սպիտակ քարը փշրվում էր և թափվում գետնին:
2. Հովնարանը քանդակում էր ամեն օր. լուսաբացից մինչև մայրամուտ լսվում էին նրա մուրճի հարվածները՝ խոլ և խորը, ինչպես սրտի բարախյուններ:
3. Աշխատանոցը հետզիեստ սկսեց շնչել ֆիզուրների բազմությամբ, սկզբնական օրերի ամայությունը լցվեց կենդանի շնչով, պատերի առաջ, դարակներին, ամեն կետում քարե ու կավե արձաններ շարվեցին:
4. Հովնարանը աշխատում էր ոչ միայն սպիտակ քարի վրա. քանդակում էր նաև կավից:

- 1) 2, 3, 4, 1
- 2) 4, 1, 2, 3
- 3) 2, 1, 4, 3
- 4) 4, 2, 3, 1

3. Պարբերությունները նշող թվերի դասավորության ո՞ր տարրերակն է համապատասխանում այդ նախադասությունների տրամաբանական և քերականական ճիշտ հաջորդականությանը:

1. Սեղմված օդով լցված անվադողը տառացիորեն նվաճեց ամբողջ աշխարհը: Եվ դա այն պատճառով, որ ավելի ճկուն անիվ գոյություն չունի: Ոչ մի զապանակ ճկունությանը չի կարող մրցակցել անվադողի օդախցիկում լցված օդի հետ:
2. Սեղմված օդ պարունակող դողով անիվը հայտնագործել է անգլիացի ճարտարագետ Թոմասոն 1845 թվականին: Բայց նրա հայտնագործությունը շուտով մոռացվեց. անվադողի գլխավոր «պահանջատերը»՝ ավտոմեքենան, դեռ գոյություն չուներ:
3. Անցավ 48 տարի: Եվ ահա Թոմասոնի գաղափարը կյանքի կոչեց մեկ ուրիշ գյուտարար՝ շոտլանդացի անասնաբույժ Դենլոպը, որը հայտնագործեց հեծանվադողը:
4. Կան գյուտեր, որոնք մոռացվում և ապա «ծննդում» են երկրորդ անգամ: Դրանցից է, օրինակ, անվադողի գյուտը:

- 1) 1, 3, 4, 2
- 2) 2, 3, 1, 4
- 3) 3, 1, 4, 2
- 4) 4, 2, 3, 1

**4. Պարբերությունները նշող թվերի դասավորության ո՞ր տարրերակն է համապատասխանում տեքստի տրամաբանական և քերականական միշտ կառուցվածքին:**

1. Կակտուսները հետաքրքրական են ոչ միայն տեսքով, այլև իրենց մեկ այլ հատկությամբ. դրանք հիանալի հարմարվել են չորային կլիմային: Նրանց տերևները վերափոխվել են փշերի, մազիկների ու խոզանների, որոնք խիստ ծածկում են կակտուսների ցողունները և այնքան խոնավություն չեն գոլորշիացնում, որքան տերևները:
  2. Մեկը նման է ողնու, մյուսը՝ դղմի, երրորդը՝ աշտանակի: Լինում են տարբեր բարձրության. կան 1 ամ բարձրությամբ ու մի քանի գրամ քաշով «մատնաշափիկներ» և 25 մ բարձրությամբ, տոննաներ կշռող հսկաներ: Տարբեր են նաև կակտուսների ծաղիկները:
  3. Կակտուսների հայրենիքը Մեքսիկան է: Հին հնդկացիները դրանք սուրբ բույս էին անվանում: Տարբեր տեսակի կակտուսներ են լինում՝ ծառանման, թփանման, խոտանման:
  4. Որոշ կակտուսներ պարունակում են մինչև 3 հզ. լիտր ջուր: Անապատներում կակտուսները խոնավության միակ պահապաններն են և հաճախ են փրկում ճանապարհորդների կյանքը:
- 1) 3, 1, 4, 2
  - 2) 2, 3, 1, 4
  - 3) 3, 2, 1, 4
  - 4) 2, 1, 3, 4

**5. Պարբերությունները նշող թվերի դասավորության ո՞ր տարրերակն է համապատասխանում տեքստի տրամաբանական և քերականական միշտ կառուցվածքին:**

1. Դրա շնորհիվ մարդիկ գազի հոտը կարող են զգալ նույնախսկ չնշին քանակի դեպքում: Այս նախազգուշական միջոցը հնարավորություն է տալիս անմիջապես զգալու գազի առկայությունը բնակարանում:
  2. Բնական գազը, որ որպես վառելիք օգտագործվում է կենցաղում, չունի ո՛չ հոտ, ո՛չ գույն: Այդ պատճառով շատ դժվար է միանգամից «նկատել» կամ զգալ գազի արտահոսքը:
  3. Գազը կարող է առաջացնել նաև բունավորում: Գազի արտահոսքը բնակարանում «նկատելու» նպատակով գազարաշխման կայաններում գազը նախապես խառնում են սուր, տիած հոտ ունեցող նյութերի հետ:
  4. Արտահոսքի ժամանակ դիֆուզիայի հետևանքով գազը տարածվում է ամբողջ բնակարանում: Գազի և օդի քանակների որոշակի հարաբերակցության դեպքում, եթե բնակարանը բոլոր կողմերից փակ է (հատկապես ձմռանը), գոյանում է խառնուրդ, որը կարող է պայթել, օրինակ, վառվող լուցկուց:
- 1) 3, 1, 4, 2
  - 2) 2, 3, 1, 4
  - 3) 4, 1, 2, 3
  - 4) 2, 4, 3, 1

**6. Պարբերությունները նշող թվերի դասավորության ո՞ր տարրերակն է համապատասխանում տեքստի տրամարանական և քերականական ճիշտ կառուցվածքին:**

1. Տիգրան Երկրորդի տերությունը առավելապես ընդարձակվել էր հարավից: Արտաշատը, ինչպես և հինգ հարյուր հազար քնակիչ ունեցող Անտիոքը գտնվում էին նոր տերության հյուսիսային և հարավային մասերում և որպես մայրաքաղաք հարմար չէին:
2. Այն շրջապատված է եղել քանի հինգ մետր բարձրություն ունեցող պաշտպանական հղող պարիսպներով, պալատը՝ լճերով ու գրոսայգիներով, ունեցել է միջնաբերդ և բազմաթիվ այլ կառույցներ: Կարծ ժամանակում Տիգրանակերտը դառնում է Հայաստանի և Առաջավոր Ասիայի շրեղ, բազմամարդ ու հարուստ քաղաքներից մեկը:
3. Տիգրանակերտը պատմական Հայաստանի արքայանիստ քաղաքն էր Աղձնիք նահանգում: Հայկական քանակի գլուխն անցած՝ Տիգրան Մեծը իրար հետևից հնագանեցնում է հարևան մեծ ու փոքր քաղաքորությունները՝ Հայաստանի սահմանները հասցնելով Միջերկրական ծովից մինչև Կապից ծով, Ըուռ գետից մինչև Սիծազետը:
4. Մ.թ.ա. 70-ական թվականներին Աղձնիքում՝ Արևմտյան Տիգրիսի ձախակողման վտակ Քաղիքը գետի հովտում, հիմնադրվում է նոր նայրաքաղաք Տիգրանակերտը: Ըստ հույն պատմագիր Ապիանոսի՝ քաղաքը կառուցվում է Տիգրանի քաղաքորության վայրում:

- 1) 3, 2, 4, 1
- 2) 3, 1, 4, 2
- 3) 2, 1, 3, 4
- 4) 1, 3, 2, 4

**7. Նախադասությունները նշող թվերի դասավորության ո՞ր տարրերակն է համապատասխանում այդ նախադասությունների տրամարանական և քերականական ճիշտ հաջորդականությանը:**

1. Հին աշխարհում այն հղոր պետություններից մեկն էր, որ հարավ-արևելքում և հարավում իր մեջ էր առնում Ուրմիա, Վանա լճերի, Տավրոս լեռնաշղթայի և Տիգրիսի ակունքների շրջանում տարածված բարերեր հողերը, հյուսիսում հասնում էր մինչև Սևանա լիճ և Վրաստան, արևոտքում՝ Երզնկա ու Եփրատ:
2. Հայկական այս փոքրիկ հանրապետությունը, որն ունի մոտ 30 000 քառակուսի կմ տարածք և 3 միլիոն քնակչություն, այժմ փորձում է զարգանալ՝ չնայած իրեն հասած քնական, տնտեսական և քաղաքական անքարենպաստ պայմաններին:
3. Այնուհետև այն մասնատվեց, քվատվեց դարեղար, կրեց անդարձ կորուստներ՝ սեղմվելով մի փոքր տարածքում:
4. «Հայաստան» հասկացությունը ժամանակի ընթացքում փոփոխություններ է կրել՝ կապված պատմաքաղաքական զանազան հանգամանքների հետ:

- 1) 2, 4, 1, 3
- 2) 1, 4, 3, 2
- 3) 2, 4, 3, 1
- 4) 4, 1, 3, 2

**8. Նախադասությունները նշող թվերի դասավորության ո՞ր տարրերակն է համապատասխանում այդ նախադասությունների տրամարանական և քերականական ճիշտ հաջորդականությանը:**

1. Սրտի միջփորքային ակոսների մեջ գտնվում են այն սնող աջ և ձախ պսակաձև զարկերակները:
2. Այն գտնվում է կրծքավանդակում՝ աջ և ձախ քոքերի արանքում:
3. Սրտի աջ ու ձախ կեսերը միմյանց հետ չեն հաղորդակցվում և բաժանված են միջնախաստրային ու միջփորքային միջնապատերով:
4. Սրտը մարդու և կենդանիների արյունատար համակարգի կենտրոնական օրգանն է:

- 1) 2, 3, 1, 4
- 2) 4, 3, 2, 1
- 3) 2, 4, 3, 1
- 4) 4, 2, 3, 1

- 9. Նախադասությունները նշող թվերի դասավորության ո՞ր տարրերակն է համապատասխանում այդ նախադասությունների տրամաբանական և քերականական ճիշտ հաջորդականությանը::**
1. 1852 թվականից այն արդեն դառնում է հանրության համար մատչելի, իսկ խորհրդային տարիներին վերակազմավորվում և լնդարձակվում է՝ ընդգրկելով երկու միլիոնից ավելի ցուցանուց:
  2. Որպես գեղարվեստական և պատմամշակութային թանգարան՝ Էրմիտաժը ձևավորվել է 1764 թվականին Եկատերինա Երկրորդ կայսրություն մասնավոր հավաքածուի հիմքի վրա:
  3. Սանկտ Պետերբուրգի այդ նշանավոր թանգարանը հարուստ է նախնադարյան, անտիկ, միջնադարյան մշակույթի հուշարձանների հավաքածուներով, ինչպես նաև արևմտաեվրոպական արվեստի անգնահատելի նմուշներով:
  4. Էրմիտաժում կա նաև հայ արվեստի և մշակույթի կորողների հարուստ հավաքածու, որը ներկայացնում է ոչ միայն Հայաստանի ու Կիլիկիայի, այլև հայկական մի շարք խոշոր գաղութների արվեստն ու մշակույթը:
- 1) 3, 1, 4, 2
  - 2) 2, 3, 4, 1
  - 3) 2, 3, 1, 4
  - 4) 2, 1, 3, 4
- 10. Նախադասությունները նշող թվերի դասավորության ո՞ր տարրերակն է համապատասխանում շարդրանքի (տեքստի) տրամաբանական և քերականական ճիշտ կառուցվածքին::**
1. Լու Անջելեսում է գտնվում նրա կառուցած՝ աշխարհի ամենաարտառոց հուշարձաններից մեկը, որի շինարարությունը տևել է 33 տարի, իսկ կառուցումից հետո հեղինակը անհետացել է՝ ունեցվածքը հաշվառելով և իր հարևանին հանձնելով:
  2. Մինոն Ո-ողիան՝ Ուարթսի աշտարակների հանճարեղ հեղինակը, Իտալիայից ԱՄՆ գաղքած անգրագետ մի բանվոր էր՝ սևագործ աշխատանք կատարող:
  3. Տիտանական աշխատանք պահանջող աշտարակները նա վեր էր խոյացրել մենակ՝ իր տան հետնաբակում ձևավորելով երեք հսկա գալարասյուններ և վեցից ավելի կից շինություններ, որոնք փայլատակում էին գունավոր ապակու 70000-ից ավելի բեկորներով, փոքրիկ հախճասալերով, ծովային խեցիներով, խնորենենի դանակներով ու ձիու պայտերով:
  4. Կառույցը, որ չի ունեցել նախագծեր ու գծագրեր, անվնաս մնաց նույնիսկ 1971 թ. Երկրաշարժի ժամանակ և այսօր ունի պատմական հուշարձանի կարգավիճակ:
- 1) 1, 3, 2, 4
  - 2) 2, 4, 1, 3
  - 3) 2, 1, 3, 4
  - 4) 1, 4, 3, 2
- 11. Նախադասությունները նշող թվերի դասավորության ո՞ր տարրերակն է համապատասխանում այդ նախադասությունների տրամաբանական և քերականական ճիշտ հաջորդականությանը::**
1. Երբեմն, երբ մեկը, ճրագը ձեռքին, անցնում էր բակով, հեռվից այնպես էր երևում, ասես միի մեջ լույսն ինքն իրեն է շարժվում ու հանկարծ հանգչում:
  2. Քիչ հետո, երբ խավարը թանձրացավ, ու ճրագները մեկ-մեկ հանգան, որպես հսկումի կրակ մնաց միայն անտառի խարույկը, որի շուրջը նստուել էին խոզարածները, և անտառապահի տնակի լուսավոր պատուհանը, որ բլուրի բարձունքից անբարք աչքի պես նայում էր գյուղին:
  3. Իսկ գետի մյուս ափին՝ գյուղի դիմացն ընկած անտառի բացատում, խարույկն էր բոցավառվում, կրակը մեկ հանդարտվում էր, մեկ վեր սլանում, և միլիոնավոր կայծեր ցրվում էին խավարի մեջ, ասես հսկա մի աստղ էր բարտում ծառերի արանքում:
  4. Օրը մթնում էր. իրար հետևից վառվում էին ճրագները:
- 1) 4, 1, 3, 2
  - 2) 3, 2, 4, 1
  - 3) 4, 1, 2, 3
  - 4) 3, 2, 1, 4

**12. Նախադասությունները նշող թվերի դասավորության ո՞ր տարրերակն է համապատասխանում շարադրանքի (տեքստի) տրամարանական և քերականական ճիշտ կառուցվածքին:**

1. Խաչքարի քանդակագր պատկերը իր նրբագեղությամբ նման է ասեղնազործ ժանյակին:  
հաճախ պատկերն այնքան նրբահյուս է լինում, որ թվում է՝ թելերից են գործել և ընդելուզել սալաքարին:
  2. Վերջինն խաչքար է կոչվել, որովհետև այդ նրբագեղ զարդանախշերի կենտրոնում պատկերված է խաչ՝ քրիստոնեական հավատի խորիրդանիշը:
  3. Հայաստանում ամենաշատ խաչքարեր եղել են Զուղայի գերեզմանատանը, և դեռ 17-րդ դարի սկզբին այնտեղ կար տասը հազար խաչքար:
  4. Խաչքարը կորող-հուշարձան է՝ հայ միջնադարյան արվեստի ինքնատիպ դրսնորումներից մեկը, և բացառապես հայկական է իր յուրահատուկ զարդանախշերով:
- 1) 3, 2, 1, 4
  - 2) 3, 1, 4, 2
  - 3) 4, 2, 1, 3
  - 4) 4, 1, 2, 3

**13. Պարբերությունները նշող թվերի դասավորության ո՞ր տարրերակն է համապատասխանում շարադրանքի (տեքստի) տրամարանական և քերականական ճիշտ կառուցվածքին:**

1. Ալեքսանդրը պարսպին մոտեցրեց մեքենաները և ճեղքվածքներ բացելով պարսպի այդ մասում՝ մտածում էր առաջացած անցքերի միջով ներխուժել քաղաք:
  2. Սակայն այդտեղ նրա ուշադրությունը գրավեց գետը, որը հոսում էր քաղաքի միջով և ձմեռային անձրևներից դառնում ավելի հորդառատ, քայլ որն այժմ լիովին չորացել էր: Պարիսպները չեն անջրպետում նրա հունը մինչև հատակ, այնպես որ զինվորները կարող էին նրա տակով քաղաք մտնել:
  3. Երկու օրում գրավելով հինգ քաղաք և ստրկացնելով բնակչությանը՝ Ալեքսանդր Մակեդոնացին գնաց դեպի Կյուրոսի քաղաքը: Այդ քաղաքը շրջապատված էր ավելի բարձր պարսպով, քան մնացածները: Այնտեղ էր հավաքվել բարբարոսների մեծամասնությունը, ընդ որում՝ ամենառազմատենչները, այնպես որ մակեդոնացիներին այնքան էլ հեշտ չէր լինելու գրավել այն միանգամից:
  4. Մինչ բարբարոսներն իրենց ամբողջ ուշադրությունը դարձրել էին մեքենաներին և պաշտպանվում էին այն վայրում, ուր դրանք կանգնած էին, Ալեքսանդրը իր զորքի մի մասի հետ բոլորից աննկատ քաղաք մտավ այդ գետի հունով և ջարդելով դարպասի մի փոքր հատված՝ ներս քողեց նաև մնացած զորքը:
- 1) 1, 3, 2, 4
  - 2) 3, 2, 1, 4
  - 3) 3, 1, 2, 4
  - 4) 3, 1, 4, 2

#### 14. Ո՞ր միտքը չի հակասում տրված բովանդակությանը:

Անգլիայի ճահճու հարթավայրում վեր են խոյանում վիրխարի քարեր, որոնք դասավորված են խիստ որոշակի կարգով: Դա Սրուոնիենցն է, որ կառուցվել է մեզանից հազարամյակներ առաջ: Ի՞նչ նշանակություն է ունեցել այս հնագույն հուշարձանը: Արևի տաճա՞ր է եղել, ծիսակատարությունների վա՞յր: Բազում առասպելներ է ծնել այս արտասովոր կառույցը, մինչև Բոստոնի համալսարանի պյուֆետը Զերալդ Հոքհմար կենդանացրեց մեռյալ համը քարերը: Պարզվեց, որ այն հնագույն աստղադիտարան է (մ.թ.ա. 2-րդ հազարամյակ), որը զարմանալի ճշգրտությամբ բույլ է տալիս հաշվել օրացուցային ժամանակը, որոշել տարվա եղանակները և նոյնիսկ կանխատեսել Արևի և Լուսնի խավարումները: Պրոֆետը պարզեց, որ բազմատոննանց քարե կամարները նշել են հորիզոնի հատուկ կետերի ուղղությունները:

- 1) Մինչ Զերալդ Հոքհմանի ուսումնասիրությունները մարդկությունը վստահ էր, որ Սրուոնիենցը արևի տաճար է:
- 2) Մ.թ.ա. 2-րդ հազարամյակից սկսած՝ մարդկանց հայտնի են եղել Արևի և Լուսնի խավարումների պատճառները:
- 3) Սրուոնիենցի քարերի միջոցով մարդիկ երկնային մարմինների շարժումների հետ կապված մի շարք կանխատեսումներ են արել:
- 4) Կենդանացներով մեռյալ համը քարերը՝ գիտնականը մարդկությանը վերադարձրեց մոռացության գիրկն անցած շատ առասպելներ:

#### 15. Ո՞ր միտքն է հակասում շարադրանքի բովանդակությանը:

«Միջաշահի անուրջները» տպագրելուց հետո Տերյանը շարունակել է մշակել այն և վերջնական տարրերակով՝ ներմուծել 1912թ. հրատարակության մեջ: Կատարել է լեզվառնական փոփոխություններ, վերանայել բառապաշարն ու պատկերների հյուսվածքը: Տերյանը նաև վերակառուցել է շարքը. դուրս թողել վեց և ավելացրել տասնմեկ բանաստեղծություն: Դրա շնորհիվ բանաստեղծությունների նախապես հայտնի 72 թիվը դարձել է 77: Ըստքը բացվում է «Տիրություն» բանաստեղծությամբ, որը խորիորդանշական վերմազիր է ամբողջ «Միջաշահի անուրջների» համար: Տիրությունը՝ բախսի, մենության, օտարվածության, անհուսության ապրումներով Տերյանը դարձնում է իր քննարական հերոսի տիրապետող հոգերանական վիճակ:

- 1) Տիրությունը բախսի, մենության, օտարվածության, անհուսության ապրումներով դառնում է քննարական հերոսի տիրապետող հոգերանական վիճակ:
- 2) Տերյանը վերակառուցել է նաև շարքը, դուրս թողել որոշ բանաստեղծություններ, ավելացրել տասնյակից ավելի բանաստեղծություն:
- 3) «Միջաշահի անուրջներ» ժողովածուն հետագայում ենթարկվել է մշակման:
- 4) Հեղինակը կատարել է լեզվառնական փոփոխություններ, բայց չի վերանայել բառապաշարն ու պատկերների հյուսվածքը:

#### 16. Ո՞ր միտքն է հակասում տրված բովանդակությանը:

1543-ին Նիկոլայ Կոպեռնիկոսը հրատարակեց մի գիրք, որը փոխեց տիեզերքի մասին նախկինում եղած պատկերացումը: Իր աշխատության մեջ Կոպեռնիկոսը փաստարկում էր, որ տիեզերքի կենտրոնում ոչ թե Երկիրն է, այլ Արեգակը: Նրա փաստարկումը, սակայն, իհմնված էր սույն տրամադրանության վրա: Այս տեսակետը հակադրվում էր բողոքական և կարողիկ եկեղեցիների ուսմունքներին, ուստի և համարվում էր հերետիկություն: Գալիլեո Գալիլեյ (1564-1642) առաջինն աստղադիտակով ուսումնասիրեց Արեգակնային համակարգը: Նա պաշտպանեց այն տեսությունը, որ Երկիրը, ինչպես և մյուս մոլորակները, պտտվում է Արեգակի շուրջը: Հոռոմի ինկվիզիցիան դատապարտեց Գալիլեյին: Նա կյանքի վերջին ուր տարիներն անցկացրեց տնային կալանքում:

- 1) Միջնադարում արեգակնակենտրոն համակարգի տեսությունը համարվում էր հերետիկոսություն:
- 2) Գալիլեյը պաշտպանեց այն տեսությունը, որ Երկիրը պտտվում է Արեգակի շուրջը:
- 3) Ինկվիզիցիան Գալիլեյին դատապարտել է տնային կալանքի:
- 4) Ինկվիզիցիայի ճնշման տակ Գալիլեյը հրաժարվեց իր ընդունած տեսությունից:

## 17. Ո՞ր միտքն է հակասում շարադրանքի բովանդակությանը:

Տորակեզ Զամբիայի հարավային սահմանի մոտ՝ Զամբեզի հորդառաստ գետի վրա, գտնվում է քննորյան հիասքանչ կերտվածքներից մեկը՝ Վիկտորիա շառաջուն ջրվեժը, որը հայտնաբերել է աշխարհահոչակ ճանապարհորդ Դավիթ Լիվինգստոնը: Նա մանրազնին ուսումնասիրում էր Զամբեզի ջրառատ գետը, որի երկարությունը երկու հազար վեց հարյուր վարսուն կիլոմետր է, և հայտնաբերեց մի հոյակապ ջրվեժ, որը կոչվեց Վիկտորիա՝ ի պատիվ Անգլիայի քաղաքություն: Երկարակյաց քագուիին ասպեց ուժառներկու տարի, և նրա գահակալության շրջանում Բրիտանիայի կայսրությունը հզորացավ ու ընդարձակվեց:

Այս ջրվեժը Աֆրիկայի բնության հրաշքներից է: Դեռևս հեռվից լսվում է նրա աղմուկը, և ծխի նման բրրաւով՝ բարձրանում է ջրափոշին: Պատահական չէ, որ բնիկների՝ այս ջրվեժին տված անունը նշանակում է շառաջուն ծովի:

- 1) Զամբեզի գետի ուսումնասիրության ժամանակ Դավիթ Լիվինգստոնը հայտնաբերել է Վիկտորիա ջրվեժը:
- 2) Վիկտորյա թագուհու գահակալության շրջանում Բրիտանիայի կայսրությունը ընդարձակել է իր սահմանները:
- 3) Բնիկները ջրվեժը անվանել են շառաջուն ծովին, որովհետև ջրվեժի ձայնին գումարվում է նաև բարձրացող ջրափոշին:
- 4) Դավիթ Լիվինգստոնը իր հայտնաբերած ջրվեժը Վիկտորիա կոչեց Անգլիայի թագուհու պատվին՝ նկատի ունենալով վերջինիս երկարակեցությունը:

## 18. Ո՞ր միտքն է հակասում շարադրանքի բովանդակությանը:

Գայանեն, ըստ ավանդության, քրիստոնյա կույսերի մայրապետն էր, որի անունով էլ կոչվում է վանքը: Այն գտնվում է Արմավիրի մարզում՝ Էջմիածնի հարավային ծայրամասում: Ըստ Ազարանգեղոսի՝ վկայարանը հիմնադրել է Գրիգոր Լուսավորիչը չորրորդ դարի սկզբին: Վանքը կառուցվել է յոթերորդ դարի առաջին կեսին Եզր կարողիկոսի կողմից:

Ազարանգության համաձայն՝ հոռմնական կայսր Դիոկլետիանոսի հալածանքներից խուսափելով՝ Գայանեն Հռիփսիմեի և մյուս ընկերների հետ փախել է Հայաստան: 301 թվականին Վաղարշապատում Գայանեն, ինչպես նաև երեսունվեց կույսեր դառնում են հայոց հեթանոս Տրդատ թագավորի զոհի:

- 1) Գայանեի վանքը քրիստոնեական է:
- 2) Վկայարանի մասին տեղեկություններ է տալիս Ազարանգեղոսը:
- 3) Գայանեն, Հռիփսիմեն և շատ կույսեր ենթարկվել են հոռմնական կայսեր հալածանքներին:
- 4) Տրդատ թագավորը 301 թ. ընդունում է քրիստոնեությունը Գայանեի և մյուս կույսերի հորդորով:

## 19. Ո՞ր միտքն է բխում տրված բովանդակությունից:

Կալիֆոռնիայի համասարանի ֆիզիկոսների խումբը Բահրամ Զալալի ղեկավարությամբ ստեղծել է լուսանկարչական սարք, որը կարողանում է վայրկյանում նկարել 6 միլիոն լուսանկար: Բանն այն է, որ ֆոտոֆիզիկի փականը կարող է լուսանկարել վայրկյանի մեկ միլիարդերորդ մաս տևող ընդմիջումներով՝ աշխատելով որպես գերարազ բարախող լազեր: Այն սփռվում է տարածության մեջ և բացահայտվում միայն էլեկտրոնային ստուգիչ սարքի միջոցով: Սակայն վայրկյանում 6 միլիոն նկարող սարք համար վերջնասահման չէ: Կայդերի քանակը հնարավոր է հասցնել մինչև 10 միլիոն:

- 1) Կալիֆոռնիայում արտադրվում է վայրկյանում 6 միլիոն նկարող սարք:
- 2) Ամերիկան ֆիզիկոսների նոր սարքը կարողանում է լուսանկարել վայրկյանի մեկ միլիոններորդ մաս տևող ընդմիջումներով՝ ստեղծելով մոտ 10 միլիոն լուսանկար:
- 3) Նոր ֆոտոֆիզիկի փականը աշխատում է գերարազ բարախող լազերի նման, որի սփռվելը հնարավոր է հայտնաբերել միայն էլեկտրոնային դետեկտորով:
- 4) Բահրամ Զալալը էլեկտրոնային ստուգիչ սարքով ստեղծել է գերարազ բարախող լազերային սարք:

## 20. Ո՞ր միտքը չի հակասում տրված բովանդակությանը:

Հնդկեղեգը շատ թերև, ճկում և ամուր խոտարույս է: Աճում է տաք երկրներում, ու թեև նրա հիմքի հաստությունը սովորաբար 30 մմ-ից չի անցնում, սակայն որոշ հնդկեղեգներ աճում և հասնում են մինչև 40 մ բարձրության: Հնդկեղեգն աճում է տաք երկրներում, որ շատ են արևն ու խոնավությունը: Հաճախ այն անանցանելի մացառուտներ է առաջացնում. բներն այնքան մոտ են լինում միմյանց, որ նման անտառով չեն անցնի: Ընդ որում, այդ մացառուտները կարող են առաջանալ այնտեղ, որ մի քանի օր առաջ ոչինչ չկար: Կովկասում աճող հնդկեղեգի հասակը մեկ օրվա ընթացքում ավելանում է 75 մմ-ով, իսկ իր հայրենիքում՝ Վիետնամում աճող հնդկեղեգինը՝ անզամ մինչև 2 մ-ով: Հնդկեղեգը լայնորեն կիրառում են տնտեսության մեջ. նրանից տներ, կամուրջներ, ջրմուղներ են կառուցում, կահույք ու բուղբ պատրաստում, իսկ մատղաշ ընձյուղները օգտագործում են նաև սննդի մեջ:

- 1) Հնդկեղեգի աճման համար բարենպաստ պայմաններ են տաքությունն ու խոնավությունը:
- 2) Հնդկեղեգի ծառերը սովորաբար միայնակ են աճում:
- 3) Հնդկեղեգի մատղաշ ընձյուղները շատ հարմար են կահույք կամ թուղթ պատրաստելու, ինչպես նաև սննդի մեջ օգտագործելու համար:
- 4) Հնդկեղեգի հայրենիքում՝ Վիետնամում միայն կարող են հանդիպել 40 մ բարձրության հասնողներ:

## 21. Ո՞ր միտքը չի հակասում տրված բովանդակությանը:

Հստ պատմական մի աղբյուրի՝ մ.թ.ա. IV դարից գալլերը, որոնք իրենց տեսրով իսկ սարսափ էին ազդում, հարձակումներ ձեռնարկելով Հռոմի վրա, ի վերջո ցիրուցան են անում հռոմեացիների զորքն ու զրավում Հռոմը: Թալանից ու հրկիզումներից փախած բնակիչների մի մասը բարձրում է անառիկ Կապիտոլիումում՝ հետ մղելով զրոհները: Սակայն գիշերը, երբ գալլերը կրկին մազցում են Կապիտոլիումի բլուրը, ոչ պահապանները, ոչ շննդիր ոչինչ չեն լսում: Միայն սագերն են լսում թշնամու զայլ և կոճցոնցներով արթնացնում զինվորներին: Այսեղից էլ առաջացել է «սագերը փրկեցին Հռոմը» արտահայտությունը:

- 1) Մ.թ.ա. IV դարից գալլերը, հռոմեական զորքերի հարձակումներին դիմակայելով, ի վերջո հաջող հակահարվածով մտնում են Հռոմ և զրավում Կապիտոլիումի բլուրը:
- 2) Մ.թ.ա. IV դարում Հռոմ ներխուժած գալլերի գիշերային հարձակումը Կապիտոլիումի վրա խափանում են սագերը, որոնք կրինչներով արթնացնում են քնած զինվորներին:
- 3) Մ.թ.ա. VI դարում գալլերը, հարձակվելով և զրավելով Հռոմը, գիշերային զրոհով ներխուժում են Կապիտոլիումի բլուրը՝ այնտեղ գտնելով քնած գիշերապահներին և Հռոմը փրկած սագերին:
- 4) «Սագերը փրկեցին Հռոմը» արտահայտությունը առաջացել է գալլերի՝ մ.թ.ա. VI դարում Հռոմի դեմ կատարած արշավանքի ժամանակ, երբ Կապիտոլիումի բլրի վրա սագերը միայնակ էին:

## ԲԱԺԻՆ 6 ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳԻՏԵԼԻՔՆԵՐ ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ ՄԱՍԻՆ

### 1. Ո՞ր նախադասությունն է միջին հայերենով:

- 1) Աչքն ծով ի ծով ծիծաղախիտ  
Ծաւալանայր յառաւօտուն:
- 2) Ես ինքզինք չեմ կարծեր այնշափ մեծ մարդ, որչափ որ կը կարծե այս խմբագիրն:
- 3) Էրնեկ ես անոր կու տամ, որ առեր իւր եարն է փախեր:
- 4) Մեզ ասող չի ըլում, թե մենք ո՞վ ենք, մեր հավատն ի՞նչ ա, ընչի համար ենք եկել աշխարհ:

### 2. Ո՞ր հատվածն է արևմտահայերենով:

- 1) Կելնեմ, կու գնամ, մանկտիք,  
հաւասար բարով մնացէք....
- 2) Ամենայն տեղ մահը մի է,  
Մարդ մի անգամ ալիս մեռնի....
- 3) Ավերակներու քառուղին մը վրա, այս իրիկուն  
Դժգոհությանս հետ երես երեսի, ինձի ըսին:
- 4) Տեղ ոսկի տեղայր ի փեսայութեանն Արտաշիսի,  
Տեղայր մարգարիտ ի հարսնութեանն Սարենկան:

### 3. Ո՞ր հատվածը արևմտահայերենով չէ:

- 1) Ինչո՞ւ արդյոք խորշակահար  
Կ'ընե ծաղկունք դեռափթիք,  
Ինչո՞ւ արդյոք նա սիրահար  
Սրտերն զեղու արտասվոք միշտ:
- 2) Անցան դարեր. դեռ Տղմուտը հեծելով  
Գիշերները խանգարում է անվրդով  
Ավարայրի անուշ քունը և չունի  
Մինչև այսօր նա ողբակից յուր վշտի:
- 3) Դեղին վարդեր մայիսի,  
բուրումներով խնկավետ  
Բակության մը մեջ հավետ  
կը տժգունին մեկոսի:
- 4) Ես այգերով ու ցայգերով  
Հաճախ մենակ կ'անրջեմ  
Անհնարին, երկնազորով  
Սեր մը, որուն տերը չեմ:

### 4. Ո՞ր հայերենով է հետևյալ հատվածը:

*Եկին ու խապար բերին,  
բե՛ ելեր քո եարն ու կու գայ:  
Եկե՛ք, մեր ի դեմ երթանք,  
որ նորա սիրտըն չի մնա...*

- 1) գրաբար
- 2) արևելահայ աշխարհաբար
- 3) արևմտահայ աշխարհաբար
- 4) միջին հայերեն

## 5. Ո՞վ է այս խոսքերի հեղինակը.

«Լեզուն է ամեն մի ժողովրդի ազգային գոյության ու էության ամենախոշոր փաստը, ինքնության ու հանձնարի ամենախոշոր դրոշմը, պատմության ու հեռավոր անցյալի կախարդական բանալին, հոգեկան կարողությունների ամենամոնի գանձարանը, հոգին ու հոգեբանությունը»:

- 1) Հ. Թումանյան
- 2) Ս. Չորյան
- 3) Ավ. Իսահակյան
- 4) Դ. Աղայան

## 6. Ո՞վ է այս խոսքերի հեղինակը.

«Գրաբարք...ոսկի է, դա լեզու չէ, այլ երկնային երաժշտություն, սկերծություն, ուժ, ճկունություն, այդ ամենը նոր եմ սկսում զգալ...»:

- 1) Հ. Թումանյան
- 2) Ե. Չարենց
- 3) Ավ. Իսահակյան
- 4) Վ. Տերյան

## 7. Ո՞վ է այս խոսքերի հեղինակը.

«Մայրենի լեզուն մարդու հետ է միշտ: Լեզուն այն միջոցն է, որով գիտակցությունը մարմին է առնում, մտածմունքը՝ նյութականանում»:

- 1) Հ. Թումանյան
- 2) Հ. Աճառյան
- 3) Ավ. Իսահակյան
- 4) Ս. Չորյան

## 8. Ո՞վ է այս խոսքերի հեղինակը.

«Սկսել եմ և շարունակում եմ հայոց լեզվի ուսումնասիրությունը... Սա մի հարուստ լեզու է, և լիովին փոխառությունը են սովորողի շարչարանքները... Ճոխ է հայ լեզուն, և առատորեն կվարձատրվի նա, ով կուտաննասիրի այն»:

- 1) Ֆ. Ֆեյդի
- 2) Ա. Մեյն
- 3) Զ. Բայրոն
- 4) Հ. Հյութշման

## 9. Ո՞վ է այս խոսքերի հեղինակը.

«Հայ լեզուն է այն սարսափելի ուժը, որի լըդղեմ տկար են նաև միլիոնավոր բարբարոսների սվինները: Լեզուն է ազգությանց դրոշակը...»:

- 1) Հ. Թումանյան
- 2) Ռաֆֆի
- 3) Մ. Նալբանդյան
- 4) Դ. Աղայան

## ԲԱԺԻՆ 7 ՈՇԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

1. Ո՞ր ոճին են բնորոշ տրված բառակապակցությունները.

*սոլյուզ հաստատել, առ այն, ըստ որոշման, քաղածք որոշումից, նիստի արձանագրություն:*

- 1) վարչական
- 2) գեղարվեստական
- 3) հրապարակախոսական
- 4) գիտական

2. Ընդգծված բառակապակցություններից որո՞ւմ մակդիր չկա:

- 1) **բոցե** վարդեր
- 2) **երգեր** հրահրուն
- 3) **անափի** երեկո
- 4) **խավար** գիշեր

3. Պատկերավորման-արտահայտչական ո՞ր միջոցը գործածված չէ:

*Երազի նման գիշեր է այսօր,  
Ու ձյուն է զալիս երազի նման.  
Ճերմակ են դարձել դաշտերը բոլոր,  
Մարմարի գիշեր՝ անեզր անսահման:*

- 1) համեմատություն
- 2) մակդիր
- 3) շրջադասություն
- 4) անձնավորում

4. Պատկերավորման-արտահայտչական ո՞ր միջոցը գործածված չէ:

*Նրա ժայռը մեղմ էր ու դողդոց,  
Որպես լուսնյակի ժայռը տիտոր.  
Նա չուներ խոցող բովանձքը կնոջ.-  
Նա մոտենաւ էր որպես քաղցր քույր...*

- 1) համեմատություն
- 2) բաղաձայնույթ
- 3) հանգավորում
- 4) մակդիր

5. Պատկերավորման-արտահայտչական ո՞ր միջոցն է գործածված:

*Զյունն էլ արևի ջահել համբույրից  
Ուրախ լալիս է դաշտերի վրա:*

- 1) համեմատություն
- 2) հակադրություն
- 3) չափազանցություն
- 4) անձնավորում

6. Պատկերավորման-արտահայտչական ո՞ր միջոցը գործածված չէ:

*Իջավ սարյակը դաշտում. ծիլ էր կտուցին.  
Շուրջին վրա մի կանաչ տող էր բարսում:  
Կոռաց ագռավը ծորում. ձյուն էր կտուցին.  
Սրտին վրա մի ճերմակ տող էր բարսում:*

- 1) մակդիր
- 2) հանգավորում
- 3) համեմատություն
- 4) անձնավորում

**7. Պատկերավորման-արտահայտչական ո՞ր միջոցը գործածված չէ:**

Ծաղկի պես կարմիր, հրափրտ, զլարք,  
Բացվել է այսօր սիրոս նախրյան  
Աշխարհի սրտում-  
Թեժ, կարմիր սրտում վառվող աշխարհի:

- 1) մակդիր
- 2) բաղաձայնույթ
- 3) շրջադասություն
- 4) համեմատություն

**8. Պատկերավորման-արտահայտչական ո՞ր միջոցը գործածված չէ:**

Աղբյուրն անուշ հեքիարի պես  
Իր լույս երգով ժայռում էր մեզ:

- 1) անձնավորում
- 2) մակդիր
- 3) համեմատություն
- 4) շրջադասություն

**9. Պատկերավորման-արտահայտչական ո՞ր միջոցը գործածված չէ:**

Լուսակերտ է ապարանքը Թաղմորի,  
Անապատում, որպես երազ ուկեցյուն,  
Յոթն հարյուր սյունի վրա մարմարի  
Սլանում է աշտարակը երկնասույց:

- 1) մակդիր
- 2) համեմատություն
- 3) հակադրություն
- 4) շրջադասություն

**10. Գործառական ո՞ր ոճով է շարադրված հետևյալ հատվածը:**

Սուածին անգամը չէ, որ ինձ վիճակվում է հայտնվել այն աննախանձելի ու անձեռնոտ վիճակում, երբ որդիշները գովարանելով գովարանում են մեր մշակույթի այս կամ այն երևույթը, իսկ ես հասնած եմ առնում առարկողի դերը: Ինչո՞ւ, եթե իրոք դերն աննախանձելի է և, մանավանդ, անձեռնոտ: Այն պատճառով, որ գովարանությունը բխում է անհիմն, անշշմարիտ, իսկ ո՞ւմ հայտնի չէ հինավորց ասացվածքը՝ «Ես Պյատոնին սիրում եմ, բայց ծշմարտությունն ավելի եմ սիրում»: Ավելի էական պատճառ էլ կա. այն, որ անշշմարիտ գովարանությունը սխալ ճանապարհի է մղում արվեստը, և դրա հանդեպ չի կարելի անտարբեր լինել:

- 1) հրապարակախոսական
- 2) վարչական
- 3) գեղարվեստական
- 4) գիտական

**11. Գործառական ո՞ր ոճով է շարադրված հետևյալ հատվածը:**

Բանավեճը հրապարակային վիճարանություն է որևէ հարցի շուրջ: Բանավեճի մյուր կարող են դառնալ գիտական, գրական և այլ բնույթի այն հարցերը, որոնց վերաբերյալ կան տարբեր կարծիքներ ու տեսակետներ: Այն օգնում է հանգելու ճիշտ եզրակացության տվյալ հարցի մասին, ձևավորելու հասարակական կարծիքները ու գեղարվեստական ճաշակները:

- 1) հրապարակախոսական
- 2) վարչական
- 3) գիտական
- 4) գեղարվեստական

**12. Գործառական ո՞ր ոճով է շարադրված հետևյալ հատվածը:**

Ձեռքերը քոր էին գալիս. նա անհագուրդ պահանջ էր զգում կտավին հանձնելու այդ տեսարանը, որը ժամեր հետո կարող էր անհանալ՝ վերածվելով թանձն մշուշի: Բայց այդ պահին ո՞վ կտար նրան վրձին ու կտավ: «Այս, ե՞րբ ազատ հայրենիք կունենանք, որ ծեռքս նորեն վրձին առնեմ», - խորը հառաչելով՝ մնածեց նա:

- 1) առօրյա-խոսակցական
- 2) վարչական
- 3) հրապարակախոսական
- 4) գեղարվեստական

**13. Գործառական ո՞ր ոճով է շարադրված հետևյալ հատվածը:**

Քիչ շարժվող մարդկանց լեղապարկի գործունեությունը հաճախ խարարվում է, և լեղու կանգի պատճառով առաջանում է բորբոքում, որը կարող է հանգեցնել լեղաքարային հիվանդության:

- 1) առօրյա-խոսակցական
- 2) վարչական
- 3) գիտական
- 4) հրապարակախոսական

**14. Գործառական ո՞ր ոճով է շարադրված հետևյալ հատվածը:**

Ավետիք Իսահակյանը տիպականացման է հասել շնորհիվ այն թանի, որ իր անձնական զգացմունքները, հույզերը արտահայտել է ժողովրդական բանարվեստի արտահայտչական միջոցներով: Ժողովուրդը եղել է նրա հավատարին ուղեկիցը և իմաստուն խորհրդատուն:

- 1) գեղարվեստական
- 2) գիտական
- 3) վարչական
- 4) առօրյա-խոսակցական

**15. Տրված բառակապակցություններում ընդգծվածներից քանի՞սն են մակրիք.**

**Այրիած գիշեր, պայծառ ծիծաղ, ծով աշքեր, քախծոտ դաշտեր, մերկ անտառ, որը երկիր, հպարտ հոնքեր, անկրակ իրիկնաժամ, անարև մանկություն, վարսաքափ ուոհ:**

- 1) բոլորը
- 2) ութը
- 3) յոթը
- 4) հինգը

**16. Պատկերավորման-արտահայտչական նշված միջոցներից քանի՞սն են գործածված:**

**Կոյսաբերություն, մակրիք, համեմատություն, հակադրություն, շրջադասություն, չափազանցություն:**

**Ամեն ինչ այնպես անդրբու է ու կույս,  
Որ չեմ հավատում կարմիր երազին,  
Միրաժի նման փարփում է հոգու  
Անէ աշխարհի քնքշությունը հիմ:**

- 1) երեքը
- 2) հինգը
- 3) վեցը
- 4) չորսը

## ԲԱԺԻՆ 8 ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Զախս կողմում քերպած մտքերից յուրաքանչյուրը Ոսկեղարի հայ մատենագրության հինգ խոշոր պատմիչներից որի՞ երկին է վերաբերում:

- Չարադրում է Վարդանանց պատերազմի հերոսական դրվագները (451 թ.):
  - Հիմնականում ընդգրկում է Հայաստանում քրիստոն նեության տարածման շրջանը, երբ Տրդատ Մեծ թագավորի և Գրիգոր Լուսավորչի ջանքերով մեր երկրում քրիստոնեությունը հռչակվեց պետական կրոն (301թ.):
  - Նկարագրում է 460-480-ական թվականների պատմական իրողությունները, մասնավորապես՝ Վահանանց պատերազմը:
  - Պատմությունը սկսվում է Տրդատ Մեծից և հասնում մինչև 387 թվականը, երբ Հայաստանը բաժանվեց Պարսկաստանի և Բյուզանդիայի միջև:
  - Գրի շնորհիվ անդառնալի կորսադից փրկվել են հայոց հին բանահյուսության մի շարք նմուշներ:
- ա-2, թ-1, գ-4, դ-5, ե-3
  - ա-1, թ-2, գ-4, դ-5, ե-3
  - ա-2, թ-1, գ-5, դ-4, ե-3
  - ա-3, թ-1, գ-4, դ-5, ե-2

2. Հայ պատմագրության վերաբերյալ ո՞ր պնդումն է սխալ:

- Պատմագրությունը Ոսկեղարի հայ մատենագրության ամենահարուստ բաժինն է:
- 5-րդ դարի պատմիչների գործերում պատմական փաստերը շարադրված են պատկերավոր լեզվով, ճարտասանական հնարքներով:
- Պատմագրության նյութը քրիստոնեական հավատի համար զոհված և սրբացված մարդկանց նահատակության պատմությունն է:
- Պատմագրության մեջ պատմական անձինք հանդես են գալիս որպես պատմագեղարվեստական կերպարներ:

3. Ո՞ւմ պատվերով է Մովսես Խորենացին գրել իր «Հայոց պատմությունը»:

- Վահան Մամիկոնյանի
- Վռամշապուհ թագավորի
- Սահակ Բագրատունու
- Սահակ Պարթևի

4. Ո՞րը Մովսես Խորենացու «Հայոց պատմության» գրքերից չէ:

- «Մեր հայրենիքի պատմության ավարտը»
- «Մեր թագավորների անհմաստաեր բարքի մասին»
- «Հայոց մեծերի ծննդաբանությունը»
- «Միջին պատմություն մեր նախնիների»

5. Տրվածներից ո՞րը Մովսես Խորենացու «Ողբ»-ում արծարծված թեմաներից չէ:

- ազգային պետականության կործանումը
- պատմիչների կողմից մեր պատմության աղավաղումը
- անկարգության ու տղիտության արմատավորումը
- իր ուսուցիչների մահը

- Ազարանգեղոս, «Հայոց պատմություն
- Եղիշե, «Վարդանի և հայոց պատերազմի մասին
- Մովսես Խորենացի, «Հայոց պատմություն»
- Ղազար Փարպեցի, «Հայոց պատմություն»
- Փափստոս Բուզանդ, «Հայոց պատմություն»

**6. Ո՞ր բառն է բաց բողած:**

*Գոհար վարդն վառ առեալ  
ի վեհից վարսիցն արփենից.  
Ի վեր ի վերայ վարսից  
ծաւալէր ծաղիկ .....:*

- 1) Երկնային
- 2) Լեռնային
- 3) Չրային
- 4) Ծովային

**7. Ո՞ր տարրերակի թվերի դասավորությունն է ճիշտ նշում «Սասնա ծոեր» վիպերգի («Սասունցի Դավիթ» համահավաք բնագիր) ճյուղերի ճիշտ հաջորդականությունը:**

- ա. «Սեծ Սիեր»  
բ. «Սանասար և Բաղդասար»  
զ. «Սասունցի Դավիթ»  
դ. «Փոքր Սիեր»

- 1) զ, թ, ա, դ
- 2) թ, ա, զ, դ
- 3) թ, զ, դ, ա
- 4) զ, ա, թ, դ

**8. Ո՞ր տարրերակում է ճիշտ նշված, թե «Սասնա ծոեր» էպոսի («Սասունցի Դավիթ» համահավաք բնագիր) նշված հերոսուհիներից որը որ հատկանիշի կրողն է.**

- |                   |                    |
|-------------------|--------------------|
| ա. Սառյե          | 1. ոխակալություն   |
| բ. Զմշկիկ Սուլթան | 2. անառակություն   |
| զ. Իսմիլ Խարոսն   | 3. անձնազոհություն |
| դ. Արմաղան        | 4. խորամանկություն |

- 1) ա-3, թ-1, զ-4, դ-2
- 2) ա-2, թ-1, զ-3, դ-4
- 3) ա-3, թ-1, զ-2, դ-4
- 4) ա-2, թ-1, զ-4, դ-3

**9. Ո՞ր տարրերակում են ճիշտ նշված վիպական այն հերոսների անունները, որոնք հայրական անեծքով դառնում են անմահ:**

- 1) Արտավազդ, Փոքր Սիեր
- 2) Արա Գեղեցիկ, Դավիթ
- 3) Բաղդասար, Սեծ Սիեր
- 4) Արտաշես, Սանասար

**10. «Սասնա ծոեր» էպոսում («Սասունցի Դավիթ» համահավաք բնագիր) Սասնա հերոսներից ո՞վ է հիմնադրում Մարութա Աստվածածին վանքը:**

- 1) Դավիթը
- 2) Սանասարը
- 3) Գագիկ թագավորը
- 4) Սեծ Սիերը

11. Պնդումներից քանիսո՞ւմ սխալ կա «Սասնա ծռեր» էպոսի («Սասունցի Դավիթ» համահավաք բնագիր) «Սանասար և Բաղդասար» ճյուղի վերաբերյալ:

- Խալիֆայի կողմից սպասվող վտանգից խուսափելու համար Սանասարն ու Բաղդասարը մոր խորհրդով հեռանում են Բաղդադից:
- Հեռանալով Բաղդադից՝ իրենց ճանապարհին Սանասարն ու Բաղդասարը տեսնում են նի բարակ, բայց զորեղ առու, որի ակունքի մոտ իրենց համար ամրոց են կառուցում:
- Ծովինարի խորհրդով իրենց կառուցած ամրոցը եղբայրները անվանում են Սասուն:
- Բերդի կառուցման ժամանակ Սանասարը շինարարությամբ է զբաղվում, իսկ Բաղդասարը միայն որս է անում:

- 1) մեկում
- 2) երկուսում
- 3) երեքում
- 4) չորսում

12. Պնդումներից քանիսո՞ւմ սխալ կա «Սասնա ծռեր» էպոսի («Սասունցի Դավիթ» համահավաք բնագիր) «Մեծ Սիեր» ճյուղի վերաբերյալ:

- Սիերը եղբայրներից միակն է, որ ժառանգում է հոր ոյուցազնական ուժը և չափահաս դառնալով՝ տիրություն անում իր երկրին ու ժողովրդին:
- Սիերը գոտեմարտում է Սասունի հացի ճանապարհը կտրող հակա առյուծի հետ և նրա երախը պատռելով՝ մեջտեղից կիսում:
- Սիերը սպանում է Սպիտակ Դևին և ազատելով գեղեցկուի Գոհարին՝ ամուսնանում նրա հետ:
- Սիերը մենամարտում սպանում է Մըսրա Մելիքին և տիրում Բաղդադին:

- 1) մեկում
- 2) երկուսում
- 3) երեքում
- 4) չորսում

13. Պնդումներից քանիսո՞ւմ սխալ կա «Սասնա ծռեր» էպոսի («Սասունցի Դավիթ» համահավաք բնագիր) «Փոքր Սիեր» ճյուղի վերաբերյալ:

- Սիերը լուծում է հոր վրեժը՝ սպանելով Զմշկիկ Սուլթանին և կոտորելով նրա զորքը:
- Սիերը ոչնչացնում է Կողբայինի բռնմերին, որոնք ուզում էին հարկատու դարձնել Սասունը:
- Հոր անեծքով Սիերը մնում է անմահ ու անժառանգ, դեռք բռնում են նրան և փակում Ագռավաքարում:
- Տարին երկու անգամ մոլոք ժայռում փակված Սիերի երկու հավատարիմ շները կրծում են նրա շղթաները, որպեսզի նա դուրս չգա և կործանի աշխարհը:

- 1) մեկում
- 2) երկուսում
- 3) երեքում
- 4) չորսում

**14. Պնդումներից քանիսո՞ւմ պիտի կա «Սասնա ծռեր» վիճակի («Սասունցի Դավիթ» համահավաք բնագիր) «Սասունցի Դավիթ» ճյուղի վերաբերյալ:**

- Դավիթը ամուսնանում է Զմշկիկ Սուլթանի հետ, իսկ հետո, Զենով Հովանից իմանալով Խանդութի գեղեցկության մասին, զնում է նրա մոտ և բազմաթիվ սխրագործություններ կատարելով՝ ամուսնանում վերջինիս հետ:
- Ամենահաղթ Դավիթը սպանվում է Զմշկիկ Սուլթանի թունավոր նետից:
- Խմանալով Դավիթի մահվան մասին՝ Խանդութի իրեն բերդի գլխից ցած է նետում և մահանում:
- Չներելով Փոքր Սիերին իր հետ մենամարտելու և իրեն ամորով թողնելու համար՝ Դավիթը անիծում է նրան՝ ասելով, որ լինի անմահ ու անժառանգ:

- 1) մեկում
- 2) երկուսում
- 3) երեքում
- 4) չորսում

**15. Ո՞րն էր Դավիթի և Փոքր Սիերի մենամարտի պատճառը «Սասնա ծռեր» էպոսում («Սասունցի Դավիթ» համահավաք բնագիր):**

- 1) Սիերին դուր չի գալիս, որ իրեն անձանոք այդ ձիավորը ճանապարհն իրեն չի գիջում:
- 2) Սիերը զայրանում է, որ մի թուխմորուս մարդ իր ձիու վրա մի երիտասարդ աղջիկ է տանում:
- 3) Սիերը Դավիթից պահանջում է նրա նժույգը և մերժում ստանում:
- 4) Սիերը, տեսնելով այդ աժդահա մարդուն, ուզում է իր ուժը փորձել՝ նրա հետ գոտեմարտելով:

**16. Ինչո՞վ է ավարտվում «Սասնա ծռեր» էպոսի («Սասունցի Դավիթ» համահավաք բնագիր) շորքորդ ճյուղը:**

- 1) Փոքր Սիերը կովում է Աստծու ուղարկած յոթ իրեշտակների հետ:
- 2) Գոհարը մեռնում է, և Փոքր Սիերը նրան քարում է Սասունում:
- 3) Սիերը փակվում է Ազուավար կոչվող ժայռում:
- 4) Քեռի Թորոսը կալիծից մեռնում է:

**17. Նահապետ Քուչակի «Կեղմեմ, կու գնամ, մանկտիք» հայրենում ո՞վ է իր սիրած կնոջ մասին ասում. «Վարդմ՝ ձեզ, զու՞րն յիշեցեր»:**

- 1) հարկադրաբար պանդխոտության մեկնողը
- 2) նյութական անհավասարության պատճառով սիրած կնոջը կորցնողը
- 3) փոխադարձ երջանիկ սեր վայելող պատանին
- 4) սիրո վայելից հրաժարվող կուսակրոն քահանան

**18. Նշված հեղինակներից ո՞վ է առաջինը կիրառել հանգը:**

- 1) Մեսրոպ Մաշտոցը
- 2) Նահապետ Քուչակը
- 3) Ֆրիկը
- 4) Գրիգոր Նարեկացին

**19. Նշված մտքերից ո՞րը Սլսիթար Գոշի որ առակի գաղափարն է արտահայտում:**

- |   |                         |
|---|-------------------------|
| ա. Քարձոր է դասվում հողագործի տքնաջան աշխատանքը, առանց<br>որի աշխարհը չի կարող լիանալ:                          | 1. «Բամբակենին և Սոսին» |
| բ. Միասնական ջանքերով կարելի է հաղթել հզորին:   | 2. «Աստղերը և Լուսինը»  |
| գ. Քննադատվում են արտաքինով գեղեցիկ, բայց հասարակության<br>համար անպիտան և փուչ մարդիկ:                         | 3. «Ոսկին և ցորենը»     |
| դ. Երբեմն մարդիկ գերազնահատում են իրենց կարողությունները և<br>ուժը՝ հաշվի չառնելով սեփական հնարավորությունները: | 4. «Արջ և մրջուն»       |
- 1) ա-3, բ-2, գ-1, դ-4  
2) ա-3, բ-4, գ-1, դ-2  
3) ա-1, բ-2, գ-3, դ-4  
4) ա-1, բ-4, գ-3, դ-2

**20. Սայաթ-Նովայի ո՞ր բանաստեղծությունից է տրված հատվածը:**

*Ամեն մարդ չի կանա խրմի՝ իմ ջուրըն ուրիշ ջրըեն է.  
Ամեն մարդ չի կանա կարուս՝ իմ զիրըն ուրիշ զրբեն է:*

- 1) «Աշխարս մե փանջարա է»  
2) «Դուն էն զլիսեն իմաստուն իս»  
3) «Թամամ աշխար պտուտ եկա»  
4) «Աշխարումս ախ չիմ քաշի»

**21. Ո՞ր շարքում են միայն Սայաթ-Նովայի բանաստեղծությունները:**

- 1) «Աշխարումս ախ չիմ քաշի», «Իմ ցավը», «Տաղ Վարդավառի»  
2) «Տրտունջը», «Վունցոր վուր դարիք բլուլն», «Աշխարս մե փանջարա է»  
3) «Պանդուխտ որդին», «Աշխարումս ախ չիմ քաշի», «Արի համով դուլով արա»  
4) «Դուն էն զլիսեն իմաստուն իս», «Աշխարս մե փանջարա է», «Թամամ աշխար պլտուտ եկա»

**22. Նշված պարբերականներից որի՞ն է աշխատակցել Սիքայել Նալբանդյանը:**

- 1) «Ազդարար»  
2) «Մշակ»  
3) «Խիկար»  
4) «Հյուսիսափայլ»

**23. Սիքայել Նալբանդյանի ո՞ր բանաստեղծությունից է տրված հատվածը:**

*Ներկա օրերում այլ ի՞նչ սև քնար,  
Սուր է հարկավոր կտրճի ձեռքիմ...*

- 1) «Մանկության օրեր»  
2) «Ազատություն»  
3) «Իտալացի աղջկա երգը»  
4) «Ապոլլոնին»

**24. Նշվածներից ո՞վ է միջին հայերենով ստեղծագործել:**

- 1) Գրիգոր Նարեկացին  
2) Ֆրիկը  
3) Սայաթ-Նովան  
4) Դանիել Վարուժանը

- 25. Պնդումներից որի՞ մեջ սխալ կա Բաֆֆու «Սամվել» վեպի վերաբերյալ:**
- 1) Վեպի գլխավոր հերոսը՝ Սամվելը, իր հայացքներով ի սկզբանե տարբերվում է ընտանիքի մյուս անդամներից՝ ներքուստ ընդդիմանալով մոր պարսկասիրությանը:
  - 2) Մայրը՝ Տաճառուիհին, փառանոլ է, դավաղիր, նպատակներին հասնելու ճանապարհին միշոցների մեջ խտրություն չդնող:
  - 3) Սամվելն իր ձեռքով սպանում է ազգաղավ հորն ու ուրացող մորը, բայց նրա արարքը չի արժանանում բազմության հավանությանը:
  - 4) Վեպում Սերուժանի վախճանը ներկայացված չէ:
- 26. Նշվածներից ո՞րը Բաֆֆու «Սամվել» պատմավեպի «Երեք երիտասարդ ուժերի»՝ Սամվելի, Սահակ Պարթևի և Սեպուհ Մաշտոցի ծրագրերից չէ:**
- 1) պատվիրակություն կազմել՝ հարևան ժողովուրդների հետ բանակցություններ վարելու համար
  - 2) հայացնել քրիստոնեական քարոզները և հայ եկեղեցու ծեսերն ու արարողությունները
  - 3) կանխել պարսից արքունիքի և հայ դավաճանների նախաձեռնած՝ հայերին զրադաշտականություն պարտադրելու և պարսկացնելու վտանգը
  - 4) ստեղծել հայերեն գիր ու գրականություն, բացել դպրոցներ և սկիզբ դնել ազգային կրթական ու լուսավորական շարժման
- 27. «Սամվել» պատմավեպում Արտասուրի աղբյուրի մոտ Սամվելին սպասող Աշխենին հունական լիցարանության ո՞ր աստվածություն հետ է համեմատում Բաֆֆին:**
- 1) Աֆրոդիտեի
  - 2) Արտեմիսի
  - 3) Արենաս-Պալլասի
  - 4) Հերայի
- 28. Պետրոս Դուրյանի «Լճակ» բանաստեղծության տրված հատվածում ո՞ր բառն է բաց քողած:**
- Որքան ունիս դու ալի,  
Ճակասու այնքան ..... ունի,  
Որքան ունիս դու փրփուր,  
Սիրոս այնքան խոց ունի բյուր:*
- 1) խոց
  - 2) բյուր
  - 3) խորշում
  - 4) խոնկ
- 29. Պետրոս Դուրյանի «Լճակ» բանաստեղծության տրված հատվածում ո՞ր բառն է բաց քողած:**
- Ոչ ոք բասար. «Սա տրդին  
Պատռենք սիրտը ..... ,  
Նայինք իմշե՛ր զրված կան ...»:  
- Հոն հրդեհ կա, ոչ մատյան:*
- 1) վշտագին
  - 2) տրտմագին
  - 3) ցավագին
  - 4) հեշտագին

**30. Պետք է համար այս գալու բանաստեղծության տողերի ո՞ր հերթականությունն է ճիշտ արտահայտում այդ տողերի հաջորդականությունը:**

1. Գրկել սա ցուրտ հողակույտը
2. Դեռ չը գրկած էակ – փունջ մը
3. Ժըպտե, գեղե, հուրե շաղյալ
4. Ո՞հ չէ՝ այնչափ ցավ ինձ համար

- 1) 2, 3, 4, 1
- 2) 2, 3, 1, 4
- 3) 3, 2, 1, 4
- 4) 1, 2, 3, 4

**31. Պետք է համար այս գալու բանաստեղծության տողերի ո՞ր հերթականությունն է ճիշտ արտահայտում այդ տողերի հաջորդականությունը:**

1. Հազմին հյուղին մուր-անունը
2. Միշտ ցավիլ միանգամայն
3. Ո՞հ չէ՝ այնչափ ցավ ինձ համար
4. Ծըծել նորա մըրուր – օդն հար

- 1) 1, 4, 3, 2
- 2) 1, 4, 2, 3
- 3) 4, 1, 2, 3
- 4) 3, 1, 4, 3

**32. Հակոբ Պարոնյանի «Սեծապատիվ մուրացկանները» վեպի հերոս Արխտղոմ աղան համաձայնում է լուսանկարվել, երբ՝**

- 1) իմանում է, որ ամեն մարդ պարտավոր է «փր պատկերը քաշել տալ»:
- 2) լուսանկարիչը, նկարագրելով իր ողբայի վիճակը, շարժում է նրա գութը:
- 3) պարզում է, որ միայն մեծ մարդիկ լուսանկար ունեն:
- 4) լուսանկարիչը խոստանում է ձրի նկարել:

**33. Նշվածներից որո՞վ է սկսվում Մուրացանի «Գևորգ Մարզպետունի» պատմավեպը:**

- 1) Աշոտ Երկար թագավորի դեմ հայ իշխանների ապստամբության նկարագրությամբ
- 2) արար հրոսակների՝ Հայաստան ներխուժումով
- 3) Գառն ամրոցի նկարագրությամբ
- 4) Դվինի կործանման նկարագրությամբ

**34. Մուրացանի «Գևորգ Մարզպետունի» պատմավեպի ո՞ր հերոսի խորքն է.**

*«-Տե՛ր Մարզպետունի, դու ինձ զինարափի ես անում, քո խոսքերը ճնշում եմ իմ սիրտը, որովհետև դու նատած ես այժմ իմ առաջ, և ես լսում եմ քո կենդանի բարրարը: Բայց երբ դու հեռանաս, և ես մնամ միայնակ, երբ այս ահազին սրահի մեջ չղջիկները գան ինձ ընկերանալու, երբ առավոտյան արևը բերե ինձ նոյն խավարը, ինչ որ բերել եր զիշերը, ...ի՞նչ անեմ այն ժամանակ»:*

- 1) Սահակ Աևարայի
- 2) Ցիկ Ամրամի
- 3) Գևորգ նահապետի
- 4) Բեր քագավորի

**35. Պնդումներից քանի՞սն են ճիշտ Մուրացանի «Գևորգ Մարզպետունի» վեպի վերաբերյալ:**

1. Գևորգ Մարզպետունու գեղարվեստական կերպարը ունի իր պատմական նախատիպը:
  2. Վեպում Գևորգ Մարզպետունու հանդիպումները ապստամբ իշխանների հետ սկսվում են «Կույր վրիժառուն» գլխից:
  3. Քսան քաջերով Գևորգ Մարզպետունու՝ Բեշիրի դեմ տարած հաղթանակը Մուրացանը համարում է Աստծու պարզեցու՝ կատարված աստվածային նախախնամությամբ:
  4. Վեպի վերջում Գևորգ Մարզպետունին, հավատարիմ իր երդմանը, վերադառնում է ընտանիքի գիրկը՝ համոզված, որ վերջին հազարացին անգամ արտաքսված է հայոնների սահմաններից:
- 1) մեկը
  - 2) բոլորը
  - 3) երկուսը
  - 4) երեքը

**36. Մուրացանի «Գևորգ Մարզպետունի» պատմավեպի ո՞ր գլխում է նկարագրվում Ցիկ Ամրամի և Աշոտ Երկարի զորքերի հանդիպումը:**

- 1) «Կույր վրիժառուն»
- 2) «Անակնակալ վախճան»
- 3) «Այրիվանքում»
- 4) «Հին Վշտերի վախճանը»

**37. Պնդումներից քանիսո՞ւմ սխալ կա Մուրացանի «Գևորգ Մարզպետունի» վեպի վերաբերյալ:**

- Աշոտ արքայի դեմ ապստամբել էր նաև նրա եղբայր Արար՝ աներոց՝ Գուրգեն Ափխազի հետ դաշնակցած՝ ցանկանալով բավարարել կնոց՝ բազուի դառնալու փառասիրական ձգտումը:
- Աշոտ արքայի բարոյական քուլության նկատմամբ Սահակ Սևադան նախապես դրսերում է մեղմ վերաբերմունք՝ չցանկանալով վտանգել այնքան դժվարությամբ ձեռք բերված անկախությունը և նսեմացնել աղջկա հեղինակությունը:
- Վեպի «Կույր աշքը կներե, կույր սիրտը չի ների» գլխում ներկայացված են Ցիկ Ամրամի և Աշոտ Երկարի բախման դրդապատճառների և ընթացքի մասին Մարզպետունու և Ցիկ Ամրամի գրույցները:
- Սահակ Սևադան, իր ապարանքում ընդունելով Գևորգ Մարզպետունուն, ժողովրդական սովորության համաձայն, նախ շույլորեն հյուրասիրում է նրան, հետո նոր հարցնում գալու նպատակը:

- 1) մեկում
- 2) ոչ մեկում
- 3) երկուսում
- 4) երեքում

**38. Ալեքսանդր Շիրվանզադեի «Քառոս» վեպի ո՞ր կերպարի մասին է հետևյալ հեղինակային խոսքը.**

«Նա կանգնած էր երկու մարդու միջև՝ մեկը՝ միլիոնների ժառանգը, մյուսը՝ այն աղքատ եղիտասարդը, որ իր ընտանիքը պահում էր մասնավոր դասերով»:

- 1) Միքայելի
- 2) Մարտիրխանյանի
- 3) Սմբատի
- 4) Արշակի

**39. Որ քաղաքի նկարագրությունն է տրված Ալ. Շիրվանզադեի «Քառոս» վեպի այս հատվածում:**

«Ամրող քաղաքն անսովոր մարդու վրա բողնում էր երկարուղու կայարանի տպավորություն, որ ամեն որ շտապում է, վազում, իրում ու իրվում՝ վախենալով գնացքը փախցնել: Ազ ու ձախ պահում էին տնային ու վարձու կառքերը՝ տաճելով գործի մարդկանց դեպի փայլուն ուկին: Ազ ու ձախ երևում էին նոր կառուցվող և արդեն կառուցված հոյակապ տներ»:

- 1) Թիֆլիսի
- 2) Երևանի
- 3) Շամախու
- 4) Բարվի

**40. Ալ. Շիրվանզադեի «Քառոս» վեպի որ հերոսի մասին է:**

«Նա համարում էր Սմբատին ազնիվ ու խելոր մարդ, բայց իր և նրա մեջ զգում էր խոր անդրունիք: Նա զիտեր՝ ինչ է այդ անդրունողը, և զիտենալով հանդերձ զգում էր, որ անզոր է հսկայական քայլ անել անդրունիքն անցնելու համար»:

- 1) Միքայելի
- 2) Շուշանիկի
- 3) Անտոնինա Իվանովնայի
- 4) Արշակի

**41. Ալ. Շիրվանզադեի «Քառոս» վեպի որ հերոսի մասին է:**

«Նրա հոյակապ տները, որ հպարտ ճակատներով կանգնած էին քաղաքի կենտրոնական փողոցներում, մի-մի փուշ էին դարձել քաղաքացիների աշրում, նրա բազմաթիվ հողերից բխող նավքը խեղդում էր, և գործարանների ծովինը՝ կուրացնում նրանց աշքերը»:

- 1) Միքայելի
- 2) Մարկոս աղայի
- 3) Միքատի
- 4) Մարութիսանյանի

**42. Որ ստեղծագործությունից է հետևյալ հատվածը:**

«Ծանր ու ճնշող է այդ քաղաքի արտաքին տպավորությունը: Հեռվից դիտողին նա իր տափակ տանիքներով, մերկ փողոցներով պատկերանում է այնպէս, որ կարծես մի սուկալի հրդեհ լափել է բռորը, ինչ որ կարող է լափել կրակից, և բռղել է մի վիրխարի կմախը»:

- 1) Հ. Թումանյան. «Գիքոր»
- 2) Դ. Ղեմիրճյան. «Ամելորդը»
- 3) Նար-Դոս. «Նեղ օրերից մեկը»
- 4) Ալ. Շիրվանզադե. «Քառոս»

**43. Թվերի ո՞ր դասավորությունն է ճիշտ արտացոլում նշված երկերի ստեղծման հաջորդականությունը:**

1. «Տաղարան», Ե. Չարենց
2. «Մթնշաղի անուրջներ», Վ. Տերյան
3. «Անուշ», Հ. Թումանյան
4. «Հեթանոս երգեր», Դ. Վարուժան

- 1) 3, 2, 1, 4
- 2) 2, 1, 4, 3
- 3) 3, 2, 4, 1
- 4) 3, 4, 2, 1

**44. Տրված հատվածներից ո՞րն է Հռվիաննես Թումանյանի «Անուշ» պոեմի նախերգանքից:**

- 1) Կանչում էին հրաշալի  
Հնչյուններով դյուրական,  
Ու հենց շողաց ցոլքն արևի,  
Անտես, անհետ չքացան:
- 2) Եվ մուր այրերից մամոռու ժայռերի,  
Թափուտ ծմակի լոին խորքերից,  
Մանուկ հասակին հնչուն ծիծաղի  
Արձագանքն ահա լսում եմ նորից:
- 3) Կմերն ուսած՝ բռվոալով  
Չուրն են իջնում աղջկներ,  
Խնդում իրար ուսի տալով,  
Երգը զնգում սարն ի վեր:
- 4) Ամայերը դանդաղ ուղտերի նման  
Նոր են ջուր խմած ձորից բարձրանում.  
Քարոտ թիկունքից Զարինդաղ լերան  
Նոր է արևը պոռունգը հանում:

**45. Ո՞ր բանաստեղծությունից է հետևյալ հատվածը:**

...Ու պոետներ, որ չեն այրդել իրենց շուրթերն անեծքով,  
Պիտի գովեն քո նոր կյանքը նոր երգերով, նոր խոսքով...

- 1) «Հայրենիքիս» (Ավ. Իսահակյան)
- 2) «Իջնում է գիշերն անգութ ու մթին» (Վ. Տերյան)
- 3) «Հայրենիքիս հետ» (Հ. Թումանյան)
- 4) «Հայ ժողովրդի երգը» (Հ. Շիրազ)

**46. Ո՞ր ստեղծագործությունից է տրված հատվածը:**

Էն վեհ վայրկենին չըքնար գիշերի՝  
Երկրների անհո՛ւմ, հեռու խորքերից,  
Անմուրազ մեռած սիրահարների  
Աստղերը թրոած իրար են գալիս,  
Գալի՛ ս՝ կարտոսով մի հեղ համբուրգում  
Աշխարհից հեռո՛ւ, լազուր կամարում:

- 1) «Հավերժական սերը» (Ավ. Իսահակյան)
- 2) «Fatum» (Վ. Տերյան)
- 3) «Անուշ» (Հ. Թումանյան)
- 4) «Արա Գեղեցիկ» (Ն. Զարյան)

**47. Հռվիաննես Թումանյանի ո՞ր ստեղծագործությունից է տրված հատվածը:**

Բաց արավ ցերեկն իր աշքը պայծառ  
Աշխարհի վլրա, Զավախըրի վլրա,  
Ավերակ բերդին, ու ամպի նրման,  
Ծոլիսն ու թղթնամին չորել են ահա:

- 1) «Թմկաբերդի առումը»
- 2) «Փարվանա»
- 3) «Անուշ»
- 4) «Հայրենիքիս հետ»

**48. Ըստ Հռվիաննես Թումանյանի «Քաջ Նազար» հերիաքի համանուն հերոսի՝ ի՞նչն է մարդու լյաճրում ամենակարևորը:**

- 1) խելքը
- 2) քաջությունը
- 3) բախտը
- 4) խորանակությունը

**49. Ո՞ր շարքում են միայն Հռվիաննես Թումանյանի ստեղծագործությունները:**

- 1) «Անուշ», «Վահագն», «Հառաչանք»
- 2) «Սուարյալը», «Հայոց վիշտը», «Հայրենիքիս»
- 3) «Գիքորը», «Քաջ Նազարը», «Համբերանքի չիքուխը»
- 4) «Փարվանա», «Հայրենիքիս հետ», «Հոգեհանգիստ»

**50. Հռվիաննես Թումանյանի «Թմկաբերդի առումը» պոեմի նախերգանքի երկտողերի ո՞ր հերթականությունն է ճիշտ արտահայտում այդ երկտողերի հաջորդականությունը:**

1. Որդիդ լինի, թե հերն ու մեր,  
Թե մուրազով սիրած կին
2. Գործն է անմահ, լավ իմացեք,  
Որ խոսվում է դարեդար
3. Չարն էլ է միշտ ապրում անմեռ,  
Անե՛ծ նըրա չար գործքին
4. Երնե՛կ նըրան, որ իր գործով  
Կապրի անվերջ, անդադար

- 1) 1, 3, 2, 4
- 2) 2, 4, 3, 1
- 3) 2, 3, 4, 1
- 4) 4, 2, 1, 3

**51. Հռվիաննես Թումանյանի «Թմկաբերդի առումը» պոեմի նախերգանքի երկտողերի ո՞ր հերթականությունն է ճիշտ արտահայտում այդ երկտողերի հաջորդականությունը:**

1. Մենք ամենքը հյուր ենք կյանքում  
Մեր ծնննյան փուշ օրից
2. Մահը մերն ե, մենք մահինք,  
Մարդու գործն է միշտ անմահ
3. Անց են կենում սեր ու խընդում,  
Գեղեցկություն, գանձ ու զահ
4. Հերթով զալիս, անց ենք կենում  
Էս անցավոր աշխարհից

- 1) 1, 3, 2, 4
- 2) 1, 4, 3, 2
- 3) 4, 1, 2, 3
- 4) 2, 4, 1, 3

**52. Ավետիք Իսահակյանի «Աբու-Լալա Մահարի» պոեմում նշվածներից ո՞րը արտացոլված չէ:**

- 1) աշխարհը և մարդկանց վերափոխելու համար մարդկությանն ուղղված պայքարի կոչը Աբու-Լալայի կողմից
- 2) հայրենիքի, կնոջ, ընկերների, բարեկամների հանդեպ քնարական հերոսի ատելության դրդապատճառները
- 3) իշխանության և օրենքների, աղճատված մարդկային հարաբերությունների դատավարությը
- 4) արեւյլան քնապատկերներ՝ ներդաշնակված քնարական հերոսի ապրումներին

**53. Ո՞ր շաբքի բոլոր ստեղծագործություններն են Ավետիք Իսահակյանինք:**

- 1) «Մի մրահոն աղջիկ տեսա», «Ուավեննայում», «Հառաչանք»
- 2) «Հայրենիքիս», «Հայրենի հողը», «Հավերժական սերը»
- 3) «Արու-Լաւա Մահարի», «Լիլիք», «Հայոց լեռներում»
- 4) «Ուավեննայում», «Հոգեհանգիստ», «Սաադիի վերջին գարունը»

**54. Որ բառն է բաց թողած:**

*Աչքս դիպավ աչքի բոցին,  
Ու գլուխը կախեցի.  
Ժպտաց ..... առեղծվածի,  
Հավերժական կանացի:*

- 1) սիրով
- 2) խինդով
- 3) ժպտով
- 4) բույրով

**55. Որ բառն է բաց թողած:**

*Աչքերը սև – ..... սև,  
Արևերի պես անշեզ,  
Գալարում էր մեջքը թերև  
Ծաղկանկար շալի մեջ:*

- 1) հակինքներ
- 2) արևեր
- 3) ողկույզներ
- 4) կայծակներ

**56. Որ բառն է բաց թողած:**

*Նիրի էին մտել ծաղկումքը բուրյամ՝ աղամանդներով, շրեղ զինդերով,  
Ծիածանաթև հավերը իրար գուրգուրում էին ..... մրմունջով:*

- 1) քաղցր
- 2) քննուշ
- 3) ոյութիւն
- 4) սիրո

**57. Որ բառն է բաց թողած:**

*Կույր ու գուլ մարդիկ, առանց երազի, առանց լսելու հերիսաքն այս .....,  
Իրար կոկորդից պատառ եք հանում և դարձնում աշխարհն ահավոր զեհնեմ:*

- 1) շրեղ
- 2) զունեղ
- 3) կսեմ
- 4) լուսե

**58. Ո՞ր բառն է բաց թողած:**

*-Աշխարհն էլ, ասես, մի հերիսը լինի՝ անսկիզբ, անվերջ, իրաշը.....:*

- 1) իրական
- 2) դյութական
- 3) մոգական
- 4) ցնորական

59. Զախում նշված են Ավետիք Իսահակյանի ստեղծագործությունների վերնագրերը, իսկ աջում՝ դրանցից մեկական հատված. լուծման տարբերակներից ո՞րն է ճիշտ:

- ա. «Է՛յ, ջան-հայրենիք»
- բ. «Սև-մուր ամպեր»
- զ. «Օտար, ամայի ճամփերի վրա»
- դ. «Հայրենիքիս»

1. - Է՛յ Մանթաշի մարմանդ հովե՛ր,
- Իմ դարդըս որ ձերն եղներ,  
Ձեր ծաղկանուշ բուրմուճն անուշ  
Թույն ու տորթի կփոխվեր:
2. - Որ արտուսի պես վե՛ր ու վե՛ր ճախրեմ  
Նոր օրվա ծեզիդ, ազի՛գ հայրենիք,  
Ու անո՛չ երգեմ, բա՛րձր ու զիլ գովեմ  
Կանաչ արևըդ, ազա՛տ հայրենիք...
3. Կընոց համբույրին էլ չեմ հավատա,  
Ծուտ կըմոռանա նա վառ արցունքներ.  
Շարժվի՛ր, քարավաննս, ինձ ո՞վ ճայն կըտա,  
Գիտցի՛ր, լուսնի տակ չըկա ուխտ և սեր:
4. Եվ սրում էին ճիշով խնդագին  
Անգղներն իրենց կտուցները վես  
Քո արևակեզ ժայռերի վրա՝  
Հոշոտելու քեզ...

- 1) ա-2, բ-1, զ-3, դ-4
- 2) ա-1, բ-2, զ-3, դ-4
- 3) ա-1, բ-2, զ-4, դ-3
- 4) ա-2, բ-4, զ-3, դ-1

- աշտանակ, աշտարակ, աշտե, ապահարզան, ապահով, ապավեն

**37. Բառերից քանիսո՞մ կա տակ արմատը.**

գետնատակ, նահատակ, կտակ, տախտակ, անհատակ, կատակ, շիտակ, նպատակ, ոտնատակ, նապատակ:

**38. Բառերից քանիսո՞մ կա գույն արմատը.**

վեհագույն, շիկագույն, չքնարագույն, բազմագույն, կրկնագույն, կարմրագույն, նորագույն, շառագույն, լավագույն, կավագույն:

**39. Բառերից քանի՞սն են բարդ.**

ամրոցամերձ, բազմավաստակ, ատամնաշար, մթագնում, դառնաղի, դասամատյան, դասալիք, ակնբարք, գերած, բերքահավաք:

**40. Բառերից քանի՞սն են բարդ.**

Էջմիածին, Վարդգես, դողերոցք, բազերակ, բնաբան, ելարան, ոսկեօղ, պարտիզան, մարզպետ, ծաղկահյուս:

**41. Բառերից քանիսո՞ւմ հոդակապ կա.**

Վարդաջուր, քենուաղին, գահերեց, գետնանուշ, դառնաթախիծ, անջրանցիկ, դառնադի, որմնախորշ, անախորժ:

**42. Բառերից քանիսո՞ւմ հոդակապ կա.**

ազգամիջյան, ազեվազ, ջրազոավ, լայնեզր, դրոշակակիր, դնչակալ, հայազի, պարթևազն, ելեջ, ազգուտակ:

**43. Բառերից քանիսո՞ւմ հոդակապ կա.**

տարեվերջ, շրջակա, շողակն, մենասահը, հերարձակ, ճորավնյա, կարեվեր, իրավապաշտպան, օտարատյաց, մեկամյա:

**44. Բառերից քանի՞սն են ածանցավոր.**

արգավանդ, արդի, անապական, արձակ, արջառ, արտույտ, բամբակ, բացատ, շրջուն:

**45. Բառերից քանի՞սն են ածանցավոր.**

հնչեղ, ծիրանի, բոստր, զայխոն, զազար, վաստակ, գուշակ, դազգահ:

**46. Բառերից քանիսո՞ւմ առ-նախածանց կա.**

առևտուր, առարկել, առանձին, առջև, առվույտ, առերևույթ, առաջ, առնական, առանցք, առկայծել:

**47. Բառերից քանիսո՞ւմ աճ-նախածանց կա.**

անոք, անութ, անէ, աներկբա, անորի, անկապտելի, անդրավարտիք, անեծք, անեղծ, անձավ:

**48. Բառերից քանիսո՞ւմ -ակ վերջածանց կա.**

մանրադիտակ, ցուցատախտակ, թևատակ, նապաստակ, կտակ, սպիտակ, շիտակ, բամբակ, լեզվակ, աղյուսակ, մահակ:

**49. Բառերից քանիսի՞ արմատին կարող է միանալ -ակ վերջածանցը և բառ կազմել առանց երկրորդ ածանցի.**

ձնագունդ, ազդ, ավազ, մահ, հաջող, աղավնի, վեճ, լեզվաբան, ինչքան, հեծելագունդ:

**50. Բառերից քանիսի՞ արմատին կարող է միանալ -ակ վերջածանցը և բառ կազմել առանց երկրորդ ածանցի.**

ճարպագունդ, բամբ, հարք, ազատագունդ, մամուլ, աժդահա, կղզի, նախադրու, աղյուս, վարս:

**51. Բառերից քանիսի՞ արմատին կարող է միանալ -ական վերջածանցը և բառ կազմել առանց երկրորդ ածանցի.**

ճամփորդ, վարորդ, ամենօրյա, ուղեգիր, փախուստ, տարկետում, քառակուսի, տպատառ, ազնվազարմ, կենտրոնախույս:

**52. Բառերից քանի՞սն են բարդածանցավոր.**

ազնվաշուր, ակնածանք, չարադիտ, այլադավան, բազմաքանակ, դասալիք, ակնահաճո, առաջնեկ, արևածադիկ, բերքատու:

## II ՏԵՍԱԿ

**53. Նշել այն բառերի համարները, որոնք հոմանիշ են *սրդողեղ* բառին.**

1. սարսափել, 2. բարկանալ, 3. խղճալ, 4. գրալ, 5. զայրանալ:

**54. Նշել այն բառերի համարները, որոնք հոմանիշ են *իմաստակ* բառին.**

1. թերուս, 2. իմաստուն, 3. տգետ, 4. ներհուն, 5. իրազեկ:

**55. Նշել այն բառերի համարները, որոնք հոմանիշ են *խոկ* բառին.**

1. կնծիո, 2. մտածմունք, 3. խոհ, 4. ծալք, 5. ակոս:

**56. Նշել այն բառերի համարները, որոնք միմյանց հոմանիշ են.**

1. սրածել, 2. քևածել, 3. ճախրել, 4. սավառնել, 5. ածիլել, 6. բռչել:

**57. Նշել այն բառերի համարները, որոնք միմյանց հոմանիշ են.**

1. գողունի, 2. հոնի, 3. տգեղ, 4. անթեղ, 5. անթով, 6. նազանի:

**58. Նշել այն բառերի համարները, որոնք միմյանց հականիշ են.**

1. անհողողդ, 2. աներես, 3. անպաճույճ, 4. անտաղանդ, 5. անթաքույց, 6. անկայուն:

**59. Նշել այն բառերի համարները, որոնք միմյանց հականիշ են.**

1. թերքի, 2. վեհանձն, 3. արգավանդ, 4. ճահճային, 5. որոշակի, 6. փոքրոգի:

**60. Նշել այն բառերի համարները, որոնց բացատրությունը սխալ է.**

1. **մեղանչել** - ներում խնդրել

2. **մատովակ** - զինեգործ

3. **սրդողեղ** - կափկափել

4. **տողան** - ուղղի գծով կողք կողքի կանգնած մարդկանց շարք

5. **անպաճույճ** - անպայման

6. **պատեհապաշտ** - պատվասեր

**61. Նշել այն բառերի համարները, որոնց բացատրությունը սխալ է.**

1. **աշակերտել** - մեկի մոտ սովորել

2. **խթանել** - թափ հաղորդել

3. **բաղդատել** - տարրալուծել

4. **դիտապատ** - դիտակի պես գետնին փուլած

5. **զողտրիկ** - գողունի

**62. Նշել այն նախադասությունների համարները, որոնցում սխալ կազմությամբ բառ կա:**

1. Բաֆֆին չափազանց աշխատասեր էր. օրեկան երբեմն աշխատում էր տասնչորս ժամ:

2. Բաֆֆու որոշ երկեր փրկվեցին անդառնալի կորստից շնորհիվ նրա այրու՝ Աննայի:

3. Պետրոս Դուրյանի մահվանից անմիջապես հետո հոգեբարձուների խորհուրդը, անսալով բազմաթիվ երիտասարդների հորդորմներին, որոշեց կառուցել մի նախարձան:

4. Սուրացանն ընդամենը մի քանի ամսական էր, երբ վարակվեց ծաղկի հիվանդությամբ:

5. Հակոբ Պարոնյանը հրաշալի տիրապետում էր հուներենին, քանի որ ծնվել ու մեծացել էր Աղրիանապոլսում:

**63. Նշել այն նախադասությունների համարները, որոնցում բառազործածության կամ բառի կազմության սխալ կա:**

1. Չիներենի, հնդկերենի չինացությունը չի խանգարել Ավետիք Իսահակյանին՝ Արևելքի տարբեր ժողովուրդների բանահյուսական հիմքի վրա ատեղծելու արձակի հրաշալի էջեր:
2. Վտանգի ենթարկելով կյանքը՝ Հովհաննես Թումանյանը դստեր՝ Նվարդի հետ մարդասիրական լայն գործունեություն է ծավալում Եջմիածնում՝ ի օգուտ խոլերայից մեռնող եղեննապուրծ հայորդիների:
3. Գրիգոր Նարեկացու «Մատյանը...» միջնադարյան գրականության անընտցյուտ երկերից է:
4. Գրիգոր Զոհրաբը ֆրանսերեն լեզվով գրել ու հրատարակել է իրավագիտական գրքեր:
5. 1848 թ. ապրիլյան նի առավոտ՝ վաղ այգերացին, Խաչատուր Աբովյանը դուրս է գալիս տնից ու այլևս չի վերադառնում:

**64. Նշել այն բառերի կամ բառակապակցությունների համարները, որոնք արտահայտում են բմբութերը քամուն տալ դարձվածքի իմաստը.**

1. հողմացրիվ անել, 2. ավելորդությունները դեն նետել, 3. ջախջախել, 4. ոչնչացնել,
5. ախտահանել, 6. պատժել:

**65. Նշել այն բառերի կամ բառակապակցությունների համարները, որոնք ծովար քրից դուրս գալ դարձվածքի իմաստը չեն արտահայտում.**

1. հոգեպես տանջվել, 2. շատ ծխել, 3. շատ վատ զգալ, 4. ցավել, 5. հանգստանալ, 6. ծխախեղդ լինել:

**66. Նշել այն համարները, որոնց դիմաց գրված դարձվածքներն իրար հոմանիշ են:**

1. քիրո բարձր- քրի տակ
2. օճիքը բռնել- բկին չորել
3. հացի նստել-հաց կտրել
4. սիրտը ճարել- լեղին պատովել

**67. Նշել այն համարները, որոնց դիմաց գրված դարձվածքներն իրար հոմանիշ են:**

1. սիրտը կաչել- սրտին կաչել
2. գլուխ գլխի տալ- խելք խելքի տալ
3. քարը քարին չքողնել- հողին հավասարեցնել
4. դեմքը կորցնել- դիմակը պատովել

**68. Նշել այն համարները, որոնց դիմաց գրված դարձվածքներն իրար հոմանիշ են:**

1. համբերության բաժակը լցվել- դանակը ուկորին հասնել
2. սիրտը կաչել- սիրտը կտրվել
3. ժամավաճառ լինել-ժամանակ սպանել
4. ընդհանուր լեզու գտնել- ընդհանուր հայտարարի գալ

**69. Նշել այն համարները, որոնց դիմաց գրված դարձվածքներն իրար հոմանիշ են:**

1. երեսից կախվել - ոտքերն ընկնել
2. լեղին ջուր կտրել - ծայնը երկինք բարձրացնել
3. Աղամից ու Եվայից սկսել - աշխարհին հրաժեշտ տալ
4. ջուրը չտեսած՝ բորիկանալ - հարսի տանը հարսանիք է, փեսի տանը հեշ խարար էլ չեն

**70. Նշել այն համարները, որոնց դիմաց գրված դարձվածքներն իրար հոմանիշ են:**

1. ով հարս, նա հարսնաքույր - անպոչ գրալ
2. ինքն իրեն մոռանալ - համը դուրս գալ
3. աստծու կրակ - աչքի սուրմա թոցնող
4. փորացավ ունենալ - անվանը մուր քսել

**71. Նշել այն համարները, որոնց դիմաց գրված դարձվածքներն իրար հոմանիշ են:**

1. կապը կտրած - քոկից փախած
2. ձեռք բռնել - մատից փուշ հանել
3. ապուշ կտրել -քար կտրել
4. մատից հոտ քաշել - սիրտը վկայել

**72. Նշել այն համարները, որոնց դիմաց գրված դարձվածքներն իրար հականիշ են:**

1. գլխում մի այր չկա - խելքի շտեմարան
2. լեզուն շաղ տալ - լեզվի կապերը բանալ
3. գրպանը սրբել - գրպանը թեթևացնել
4. առյուծ կտրել - երկինքը զիսին մթնել

**73. Նշել այն համարները, որոնց դիմաց գրված դարձվածքներն իրար հականիշ են:**

1. ձվից նոր դուրս եկած - ընկած-ելած
2. քսակի բերանը բանալ - քող կոպեկ շտալ
3. մի ծաղկով գարուն չի գա - մի ձեռքը ծափ չի տա
4. գետն ամեն անգամ գերան չի բերի - պապն ամեն անգամ գաթա չի ուտի

**74. Նշել այն համարները, որոնց դիմաց գրված դարձվածքներն իրար հականիշ են:**

1. ոտք քարին առնել - աստղը բացվել
2. ձեռքերը ծալած նստել - հոլի պես պտտվել
3. ավգոյան ախոռ - յուղը թափես՝ կհավաքես
4. ձեռքի մեկը յուղում, մյուսը մեղրում - սև հացի կարոտ

**75. Նշել այն համարները, որոնց դիմաց գրված դարձվածքներն իրար հականիշ են:**

1. աչքը կուշտ- աչքը ծակ
2. աչքը փակ-աչքը բաց
3. երեսը պարզ- երեսը սև
4. կրակի գին- ջրի գին

**76. Նշել այն համարները, որոնց դիմաց գրված դարձվածքներն իրար հականիշ են:**

1. երեսատեղ ունենալ - երեսը բռնել
2. աչքը վախեցնել- աչքն ընկնել
3. հաց կտրել - հացի մեջ աղ չլինել
4. յոր սարից այն կողմ - քթի տակ

**77. Նշել այն համարները, որոնց դիմաց գրված դարձվածքներն իրար հականիշ են:**

1. կրակ կտրել - կրակն ընկնել
2. աչքի լույս - աչքի փուշ
3. իրար ուտել - իրար սատար կանգնել
4. ձեռքը երկար - ձեռքը կարճ

**78. Նշել այն բառերի համարները, որոնք կազմությամբ պարզ են.**

1. ազդու, 2. լուսին, 3. քննուշ, 4. խցան, 5. վարք, 6. հրաման, 7. ձգան, 8. աշխարհ, 9. հրապարակ:

**79. Նշել այն բառերի համարները, որոնք կազմությամբ պարզ են.**

1. ապարախտ, 2. ապարոշ, 3. դժբախտ, 4. դժխնմ, 5. ավել, 6. ապար, 7. վտակ, 8. մեխակ,
9. դանակ:

**80. Նշել այն բառերի համարները, որոնք կազմությամբ պարզ են.**

1. տարադրամ, 2. դանակ, 3. ցայք, 4. ուղեղ, 5. զորեղ, 6. մրցավար, 7. գործարար, 8. դիմակ,
9. դիպակ:

**81. Նշել այն բառերի համարները, որոնք կազմությամբ բարդ են.**

1. մարդ-մուրդ, 2. հեռախոսավար, 3. խոսքարվեստ, 4. բեմարվեստ, 5. անկյուն, 6. սնանկ,
7. կարճալիք, 8. մարդահավաք, 9. հիմնարկ:

**82. Նշել այն բառերի համարները, որոնք կազմությամբ բարդ են.**

1. բազկարող, 2. հատկանիշ, 3. միջնորմ, 4. նոնաքար, 5. սաղցակեղեղ, 6. ծածկալեզու,
7. բայահիմք, 8. բարեհաճող, 9. հողմահարում:

**83. Նշել այն բառերի համարները, որոնք ունեն նույն արմատը.**

1. խստագույն, 2. կապարագույն, 3. ծայրագույն, 4. նորագույն, 5. բոստրագույն, 6. կպրագույն,
7. բոցագույն, 8. գույնզգույն, 9. արևագույն:

**84. Նշել այն բառերի համարները, որոնցում հոդակապ կա.**

1. բարետես, 2. շոգեջոռուցում, 3. հոգեվիճակ, 4. հորատող, 5. հոմանուիի, 6. հրաչյա, 7. ձնծաղիկ,
8. ճարտասան, 9. ճենապակի:

**85. Նշել այն բառերի համարները, որոնք կազմությամբ ածանցավոր են.**

1. հոնեղ, 2. բերքատու, 3. անուշ, 4. հատու, 5. սրտառուշ, 6. հրաման, 7. արտահերթ,
8. անդրաշխարհ, 9. ճեռնտու:

**86. Նշել այն բառերի համարները, որոնք ունեն մեկից ավելի ածանց.**

1. գրչակ, 2. ուսումնատենչ, 3. ուսուցչապետ, 4. դյուրընթեռնելի, 5. բացարկ, 6. վերավաճառք,
7. անշնորհակալ, 8. անկյունային, 9. սնանկություն:

**87. Նշել այն բառերի համարները, որոնք ունեն մեկից ավելի ածանց.**

1. լեռնահանքանյութ, 2. հեռուստակայան, 3. հնչյունաշարք, 4. տնօրինելք, 5. վարվելականոն,
6. վայրենաբարո, 7. հապանչիկ, 8. տարկետում, 9. դասալքություն:

**88. Նշել այն բառերի համարները, որոնցում -ակ վերջածանց կա.**

1. վաստակ, 2. բամբակ, 3. ավագակ, 4. ահյակ, 5. հրապարակ, 6. ծորակ, 7. ապտակ,
8. անբատակ, 9. ագարակ:

**89. Նշել այն բառերի համարները, որոնցում -ակ վերջածանց կա.**

1. երօանկահիշատակ, 2. վերելակ, 3. ելակ, 4. տոպրակ, 5. լուսապսակ, 6. անգիտակ, 7. աղյուսակ,
8. դանակ, 9. պայուսակ:

**90. Նշել այն բառերի համարները, որոնցում -ակ վերջածանց կա.**

1. ընդարձակ, 2. վարձակ, 3. բամբակ, 4. ջուլիակ, 5. գլխահակ, 6. մեխակ, 7. արգելակ, 8. ճերմակ,
9. հոգեվիճակ:

**91. Նշել այն բառերի համարները, որոնցում -ք վերջածանց կա.**

1. փառք, 2. կառք, 3. տնօրինեք, 4. թաղիք, 5. ժանիք, 6. ծալք, 7. ալիք, 8. նազանք, 9. կայք:

**92. Նշել այն բառերի համարները, որոնցում -ք վերջածանց կա.**

1. խելք, 2. դեալք, 3. կողակեք, 4. ալիք, 5. աղիք, 6. հոնք, 7. աղոքք, 8. կարծիք, 9. արձագանք:

**93. Նշել այն բառերի համարները, որոնցից -եղեն վերջածանցով կկազմվեն միայն գոյականներ.**

1. հուր, 2. հող, 3. բանջար, 4. խմոր, 5. բոց, 6. աման, 7. լույս, 8. կոշիկ, 9. ձուկ:

**94. Նշել այն բայերի համարները, որոնց հիմքերից -իշ վերջածանցով կկազմվեն միայն գոյականներ.**

1. պատմել, 2. սրբել, 3. գրավել, 4. արտագրել, 5. քայբայել, 6. նկարել, 7. համոզել, 8. հմայել,
9. սովել:

**95. Նշել այն բառերի համարները, որոնք կազմությամբ բարդածանցավոր են.**

1. վերածնունդ, 2. բարեգործական, 3. ժամանակավրեալ, 4. ծաղկավաճառ, 5. վարքագիծ, 6. վարչակարգ,
7. վերջնաժամկետ, 8. հրապարակային, 9. խուզարկու:

**96. Նշել այն բառերի համարները, որոնք կազմությամբ բարդածանցավոր են.**

1. հեռագրասյուն, 2. ճաշացուցակ, 3. քննաշրջան, 4. ցնորամիտ, 5. սառցակեղև,
6. հրամանատար, 7. վարդազգի, 8. ակնածանք, 9. ընշազուրկ:

## ԲԱԺԻՆ 3 ԶԵՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

### I ՏԵՍԱԿ

1. Քառերից քանի՞սն են արտահայտում նյութական իմաստ.

բողեք, խոխող, քանի որ, ոչ մի, անմիջապես, ով, մի, քաներկու, ովեէ, հանձին, դեմ դիմաց, առանց, դեպի:

2. Քառերից քանի՞սն են արտահայտում նյութական իմաստ.

մի խոսքով, համենայն դեպս, միևնույնն է, ինչ, ինչ-որ, որևէ, դոդ, մինչև իսկ, չնայած որ, ոչ, գուցե, մասամբ:

3. Քառերից քանի՞սն են արտահայտում նյութական իմաստ.

զորք, հաշտություն, որոշ, այլ, այս, թե, այդպես, նույնիսկ, դե, կես, բազմիցս, միայն թե:

4. Տրված քառերից քանի՞սն են արտահայտում նյութական իմաստ.

թեյ, թեև, թեական, թորիո, թեկուզ, թիրախ, թզուկ, թարթել, թանապոր, թե, թերևս, թաքուն, թաղար, թանկ:

5. Քառերից քանի՞սն են արտահայտում քերականական իմաստ.

դուք, նորից, հաշվարկ, միմիայն, դեպի, թեև, սաստիկ, զեթ, ուր, քանի դեռ, ախ, օհն:

6. Տրված սյունակներում քառերից քանի՞սն են սխալ տեղաբաշխված՝ ըստ իրենց արտահայտած իմաստների.

Նյութական իմաստ  
արտահայտող

Քերականական իմաստ  
արտահայտող

Վերաբերմունքային իմաստ  
արտահայտող

հօգուտ  
հերիաք  
միահամուռ  
զդալ

ինչպիսի  
արդեն  
անց  
լոկ

միայն  
առքիվ  
մինչև  
վա՝յ

7. Տրված սյունակներում քառերից քանի՞սն են սխալ տեղաբաշխված՝ ըստ իրենց արտահայտած իմաստների.

Նյութական իմաստ  
արտահայտող

Քերականական իմաստ  
արտահայտող

Վերաբերմունքային իմաստ  
արտահայտող

մի քանի  
ոչ ոք  
երաժշտություն  
բարեբախտաբար

քան  
ոմանք  
շնորհիվ  
նախորդ

ի փառս  
սոսկ  
երիցս  
թե չե

8. Տրված սյունակներում քառերից քանի՞սն են սխալ տեղաբաշխված՝ ըստ իրենց արտահայտած իմաստների.

Նյութական իմաստ  
արտահայտող

Քերականական իմաստ  
արտահայտող

Վերաբերմունքային իմաստ  
արտահայտող

զրուցել  
շատ  
որքան  
բոլոր

մասին  
ուրեմն  
նախքան  
առայժմ

մինչև  
հե՛յ  
քանի որ  
վերաբերյալ

**9. Տրված բառերից քանի՞սն են գոյական.**

ըրւյո, համհարզ, ցատում, դերանուն, մակրայական, ճաղավոր, գերություն, հենասյուն, աղանաբուզ, բանջարեղեն, ձեղուն, բասկետբոլ:

**10. Տրված բառերից քանի՞սն են գոյական.**

ակնարկ, բարձրություն, ձայնարկություն, միջնադար, միննույն, բոլորը, թշնամություն, ահեղ, իրավունք, պարտատեր, երեցկին, սողանք:

**11. Տրված բառերից քանի՞սն են գոյական.**

լրտես, արտևանունք, կուսակալ, ամենքը, յուրաքանչյուր ոք, մերկ, սովորական, անտանելի, քարաշեն, կանաչեղեն, որակյալ, իշխաս:

**12. Տրված բառերից քանի՞սն են գոյական.**

ընտանեկան, սույն, արտասուր, վայրի, դերասան, անպատճախան, քենակալ, բարսող, գործնական, քողովիկ, փոխարքա, անկարգել:

**13. Տրված հատվածում ընդգծվածներից քանի՞սն են գոյական:**

Մեր հոյակապ հին վանքերի մութ խոցերում, մենության մեջ  
Պատմիշները մեր վշտահար, մեղմ կանքեղի լույսով անշեղ,  
Սի ճշխարով, մի կում ջրով և ճգնությամբ գիշերն անքուն,  
Պատմությունը մեր զրեցին նազաղարի վրա դժգույն՝  
Եղեռնները, նախճիրները հորդաների արյունուշտ,  
Փուլումը հայրենիքի և ոսխի սուրբ անկուշտ:

**14. Տրված հատվածում քանի՞ գոյական կա:**

Սաադին նայեց խորունկ ու հետաքրքիր հայացքով, նայեց երկնքի կապույտ վրանին՝ արշալույսի մեջ թաքախուն, ուսկու մեջ ճախրող թշուններով:

Նայեց այնպես զարմացած և սրանչացած.

- Աշխարհի հերիաք է՝ գեղեցիկ և զարմանալի:

**15. Տրված հատվածում քանի՞ գոյական կա:**

Ճամփորդները իշան, մտան քարավանատուն: Վաղուց օթևանը պատրաստ էր: Խոսրովը կերակուր պահանջեց: Նրանք սկսեցին ազահությամբ ուտել: Քարավանատերը կարճ հրամաններ էր տալիս սպասավորներին՝ խորտիկները բերելու:

**16. Տրված հատվածում քանի՞ գոյական կա:**

Ահա հասավ գետափի խոլ փողոցը: Այնտեղ էլ ձիեր կային, նրա նման գյուղի մարդիկ՝ յուրաքանչյուրն իր ձիու սանձից բռնած և ստրուկի հեզությամբ իր հերթին սպասող:

**17. Տրված հատվածում քանի՞ գոյական կա:**

Նրանք տեսան փախչող ձիավորին, և ոմանք կարծեցին, թե ահից սարսափած ձիավորը փախչում է դեպի լեռները, ինչպես կփախչի գերին դեպի փրկության բերդը:

**18. Տրված հատվածում քանի՞ գոյական կա:**

Բեռը վերցնելիս Սիմոնի գլխարկն ընկավ, ու բացվեց ջղային մեծ գլուխը. կարմրել ու սևացել էր նրա ճակատը, և բեռան տակ նա ճղատվում էր: Աղամն իր հակը տանում էր հանգիստ ու դանդաղ:

**19. Տրված հատվածում քանի՞ գոյական կա:**

Սիմոնը խփվեց բազրիքին, ծնկեց ու տնքաց: Պարկերը հավասար չէին արել. Սիմոնը կոտրվում էր ծանրության տակ. Աղամի գրկին երեխայի բեռ էր:

**20. Տրված գոյականներից քանիսի<sup>o</sup> հոգնակի թիվն է կազմվում -եղ վերջավորությամբ.**

հաղորդաշար, լրագիր, արարողակարգ, մեղվարույժ, անասնապահ, գլխատառ, գրավատուն, պատճեն, դաշտամուկ, ջրագիծ, դուստր, ճամփեզր:

**21. Տրված գոյականներից քանիսի<sup>o</sup> հոգնակի թիվն է կազմվում -եղ վերջավորությամբ.**

տիտղոսաթերթ, դրոշակակիր, լուսամուտ, գազամուղ, խաչքար, հաղորդավար, հաղորդաշար, հացատուն, ոտնաձայն, թառմա:

**22. Տրված գոյականներից քանիսի<sup>o</sup> հոգնակի թիվն է կազմվում -եղ վերջավորությամբ.**

գարեհաց, նամակարկող, սառցալեռ, կիզակետ, գրաստ, այլախոհ, ամենագետ, բառապաշար, գինակից, խաղաքայլ:

**23. Տրված բառերից քանիսի<sup>o</sup> հոգնակի թիվն է կազմվում -եղ վերջավորությամբ.**

պատժաշափ, ոտնաշափ, հարթաշափ, հողաշափ, ջերմաշափ, հողմաշափ, դեղաշափ, տառաշափ:

**24. Տրված գոյականներից քանիսի<sup>o</sup> հոգնակի թիվն է կազմվում -մեղ վերջավորությամբ.**

կայսր, մանկատուն, իշխանադուստր, անտառապահ, վառելանյութ, կավագործ, օրիներգ, հեռագիր, արձակագիր, դասալիք, խաղալիք:

**25. Տրված գոյականներից քանիսի<sup>o</sup> հոգնակի թիվն է կազմվում -մեղ վերջավորությամբ.**

բայահիմք, խոշորացույց, հետնախորշ, հրացանակիր, մենաշնորհ, որկրամոլ, պարագլոխ, սայլարեռ, սառցաջուր:

**26. Տրված գոյականներից քանիսի<sup>o</sup> հոգնակի թիվն է կազմվում -մեղ վերջավորությամբ.**

տեսակետ, դեղահաք, խաչակիր, մարզադաշտ, գործակար, քարհատ, լրագիր, օրինագիծ, հրուարույր, անձ:

**27. Տրված գոյականներից քանիսի<sup>o</sup> հոգնակի թիվն է կազմվում -մեղ վերջավորությամբ.**

զինագործ, վաճահայր, բեռնակիր, խաղատուն, խաչափայտ, բաղաձայն, խցանահան, կողմնացույց, հուլունքաշար, համազարկ, սուզանավ, խորագիր:

**28. Տրված գոյականներից քանիսի<sup>o</sup> հոգնակի թիվն է կազմվում -մեղ վերջավորությամբ.**

մեղալակիր, ժամացույց, տոհմածառ, տեսակետ, ուսապարկ, խնամակալ, ուսադիր, սևամորք, խորագիր, սուզանավ:

**29. Տրված գոյականներից քանիսի<sup>o</sup> հոգնակին է սխալ կազմված.**

փայտահատներ, վերջնագիրներ, վիպագիրներ, շիկահերներ, համհարզեր, նախրապաններ, ուսամոլներ, խոտհարեր, գեղագետներ, աղբարկեր, պատճեններ, հացատներ:

**30. Տրված գոյականներից քանիսի<sup>o</sup> հոգնակին է սխալ կազմված.**

կեռագծեր, օրիներգներ, մրցավարեր, լուսանցքեր, մրցնակերներ, փորձագետներ, հողմացույցներ, քարհանքեր, քվեաբերեր, օրենսգրեր:

**31. Տրված գոյականներից քանիսի<sup>o</sup> հոգնակին է սխալ կազմված.**

ժամացույցեր, կաշեգործներ, ջրկիրներ, զորացույցեր, փայտահատներ, տոնածառներ, սևահողեր, սերմնացաններ, զինագործներ, մարտավկաններ:

**32. Տրված գոյականներից քանիսի<sup>o</sup> հոգնակին է սխալ կազմված.**

գործատուններ, հրաբույրեր, դուստրեր, արձվարներ, հարսեր, զյուղագրեր, նավքահանքեր, փոստատարեր, ծովեզրեր, խորագիրներ, հրաբուխներ, հետախույզեր:

**33. Տրված գոյականներից քանիսի՞ հոգնակին է սխալ կազմված.**

զաղափարագրեր, բռնագրեր, արձակագիրներ, մանկագրեր, ամփոփագիրներ, անձնագրեր, անդորրագիրներ, արտոնագրեր, պատմագրեր, բացատրագրեր:

**34. Ի հոլովման ենթարկվող քանի՞ գոյական կա տրված հատվածում:**

Թումանյանի սերն ու հետաքրքրությունը դեպի հայ ժողովրդի պատմությունը, որ զարքնել էին նրա մեջ դեռևս մանկության տարիներին պատմական հուշարձաններով հարուստ իր ծննդավայրում, ապա դպրոցում սովորելիս, դառնում են քանաստեղծի մշտական հետաքրքրության առարկան, միաձուլվում նրա ողջ ստեղծագործության հետ:

**35. Ի հոլովման ենթարկվող քանի՞ գոյական կա տրված հատվածում:**

Գյուղացիների մեջ ապրելով՝ Թումանյանը մտտիկից տեսնում է ու մասնակցում գեղջկական կյանքին, մարդկանց նիստուկացին, կենցաղին ու սովորություններին: Նա առանձնապես սիրում էր Վարդավառի և Համբարձման տոնները, հարսների ու աղջիկների ջանգուլումը:

**36. Տրված հատվածում ան արտաքին հոլովման ենթարկվող քանի՞ գոյական կա:**

Փափազյանը բեմերում հազարավոր անգամներ էր մեռել, բայց ոչ մեկը սրա նման չէր եղել: Նրա հումկու արվեստի շրեթ վերջալույսի վերջին ճառագայթումն էր այդ, որ դրոշմվեց հանդիսատեսի սրտում: Թեպես երազել էր մեռնել բեմի վրա՝ վերջին դերակատարումն ավարտած, բայց առաջին անգամ արտիստը չկարողացավ իր անկոտրում կամքը թելադրել բնությանը:

**37. Տրված հատվածում արտաքին հոլովման ենթարկվող քանի՞ գոյական կա:**

Ժամանակ անցավ, և բոլորը հարմարվեցին ծիրաննենու ներկայությանը: Իսկ ամռանը չարաճի երեխանները, իրենց աշխույժ գոռում- գոյշունով կենդանացնելով տաղտկալի անդորրը, մազլցեցին տան կտորը և անհամբերությամբ պոկոտեցին զարմանալի ծառի երախայրիքը:

**38. Աներքին հոլովման ենթարկվող քանի՞ բառ կա տրված հատվածում:**

Եթե 301 թ. Հայաստանում պետական կրոն հոչակվեց քրիստոնեությունը, Վաղարշապատում կառուցվեց Էջմիածինը: Ինչպես վկայում է ավանդությունը, Գրիգոր Լուսավորչին երևում է մի տեսիլ. իբր երկնքից հայտնվում է մի իրեղեն սյուն, նրա միջով երկիր է իշնում Քրիստոսը և ձեռքի մուրճով ցույց տալիս տաճարի կառուցման վայրը: Հենց այդտեղ էլ իհմնվում է տաճարը և ստանում Էջմիածին անունը:

**39. Տրված գոյականներից քանի՞սն են ենթարկվում ներքին հոլովման.**

բույր, ցասում, մորեղբայր, մահ, զառ, ուսուցում, գերություն, հենասյուն, բռնկում, ուրախություն, ձյուն, արյուն:

**40. Տրված գոյականներից քանի՞սն են ենթարկվում ներքին հոլովման.**

եռանկյուն, Մանուկ, արարշագործություն, մեծարում, խաչեղբայր, կալվածատեր, մականուն, ցասում, բռղտվություն, նոր:

**41. Տրված գոյականներից քանի՞սն են ենթարկվում ներքին հոլովման.**

կնքահայր, ընկեր, մորաքույր, որսաշուն, սեղանատուն, ամուսին, անկողին, գինի, հայելի, եղբայր, տիրամայր, բեկում:

**42. Տրված գոյականներից քանի՞սն են ենթարկվում ներքին հոլովման.**

դեղատուն, էլեկտրասյուն, քառանկյուն, մեծամտություն, արարում, կարկաչյուն, մահ, սկեսուր, որսաշուն, գինի:

**43. Տրված գոյականներից քանի՞սն են ենթարկվում արտաքին հոլովման.**

հացատուն, հմտություն, սկեսրայր, կեսզիշեր, առավոտ, լեռ, փրկություն, շարժում, մայր, տրամարանություն, ամուսին, վերարկու:

**44. Տրված գոյականներից քանի՞սն են ենթարկվում արտաքին հոլովման.**

զարուն, խաղատուն, շնաձուկ, կաղնի, խոխոչյուն, մականուն, ցնծություն, անկողին, շքադրու, բողբոջ, տարի, երեկո:

**45. Տրված գոյականներից քանի՞սն են ենթարկվում արտաքին հոլովման.**

մուկ, հարս, բեռ, ձյուն, անկյուն, էլեկտրասյուն, ավերում, ընդվզում, վաճահայր, անկողին, քամի, մեքենաշինություն:

**46. Տրված գոյականներից քանի՞սն են ենթարկվում արտաքին հոլովման.**

տանտիկին, վայրկյան, տարի, արյուն, հորեղբայր, կեսօր, աղորիք, բեռ, բռնկում, գրավատուն:

**47. Տրված գոյականներից քանի՞սն են ենթարկվում ամ և ոչ հոլովումների.**

հարսնաքույր, ձիատեր, քեռակին, ուրախություն, մեծարում, տիրամայր, քառանկյուն, իջևանատուն, որսաշուն, դար, վայրկյան, աստված:

**48. Տրված գոյականներից քանի՞սն են ենթարկվում ամ և ոչ հոլովումների.**

անկողին, հայուիի, մանուկ, նախահայր, նախամարդ, սամում, հայտնագործում, քենակալ, գործընկեր, հերքում:

**49. Տրված նախադասություններում հողի սխալ գործածության քանի՞ դեպք կա:**

- Խիդոս մեռնում է, եռանդ՝ մարում, կյանք՝ մաշվում, և միայն վարանմունքն է բույն դնում իմ դասնացած հոգուս մեջ:
- Եթե հաճու է վեհիդ ինձ չկորցնել, արտասվելով աղերսում եմ. «Արձակե՛ք ինձ Սուրբ Էջմիածնի միաբանության ովատից»:
- Դեռ վաղ մանկությունից զրկվելով հորից ու մորից՝ Սողոմոնը անընդհատ ճաշակում է կյանքի բոլոր դաշնությունները, որոնք խոր կնիք են դնում նրա հոգեւոր աշխարհի վրա:
- -Մերժում եմ ձեր առաջարկը. իմ երգչական կարողությունները միմիայն մի նպատակի են ծառայելու՝ իմ հայրենիքին,- ասաց Կոմիտասը:
- Լսելով Բեթհովենին՝ կոնվոլյուտորը բարձրաձայնեց.  
- Ուշադրություն դարձրեք այս պատանուն. նա մեզ բոլորին կստիպի խոսել իր մասին:

**50. Նախադասություններից քանիսո՞ւմ որոշիչ հողի սխալ գործածություն կա:**

- Ուսկանն այժմ քայլում էր խորդուրդությունների միջով:
- Քաֆֆին գիտեր՝ ինքը ով է. նա իրեն ավելի լավ էր ճանաչում:
- Գլածորում ստեղծված ձեռագրերն հեղինակություն էին վայելում ժամանակի դպրոցներում:
- Սևաշղարշ մուրն արդեն կլանել էր կիսավեր քաղաքն իր շրջակա լեռներով ու ձորերով:

**51. Նախադասություններից քանիսո՞ւմ ստացական հողի գործածություն կա:**

- Զարենցը հիշեցրեց 1908 թվականին իրեն հասցրած ապտակիս մասին:
- Պատանին կանգնեց դիմացս ու առանց աշք թարթելու նայեց ինձ:
- Օրենին շարունակ հուզվում էր ու հուզում բոլորիս:
- Երկուսս էլ գնում էինք մի երկիր, ուր գնում էին շատ-շատերը՝ բախս որոնելու:

**52. Տրված նախադասություններում ցուցական հողով քանի՞ քառ կա:**

- Եթե տարիքով քեզանից մեծն է աշխարհիս հրաժեշտ տալիս, կսկիծը լինում է ուղիղ հարաբերական կորցրած անօրինակ արժեքին:
- Ականջիս հասած խրոխս ձայնից սրափվեցի. իմ առջև կանգնած էր մի երիտասարդ՝ վտիտ, քուխ դեմքով:
- Վերջինս հողոց համելով ասում է.  
- Այդ նկարը պետք է ինձ տաս:  
- Սակայն այդ պահին, երբ ապտակդ կերա, - ավելացրեց Զարենցը, - ամեն ինչ իրար խառնվեց. բողեցի ու հեռաց:

**53. Տրված բառերից քանի՞սն են ածական.**

աշակերտական, մերկ, այնպիսի, ուկյա, քարե, անհիշելի, ածելի, սիրելի, տաղանդավոր, զյուղատնտեսական, ապազգային, բյուր:

#### **54. Տրված բառերից քանի՞սն են ածական.**

քանամյա, քաջաբար, իիմնովին, աներկայորեն, գիտահանրամատչելի, հազարավոր, երկիարկանի, պարզունակ, նույնական, ազգանվեր:

#### **55. Տրված բառերից քանի՞սն են ածական.**

արևմտյան, բեղմնավոր, մշտապես, ճաղատ, գովելի, սկզբունքային, քննադատական, արտաքուստ, բազմիցս, կրկին, առատաձեռնորեն:

#### **56. Տրված բառերից քանի՞սն են ածական.**

վերջապես, միանգամից, դրնեղուու, արտադասարանական, անդրշիրիմյան, վաղնջական, բաղաքային, գյուղական, մեղեղային, ապիկար:

#### **57. Տրված նախադասության մեջ քանի՞ ածական կա:**

Փոթորկված ու փրփրահույզ ծովում, իր լայնատարած թիկունքով խորդուքորդ ժայռերին կորնած, կծկվել էր մի ավան՝ չոր և ցամաք, ինչպես ծովափնյա որոշ գյուղեր, սակայն քաղաք էր կոչվում այն, նույնիսկ բազմադարյան պատմություն ունեցող հինավորց քաղաք:

#### **58. Տրված նախադասության մեջ քանի՞ ածական կա:**

Փափազյանը՝ քսաներորդ դարի ամենամեծ արվեստագետներից մեկը՝ աշխարհի տարբեր ծագերում, զանազան ժողովուրդների բեմերում հսդրանակած ու փառաբանված դերասանը, չնայած հյուծված և ախտալուկ մարմնին, տակավին խաղում էր՝ ցուցաբելով իր մեծ, հզոր, անընդունելի ու առեղծվածային արվեստը:

#### **59. Տրված հատվածում քանի՞ ածական կա:**

Վերադառնալով խոհանոց՝ Մեսրոպը մետաղե պահարանից ստացավ պետերի համար միայն գործածելի փոքր չափսի պղնձամանը, ընտրեց իր ուզած միսը և անցավ գործի: Երկու ժամ անց ամենաբութ քիթն անգամ չէր կարողանում չզգալ ախտրժելի բուրմունքներով պատրաստված ճաշի համելի բույրը: Մեսրոպն ուզեց ինչ-որ կերպ անվանել իր զարմանալի կերակուրը, որը կարողացավ խացնել վիրխարի կարսաներում խաշվող սառած կաղամքի ու կարտոֆիլի տհած հոտը:

#### **60. Տրված հատվածում քանի՞ ածական կա:**

Վաճականները սիրալիր ընդունելություն ցույց տվին, և այդ օրվանից Բայրոնի առաջ մի հետաքրքիր աշխարհ բացվեց: Նա հափշտակությամբ ծանրացավ վանքի հնագույն մազաղաթներին, և նրան հուզեցին հայերի հարուստ մշակույթն ու արյունալի պատմությունն:

#### **61. Տրված հատվածում քանի՞ ածական կա:**

Այն պահին, երբ Վարդը մտածում էր այդ ծանր առաքելության մասին, Արշակ թագավորը, շարունակելով իր անհանգիստ երթևեկը, խորհում էր դարձյալ Գնելի մասին: «Պետք է կանչել, կանչել մայրաքաղաք և զրուցել հետո, - մտածում էր նա:- Սիրելով պետք է փոխել մարդուն և դարձնել անձնվեր... Թեև կարգ չէ և ընդունված չէ, բայց գուցե հանձնենք նրան մի բարձր պաշտոն արքունիքում. այսպես նա չի առնչվի դժգոհ նախարարների հետ»:

#### **62. Տրված հատվածում ընդգծվածներից քանի՞սն են ածական:**

Հեյ, պարուններ, ականջ արեք  
**Թափառական** աշուղին,  
**Սիրո՛ւն** տիկնայք, **Զահել** տղերք,  
 Լավ ուշեք իմ խաղին:  
 Մենք ամենք հյուր ենք կյանքում  
 Մեր ծննդյան փուշ օրից,  
 Հերթով զալիս, անց ենք կենում  
 Ես անցավոր աշխարհից:

### 63. Տրված բառերից քանի՞սն են թվական.

ուրսունական, հարյուրերեսունչորսամյա, հազարերորդ, հարյուրյակ, եռակի, հնգակի, բյուրավոր, երկու երրորդ, մեկ հինգերորդ, բազմահազարանց, բազմիցս, այսքան:

### 64. Տրված բառերից քանի՞սն են թվական.

ինչքան, տասնմեկերորդ, երրորդ, միլիոնանց, միլիարդ, ութիարյուրամյա, երկրորդական, մեկ երրորդ, բյուրավոր:

### 65. Տրված բառերից քանի՞սն են թվական.

տասնյակ, քսան-քսան, երեքհարյուրամյա, քառամյա, հնգական, երկու հինգերորդ, բազմահազարանց, որքան, այդշափ, նույնչափ, իննունինը, իններորդ:

### 66. Տրված բառերից քանի՞սն են թվական.

իննունական, քանիցս, հազարավոր, յոթ հարյուրերորդական, տասնամյա, միլիոնավոր, այսքան, երկակի, հինգհարկանի:

### 67. Տրված հատվածներում քանի՞ թվական կա:

- Աշխ, իմ մեծ սերը...  
Նա հավասար է  
Կորած հոյսերիս ճիշտ քառակուսուն  
Ու երազներիս խեղճ մնացողդին:
- Ի՞նչ զարմանալի աչքեր ունես դու,  
Կարծես թե լինեն երկվորյակ լճեր  
Հին հրաշիփ զույգ խառնարանում:
- Եվ մի հատիկ իմ այս աչքով  
Շատ եմ տեսնում,  
Որովհետև առողջ աչքով ես տեսնում եմ,  
Իսկ կույր աչքով..... միշտ երազում:
- Եվ իմ տասը մատող իմ զույգ աչքի համար  
Բանտի ճաղերի պես ինչ-ոք քան եմ սարքում.  
Ճակատս մեղմելով՝ մտածում եմ,  
Թե ի՞նչ անեմ հիմա:
- Ազ ու ձախ պտտեմ մի երրորդ կոճակ՝  
Եվ մութը խվայուն հին շարքի նման  
Չքի, չքանա:

### 68. Տրված նախադասություններում թվականներից քանիսի՞ գրությունն է սխալ:

- Կոթողի բարձրությունը հասնում է հիսունչորս մետրի, աստիճանների թիվը՝ երկու հարյուր իննունչորսի:
- Սևանա լճի ջուրը անուշահամ է, աղիությունը՝ յոթանասուներկուսից յոթանասուներեք տոկոս,  
ավելի քան յոթանասուն անգամ պակաս օվկիանոսի ջրի աղիությունից:
- Տաս-տասնինգ տարվա ընթացքում Տիգրանակերտի բնակչությունը հասնում է շուրջ հարյուր  
հազարի:
- Հազար ինը հարյուր քաննեկ թվականն էր՝ մարտի տասվեցի առավոտը, երբ կատարվեց այդ  
ոճրագործությունը:
- Տասնիներորդ դարի ութսունական թվականներին Բաշինջառյանը կտրեց անցավ  
անդրկովկայան շնաշխարհիկ բնության արահետները:

### 69. Տրված բառերից քանի՞սն են դերանուն.

այսքան, քանիցս, նույնքան, սույն, քանիերորդ, որքան, ոչ մեկը, յուրաքանչյուր ոք, համայն, ամենայն:

### 70. Տրված բառերից քանի՞սն են դերանուն.

ոչ միայն, այսօրինակ, այստեղ, ոչ ոք, բոլորը, որտեղ, վաղը, այսօր, մեկմեկի, որոշ, երբեւ, ուրեմն:

### 71. Տրվածներից քանի՞սն են ցուցական դերանուն.

սույն, այսպիսի, միմյանց, երբ, որտեղ, ամեն մի, ինչքան, միևնույն, մյուս, այդշափ, նույնքան,  
ինչպիսի:

### 72. Տրվածներից քանի՞սն են ցուցական դերանուն.

իրար, բոլորը, յուրաքանչյուր ոք, ամբողջ, ամենայն, այսքան, մեկմեկու, ոչինչ, նույնպիսի, ինչ-ոք:

### 73. Տրված հատվածում քանի՞ դերանուն կա:

Ասում են, որ մի վտիտ մարդ՝ այլ տարազով, երեկոները, երբ հանդարտվում է քաղաքի աղմուկը, Արովյան փողոցի վերջում սպասում է տրամվայի վագոնին: Տրամվայը նրան տանում է քաղաքից դուրս, և այդ մարդն անհանգստության նշաններ է ցույց տալիս, ինչու որ երևում է բարձր լեռան գագաթը: Նա խնդրում է արագացնել ընթացքը, ուրախությունից դողում է և համոզված է, որ ինքը բարձրանալու է այն լեռան գլուխը, որ տեսնելու է իր ցնորդի աշխարհը:

### 74. Տրված հատվածում քանի՞ դերանուն կա:

Ելել ես անվերջ, բարձրացել ես վեր՝  
Քո ահեղ դարից առնելով թևեր...  
Ելել ես, որ ողջ աշխարհը տեսնես,  
Որ անօրինակ քո դարը տեսնես,  
Բոլոր կերպերով դու նրան զգաս,  
Շահածով խնդաս, կորուստը սգաս...

### 75. Տրված հատվածներում քանի՞ դերանուն կա:

- Ի՞նչ ես այդպես ուշացած  
Տիրում ու լալիս,  
Հավը ձեռքից որ բռավ,  
Ել ես չի գալիս:
- Այս ձորերում ամեն ինչից  
Օրորոցի հոտ է գալիս,  
Պապենական սուրբ օցախի  
Ծուխ ու բոցի հոտ է գալիս:
- Մեկով իիացա, մեկից խոցվեցի,  
Այնքան փորձեցի, այնքան փորձվեցի,  
Բայց էությունս, ավա՞ն, մինչև վերջ  
Բաշխել, բաժանել չկարողացաւ:
- Ոչ ուրիշի շողերով,  
Այլ սեփական շողերով  
Ես շողացի, շողացի  
Մայրամուտի մեջ:

### 76. Նախադասություններից քանիսո՞ւմ հարաբերական դերանուն կա:

1. Հովհաննես կաթողիկոսը, որ չորրորդ օրն եր՝ գտնվում էր Սևանա կղզում, նույնպես աղոթում էր:
2. Հրափայլ սկավառակը՝ որպես մի բոցավառ անոք, սկսեց բարձրանալ երկնակամարի վրա:
3. Ավելացրի, որ այդշափ գրելով կարող է նրա առողջությանը վտանգ սպառնալ:
4. Ի՞նչ հարազատ բույր ունեն դադան ու ուրցը. դրանք հիշեցնում են մեր շնաշխարհիկ գյուղը:

### 77. Տրված շարքում դերանվան քանի՞ տեսակ կա.

ինքը, սա, ինչքա՞ն, որոնք, քանի՞, մյուս, այստեղ, ուրիշ, ոմն, իրար, ինչու, այլ:

### 78. Տրված շարքում դերանվան քանի՞ տեսակ կա.

ողու, այս, այսքան, մեկմեկու, այսպես, միևնույն, ամենքը, համայն, ոչ մի, բոլոր:

### 79. Տրված շարքում դերանվան քանի՞ տեսակ կա.

ող, ինչ-որ, ոմանք, մի քանի, ոչ մեկը, միմյանց, ամենայն, այնտեղ, նույնքան, մենք:

### 80. Տրված շարքում դերանվան քանի՞ տեսակ կա.

ինչո՞ւ, նույն, այդպիսի, այսպես, յուրաքանչյուր, ոմանք, երբեկցե, մեկը, որևէ, սույն:

### 81. Տրված բայերից քանի՞սն են ա խոնարհման.

թռա, պիտի խոսի, դարձա, կանգնեցրի, որսացել է, փափազում է, կերկրապազի, սուլում է, եղավ, կարդացել էի, կիշնենք, պիտի հասնեն:

### 82. Տրված բայերից քանի՞սն են ա խոնարհման.

չեն պոկվի, կարբագրեն, մոտեցել է, կզարմանա, խաղում է, հնագանդել է, չի հանգստանալու, եկել է, կերա, պիտի մերժել:

### 83. Տրված հատվածներում ա խոնարհման քանի՞ բայ կա:

- Անցնում են ու չեն էլ իմանում,  
Որ իրենց համար ես ծերացել:
- Նստել, նորից միտք եմ անում,  
Թե ինչ տվի ու ինչ տռա:
- Իմ երգերի ձայնից, իմ երգերի  
Էլ չեն զարբնում քնած երգերը քո:
- Ամպերը դարձել գրության քույրեր,  
Զրվեմի վրա ջուր են շաղ տալիս,  
Որ ուշքի բերեն:

### 84. Տրված հատվածում ե խոնարհման քանի՞ բայ կա:

Բարձրադիր ափին կանգնած՝ նա նայում էր շուրջբոլորը: Երիտասարդը երևի երկար կիհանար իր առջև տարածված հերիաքային գեղեցկությամբ, եթե մի թավ ձայն չընդհատեր նրա խորհրդածությունների շղթան: Նա հետ դարձավ. դիմացը մի վանական էր՝ մագաղաթը սեղմած դալուկ ձեռքերի մեջ:

### 85. Տրված բայերից քանի՞սն են կազմությամբ պարզ (առանց բայական ածանցի).

հանգա, մի՛ կարդա, պիտի մոտենա, բարձրացրի, համաձայնեց, փրկեցինք, ասում է, հագեցել է, վախենում էի, սարսափել էր, լինեի, անցնեինք:

### 86. Տրված բայերից քանի՞սն են կազմությամբ պարզ (առանց բայական ածանցի).

մարտնչում էին, կտրտել էր, կրույլատրեն, իջան, եկել են, լրացրո՛, կկորչեն, տեսա, կանեմ, ստորադասել:

### 87. Տրված բայերից քանի՞սն են կազմությամբ պարզ (առանց բայական ածանցի).

սառար, մեղանչել է, կոտրատում է, ցատկեցին, ելան, բարձրաձայնում է, վախեցրո՛, հիացնում են, խաղաղեցրին, արտագրում էր, չի մասնակցելու, կսովորի:

### 88. Տրված բայերից քանի՞սն են կազմությամբ պարզ (առանց բայական ածանցի).

զրոսնեցին, ժանգոտել էր, իջնում է, խոցեցին, կշնջենք, լացում են, դավաճանում է, զրկվել, դի՛ն, թռա:

### 89. Տրված հատվածում քանի՞ ածանցավոր բայ կա:

Պահվեց Պելևար քարանձավում և սպասեց այստեղ: Ահա ծովից դուրս եկավ Թետիսը և մտավ քարանձավ: Խոյացավ Պելևար նրա վրա և օղակեց իր հզոր քազուկներով: Թետիսը ջանում էր դուրս պրծնել: Նա մե՛կ առյուծի, մեկ օձի կերպարանք էր ընդունում, մեկ էլ ջուր էր դառնում, բայց Պելևար նրան բաց չէր թողնում:

### 90. Տրված հատվածներում քանի՞ ածանցավոր բայ կա:

- Իմ մեջ սառել է հիվանդ մի կարոտ  
Եվ չգտնելու տանջանքը մաշող:
- Հիշում եմ լրված մի բոճիր՝  
Բերանին մամոռտած մի խուփ:
- Սի բուռ երգի մեջ ապրում, շնչում է  
Անդարձ աշխարհն իր անցուղարձով:
- Բոցի պէս անցավ արտերի միջով,  
Դեմքի շիկնանքը իմ դեմքին մնաց:

### 91. Տրված նախադասության մեջ քանի՞ անկախ դերքայ կա:

Նստածները, նկատելով իմ այդօրինակ համարձակ քայլը, սկսեցին ծիծաղել, իսկ Աննան, դիմելով Մարիամին, բոլորի ուշադրությունը իր վրա հրավիրեց:

### 92. Տրված նախադասության մեջ քանի՞ անկախ դերքայ կա:

Հասմնելով խիտ կանաչներին՝ անասունները լավ կշտանալուց հետո, ըստ երևույթին հոգնածությունից դրդված, նստեցին խոտհարքում եղած թփուտների մեջ՝ սկսելով իրենց մանկական անմեղ որոճը:

### 93. Տրված հատվածներում քանի՞ անկախ դերքայ կա:

- Մենք ուզում ենք գործի լեզուն,  
Բայց ոչ իբրև երկանք ստի  
Ու ջրաղաց խարեւության:  
• Դժվար բան է սուտ ասելը,  
Բայց սուտ ասելն ավելի է հեշտ ու դյուրին,  
Քանի թե անվերջ սուտ լսելը:  
Ուստինաձև սուտ ծամելուց մենք զգվել ենք:
- Լավ ապրանքը ինքն է ծախսվում,  
Ու վասն է, որ պիտի գովես:  
Իսկ մենք դեմ ենք ամեն տեսակ փերեզակի....  
Մենք մեր լեզվի կապն ենք կտրել,  
Որովհետև, ճիշտ է, լեզուն չունի ոսկոր,  
Բայց կարող է... ոսկո՞ր ջարդել,  
Նաև կապա՞նք ձեռք ու ոտքի:

### 94. Տրված հատվածներում քանի՞ անորոշ դերքայ կա:

- Շնչելն ապրելու միակ վկան էր,  
Եվ ինչպիսին էլ լիներ խնդրանքը,  
Պատասխանը լոկ չեն ու չկան էր,  
Նորից մերժումն էր, նորից զրկանքը:
- Սոր լցված աչքը որդու գալուն է,  
Շեմքի քարին է զրկված հարկի,  
Ամպոտ երկինք է, ձյունոտ գարուն է,  
Կուց-կուց արյուն է արոր հավքի:
- Նստել, նորից միտք եմ անում,  
Թե ինչ տվի և ինչ առա,  
Թե հողի տակ ինչ եմ տանում,  
Ինչ եմ բողնում հողի վրա:
- Ինչ որ կյանքում քեզ է տրվել,  
Եթե տրվեր ծովին,  
Հազար տեղից կպատռվեր  
Նրա եզերքը իհն:

### 95. Տրվածներից քանի՞սն են անորոշ դերքայ.

բրվուալ, կերել, խաղացել, իջել, մտմտալ, ելնել, անհանգստացրել, զարմացել, ջղայնանալ, քշնամացել, գտել, դիպել:

### 96. Տրվածներից քանի՞սն են անորոշ դերքայ.

ուռչել, համապատասխանեցնել, հուսահատեցրել, թվացել, անզգայացել, կոնկրետանալ, դարձել, դառնալ:

### 97. Տրվածներից քանի՞սն են անկախ դերքայ.

հանգցնելիս, անհանգստացել, ծանոթացել, հանգրվանած, մոտեցած, դիպչող, տեսել, քարացող, լացելիս, երգի, զարմացնի, փայլատակող:

### 98. Տրվածներից քանի՞սն են անկախ դերքայ.

փախել, ուտել, եկած, սիրի, մտնել, հանգստացնի, աղացել, հպարտացել, մոռացած, հոխորտացող:

### 99. Շարքերից քանիսն են միայն անորոշ դերքայներ:

- կորցնել, թռչոտել, թռցնել, իմանալ
- մեծացնել, ծանոթանալ, գրալ, վախեցնել
- գրացել, արագացնել, գտնել, պսպղալ
- կպչել, հասել, թարմացնել, հանգել
- լինել, խոսել, ուռչել, հպարտանալ

### 100. Տրված հատվածում քանի՞ անկախ դերքայ կա:

Մենք բոլորս, որ գնում ենք մենակ, տրտում,  
Որ գնում ենք խանութներում զինի ու հաց,  
Որ փնտրում ենք անկարելի մի խնդրություն,  
Բայց չենք գտնում՝ վազքով տարված ու զբաղված,  
Մենք բոլորս, որ հոգնարեկ չենք նայում վեր՝  
Սոռանալով աշխարհային չարք, բարին,  
Տրտում կօրինենք մի իրիկուն օրերը մեր  
Ու կնայենք Հարդագողի ճանապարհին:

### 101. Նախադասություններից քանիս՝ անկախ դերքայ կա:

- Սիզիփոսը ինս հունական դիցաբանության մեջ համարվել է աստվածների կամայականություններին ընդդիմացող հերոս:
- Հոմերոսն է Սիզիփոսին նկարագրել որպես աստվածների ու մարդկանց օրենքներին անհնազանդ, փառասեր ու արատավոր մարդ:
- Եթե քայրացած Ձևի կամքով մահվան աստված Թանատոսը այցելում է Սիզիփոսին, վերջինս ճարպկորեն շղթայում և բանտարկում է նրան՝ որոշ ժամանակ մարդկանց ազատելով մահվան ժիրաններից:
- Մի քանի տարի անց Արես աստծու միջամտությամբ փրկված Թանատոսը Սիզիփոսին ուղարկում է մեռյալների աշխարհը:
- Այնտեղ նրան հարկադրում են լեռան բարձր կատարը հավերժորեն գլորել ծանր քարը, որն ամեն անգամ գահավիժում էր ստորոտ:

### 102. Տրված հատվածներում քանի՞ անկախ դերքայ կա:

- Տվել եմ քեզ խայտանք ու ջիղ,  
Ուժ եմ տվել ես քո ուժին:
- Ցույց տուր ինձ, զնամ, հավիտենություն,  
Իմ ծնված օրվա շիրիմը համբուրեմ:
- Ու վերջապես դրուզ գտնում,  
Դուրս է բռչում կապը կտրած,  
Ափին տալով հեռում, ճշում:
- Ինչ որ ասում եմ, ասողն ասել է,  
Ասել պրծել է ինձնից առաջ:
- Շնչելն ապրելու միակ վկան էր,  
Եվ ինչախին էլ լիներ խնդրանքը,  
Պատասխանը լոկ չեն ու չկան էր:

### 103. Տրված հատվածներում գոյականաբար գործածված քանի՞ դերքայ կա:

- Թող աշխարհը ցավ չունենար,  
Կարեկցելս չտեսնեի,  
Աչքս փակվեր ժամանակին,  
Յամարելս չտեսնեի:
- Չատ եմ զարմանում ես այն հոր վրա,  
Որ զայրանում է ու հացդ արգելում,  
Չի էլ հարցնում, թե քեզ ինչ է պետք,  
Ուզածն առնում է, ուզածդ արգելում:
- Եկեք մատթենք՝ այստեղ կանգնած,  
Սեղանների շուրջը հարուստ  
Գնացողին բարի ճամփա  
Ու եկողին՝ բարի գալուստ:
- Հիմքից շուր եկած, զիսիվայր կախված  
Բարձրություններ են քո անդրունդները,  
Եվ զագարներդ աստղերին հասած  
Անվերծաննեի խորություններ են:

### 104. Տրված հատվածներում գոյականաբար գործածված քանի՞ դերքայ կա:

- Իմ երգածը դար է,  
Իմ երգածը օր է,  
Սեկն ասում է՝ խան է,  
Սեկն ասում է՝ խոր է:
- Աշխարհում միշտ բաց են եղել  
Դոներս կրնկի վրա,  
Ելնողին չեմ ասել՝ արի՝,  
Մտնողին չեմ ասել՝ զնա՝:
- Բացվող օրվա հետ վեր թռան հանկարծ  
Լույսի խտուտից զարթնած սարերը,  
Իրար շալակած՝ սարը բարձրացան  
Իրար պաղ ու շոգ շնչառությունից  
Քրտնած սարերը:

### 105. Տրված հատվածներում քանի՞ անկատար ձևարայ կա:

- Այսօր նորից պարտեզում  
Ծրջում էի և հիշում  
Քեզ արքմնի երազում,  
Ուսկի, ոսկի մշուշում:
- Դու ինձ չես տեսնում լուսե երազում,  
Դու ինձ չես լսում ձմռան փոքրկում,  
Ես մուր գիշերում քեզ եմ երազում,  
Բուր ու հողմերում ես քեզ եմ երգում:

### 106. Տրված հատվածներում քանի՞ անկատար ձևարայ կա:

- Յուրատ անձրւն է միգում  
Հեկեկում,  
Տիրությունն է երգում  
Իմ հոգում:
- Օսար երկրի դաշտերում,  
Յուրատ գիշերում ձմեռվա  
Ո՞վ է անքուն դեգերում,  
Անվերջ սգում ինձ վրա:

### **107. Տրված հատվածում քանի՞՞ ճևաբայ (կախյալ դերքայ) կա:**

Հրաչյա Աճառյանը գրադարան չուներ. նրա գրադարանը բաղկացած էր իր տպագիր և անտիպ գրքերից: Հաճախ եմ ականատես եղել, երբ, դրանց առաջ կանգնած, ինքն էլ զարմացել է ու ապշած ասել.

- Այս բոլորը մի մարդ է գրել, այն էլ մեկ աչքով:

Իսկ ինչքա՞ն թերթեր ու գրքեր էր կարդացել՝ այդ աշխատությունները գրելու համար: Փոքր տարիքից չեր ինացել՝ ինչ է հոգնածությունը. նա զարմացնում էր իր անօրինակ աշխատասիրությամբ: Ասում էր, որ եթե օրական երկու-երեք էջ չգրի, իր դարակում հիսուն հատոր աշխատություն չի ունենա:

### **108. Տրված հատվածում քանի՞՞ ճևաբայ (կախյալ դերքայ) կա:**

Տասներեք տարի սրանից առաջ որոշեցի կատարել երկարատև ճամփորդություն՝ հոգեկան անդորր գտնելու նպատակով: Ծրագրել էի անցնել Կոստանդնուպոլիս, այնտեղից՝ Իզմիր, հետո՝ Եգիպտոս: Ճամփորդության վերջնակետն էր Ամերիկայի Միացյալ Նահանգները կամ, ճիշտն ասած, Կալիֆոռնիան:

Մի հյուրանոցում էի իջևանել, որն իր մաքրությամբ, իրավամբ, առաջինն էր համարվում: Ժամանման հաջորդ օրը, նստած իմ համարում, կազմում էի այն տեղերի և անձանց անունները, ուր և որոնց մտադիր էի այցելել:

### **109. Տրված հատվածում քանի՞՞ դիմավոր բայ կա:**

Ինչպես են չղջիկները մքրության մեջ տեսնում ավարը: Գիտնականները մի այսպիսի փորձ են կատարել. չղջիկների աշքերը ամուր ծածկել և նրանց բաց են բողել մի սենյակում, ուր պարաններին իրար մոտիկ զանգակներ էին կախվել: Չղջիկները բողել են սենյակով մեկ՝ առանց զանգակներին կամ պարաններին դիպչելու:

Պարզվում է՝ չղջիկները բոշելիս ուլտրաձայներ են արձակում:

### **110. Տրված հատվածում քանի՞՞ բաղադրյալ դիմավոր ճև կա:**

Քեռփսի բուրգից չորս հարյուր մետր հեռու գտնվում է նշանավոր Սֆինքսը: Եգիպտական այս կորողի վեհապան կերպարանը անրաժմ է բուրգերի վիթխարի պատկերից: Մոտ հինգ հազար տարի է՝ նա բազմել է անապատի եզրին. թվում է՝ Սֆինքսը մերք հուզվում է, մերք մտածում ու զգում: Այն անապատի բնակիչների վրա դարել շարունակ ահ ու սարսափ է տարածել. այդ պատճառով էլ նրան «սարսափի հայր» են անվանում:

### **111. Տրված հատվածում սահմանական եղանակի քանի՞՞ բայաձև կա:**

Այո՛, իշխան, ես պակաս հայրենասեր չեմ: Այդ անխիդճ ու զրախոս նամակն ստանալուց հետո ձի չնստեցի իսկոյն, չքու դեպի Շիրակ և սրի մի հարվածով ջախջախեցի մեղապարտի գլուխը, այլ երկրորդ անգամ ապստամբության դրոշ պարզեցի՝ հեռատեսությամբ որոշելով, թե այս անգամ մի փոքր պետի խստությամբ կվարվեմ արքունական կալվածքների և ժողովրդի հետ. գուցե դրանով կարողանամ ազդել թագավորի քարացած սրտի վրա, ճանապարհ բերեմ մոլորդային և ազատեմ զահը վերահաս վտանգից: Եվ ահա՛ այդ նպատակով, ինչպես դու գիտես, վերցրի Գարդմանում պատրաստ ունեցած զորքս, որի թիվը ութ հազարի էր հասնում, և դիմեցի ուղղակի Զորավոր: Առաջին գործս եղավ Կայյան բերդը պաշարելն ու առնելը:

### **112. Տրվածներից քանի՞սն են սահմանական եղանակի ժամանակաձևեր.**

Ասում են, դառնալու է, մոտեցան, վերցրի, գիտեին, հանգստանայիր, սառչեմ, կզարմանայի, չփոշնանեցի, չխաղաս, չես նեղանա, չի պատասխանելու:

### **113. Տրվածներից քանի՞սն են սահմանական եղանակի ժամանակաձևեր.**

Քոչեիր, չխնարհվես, լացել է, հանդիմանելու է, չեմ պաշտպանելու, չես հրամայի, ելնենք, կառուցեցի, խաղայի, հանգրվանեցիր, զարմացրիր, կայիր:

#### 114. Տրված հատվածում սահմանական եղանակի քանի՞ բայաձև կա:

Օրերից մի օր փորբիկը մորը կանչեց, աշքերը շողովացրեց ու սեղմած բռունքը առաջ պարզելով՝ հարցրեց. «Մայրիկ, գուշակի՞՝ ինչ կա բոխս մեջ»: «Ծիթեռնիկ», - փորձեց կրահել մայրիկը: «Օ՛, երբեք չես գուշակի, - խորհրդավոր տեսրով պատասխանեց մանջուկը: - Մենք պիտի սպասենք զարնանն ու հետո միայն ցանենք այս սերմը, որ իմ հրեշտակն է երկնային պարտեզից բերել ինձ համար: Եվ կտեսնես, թե ինչ սքանչելի ծաղիկ է աճելու»: Հետո ափը բացեց, և այնտեղ, իսկապես, շագանակագույն սերմի մի փորբիկ հատիկ կար:

#### 115. Տրված հատվածներից քանիսո՞ւմ սահմանական եղանակի բայաձև կա:

- Որքան պարզություն կա այս երգի մեջ,  
Որքան մանկություն և որքան բախիծ:
- Այսպես այդ երգը ամեն օր գալիս,  
Իմ բոլոր հուշերն իրար է խառնում:
- Ես կուզենայի ստվերն իմ բոնել,  
Պատողութել առանց խղճահարվելու:
- Հոգնել եմ արդեն հանդարտ հոսելուց,  
Իմ մտքերի հետ մքնում խոսելուց:
- Ի՞նչ բաքցնեմ, ել բան չունեմ  
Ես աշխարհից բաքցնելու:
- Կրակն այնպես բող ճարճատի,  
Որ ծիծաղներ ծաղկեն ծալ-ծալ  
Ակոսներում մեր ճակատի:

#### 116. Տրված հատվածներում իրամայական եղանակի քանի՞ բայաձև կա (առողանության նշանները դրված չեն):

- Եղիր հզոր ու անգութ,  
Չար ժախտով ել իմ դեմ:
- Իմ գերեզմանին դուք չմոտենաք  
Հարկավոր չեն ինձ ոչ ծաղիկ, ոչ սուզ:
- Ինձ թառեք, երբ տիսուր մթնշաղն է իջնում,  
Երբ լուս են օրվա աղմուկները զվարք:
- Գնա, քարավան, ինձ հետդ քարշ տուր  
Օտար, ամայի ճամփեքի վրա:
- Ինձ հեռվից լուս փարոս չի կանչում,  
Չի ժպտում ինձ խաղաղ հանգրվան:

#### 117. Տրվածներից քանի՞սն են ըղճական եղանակի ժամանակաձևեր.

Հզիտեմ, կողոպտեցին, տեսան, չեմ սիրելու, լինեի, կաս, չես համոզի, չի ներկայացել, չեմ արտահայտվելու, մասնակցեցի, դարձան, չհամարձակվեց:

#### 118. Տրվածներից քանի՞սն են ենթադրական եղանակի ժամանակաձևեր.

Չի խեղաքուրի, ամփոփելու են, սփոփեցին, ունեին, չգան, լալիս են, չտանեիր, չեն ձերբակալի, դիպչեմ, հպարտանայիր, անհանգստացրեց, ծանոթացար:

#### 119. Փակագծերում գրվածներից քանի՞սն են համապատասխանում ընդգծված բայաձևներին:

- Առաջներում մերպեսներին  
**Այրում էիմ (սահմանական եղանակ)** խարույկի մեջ:
- Հիմա պիտի խարույկ վառենք (**ըղճական եղանակ**) մենք ինքներս,  
Խարույկ՝ մեզով:
- Աղը կրակ է հանցցնում,  
Բայց մենք պիտի մեր կրակով աղն էլ **վառենք**, (**ըղճական եղանակ**)  
Որ ավելի **բոցավառվենք**: (**ըղճական եղանակ**)
- Եվ Աստծուն եթե երեք սուս աղոթքով դու դիմես, (**ըղճական եղանակ**)  
Ապա չորրորդ սուս աղոթքով չես խարի: (**սահմանական եղանակ**)

#### 120. Տրված հատվածում ներգործական սեռի քանի՞ բայ կա:

Ես լոեցի: Հայացքս փախցրի նրանից և գամվեցի տեղս: Նա դեմքը մոտեցրեց ինձ, գտավ իմ աշքերը և վախսվորած նայեց ուղիղ աշքերիս մեջ: Ոչինչ ասել պետք չէր. նա խկույն ամեն ինչ հասկացավ: Հառաչեց և բաշկինակի ծայրով սրբեց բարթիչներից կախված արցունքի վերջին կաթիլները և այլս ոչինչ չխոսեց:

Մյուս օրը Ռոստով հասանք: Նա վերցրեց ճամպրուկը և տարտամ քայլերով հեռացավ:

## 121. Ընդգծված բայերից քանի՞ն են ներգործական սեռի:

- Քար ու քերծից ելք է խլում,  
Գլուխը կախ գնում, գնում,  
Լորագետից ջուր է խմում  
Ծարավ կածանը:
- Եթե կա ինչ-որ գերեզմանատուն,  
Որտեղ հանգչում են նրանք սրբորեն,  
Ցո՛յց տուր ինձ, **գնամ**, հավիտենություն,  
Իմ ծնված օրվա շիրիմն համբուրեմ:
- Չո աչքերի լույսն եմ վառել,  
Եվ որպեսզի դու ինձ համար  
**Չինայես** ոչի՞նչ, ոչի՞նչ,  
Չո հոգին եմ ես արարել:
- Չիկացնում** են ժայռերն իրար  
Ու հալվում են կարծես օդում,  
Չես իմանում անդունդն ի վար  
Հալված ժայռե՞րն են որոտում:

## 122. Տրված հատվածում քանի՞ անկանոն և պակասավոր բայ կա:

Խեղճը դողալով  
Անհույս կռացավ,  
Դարդից չորացավ,  
Ուսենի դարձավ:  
Ջրերի վրա  
Գլուխը կախած՝

Դեռ դողում է նա  
Ու լախս կամաց,  
Ու ամբողջ տարին  
Մի միտք է անում,  
Թե յարը յարին  
Ո՞նց է մոռանում...

## 123. Տրված հատվածում քանի՞ անկանոն և պակասավոր բայ կա:

-Ա՞յս, չէ՛, ես զիտեմ, որ ես բախտ չունեմ.  
Ես երբե՞ք, երբե՞ք բախտ չեմ ունեցել...  
Ես միշտ էլ էսպես անբախտ կլինեմ.  
Սանուկ օրից են դեռ ինձ անիծել...  
Ասում են՝ մի օր, ես օրորոցում,

Սի պառավ դարվիշ մեր տուն է գալիս,  
Իր խաղն ասում է ու բաժին ուզում,  
Իմ նանը նրան բաժին չի տալիս.  
-Կորիի՛ր,- ասում է,- կորիի՛ր մեր դռնից,  
Երեխաս ճաքեց, հեռացի՛ր, գնա՛...

## 124. Նախադասություններից քանիսո՞ւմ անկանոն բայ կա:

- Նա նայեց վարից վեր՝ ձեռքով վախսվորած մի բացասական շարժում անելով:
- Հենվելով իր ձեռնափայտին՝ նա ոտքի ելավ ու դողդոջուն քայլերով մոտեցավ ինձ:
- Ճանապարհը գնալով դժվարանցանելի էր դառնում:
- Մինչև Արարատի ստորոտը նրանց հետ գնում է զինավառված հայերի մի հոծ բազմություն:

## 125. Տրված հատվածում քանի՞ մակրայ կա:

Կանչում է կրկին, կանչում անդադար,  
Էն չքնար երկրի կարոտը անբուն,  
Ու թևերն ահա փոռած տիրաբար՝  
Թռչում է հոգիս, քոչում դեպի տուն:

Ուր որ հայրենի օջախի առաջ  
Վաղո՞ց կարոտով սպասում են ինձ  
Ու ձմռան երկար գիշերը նստած՝  
Խոսում են Լոռու իին-իին քաջերից:

## 126. Տրված հատվածում քանի՞ մակրայ կա:

Հուզախոռվ և արիորորմ ձայները համեկարծ լրեցին: Մերթընդերք հասուկենտ արտասանված ինչ-որ կցկտոր բառեր ու նախադասություններ էին լսվում: Ուխտավորները հանդարտ կանգնեցին մի ժամի չափ: Ըուսող տեղ հասան Աղանայից և Մարաղայից եկող խաչերերը: Զիու ամրակների դոփյուններ լսվեցին. քառատրոփ սլանում էին ծիեր, և աստիճանաբար տարորոշվում էին հեծյալների ուրվագծերը: Զինվոր հոգևորականների ջոկատը արագորեն մոտենում էր ամբոխին. վերջիններս ապշանքից քարացան:

## 127. Տրված հատվածում քանի՞ կաայ կա:

Զորս հոգևորական պատրիարքի գլխի վրա ամպիովանի բռնեցին: Բոլորի առջևից մի մարդ էր գնում՝ պարզած ձեռքերի մեջ ինչ-որ բան բերելով. Գրիգոր Լուսավորչի աջն էր: Խորախորհուրդ լրությունը խախտեցին ցնծագին բացականչությունները. հիմա արդեն ոչինչ չէր կարող կանգնեցնել ուխտավորներին: Նրանք նետվեցին առաջ: Դողդոջուն ձեռքեր նետվեցին դեպի Լուսավորչի աջը: Երկու վանականներ, գլուխները խոնարհած, որպես պահապան հրեշտակներ պահում էին այն:

### 128. Տրված հատվածում քանի՞ կապ կա:

Կովում ընկածներին թաղելուց հետո հույները լրեցին Միսիան և նավեցին դեպի Տրոյայի ափերը: Բայց ծովում մի սոսկախ փոթորիկ սկսվեց: Լեռնանում էին ծովի վրա ահեղագոռ ալիքները: Փոթորիկը թերև տաշեղների նման այս ու այն կողմ էր շարտում հույների նավերը: Նրանք ճանապարհ կորցրին: Հույների նավերը մեկը վյուսի հետևից հետ էին դառնում այն նավահանգիստը, որ վաղուց չեր, ինչ բողել էին՝ դեպի մեծ Տրոյա նավելու համար:

### 129. Տրված նախադասություններում քանի՞ կապ կա:

- Երբ նա կռանում էր, բարձրանում կամ բորբիկ ոտքերով քայլում խսիրի վրա, զրնգում էին նրա թևերի արծաթագույն սուրմաները, խշշում էր զգեստը, որի փեշերը իջնում էին մինչև մերկ ներքանները:
- Նրա հայացքը արձանի նման սեռոած մնաց միսացող օջախին, մոխրի մոտ չոքած կնոջը. որտե՞ղ էր տեսել նա նման մի դեմք, բարձր սպիտակ ճակատ, մուգ մանուշակագույն աչքեր:
- Մինչև նրանք կհասնեին վրաններին, շները հարձակվեցին ձիավորների վրա:

### 130. Տրված նախադասություններում քանի՞ կապ կա:

- Ֆետրե գլխարկով մարդուն օջախի մոտ նստած կինը, որի երկար զգեստի տակ երևում էին նրա ծնկները, քվում էր քրմուիհ՝ եռոտանու առաջ ծխի շարժումները գուշակող:
- Ավին հիմա էլ ողջ է, չնայած սովորական մարմնի վրա գլխի փոխարեն մարդկային գանգ է՝ ամբողջովին կլաված, առանց մազի, առանց մորքու:
- Հոր տնից վերադառնալուն պես Սանդուխտը սկսեց արագ-արագ հավաքել երեխայի կողմից տնով մեկ թափքիած իրերը, նախքան սկսուրը կգար եկեղեցուց:

### 131. Ընդգծվածներից քանի՞սն են կապ:

- Մեր հոգին արդեն չի համբերում  
Ոչ մի ծվենին մուր մշուշի:
- Քոյն տամ սրտիս մեջ քոյն փնտրող հավքին,  
Ննջած անտառի ականջը դառնամ:
- Դու էլ ամպի պես լուս էիր, իմ սիրտ,  
Ուր որ է պիտի երգով որոտաս:
- Երգ իմ, նման ես քո ստեղծողին,  
Նրա պես նոր ես, նրա պես հին ես:  
Դու, մայր Արաքս մեր քերքության,  
Առ ինձ գիրկող, տա՛ր ինձ հեռու:

### 132. Տրված նախադասություններում քանի՞ շաղկապ կա:

- Ներսը՝ քարե տաշտի մեջ, Դիլան դային մինչև ծնկները բաց ոտներով ճճլում էր խաղողը, և արնագույն շիրան քարե տաշտից ծորում էր կավե կարասը:
- Ամեն տեղ այդ սերը ծիծեննակի պես ճռվողում էր, մինչև հասունացան նրանք, ու մի օր մեծատուն հարևանի շեմքով ներս մտավ Սոնան՝ հարսի քողը երեսին, արցունքից կարմրած աչքերը պայծառ որպես լեռնային ծովակ:

### 133. Տրված հատվածներում քանի՞ շաղկապ կա:

- Աշուն էր՝ տերևաթափով, արևի նվազ ջերմությամբ, դառնաշունչ քամիով, որ ծառերի ճյուղերից պոկում էր դեղնած տերևները:
- Թեկուզ տաք թեյը վառեց մատը, տղան ծպտուն չհանեց: Այնքան համեղ էր կիսահալ շաքարը:
- Կաքավաբերդի կնոջ դեմքը արևը մի քիչ այրել էր: Բայց աչքերի ձևը նույնն էր, ինչ մյուս կնոջ, որ դարձյալ բարակ մեջքով էր և բարձրահասակ:

### 134. Տրված հատվածներում քանի՞ շաղկապ կա:

- Էլ սիրտս ինչպե՞ս բախտավոր մնար,  
Թե ինքը իրեն բացել չիմանար:
- Ա՛խ, ես ի՞նչ ասեմ անսիրս Արազին,  
Որ, սիրտս կիսած, անցնում է միջով:
- Մարդիկ կան, որոնք շատ են զարմանում  
Իմ արտասովոր արիեստի վրա:
- Զգիտեմ՝ ում է արտույտն աղոթում.  
Ինքն իր հետ վիճում ու մրցում է նա:  
Ես կուզեի՝ ինչ որ ունեմ,  
Իբրև նվեր տայի քեզ,  
Ես կուզեի, բայց ի՞նչ անեմ,  
Եթե հանկարծ դու չուզես:

### 135. Տրված նախադասության ձևաբանական վերլուծության տարրերակներից քանիսո՞ւմ սխալ չկա:

*Տորակեց Զամբիայի հարավային սահմանի մոտ՝ Զամբեզի հողառաստ գետի վրա, գտնվում է բնուրյան հիասքանչ կերտպածքներից մեկը՝ Վիկտորիա շառաչուն ջրվեժը, որ հայտնաբերել է աշխարհահռչակ ճանապարհորդ Դավիթ Լիվինգստոնը:*

- **հարավային** - ածական, որ - ստորադասական շաղկապ
- **գտնվում** է - անկատար ներկա, կրավորական սեռ, մոտ - կապ, հետադրություն
- **բնուրյան** - գոյական, առ ներքին հոլովում, հայտնաբերել է - պարզ բայ, վաղակատար ներկա
- **շառաչուն** - ածական, աշխարհահռչակ - ածական

### 136. Տրված նախադասության ձևաբանական վերլուծության տարրերակներից քանիսո՞ւմ սխալ չկա:

*Նստեղով թավշյա բարձիկներով զարդարված արևելյան թախտին՝ մի քիչ շունչ առավ, ապա հազար մետաքսե կապան, փափուկ մույկերը, կողքից կախեց արծարյա փայլվիուն սուրբ և սկսել՝ երբ կկանչի թագավորը:*

- **զարդարված** - հարակատար դերբայ, կրավորական սեռ, ապա - ստորադասական շաղկապ
- **հազար** - ելունարիման պարզ բայ, անցյալ կատարյալ, մույկերը - գոյական, ի հոլովում
- **արևելյան** - ածական, երբ - հարաբերական դերանուն
- **սպասել** - անորոշ դերբայ, չեզոք սեռ, կկանչի - հարկադրական ապառնի, ներգործական սեռ

### 137. Տրված նախադասության ձևաբանական վերլուծության տարրերակներից քանիսո՞ւմ սխալ կա:

*Նրանք երկար ժամանակ շարունակեցին խոսել այդ դեսպրից՝ լիովին ամէացած ու ամրողովին կլանված դրանով, մինչև հապշտապ եկան ու հայտնեցին, որ զնացրի մեկնումի ժամը մոտ է, և անմիջապես պետք է երկարուղային կայարան գնալ:*

- **շարունակեցին** - ելունարիման պարզ բայ, անցյալ կատարյալ, մինչև - կապ, նախադրություն
- **ամէացած** - սուկածանցավոր բայ, հարակատար դերբայ, մոտ - կապ, հետադրություն
- **եկան** - անկանոն բայ, չեզոք սեռ, որ - ստորադասական շաղկապ
- **պետք է գնալ** - ալունարիման պարզ բայ, հարկադրական եղանակ, երկարուղային - ածական

### 138. Տրված նախադասության ձևաբանական վերլուծության տարրերակներից քանիսո՞ւմ սխալ կա:

*Հենց արեգակի առաջին ոսկեզօծ շողերմ ընկնում են զիշերվա՝ մարմինը սարսուցմող ցրտից սառած ժայռերին, քարակաքավը իմ՝ որ ու որ արաքարի բեկորի վրայից սկսում է անընդեղ երգել:*

- **որձաքարի** - ածական, **հենց** - սաստկական վերաբերական
- **սարսուցմող** - պատճառական բայ, ներգործական սեռ, **երգել** - վաղակատար ձևաբայ
- **ոսկեզօծ** - ածական, **ընկնում** են - սուկածանցավոր բայ, չեզոք սեռ
- **իմ՝ որ անորոշ դերանուն, սառած**- ելունարիման պարզ բայ, հարակատար դերբայ

### 139. Տրված նախադասության ձևաբանական վերլուծության տարրերակներից քանիսո՞ւմ սխալ կա:

*Իր տիտանական տաշտի մեջ հանդարտ ու մեղմորեն օրորվում էր հայոց երկնակարկան լեռների լազուր դշխուն՝ գեղամա կապուտաչ ծովակը՝ կոհակածուի մակերևույթի անդրորության տակ քարցնելով ալեհույզ հոգու խոռվը:*

- **իր-** անձնական դերանուն, սեռական հոլով, **մեղմորեն**- ածական
- **անդրորության**- գոյական, **ամ** արտաքին հոլովում, **լազուր**- ածական
- **օրորվում** **էր-** անկատար անցյալ, ներգործական սեռ, **դշխուն**- գոյական, որոշյալ առում
- **քարցնելով** - անորոշ դերբայ, ներգործական սեռ, **լեռների**- գոյական, **ամ** հոլովում

### 140. Տրված նախադասության ձևաբանական վերլուծության տարրերակներից քանիսո՞ւմ սխալ կա:

*Վաճականը, զգուշորեն շուրջորոշոր նայելով, քարնվեց քարձը որձաքարերի արանքում և ծոցից հանելով մի քառածալ մազաղար՝ անձկությամբ սկսեց ընթերցել:*

- **քարնվեց** - անցյալ կատարյալ, չեզոք սեռ, **շուրջորոշոր** - տեղի մակրայ
- **և** - համադասական շաղկապ, **լեռներցել** - վաղակատար դերբայ, ներգործական սեռ
- **հանելով** - անորոշ դերբայ, գրղծիական հոլով, **զգուշորեն** - ձևի մակրայ
- **անձկությամբ** - գոյական, **ամ** ներքին հոլովում, **մի** - անորոշ դերանուն

## II ՏԵՍԱԿ

**141. Որո՞նք են գլուխ բառի բառաձևերը.**

1. գլխի, 2. գլուխող, 3. գլխավոր, 4. գլխից, 5. անգլուխ, 6. գլուխներ, 7. գլխաբառ, 8. գլխիկ,
9. գլխատ:

**142. Որո՞նք են սոում բառի բառաձևերը.**

1. տներ, 2. տանս, 3. տնային, 4. անտուն, 5. տնից, 6. տնետուն, 7. տունդարձ, 8. տներով,
9. տնակ:

**143. Որո՞նք են գեղեցկանալ բառի բառաձևերը.**

1. գեղեցիկ, 2. գեղեցկացա, 3. գեղեցկություն, 4. պիտի գեղեցկանա, 5. տգեղ, 6. կգեղեցկանար,
7. գեղեցկաղեմ, 8. գեղեցկացող, 9. չի գեղեցկանա:

**144. Նշել այն բառերի համարները, որոնք տրված այունակներում սխալ են տեղաբաշխված՝ ըստ իրենց արտահայտած իմաստների.**

Նյութական իմաստ  
արտահայտող

Քերականական իմաստ  
արտահայտող

Վերաբերմունքային իմաստ  
արտահայտող

1. ցավոք
2. ամենքը
3. երբեք

4. ի պատիվ
5. օրոք
6. առթիվ

7. ի դեմս
8. ո՛չ
9. քնականաբար

**145. Նշել այն բառերի համարները, որոնք տրված այունակներում սխալ են տեղաբաշխված՝ ըստ իրենց արտահայտած իմաստների.**

Նյութական իմաստ  
արտահայտող

Քերականական իմաստ  
արտահայտող

Վերաբերմունքային իմաստ  
արտահայտող

1. այնքան
2. անշուշտ
3. սոուն

4. քանի դեռ
5. չէ՞ որ
6. շնորհիվ

7. այսինչ
8. ահա
9. չըլսկ

**146. Նշել այն բառերի համարները, որոնք տրված այունակներում սխալ են տեղաբաշխված՝ ըստ իրենց արտահայտած իմաստների.**

Նյութական իմաստ  
արտահայտող

Քերականական իմաստ  
արտահայտող

Վերաբերմունքային իմաստ  
արտահայտող

1. հոտնկայս
2. նկատմամբ
3. սա

4. թեև
5. զոնե
6. միասնաբար

7. իսկույն
8. սույն
9. ա՛յ

**147. Նշել այն բառերի համարները, որոնք տրված այունակներում սխալ են տեղաբաշխված՝ ըստ իրենց արտահայտած իմաստների.**

Նյութական իմաստ  
արտահայտող

Քերականական իմաստ  
արտահայտող

Վերաբերմունքային իմաստ  
արտահայտող

1. ըստ
2. չըխկալ
3. առաջնային

4. ո՛չ ... ո՛չ
5. հարկավ
6. առանց

7. բայց
8. ի դեպ
9. թերևս

**148. Նշել այն նախադասությունների համարները, որոնցում անձնանիշ գոյական կա:**

1. Մենք դիտեցինք զարմանահրաշ մայրամուտը, և խավարը սկսեց քանձրանալ:
2. Եղել են դեպքեր, երբ ապստամբները ցուցափեղկերն են ջարդել:
3. Նրանց քերածները ոչ մեկը չհավանեց, և նրանք որոշեցին այլևս չգրադարձել այդ գործով:
4. Նորարանակ վաշկասունները արագործեն հարմարվեցին պայմաններին:

**149. Նշել այն տարրերակների համարները, որոնցում *առաջարին կամ առ ներքին հոլովման ենթարկվող բառ կա:***

1. Կոստանդին կարողիկոսը խոսում էր ամենազբության և արդարացիության մասին:
2. Հրազդանը՝ որպես լեռնային ջրառատ գետ, մեծ մասամբ սնվում է բարձրաբերձ գագաթներից սկիզբ առնող ականակիտ աղբյուրներից:
3. Արին Բերդի պեղումների ժամանակ հայտնաբերվել է մեր քնօրանի ծննդյան վկայականը՝ Արգիշտի Առաջինի սեպագրերը:
4. Սուտրից դեպի ճախ՝ որմնախորշի մեջ, գտնվում է բազալտե քարը՝ Էրեբունիի հիմնադրման մասին Արգիշտի Առաջինի հայտնի սեպագրով:

**150. Նշել այն տարրերակների համարները, որոնցում *վա կամ ո՛ հոլովման ենթարկվող բառ կա:***

1. Տարիներ առաջ՝ աշնանը, պատահաբար ուղեկիցն էի դարձել հունար երկու նշանավոր գորոդների:
2. Թորի զյուտի համար մենք երախտապարտ ենք այն չինացուն, որը ք.ա. երկրորդ դարում փայտի և բույսերի մնացորդներից ստացավ քարակ և ողորկ մի նյութ:
3. Ծնողը պարտավոր է երեխայի մեջ դեռ մանկուց սեր սերմանել դեպի հայրենիքն ու մայրենին:
4. Թափորն ուղղվեց դեպի Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին. աջը տեղադրեցին բեմի վրա:

**151. Նշել այն նախադասությունների համարները, որոնցում որոշիչ հոդի սխալ գործածություն կա:**

1. Հերումի հրամանի համաձայն՝ արարողապետն հայտարարեց հանդիսության սկիզբը:
2. Համլետն որոշել է ամառային արձակուրդն անցկացնել գեղատեսիլ Արցախում:
3. Եթե Կրասոսը ուշիուշով հետևեր Արտավազի խորհրդին, ապա պարթևները չեն կարողանա դիմադրել նրանց:
4. Ժամանակակից տեսությունների ելակետի համաձայն՝ մոլորակներն, ինչպես նաև Արեգակը գոյացել են միջաստղային նյութից:

**152. Նշել այն հատվածների համարները, որոնցում *դիմորդ հոդ ունեցող բառ կա:***

1. Եվ ծվատված ձանձրույթն ամենքին մեջ  
Երազում է հիմա հնավաճառ միայն:  
...Եվ ամենքս ենք հիմա կիսով մենակ,  
Եվ ամենքս ենք հիմա կիսով տխուր:
2. Փակի՞ր աչքերդ, սիրելի՞ս,  
Սարսափով եմ ես մտածում,  
Որ կարող է այս անգամ էլ ես չսպանվեմ,  
Այլ ..... ավիրեմ քո աչքերը,  
Փակի՞ր աչքերդ, սիրելի՞ս....
3. Եվ այս ասում եք ո՞՛ Դուք, ո՞՛ Նրանք,  
այս ես ես ասում,  
Ես՝ Սիս-Մասիս,  
անդուլ-անդադար-անվերջ զնգացող իմ անքուն զանգով:
4. Աշխարհս մե փանջարա է, բաղերումեն բեզարիլ իմ...

**153. Նշել այն հատվածների համարները, որոնցում ստացական հող ունեցող մեկից ավելի քառ կա:**

1. Ընդունի՛ր սիրով, մեծազո՞ր Աստված,  
Աղաչանքները դառնացած սրտիս.  
Ամոքահարիս մոտեցի՛ր մեծիդ բարեգրությամբ...
2. Սակայն թող փշի քամիդ քաղցրաշունչ...  
Եվ իր գորությամբ ցամաքեցնի  
Բազմակինակ ու ջրակույտ շեղջերն  
Աշխարհակործան իմ հանցանքների  
Եվ լեռնակարկան բարձրություններով դիզված մեղքերս...
3. Կլինի՞ մի օր տարամերժ գերիս նորից ազատված:  
Լույսիդ շնորհից ընկածս արդյոք  
Կարո՞ն է հուսալ, որ կկազմուրվի:  
Պիտի ցույց տա՞ս ինձ ողորմածաբար  
Այնքան հարազատ պայծառությունը վայելչանքներիդ:
4. Շնորհի՛ր կրկին ողորմությունդ լրվածիս ամօք,  
Որպեսզի հզոր ամենակալիդ  
Գթառատ կամքի օժանդակությամբ  
Որոտա հոգիս ու վշտագնածիս աշքերով բիս  
Արտասուրների վարար վտակներ:

**154. Նշել այն հատվածների համարները, որոնցում մեկից ավելի ածական կա:**

1. Ո՞չ բուրիմ՝ ապահով մի ծածկ,  
Ո՞չ տորին ստվեր ենք փնտրել:
2. Ուրիշ տեսակ շողեր ընկան  
Մշոշների շաղոտ քողին:
3. Այնպես հպարտ է նայում աշխարհին,  
Կարծես հենց ինքն է բերել Նոր տարին:
4. Նա չի փոխում խոսքն իր արդար  
Ամենաբանկ քարերի հետ:

**155. Տրված ածականներից որո՞նք ունեն համեմատության աստիճաններ.**

1. քաղաքային, 2. միակ, 3. տիսուր, 4. խրթին, 5. բրոնզե, 6. համր, 7. կույր, 8. մերկ, 9. բորիկ:

**156. Տրված ածականներից որո՞նք ունեն համեմատության աստիճաններ.**

1. արծաթյա, 2. հրապուրիչ, 3. ազնիվ, 4. ապառիկ, 5. աշխարհիկ, 6. քաղաքային, 7. պիտանի,  
8. գողտրիկ, 9. կաղ:

**157. Տրվածներից որո՞նք են բաշխական թվականներ.**

1. միլիոն, 2. ութերորդ, 3. քառասունական, 4. յոթ-յոթ, 5. հինգհարյուրերորդ, 6. առաջին,  
7. տասնմեկ, 8. մեկ երրորդ, 9. վարսունինգ:

**158. Տրվածներից որո՞նք են բաշխական թվականներ.**

1. հարյուրերորդ, 2. վեցական, 3. հինգ-հինգ, 4. երկրորդ, 5. երեք հարյուրերորդական,  
6. տասնինգերորդ, 7. յոթական, 8. երկու հինգերորդ, 9. ութ-ութ:

**159. Նշել այն նախադասությունների համարները, որոնցում թվականի կազմության կամ գրության սխալ կա:**

1. Ներրովք լեռը հազար ութք հարյուր ութսուներկու թվականին նորից հայտնագործվեց զիտնականների կողմից:
2. Պատվանդանի վրա կանգնած է Մահագանդայի զանգը՝ ծուլված հազար յոթ հարյուր յոթանասունուր թվականին:
3. Զանգի քաշն է տասնեղ տոննա, բարձրությունը՝ երկուսուկես մետր, պատերի հաստությունը՝ եռեսուն սանտիմետր:
4. Հազար ինը հարյուր տասերեք թվականին Ֆրոբենիուսը հրատարակեց «Աֆրիկայի ձայն» գիրքը, որում, ինչպես իրեն թվում էր, համոզիչ կերպով ապացուցել է, որ Իֆեում հայտնաբերվել է իին հունական գաղութ, և այդ կորած գաղութը հենց Ատլանտիդան է:

**160. Նշել այն նախադասությունների համարները, որոնցում թվական կա:**

1. Իմ մահով ոչինչ չի փոխվի կյանքում,  
Եվ չի պակասի աշխարհում ոչինչ,  
Մի լույս կմարի հինգերորդ հարկում,  
Կմքնեն մի պահ աչքերը քո ջինջ:
2. Չորս կողմը սարեր են ծալ-ծալ,  
Եվ ծալ-ծալ ձորեր են այստեղ,  
Մի քերծի թիկունքին նստել,  
Դարձել եմ քարե մի հեծյալ:
3. Երկու քարի արանքում,  
Երկու դարի արանքում  
Հոգնել եմ իին ընկերի  
Ու նոր ցավի արանքում:

**161. Տրվածներից որո՞նք են որոշյալ դերանուններ.**

1. մի քանիսը, 2. ամենայն, 3. ոչինչ, 4. այնտեղ, 5. որտեղ, 6. միևնույն, 7. մյուս, 8. յուրաքանչյուր  
որ, 9. ուրիշ:

**162. Նշել այն հատվածների համարները, որոնցում դերանուն չկա:**

1. Հեղեղները չարանում են  
Եվ ամեն ինչ խառնում,  
Ալիքները քարանում են,  
Քարափները՝ քայլում:
2. Մեր տան պատից մի քար լիներ,  
Նստեի վրան  
Ու պատմեի անտուն կյանքին  
Հերթաքը նրան:
3. Ու գնացիր ու գնացիր,  
Արահետներ անցար ուրիշ,  
Խառնվեցիր ուրիշներին  
Ու քեզ համար դարձար ուրիշ:
4. Աշխարհում միշտ քաց են եղել  
Դոներս կրնկի վրա,  
Ելողին չեմ ասել՝ արի՝,  
Ստողին չեմ ասել՝ գնա՛:
5. Վեր թռա ինչ-որ կանչից,  
Տառապած բարձիս վրա  
Աշքից իրեն-իրեն  
Մի կարիլ արցունք ընկավ:

**163. Տրվածներից որո՞նք են որոշյալ դերանուններ.**

1. ամբողջ, 2. համայն, 3. ոմն, 4. մեկը, 5. յուրաքանչյուրը, 6. յուրաքանչյուր որ, 7. իրար,  
8. միմյանց, 9. մի քանի:

**164. Ո՞ր շարքերում տրված տեսակին չպատկանող դերանուն կա:**

1. սա, այսքան, սույն, միևնույն (*ցուցական*)
2. քանի՞, ինչո՞ւ, ո՞վ, ո՞ր (*հարցական*)
3. ուրիշ, ինչ-որ, բոլոր, որոշ (*անորոշ*)
4. ողջ, ամբողջ, յուրաքանչյուր, մի քանի (*որոշյալ*)

**165. Ո՞ր շարքերում տրված տեսակին չպատկանող դերանուն կա:**

1. ես, դու, ինքը, նա (*անձնական*)
2. մյուս, ինչ-ինչ, այսքան, այստեղ (*ցուցական*)
3. համայն, ամենայն, ոմն, յուրաքանչյուր որ (*որոշյալ*)
4. ոչ ոք, ոչինչ, ոչ մի, ոչ մեկը (*ժիշտական*)

**166. Տրվածներից որո՞նք են պարզ քայլեր (առանց քայլական ածանցի).**

1. հազնել, 2. խառնել, 3. թռի, 4. նեղարտեց, 5. վերածնել, 6. գտավ, 7. ընկած, 8. գոհանանք,  
9. սառեցնելիս:

**167. Տրվածներից որո՞նք են պարզ քայլեր (առանց քայլական ածանցի).**

1. նպաստեց, 2. կպավ, 3. կառչելով, 4. փախչելով, 5. հիմնում է, 6. ելնում է, 7. մեծանում եք,  
8. արել եք, 9. տարա:

**168. Տրվածներից որո՞նք են պարզ քայլեր (առանց քայլական ածանցի).**

1. ծեծկուտել, 2. կողովտել, 3. դնել, 4. ժպտալ, 5. բղավել, 6. կազմվել, 7. նվիրվել, 8. տրտմել,  
9. համարվել:

**169. Տրվածներից որո՞նք են պարզ բայեր (առանց բայական ածանցի).**

1. մըրոտվել, 2. դիմադրել, 3. գահակալել, 4. շուռ գալ, 5. հասկանալ, 6. աղտոտել, 7. թոցնել,
8. հնչել, 9. դիպչել:

**170. Նշել այն բաղադրիչ նախադասությունների համարները, որոնցում ածանցավոր բայ կա:**

1. Անցնելով հյուսիսային պարսպի ամբողջ երկարությամբ՝ նա վերջապես կանգ առավ այն խրճիքի լուսամուտի մոտ, 2. որտեղից առկայժում էր թեկրեկուն լույսը, 3. և ներս նայեց: 4. Խաչաձև ոտքեր ունեցող նեղլիկ մի սեղանի մոտ կանգնած էր տանտերը: 5. Լուսամուտի գողին այրվող մարիսն իր կարմիր շողերը սփոռել էր նրա առջև բացված հսկայական գրքի վրա:

**171. Նշել այն նախադասությունների համարները, որոնցում մեկից ավելի ածանցավոր բայ կա:**

1. Վրա հասավ գիշերը, և զարմանահրաշ մի երազ տեսավ Էակոսը. տատանվում էին կաղնու ճյուղերը, և մրջյուններն անձրևի նման ցած էին թափվում:
2. Մրջյուններն ավելի ու ավելի խոշոր էին դառնում. ահա նրանք շտկվեցին, անհետացավ նրանց գորշ գույնը:
3. Մեկ էլ հանկարծ ուժեղ աղմուկ բարձրացավ. Էակոսի ականջին դիպան ոտնաձայներ և մարդկային խոսքեր:
4. Պատահմամբ Էակոսի հայացքն ընկավ հազարավոր ժրածան մրջյուններով լեցուն այդ մրջնանցի վրա, և նա նկատեց, թե ինչպես են մրջյունները կառուցում իրենց մրջնային քաղաքը:

**172. Նշել այն հատվածների համարները, որոնցում սոսկածանցավոր բայ կա:**

1. Ես կուգենայի ստվերն իմ բոնել,  
Պատոռուել առանց խոճահարվելու:  
Եվ թշում է երգը նորից  
Եվ գնում է հեռո՛ւ - հեռու՝  
Հավերժի մեջ ոլորվելու:
2. Իմ երազների ծվենները տաք  
Ես բողել էի  
Բարձունքի ծաղկած ծառերի վրա:
3. Իմ վերիուշերի կապույտ աշխարհում  
Լեռները նորից երկինք են հազել,  
Երկինքուտվել են ուոքերս նորից:  
4. Լեռան բամբին հանգավ հրդեհն ամայի,  
Մոխրափոշին փլվեց լանջերն ի վար,  
Խառնվեցին ծալքերն արտ ու թամբի,  
Ու մոտեցան քիշ-քիշ լեռներն իրար:

**173. Նշել այն նախադասությունների համարները, որոնցում պատճառական բայ կա:**

1. Հասմիկի զվարք, կարկաչուն ծիծաղը, առինքնող խոսքը կենդանացրին ներկայացումը՝ համ ու բույր հաղորդելով նրան:
2. Նկարիչը զարմացած ուսանողին խնդրում է երկու օր հետո անցնել լուսանկարչատուն՝ նկարվելու պատմական սաղավարտով:
3. Բայրոնին ծանոթացրին վանքի հնագույն մագաղաթներին, ճարտարապետության հատընտիրներին:
4. Չուխաջանի երաժշտական լեզուն իր մեջ խտացրել է թե՛ հայկական քաղաքային երաժշտության, թե՛ արևելյան երաժշտության, թե՛ եվրոպական-իտալական երաժշտության տարրերը:
5. Իր մշակումներով Կարա-Սուրզան հարստացրել և գեղարվեստական նոր աստիճանի է բարձրացրել ժողովրդական երգը:

**174. Նշել այն նախադասությունների համարները, որոնցում մեկից ավելի անկախ դերբայ կա:**

1. Սպասուի գիտակցության մեջ անբաժան էին վառվող օջախն ու կրակին դրված կաթայիկը:
2. Թեյի տարավարում ընդունելություն կազմակերպելը նրա մտահղացումն էր, բայց բոլորն էին դրան պատրաստվել ամենայն բժախնդրությամբ:
3. Նա այդպես էր ամենքին խոստովանել, որ աղջկա հետ որոշել է ամուսնանալ ոչ թե իր կամքով, այլ հոր դրմամբ:
4. Անձրևը շարունակում էր ամիսնա հարվածել, և համալսարանի ուսանող աղջկա թիկնոցը ամբողջովին թրջվել էր:

**175. Տրված բայաձներից որո՞նք են ներկա ժամանակով.**

1. կա, 2. երդվել է, 3. ունենք, 4. չենք ուզում, 5. կհավատանք, 6. պետք է գանք, 7. նմանվել ենք,
8. չի մտածում, 9. չի հասկանա:

**176. Տրված բայաձներից որո՞նք են ներկա ժամանակով.**

1. ունեցել է, 2. ունի, 3. պետք է երդվի, 4. չի մնում, 5. գալիս ես, 6. չի լալիս, 7. հեռացի՛ր,
8. բարձրացանք, 9. ծարավես:

**177. Տրված բայաձներից որո՞նք են ներկա ժամանակով.**

1. չեք, 2. ասել եմ, 3. շիավատացիք, 4. բե՛ր, 5. չխաղացի, 6. չի պոկվի, 7. կանք, 8. լինում է,
9. լալիս է:

**178. Տրված բայաձներից որո՞նք են անցյալ ժամանակով.**

1. փախել է, 2. հուսար, 3. չի խարի, 4. կզգա, 5. պիտի մնա, 6. քոա, 7. կար, 8. վերցնեիր,
9. ցանկանան:

**179. Տրված բայաձներից որո՞նք են անցյալ ժամանակով.**

1. չի մոռացել, 2. չի մոռանա, 3. կորան, 4. պետք է լվանար, 5. ժպտան, 6. շմուեցրին, 7. իջա,
8. կպարի, 9. հարցնես:

**180. Տրված բայաձներից որո՞նք են ապառնի ժամանակով.**

1. մի՛ նստիր, 2. մտնեիր, 3. երգեմ, 4. երգեցի, 5. հուսամ, 6. կնվագես, 7. պետք է խուսափի,
8. երդվեց, 9. տարա:

**181. Տրված բայաձներից որո՞նք են ապառնի ժամանակով.**

1. հիշեմ, 2. չեք զրուցելու, 3. չկռվեցի, 4. ամփոփի՛ր, 5. արժի, 6. զիտեմ, 7. կմեկներ,
8. ցանկանանք, 9. պիտի ծաղկեր:

**182. Նշել այն հատվածների համարները, որոնցում լրջական կամ ենթադրական եղանակի բայաձն կա:**

1. Այս անտարբեր աշխարհին  
Ի՞նչ ասեմ, որ հասկանա:
2. Ինչե՛ր կային քո խանդավառ սրտում.  
Տիեզերական երազներ կային:
3. Վերջապես, աստված՝ քեզ կաղորեի,  
Որ դու այս թաքուն թեժության տեղակ  
Ինձ մի ցանաքյալ ցրտություն տայիր:
4. Երբ որ կամենաք, զնացեր-եկե՛ք,  
Հյուր եղեք նրանց Աղոթարանում:
5. Որպեսզի դու քո դեմքը չտեսնես,  
Փախչում ես անգամ լիճ ու լճակից:

**183. Նշել այն հատվածների համարները, որոնցում ենթադրական եղանակի բայաձն կա:**

1. Կիսորտակեմ կամարները երկնային,  
Ես չեմ թողնի, ես չեմ թողնի՝ դու մեռնիս:
2. Ծուտով կրի աղմուկը դաման,  
Ու սիրոս կզգա քայլելոյ փափուկ...
3. Երե ծնվեր երգը նրա  
Եվ կլկլար կոկորդն ի վեր,  
Ես տենչայի պիտի արդեն՝  
Ինձ այրեին ու կոփեին:
4. Անտառում ինձնից նեղացար,  
Թողեցիր մենակ, հեռացար,  
Կարծում ես՝ երբ դու զնացիր,  
Ես այնտեղ մենա՞կ մնացի:

**184. Նշել այն հատվածների համարները, որոնցում ենթադրական եղանակի մեջ ավելի բայաձև կա:**

1. Թողություն տուր, Տէր, ծանր խավարին, Սիայն թե թող նա թողնի, հեռանա:  
Թող ծառերն անգամ (առանց և քանու)  
Հարգանքով նրա առջև կեռանան,  
Սիայն թե թող նա թողնի, հեռանա:  
2. Մենք խստանում ենք,  
Եվ մենք խսպես  
Նրան չենք կարող ու չենք մոռանա,  
Սիայն թե թող նա թողնի, հեռանա:
3. Իսկ թե հարկ լինի, նամանավանդ պետք,  
Ես խավարի հետ կմեկնեմ ինքս՝  
Դառնալով նրա բազավորության  
Հին հապատակն ու նոր Քաղաքացին:  
4. Եվ եթե լինի,  
Հենց այսպես լինի,  
Իզուր չեմ գոչի ես «Եղիցի՝ լույս»,  
Այլ կշնչամ արդեն «Եվ եղի»:  
5. Ուր որ է կրկին կիշնի գիշերը,  
Բայց չենք մեռնի մենք.  
Մեր ապրած մահը և վերապրումը  
Կմամլենք կյանքի երեսի վրա:

**185. Նշել այն նախադասությունների համարները, որոնցում հարկադրական եղանակի բայաձև կա:**

1. Գործն առաջ չի գնա այնքան ժամանակ, մինչև ամեն քար նոր ձևով չտաշվի, իսկ դրա համար ժամանակ է պետք:
2. Դեկարտն ասում է, որ մենություն պետք է փնտրել մեծ քաղաքներում, և այդ նպատակի համար առաջարկում է Ամստերդամը:
3. Կրակը լույս ու ջերմություն է բերում և պետք է ամեն կենդանի էակի աճի ու զարգացման համար, բայց անզգույշ վարվելու դեպքում այն նաև այրում է ու ավերում:
4. Այսօրվանից այլևս չպետք է կարծեմ, որ այս խնդիրն ինձ համար չափազանց դժվար է:

**186. Տրվածներից որո՞նք են պարզ դիմավոր ձևեր.**

1. լաց մի՛ եղիք, 2. լաց չի լինի, 3. պետք է լաց լինի, 4. չի երգելու, 5. հպարտանում ենք, 6. չպետք է ընկճվենք, 7. չի խստանա, 8. ճանապարհ դրեցինք, 9. մի՛ ուշացրու:

**187. Տրվածներից որո՞նք են պարզ դիմավոր ձևեր.**

1. չեր հասցնի, 2. պետք է հասցնի, 3. զալիս է, 4. չելր գա, 5. չպետք է մոռանաս, 6. մի՛ հաշտվիր, 7. չհաշտվես, 8. չես հաշտվի, 9. պիտի հեռանաս:

**188. Տրվածներից որո՞նք են պարզ դիմավոր ձևեր.**

1. պիտի շտապենք, 2. չենք շտապի, 3. մի՛ շտապեք, 4. շտապելու ենք, 5. շտապեինք, 6. չի շտապի, 7. չպետք է շտապի, 8. չենք շտապելու, 9. կշտապեք:

**189. Տրվածներից որո՞նք են պարզ դիմավոր ձևեր.**

1. չի մերձենա, 2. աղոքը կանես, 3. գլուխ չդնես, 4. չես մեկնելու, 5. հարց մի՛ տուր, 6. հարց չի տալու, 7. պետք է երդվես, 8. չես երդվի, 9. պիտի զգաս:

**190. Տրվածներից որո՞նք են բաղադրյալ դիմավոր ձևեր.**

1. պետք է կարդալ, 2. չի զալիս, 3. մարդ է, 4. պետք է երգես, 5. գեղեցիկ է, 6. դուր է զալիս, 7. դերասան դարձավ, 8. երգուիհ էր, 9. չեր զրադկում:

**191. Տրվածներից որո՞նք են բաղադրյալ դիմավոր ձևեր.**

1. աշխատասեր էր, 2. հաճախել էր, 3. պետք է երդվես, 4. չես երդվի, 5. կտեղեկացներ, 6. մի՛ փիատվիր, 7. ցո՛յց տուր, 8. մա՛րդ եղիք, 9. պատիվ է տալիս:

**192. Տրվածներից որո՞նք են բաղադրյալ դիմավոր ձևեր.**

1. իրաշը է, 2. թվում է, 3. հարցաներ չէ, 4. չի ենթարկվում, 5. դուր չի զալիս, 6. պետք է դուր զա, 7. չի աշխատելու, 8. պիտի հարց տաս, 9. հետաքրքրվելու ենք:

**193. Տրվածներից որո՞նք են բաղադրյալ դիմավոր ձևեր.**

1. տխուր եմ, 2. զմացինք-եկանք, 3. չեմ հետաքրքրվի, 4. տարան-բերեցին, 5. համարձակվելու է, 6. չի հիշվի, 7. կընդդիմանա, 8. պետք է տար, 9. չեր ուրախանա:

**194. Տրվածներից որո՞նք են բաղադրյալ դիմավոր ձևեր.**

1. չեր հավատում,
2. պետք է մեջ ընկներ,
3. չի ընդունում,
4. չենք հետաքրքրվի,
5. տալիս էր,
6. վեր չի թռչի,
7. պետք է վեր կենա,
8. բաց մի՛ արա,
9. հարցնում էին:

**195. Տրված բայաձևերից որո՞նց կազմությունն է սխալ.**

1. փախի,
2. մեռնի,
3. մի՛ կեր,
4. հարցրեցի,
5. դառա,
6. կորել է,
7. սառչել էի,
8. խոսացնում է,
9. քռա:

**196. Տրված բայաձևերից որո՞նց կազմությունն է սխալ.**

1. կորչեցի,
2. կորչեմ,
3. կորչի՛ր,
4. կորած,
5. կորող,
6. կորել է,
7. կորա,
8. կորչում են,
9. կկորեմ:

**197. Տրված բայաձևերից որո՞նց կազմությունն է սխալ.**

1. անիրաժեշտ է թողել,
2. կփախնի,
3. հիշացնում է,
4. սառա,
5. դիպել եք,
6. մի՛ փախչի,
7. մի՛ մոտեցրու,
8. վերցրեցի,
9. մոտեցրիր:

**198. Տրված բայաձևերից որո՞նց կազմությունն է սխալ.**

1. փախչում է,
2. թռնելիս,
3. դիպչեցիք,
4. խոնավացնելիս,
5. պետք է թողնել,
6. չպիտի գլուխ լնես,
7. մի՛ երկնչիր,
8. կորի,
9. չեմ կորի:

**199. Տրված բայաձևերից որո՞նց կազմությունն է սխալ.**

1. խոսի՛ր,
2. պիտի կորչենք,
3. թռնում է,
4. մոտեցրի,
5. ծիծաղեցինք,
6. խոսած,
7. չեմ գալի,
8. խմի՛,
9. սրդողաց:

**200. Նշել այն հատվածների համարները, որոնցում մեկից ավելի չեզքը սեռի բայեր կամ:**

- |  |  |
|--|--|
| <ol style="list-style-type: none"> <li>1. Մշուշների շղարշի տակ<br/>Աշնան խաշամն է խշխչում,<br/>Քամու ձեռքերն ամհամարձակ<br/>Ամպի փեշերն են քաշքում:</li> <li>2. Որբան ինձնից հեռացել,<br/>Դուք ինձ միշտ եղալ եք մոտիկ,<br/>Մարդիկ, ինձ շատ եք շարչարել<br/>Բայց էլի դուք լավն եք, մարդիկ:</li> </ol> | <ol style="list-style-type: none"> <li>3. Ոտքիս տակ մի մեծ սար է սարսուում,<br/>Եվ գլխիս վերև երկինք է մի մեծ,<br/>Տիեզերքն իմ մեջ իրեն է փնտրում,<br/>Եվ գրնզում է տիեզերքն իմ մեջ:</li> <li>4. Կիսարթուս քամին կտորից թռչում,<br/>Ցանկապատին էր հենում կոճակը,<br/>Անթեղի վրա կատուն էր ննջում,<br/>Իսկ անթեղի տակ՝ հոգնած կրակը:</li> </ol> |
|--|--|

**201. Նշել այն բաղադրիչ նախադասությունների համարները, որոնցում կրավորական սեռի բայ կա:**

1. Հայոց ճարտարապետության ամենաէական հատկանիները ձևավորվել են չորրորդից վեցերորդ դարերի շինարարական փորձով,
2. և այս դարերից ժողովոյի կողմից խնամքով պահպանված մինչև անգամ փորբարանակ հուշարձանների մնացորդների վրա էլ հնարավոր է ցույց տալ զարգացման փուլերը:
3. Չորրորդից հինգերորդ դարերի հուշարձաններում դեռևս նկատելի է շինությունների տակ դրված եռաստիճան որմնախսարիխմների գոյությունը:
4. Եթե ուսումնասիրվող շրջանի ճարտարապետական ձևերի պատճեն է կազմում գմբեթը, ապա սա դարձյալ նախօրինակներ ունի հինգերորդ դարում,
5. որի օրինակն է երկրորդ դարի կեսերին կառուցված Տեկորի տաճարը:
6. Հինգերորդ դարում էր դարձյալ, երբ Վաղարշապատի բազիլիկան Մայր տաճարը վերակառուցվեց,
7. դարձավ խաչաձև կառուցվածք ունեցող կենտրոնագմբեթ շինություն:

**202. Նշել այն հատվածների համարները, որոնցում անկանոն կամ պակասավոր բայ կա:**

- |   |   |
|---|---|
| <ol style="list-style-type: none"> <li>1. Սորս արցունքի պարզությունն ունեք,<br/>Գոհա՛ր կաթիլներ գարնան անձրեի,<br/>Դուք անհուն երկնի աչքից եք մադում,<br/>Երկինքը նրա դեմքն է երկնի:</li> <li>2. Գովերգելով լավն ու բարին,<br/>Կոյիվ տարով չարերի հետ՝<br/>Քառորդ մի դար խոսում է նա<br/>Հայոց հին-հին դարերի հետ:</li> </ol> | <ol style="list-style-type: none"> <li>3. Ուկի բոցեր են դառնում ամպերը<br/>Նրանց բորբոքուն խարույկներին,<br/>Չընաղ են որպես առավոտները<br/>Սայրամուտները մեր լեռնային:</li> <li>4. Ի՞նչ իմանայի, որ պիտի մի օր<br/>Քունքերիս ճերմակ մազեր երևան,<br/>Դու՝ հավերժական, իսկ ես՝ անցավոր,<br/>Իմ երիտասա՛րդ, իմ նո՛ր Երևան:</li> </ol> |
|---|---|

**203. Նշել այն նախադասությունների համարները, որոնցում մեկից ավելի անկանոն կամ պակասավոր բայ կա:**

1. Մովսեսը նոյնապես պատվիրեց երեխաներին պինդ պահել և ջանալ կատարել պատվիրանները;
2. Մովսեսը իսրայելացիներին ասաց. «Զգո՞յշ եղեք, չմոռանաք այն Աստծուն, որ Եգիպտոսից դուրս բերեց ձեզ»;
3. Մի՛ արեք այնպես, որ մեր տվածից մենք փոշմանենք;
4. Մեզ ելնելու սարեր կան դեռ:

**204. Նշել այն հատվածների համարները, որոնցում մակրայ կա:**

1. Սև տագմապները իմ սիրտը լցրին.  
Արդյոք ո՞ւր ես դու, իմ անո՞ւշ երազ:
2. Կանչում է կրկին, կանչում անդադար  
Էն չընադ երկրի կարոտը անքուն,  
Ու թերն ահա փոսած տիրաբար՝  
Թոշում է հոգիս, թոշում դեպի տուն:
3. Պարզապես շուտ եմ եկել հանդիպման.  
Սիրուց չեմ զգում ո՞չ ձյուն, ո՞չ սառույց,  
Ի՞նչ մեղավոր եմ, որ ես այս անգամ  
Իմ սիրտն եմ ընտրել որպես ժամացույց:
4. Եվ օրն առած կոպերիս տակ՝  
Այսպես ամեն իրիկուն  
Դատարկ հոգով ելնում քաղաք,  
Լցված հոգով դառնում եմ տուն:

**205. Նշել այն հատվածների համարները, որոնցում մակրայ կա:**

1. Այնտեղ է հիմա հոգիս թափառում,  
Ուր օրորվում է իմ Նախրյանը:
2. Հեռովից զալիս ես և հեռանում ես  
Դու մի քմահաճ արագությամբ:
3. Ամեն առավոտ հուշերս նորից  
Ինձ տանում են այն զմրուխտե հեռուն:
4. Ես ընդունում եմ զարունն այս տարի  
Հեռու, անձանոք դաշտավայրում,  
Լեռնալանջերում օտար աշխարհի:

**206. Նշել այն հատվածների համարները, որոնցում ստորադասական շաղկապ կա:**

1. Ծատ եմ թիավարել ես ծանծաղուտներում,  
Որ ամրանա հոգիս, որ թերս մարզեմ:
2. Եթե ես մի օր աշխարհից գնամ,  
Էլ ո՞ւմ հովերն են քեզ օրորելու:
3. Դու նազում էիր, շորորում էիր,  
Երբ անցնում էիր մեր տաճ մոտով:
4. Թեկուզ յոթ քայլ է մեր արանքում,  
Քայց անջատված ենք յոթ աշխարհով:
5. Դու ոչ թե խոսում, այլ երգում էիր,  
Ականջ էր անում լեռնաշխարհը քեզ:

**207. Ո՞ր շարքերում տրված խոսքի մասին չպատկանող բառ կա:**

1. կարկաչուն, միտողանի, քառակողմ, լուսավոր (*ածական*)
2. երրորդ, երիցս, միլիարդ, տասական (*թվական*)
3. ովկէ, որկիցե, ինչեիցե, համայն (*դերանուն*)
4. քազմիցս, հոտնկայս, նախապես, հիմնովին (*մակրայ*)

**208. Ո՞ր շարքերում տրված խոսքի մասին չպատկանող բառ կա:**

1. վիշտ, քայլերգ, ուսում, այգեստան (*գոյական*)
2. մրահնն, դժգոհ, հրեղեն, քանջարեղեն (*ածական*)
3. միլիոն, քառորդ, տասներորդ, երկրորդ (*թվական*)
4. քանիերորդ, քան, սա, ողջ (*դերանուն*)

**209. Ո՞ր շարքերում տրված խոսքի մասին չպատկանող բառ կա:**

1. ամբողջ, ամենուր, մի քանի, սույն (*դերանուն*)
2. յուրովի, միասնական, դեսուդեն, քանիցս (*մակրայ*)
3. վերաբերմանք, առընթեր, օգտին, օրոր (*կապ*)
4. ո՞չ, թե՛....թե՛, մինչեն, թեկուզ (*շաղկապ*)

**210. Ո՞ր շաբթերում տրված խոսքի մասին չպատկանող բառ կա:**

1. դեմ դիմաց, ըստ երևոյթին, լոելյայն, բազմիցս (*մակրայ*)
2. ընդեմ, ի փառս, զատ, համեմատ (*զապ*)
3. այսինքն, ոչ....ոչ, ուրեմն, ոչ միայն...այլև (*շաղկապ*)
4. միմիայն, միևնույն, բարերախտաբար, իրավամբ (*վերաբերակամ*)

**211. Տրված նախադասության մեջ ստորև նշվածներից որո՞նք կան:**

*Չարաճճի փորրիկի երեսից միշտ տուժում էր նրա ավագ եղբայրը:*

1. կապ
2. անձնական դերանուն
3. մակրայ
4. անդեմ բայ
5. հատուկ գոյական

**212. Տրված նախադասության մեջ ստորև նշվածներից որո՞նք կան:**

*Երբեք նրան այդքան հուսահատված ու դառնացած չէի տեսել:*

1. ածական
2. անորոշ դերանուն
3. ժամանակի մակրայ
4. չափի մակրայ
5. դիմավոր բայ

**213. Տրված նախադասության մեջ ստորև նշվածներից որո՞նք կան:**

*Խնդրեմ, կարող եք վերցնել զիրքը. նա ինձ այլևս պետք չէ:*

1. ժամանակի մակրայ
2. վաղակատար դերբայ (ձևաբայ)
3. վերաբերական
4. ցուցական դերանուն
5. ժխտական դերանուն

**214. Տրված նախադասության մեջ ստորև նշվածներից որո՞նք կան:**

*Թեպետ երկար ժամանակ վաստառող էր, այնուամենայնիվ կարողանում էր կատարել իրեն հանձնարարվող բոլոր գործերը:*

1. որոշյալ դերանուն
2. շաղկապ
3. վերաբերական
4. ածական
5. անորոշ դերբայ

**215. Տրված նախադասության մեջ ստորև նշվածներից որո՞նք կան:**

*Ուր էլ լինեմ, չեմ մոռանա ես ողբածայն երգերը մեր:*

1. հարցական դերանուն
2. ձևի մակրայ
3. դիմավոր բայ
4. ստորադասական շաղկապ
5. ածական

**216. Տրված նախադասության ձևաբանական վերլուծության տարրերակներից որոնցո՞ւմ սխալ չկա:**

Նայում էր Ուկանը մոմի՝ հոգեվարք ապրող թրթռացող բոցին և զգում՝ ինչպես իր սիրում էլ է արտասպում ու հապում այդ միայնակ մոմի պես, որից նա լույս էր աղերսում իր վիրավոր հայրենիքի համար:

1. **Էլ** - համադասական շաղկապ, **արտասպում է** - անկատար ներկա, չեզոք սեռ
2. **ինչպես** - հարաբերական դերանուն, **համար** - կապ, հետադրություն
3. **նայում էր** - սահմանական եղանակ, չեզոք սեռ, **որից** - հարաբերական դերանուն
4. **ապրող** - պարզ բայ, ենթակայական դերբայ, **այդ** - ցուցական դերանուն

**217. Տրված նախադասության ձևաբանական վերլուծության տարրերակներից որոնցո՞ւմ սխալ չկա:**

*Մընեց. շառաչուն քամին հնալով փարփում էր ծառերին, ու ճյուղերը, ասես վախենալով մրսելուց, փարաքփում էին միմյանց, խշում ինչ-որ անմենելի սարստոռով՝ խորին քախիծով ու անձկությամբ պարուրելով սուրբ մարդու սիրութ:*

1. **մքնեց - ե** խոնարհման ածանցավոր բայ, անցյալ կատարյալ, **ասես** - վերաբերական
2. **միմյանց** - փոխադարձ դերանուն, **վախենալով** - անորոշ դերբայ, չեզոք սեռ
3. **ինչ-որ** - անորոշ դերանուն, **անձկությամբ - ա** ներքին հոլովման գոյական, գործիական հոլով
4. **փարփում էր** - անկատար անցյալ, կրավորական սեռ, **սուրբ** - ածական

**218. Տրված նախադասության ձևաբանական վերլուծության տարրերակներից որոնցո՞ւմ սխալ չկա:**

Նայում ես կյանքիդ անցած ճանապարհին, երբ ծանր են եղել թեթև կարիքները, երբ ճյունը նստել է ոչ թե զիսիդ, այլ վշտամորմոր հոգուդ վրա, բոլոր տեսած ու չտեսած անորջներիդ վրա:

1. **անցած - ե** խոնարհման պարզ բայ, հարակատար դերբայ, **ոչ թե** - համադասական շաղկապ
2. **բոլոր** - որոշյալ դերանուն, **եղել են** - անկանոն բայ, չեզոք սեռ
3. **թեթև** - ձևի մակրայ, **տեսած** - սոսկածանցավոր բայ, ներգործական սեռ
4. **ճյուն ես** - բաղադրյալ ժամանակածն, չեզոք սեռ, **ճյունը - ա** ներքին հոլովման գոյական, ուղղական հոլով

**219. Տրված նախադասության ձևաբանական վերլուծության տարրերակներից որոնցո՞ւմ սխալ չկա:**

*Ես, սակայն, վայրկյաններ անց սրափփում էի, և հօդս էին ցնդում մոտացածին երևակայություններս. դարձյալ հայտնվում էի մեր՝ փարթամ կանաչի մեջ քաղված փողոցում՝ միշտ բանուկ, եռուգեռով լի:*

1. **սրափփում էի** - անկատար անցյալ, չեզոք սեռ, **սակայն** - համադասական շաղկապ
2. **երևակայություններս - ա** ներքին հոլովման գոյական, **միշտ** - ժամանակի մակրայ
3. **մեր** - անձնական դերանուն, սեռական հոլով, **մտացածին** - ածական
4. **քաղված** - անդեմ բայ, հարակատար դերբայ, **բանուկ** - գոյական, ուղղական հոլով

**220. Տրված նախադասության ձևաբանական վերլուծության տարրերակներից որոնցո՞ւմ սխալ չկա:**

*Քյուր ծաղիկների արրշիո բույրերը տարածվել էին անդնդախոր կիրճերում, ուր բարձրաբերձ լեռնաշղթաններից գոռում- գոչունով գահավիժում էին ականակիտ աղբյուրների պաղպաջուն ջրերը՝ համբուրելով խորդուրորդ քարափիները:*

1. **բյուր** - թվական, **ուր** - հարաբերական դերանուն
2. **տարածվել էին** - գաղակատար անցյալ, կրավորական սեռ, **պաղպաջուն** - ածական
3. **բույրերը** - հասարակ գոյական, որոշյալ առում, **գահավիժում էին** - պարզ բայ, բաղադրյալ ժամանակածն
4. **համբուրելով** - անորոշ դերբայ, ներգործական սեռ, **անդնդախոր** - ածական

## ԲԱԺԻՆ 4 ԾԱՐԱՀՅՈՒՍՈՒԹՅՈՒՆ

### I ՏԵՍԱԿ

#### 1. Տրված հատվածներում դերանունով արտահայտված քանի՞ ենթակա կա:

- Թե ծառ լինեիր,  
Դու կարտասվեիր սեփական խեժով  
Եվ քո կենով քեզ շրջափակած՝  
Չեզ կրուժեիր:
- Ես վախենում եմ, շատ եմ վախենում,  
Բայց ոչ ինձ համար,  
Այլ լոկ քեզ համար:
- Երբ մարդ երե իր բերանին կապ չի դնում,  
Ապա նրա ձեռք ու ոտքին  
Ուրիշներն են դնում կապանք:  
• Զգիտեմ՝ կյանքը ինձ ուր է տանում.  
Ամեն ինչ հարց է, մթին հանելուկ:

#### 2. Տրված հատվածում քանի՞ պարզ ստորոգյալ կա:

Տարիներ անց՝ 1956 թվականի գարնանը, մենք հանդիպեցինք Օտարյան ազգանունով մի տիկնոց, որի մասին ասել էին, թե նա Սոֆյա Օտարյանի (Տերյանի մտերմուիխն) քույրն է: Սա հաստատեց այդ լուրը և առանձին մի հապատությամբ ավելացրեց, որ ինքը ևս ծանր է Վ. Տերյանին, և, որ ամենազլիսավորն է, նշանավոր բանաստեղծը իր «Հրաշք աղջիկ» բանաստեղծությունը գրել է իր հետ ծանրանալուց հետո, այսինքն՝ ինքն է դարձել բանաստեղծության բնորդություն:

#### 3. Տրված հատվածում քանի՞ բաղադրյալ ստորոգյալ կա:

Դու քո խաղողի նման ես եղել.  
Կոտրատել են քեզ, հողի մեջ թաղել,  
Բայց երբ անցել են ցրտերը ձմռան,  
Հողի մեջ թաղված վազերիդ նման  
Դու մի նոր ուժով նորից ընձյուղել,  
Կորված ճյուղերով ես վերստին ուղրել:

Եվ երե կրկին կորվել ես, արդեն  
Ողկույզների տակ այն աղամանդե,  
Որ ճաքճրել են քո քաղցրությունից,  
Մինչ դառնությունի դարձել է զինի:

#### 4. Տրված հատվածներում քանի՞ բաղադրյալ ստորոգյալ կա:

- Ես պիտի դուրս գամ դեպի հրապարակ  
Առանց քնարի, անզարդ խոսքերով...
- Ես մի ճամփորդ եմ մքնում մոլորված,  
Ու հոգնած սիրտս դարձել է խոնարի...
- Կարծես թե դարձել եմ ես տուն,  
Բոլորն առաջվանն է կրկին...

- Երգ իմ, նման ես քո ստեղծողին,  
Նրա պես քննի ես և աշխարհինն ես,  
Քո այս աշխարհի հող ու քարինն ես,  
Դու ուրից գլուխ քո այս դարինն ես...

#### 5. Տրված հատվածում գոյականական անդամի քանի՞ լրացում կա:

Երեկոն բանձրանում էր Ավարայրի դաշտավայրում: Պարսից զորքը սկսեց գունդ առ գունդ առաջանալ դեպի գետի եզերքը: Հայկական զրաբանակը նույնական սկսեց տեղաշարժել, մեջընդմեջ դասավորվել՝ խիստ շարքեր կազմելով: Վարդանը երկար խորհում էր և խորհրդակցում՝ ում նշանակի որպես զորագլուխ:

#### 6. Տրված հատվածում գոյականական անդամի քանի՞ լրացում կա:

Ամենափառահեղ ամրոցում ապրում էր Էյերոսն իր կնոջ հետ, մյուսում՝ նրա որդին՝ Արսիրտոսը: Երբ Յատնն իր ուղեկիցների հետ Էյերոսի պալատի բակը մտավ, իր ապարանքից դուրս եկավ Սեղեան: Նա զարմանքից ճշաց՝ տեսնելով օտարերկրացիներին: Աղմուկի վրա դուրս եկավ Էյերոսը և պալատ հրավիրեց հյուրերին: Նա սպասավորներին կարգադրեց ճոխ խնջույքի պատրաստություն տեսնել:

## 7. Տրված հատվածում գոյականական անդամի քանի՞ լրացում կա:

Այս սրտում՝ իշել է մայրս լեռներից՝ իր մեջքին զգալով փոքրիկ արարածի գոյությունը, իշել է ամսերի միջից: Պետք է որ մայրս անասելի բերկրանք զգար իր սրտի տակ բարի արևից ջերմացած այն հովհտն իշնելիս:

## 8. Տրված հատվածում քանի՞ որոշիչ կա:

Սանդուղքի վրա լսվեց վերև բարձրացող ինչ-որ մարդու ոտքերի ձայնը: Իր ալեկոծ մտքերին անձնատուր՝ անաղմուկ քայլերով մտավ նախասենյակ: Անտառի զմրուխտ թափուտներից եկող զովը մի պահ հասավ իրեն, բայց թուուիկ հայացքով նայելով անորոշ ուղղությամբ՝ նա նորից փակեց փեղկը՝ լարված սպասելով լուրի:

## 9. Տրված հատվածում քանի՞ որոշիչ կա:

Թութանհամոնք գինու սիրահար է եղել. այսպիսի եզրահանգման են եկել փարավոնին ուսումնասիրած գիտնականները՝ հաշվի առնելով և այն հանգամանքը, որ Եգիպտոսում գինին համարվել է բացառիկ ըմպելիք: Գտնված շշերի վրա եղել են մանրակրկիտ տեղեկություններ հարուստ բերքի մասին և խաղողագործի անունը:

## 10. Տրված հատվածներում քանի՞ որոշիչ կա:

- Իմ սրտում միայն սառած հեկեկանք,
- Բայց արցունք չկա իմ սև օրերում:
- Չո՞ պայծառ գահի անհաս բարձունքից  
Մի՛ մերժիր սրտիս աղոքքը անբիծ:
- Իմ շիրմին դալկացող ծաղիկներ՝  
Որ խաղաղ ու հանդարտ մահանան:

## 11. Տրված հատվածներում քանի՞ որոշիչ կա:

- Բախստավոր եմ ես, որ այս առավոտ  
Կարող եմ բռնել կածանն այս քարոտ:
- Ասում են՝ հեռու Եփրատն է մի օր  
Օրորել մաքուր իմ հոգու քունը:
- Մաշում է իմ սիրտն անդադար  
Հին երգ մի՝ ծանոթ ու տրտում:

## 12. Տրված հատվածներում ածականով արտահայտված քանի՞ որոշիչ կա:

- Այստեղ փողոց կա նախրյան,  
Քարե մաշված մայթեր:
- Ես հաշտ եմ ապրում իմ բախտի հետ  
Ու տարբերում հստակ շարն ու բարին:
- Ասում են՝ իին վերքը հաճախ է ցավում,  
Երբ եղանակը ամպոտ է ու վատ:
- Ների՛ր, սիրելի՛ ս, ների՛ր ինձ լուռ,  
Որ քո քննուշ նազանքի տակ  
Ես չեմ տեսել քո սիրտը տաք  
Եվ արտասուրիդ լույսը մաքուր:

## 13. Տրված հատվածներում դերքայով արտահայտված քանի՞ որոշիչ կա:

- Սիրում ենք մենք կարդալ  
Աղջկների հայացքը խոռովող:
- Մի ցուրտ, կտրտված երազ.  
Ես նրան էի փնտրում օտար, հեռու քաղաքում:
- Հարբած, հոգնած տերն ու զորքը  
Մրափում են խավարում:
- Տաճարի շուրջ՝ սուրբ-սուրբ վանքեր,  
Հնչող, շնչող, կանչող զանգեր:

## 14. Տրված հատվածում քանի՞ հատկացուցիչ կա:

Միջանցքի երկար, կոշտ ու կոպիտ տաշված դրմերը ձեղնահարկի տարբեր հատվածներն էին տանում, ու թեև լույսի ոչ մի ճառագայթ անմիջաբար ներս չեր թափանցում, միջանցքի այդ հատվածում այնքան էլ մուր չեր. տարբեր կողմերում դեպի դուրս բացվող նեղ լուսամուտներ կային:

## **15. Տրված հատվածում քանի՞ հատկացուցիչ կա:**

Քացվեց մեր պարտեզի դրույկը, և դրան բարձր ձայնու խլացրեց այն բացողի թույլ կանչը, որ մի կարճ ժամանակ բրթուաց վայրի թիկերի ու երիցուկների վրա՝ բախվելով ծեփը թափած մի պատի:

## **16. Տրված հատվածում քանի՞ հատկացուցիչ կա:**

Մայիսյան ամպրովների ժամանակ, երբ անլույս պատուհանների մոտով դարպասի տակ էր հավաքվում ջուրը, մարդիկ, կարտոֆիլի վրա աճած ծիլերը մաքրելով, դրանք զցում էին իրենց բուխարիների մեջ վառվող թեժ կրակների մեջ՝ շմտածելով ոչնչի մասին:

## **17. Բայական անդամի քանի՞ լրացում կա տրված հատվածում:**

Երբ ձանձրացավ դատարկ փողոցին նայելուց, պառկեց բազմոցին, իսկ մինչ այդ փոքր ճեղքի չափ բացեց սենյակի դուռը, որ պառկած տեղից տեսնի ամեն ինչ:

## **18. Բայական անդամի քանի՞ լրացում կա տրված հատվածում:**

Կիսաքնած պառկեց մինչև ժամը տասնմեկը, իետո որոշ ժամանակ գրաղված էր սիզար ծիլելով, դեափի վեր օղակներ բաց բողնելով:

## **19. Բայական անդամի քանի՞ լրացում կա տրված հատվածում:**

Լուսնյակ գիշերներին, երբ գյուղը քնած էր բեզարած մրափով, հովը սառնություն էր բերում ցերեկվա շոգից խանձված դաշտերին, արագիլը հանգստանում էր, որ լուսաբացին իջնի ճահճուտի վրա, Լառ-Մարգարը մինչև լուսաբաց աշխատում էր:

## **20. Տրված նախադասության մեջ քանի՞ խնդիր կա:**

Անդրոն հանկարծ հիշեց հորը, որ, նույն քարի տակ նստած, տրեխի փոկ էր քաշում, և մորը, որ ջրում գրտնակով բուրդ էր լվանում, և իրեն, որ նստել էր այդ որձաքարերին և երգում էր:

## **21. Տրված նախադասության մեջ քանի՞ խնդիր կա:**

Ես, չնայած անհամբերության, ուշադիր լսում էի ընկերոջս, և թեպետ ծառերը դարձյալ ճյուղերը կախել էին ճանապարհի վրա ու քամուց տարրութերվում էին, բայց այլևս մտրակով չէի պոկում նրանց տերևները:

## **22. Տրված հատվածում քանի՞ ուղիղ խնդիր կա:**

Ու հենց կուսակալը կորցրեց կապն այն ամենի հետ, ինչ շրջապատում էր նրան իրականում, հանկարծ լույսի ցոլը կուրացրեց աչքերը: Նա ճեղքով ծածկեց դեմքը՝ պաշտպանվելով իրեն սպառնացող անհայտ վտանգից:

## **23. Տրված հատվածում քանի՞ ուղիղ խնդիր կա:**

Թե ուր գնացին Հուդային սպանած երկուսը, չիմացվեց, բայց թողնելով ծանոթ արահետը՝ նա խորացավ ձիթենիներով շրջապատված տարածքը՝ քասակի ոսկիները շպրտելով իր շուրջը հայտնվող մուրացիկներին, ձեռքի դրացող ափերը անցորդներին ուղղած:

## **24. Տրված հատվածում քանի՞ ուղիղ խնդիր կա:**

Քամին հալածում է մառախուղի թանձը քուլաները: Մառախուղի փեշերից ցցվում են պղնձագույն ժայռերի հիմանվորց գագաթները: Քարափոր տների երդիկներից կապույտ ծովիսը ձգվում է դեափի վեր և լիզում խոնավ ժայռերը:

Գարնան մթնկա գիշերներին ջրի վշշոցը ահարկու սարսափ է տարածում գետափի տներում, ձորերում: Մթության մեջ առկայժող աստղերը կախարդական կանքեղներ են թվում:

**25. Տրված հատվածում քանի՞ ուղիղ խնդիր կա:**

Յուրաքանչյալ, մութ՝ իմ ուղին,  
Սրտում՝ մահ և աշուն,  
Սոռացել եմ ես ամենքին,  
Միայն քեզ եմ ես իշխում...

Սիայն քեզ եմ ես աղոթում,  
Քո հրաշքին անպատիր.  
Հայտնվի՛ր սև անապատում,  
Ամոքի՛ր ու ազատի՛ր...

**26. Տրված հատվածում քանի՞ ուղիղ խնդիր կա:**

Այս գիշեր տեսա մի անուշ երազ.  
Ես հայրենի տունն էի նորոգում,  
Սանկուրյան երկինքն էր բացվել վրաս,  
Եվ արշալույսներ կային իմ հոգում:

Երդիկից կաթած շողն արեգական  
Թվում էր հոգուս ուկյա բանալի:  
Արևն էր նայում աշքով հայրական,  
Եվ քաղցր էր աշխարհն ու հասկանալի...

**27. Տրված հատվածում քանի՞ հանգման խնդիր կա:**

Նա համոզվեց, որ կառավարիչը խարում է իրեն. նրան հասավ կողքի սենյակից եկող քչփշոցը, և տնտեսագետին վերստին թվաց՝ իր մասին են խոսում այն երկուսը՝ քննելով ստուգումներին վերաբերող դեպքերը: Բայց վստահ չէր լսածին և հենվելով դրանք՝ լարեց լսողությունը:

**28. Տրված հատվածում քանի՞ հանգման խնդիր կա:**

Նրան հեռագիր էի ուղարկել ու ամեն օր անհամբեր սպասում էր մտերիմիս հայտնվելուն՝ հույս դնելով նրա ազդեցության ու ճարպկության վրա, բայց երազին գերի չդառնալու համար ուզում էր մտածել, թե ինչի կհանգեցնի իմ դանդաղկոտությունը նրա շգալու և չմիջամտելու դեպքում:

**29. Տրված հատվածում քանի՞ անուղղակի խնդիր կա:**

Տիկինը մտսեցավ դատավորին և բրթուացող ձայնով դիմեց նրան.

- Թեև դժվար է մեր օրերում որևէ մեկին հավատալ և մեկից օգնություն ակնկալել այնուամենայնիվ ես վստահում եմ Ձեզ, խնդրում եմ՝ կարդաք դիմում և ծանոքանաք այս գործին: Հուսով եմ՝ կարդարացներ իմ հույսերը:

**30. Տրված հատվածում քանի՞ ժամանակի պարագա կա:**

Հազրոյից բացի ոչ ոք ձմեռնամուտի այս առավոտ այսն կարիք չուներ: Հազրոն տալիս-առնուն էր՝ խնդրի՞ն նախագահին, թէ՞ ոչ: Եվ հիմա՝ այս առավոտ, որոշեց չիմել:

Լույսը շբացված՝ Հազրոն հագնվել էր և ծխում էր: Թվում էր՝ արեգակն այլևս չի հայտնվելու:

**31. Տրված հատվածում քանի՞ պարագա կա:**

Եվ իմ բորիկ մայրը լեռան լանջով ամպամած բարձունքից քայլել է դեպի Դիլիջանի հովիտը: Քայլել է դեպի տաքը, դեպի արևը՝ իր վերջին զավակին զազազած տարերքից փրկելու:

**32. Տրված հատվածում քանի՞ պարագա կա:**

Մայրը գրկում է հիվանդ երեխային և կեսգիշերին գնում ծնողների մոտ, սակայն Հակոբի ահից ծնողները չեն համարձակվում նրան ընդունել իրենց հարկի տակ, և մյուս առավոտ նա վերադառնում է ամուսնու տուն:

**33. Տրված հատվածում քանի՞ պարագա կա:**

Հաջորդ գարնանը մեր արագիլը եկավ մեն-մենակ: Բույնը դիտելուց հետո գնաց կանգնեց ճահճում՝ կնոջ զարկված տեղի վրա, երկար կանգնեց և եկավ բույնը:

Եվ ամեն օր գնում էր նա այնտեղ, ժամերով կանգնում մի ոտքի վրա:

**34. Տրված հատվածում քանի՞ պարագա կա:**

Այստեղ ամեն օր տիրությամբ երկար  
Իմ սիրտը քեզ է երազում, և այն,  
Եվ այն, որ չկար, և այն, որ չկար...  
Այս, գուցե կար, բայց արդեն հավիտյան...

**35. Տրված հատվածում քանի՞ պարագա կա:**

Ի՞նչ բախտ էր նստել քեզ հետ միայնակ,  
Ողջը մոռացած բերկությամբ անփոյթ,  
Քո նուրբ գրուցով արբենալ անհազ.  
Իսկ հիմա ողջը սուտ է ու ձանձրույթ...

**36. Տրված հատվածում քանի՞ պարագա կա:**

Եվ խոնարհվում է իմ սիրտը հանկարծ  
Եվ զգում է խոր, անսասան ու պարզ,  
Որ ողջ աշխարհն է այդպես անխնդում,  
Որ մենք բոլորս որբեր ենք անտուն...

**37. Տրված հատվածում քանի՞ պարագա կա:**

Գիշերվա փողոցները բափուր  
Շրջեցի տրտում ու միայնակ,  
Խոհերով՝ և քաղցր, և տխուր,  
Երազով՝ դյութական ու հստակ...

**38. Տրված հատվածում քանի՞ պարագա կա:**

Անաղմուկ, անտրտունջ, անհնչյուն  
Գալիս ես ու նորից հեռանում,  
Ու հեռվից դյութում ես ու կանչում,  
Լուսերեն ս, աննարմին, անանուն...

**39. Նշված հոլովներից քանիսո՞վ կարող է դրվել ժամանակի պարագան.**  
բացառական, գործիական, ներգոյական:

**40. Նշված հոլովներից քանիսո՞վ կարող է դրվել հիմունքի պարագան.**  
բացառական, գործիական, ներգոյական:

**41. Տրված նախադասության մեջ քանի՞ դերբայական դարձված կա:**

Ահա այդ միջավայրում մի օր՝ ուժեղ հրաճգության ժամանակ, մայրս աղբյուրից տուն  
վերադառնալիս, երկունքի ցավերից տանջված, ժամանակից շուտ լույս աշխարհ է բերել ինձ:

**42. Տրված նախադասության մեջ քանի՞ դերբայական դարձված կա:**

Որպես հարգանքի նշան՝ բոլորս վեր կացանք, իսկ Աշանք, իր սովորության համաձայն, երեսն  
ամբողջովին ծածկելով, փախավ մեծ սյան հետևը:

**43. Տրված նախադասության մեջ քանի՞ դերբայական դարձված կա:**

Գյուղից դուրս գալով՝ անցանք արդեն խոպան մնացած արտերի միջև եղած նեղ արահետով,  
ապա անտառի միջով անցնող միակ ճանապարհով և օրվա կեսին հասանք երկու հանդիպակաց  
ձյունածածկ սարերի միջով հոսող արագավազ իլ կոչվող գետին:

#### **44. Տրված նախադասության մեջ քանի՞ դերբայական դարձված կա:**

Գտնվելով սեփական մայր հողի վրա՝ մի օր թուրքական ոստիկանի հրամանն էր գալս հարկը կրկնակի գանձելու, մյուս անգամ քուրդ ցեղապետների կողմից թալանվում էր հայ աշխատավորների ոչխարների հոտը, կամ էլ ավազակների կողմից կողոպտվում էր հայ ճանապարհորդը:

#### **45. Տրված հատվածում քանի՞ դերբայական դարձված կա:**

Այս միտքն այնքան հաճելի թվաց Արշակին, որ նա նատեց՝ մտածունքներից ու երթևեկությունից հեղճած: Բայց նա շարունակում էր մտածել և կարծում էր, որ Գ-ԵԵՀն բարեկամանալով՝ թե՛ կարելի է հանգիստ զբաղվել Ավանի շինությամբ և թե՛ պատժել անհնազանդ նախարարներին: «Ի՞նչ անել, որի՞ն նախապատվություն տալ», - շարունակ մտածում էր նա:

#### **46. Տրված հատվածում քանի՞ դերբայական դարձված կա:**

Հետո պարզվեց, որ դրանք իրոք վաճառականներ են. հույն սպասավորներին կաշառք տալով՝ գալս են այնտեղ՝ հայոց թագավորին և նրա մարդկանց ապրանք վաճառելու: Հույն, սիրիացի և եգիպտացի վաճառականները, երբ լսում էին արմենների թագավորի գալը, միջնորդներ էին ուղարկում՝ ապրանքներ առաջարկելու և ասելու նրան, որ կարող են թագավորի պատվին էժամ տալ:

#### **47. Տրված հատվածում համաձայնության քանի՞ սխալ կա:**

Եվ ահա 1959 թ. Հայաստանի գիտությունների ակադեմիայի հրատարակությամբ լույս է տեսնում «Հայկական ժողովրդական հեքիաթների» I և II հատորները: Մինչև այժմ լույս է տեսել հեքիաթների տասը հատոր: Այդ հրատարակությունը շարունակվում է և ընդգրկում մինչև այժմ հայտնի տպագիր և անտիպ հայ ժողովրդական բոլոր հեքիաթները:

#### **48. Նախադասության շարականական վերլուծության տարրերակներից քանի՞սն են սխալ:**

Ինչքան հեռանում էինք զյուղից, այնքան ավելի էր խտանում անտառը. հանդիպում էինք հաստարուն ծառերի, որոնց ճյուղերն իրար էին խառնվել և կախվել արահետի վրա:

- ինչքան - չափի պարագա, հեռանում էինք - պարզ ստորոգյալ
- անտառը - ենթակա, հաստարուն - որոշիչ
- ծառերի - հատկացուցիչ, ճյուղերը - ենթակա
- որոնց - հատկացուցիչ, իրար - ուղիղ խնդիր
- խառնվել էին - պարզ ստորոգյալ, արահետի վրա - տեղի պարագա

#### **49. Նախադասության շարականական վերլուծության տարրերակներից քանի՞սն են սխալ:**

Երկար ժամանակ ոչինչ չէր լսում, բայց հանկարծ խոր լրության մեջ նրա ականջին հասավ խոլ հառաջի մի ծայն, որից վայրկենասպես պայծառացավ այդ մտահոգված դեմքը, ու նա կամացուկ բախեց դուռը:

- երկար ժամանակ - չափի պարագա, չէր լսում - բաղադրյալ ստորոգյալ
- ոչինչ - ենթակա, հանկարծ - ձևի պարագա
- նրա - հատկացուցիչ, ականջին - հանգման անուղղակի խնդիր
- հասավ - պարզ ստորոգյալ, մտահոգված - ձևի պարագա
- դեմքը - ենթակա, կամացուկ - ձևի պարագա

#### **50. Պարզ (դերբայական դարձվածով) նախադասություններից քանի՞սն են ճիշտ փոխակերպված բարդի:**

- Ամենաբարձր դիրքի հասածները ավելի հաճախ են մոլորեցնում սովորական մարդկանց: Ովքեր հասել են ամենաբարձր դիրքի, ավելի հաճախ են մոլորեցնում սովորական մարդկանց:
- Բարեկամներին ճշմարտությունն ասելու համար հաճախ ցավ ենք ապրում: Ցավ ենք ապրում, քանի որ բարեկամներին հաճախ ասելու ենք ճշմարտությունը:
- Քնած մանկան նման գեղեցիկ է հուսահատ ողբացողը: Հուսահատ ողբացողը գեղեցիկ է՝ նման այն մանկանը, որ քնած է:
- Հուզմունքով սպասում եմ իրավաբան որդուս՝ իր թեկնածուական թեզը պաշտպանելու օրվան: Հուզմունքով սպասում եմ, թե երբ իրավաբան որդիս իր թեկնածուական թեզը կպաշտպանի:

**51. Պարզ (դերբայական դարձվածով) նախադասություններից քանի՞ն են ճիշտ փոխակերպված բարդի:**

- *Որդուս՝ ուսումը շարունակելը իմ ամենամեծ մտահոգությունն է:*  
Իմ ամենամեծ մտահոգությունն այն է, որ որդիս շարունակի ուսումը:
- *Բայց ինչ-որ ցրվածություն հետզհետև տիրում էր նրա՝ սարսափից մրագմած ուղեղին:*  
Բայց ինչ-որ ցրվածություն հետզհետև տիրում էր նրա ուղեղին, որ սարսափից մրագմել էր:
- *Դժվար է պատճառարանել նրա՝ տրամարանական շրջանակների մեջ չտեղավորվող այս վարքը:*  
Դժվար է պատճառարանել նրա վարքը, որ չի տեղավորվում տրամարանական շրջանակների մեջ:
- *Վտանգի պահին անմիջապես ուզում եմ հասկանալ նրա՝ որտեղից գալը:*  
Վտանգի պահին անմիջապես ուզում եմ հասկանալ, թե նա որտեղից է գալիս:

**52. Պարզ (դերբայական դարձվածով) նախադասություններից քանի՞ն են ճիշտ փոխակերպված բարդի:**

- *Իր նմանների հետ հարաբերությունների մեջ մտնելու պահից մարդը միշտ դիմել է ստի ծառայությամբ:*  
Այն պահից, երբ մարդը հարաբերությունների մեջ է մտել իր նմանների հետ, նա միշտ դիմել է ստի ծառայությամբ:
- *Իմ՝ զրականությամբ պարապելը կատարյալ իմքնանահատակություն էր:*  
Այն, որ ես զրականությամբ եմ պարապում, կատարյալ իմքնանահատակություն էր:
- *Այստեղ ևս Արձրունուն օգնության եկան անձնական հաշիվներով դեկավարվողները:*  
Այստեղ ևս Արձրունուն օգնության եկան նրանք, ովքեր դեկավարվում են անձնական հաշիվներով:
- *Թերարժեքության բարդույթով տառապողներին հաճախ բուժում են իմքնախարեւությամբ:*  
Նրանց, ովքեր տառապում են թերարժեքության բարդույթով, հաճախ բուժում են իմքնախարեւությամբ:

**53. Պարզ (դերբայական դարձվածով) նախադասություններից քանի՞ն են ճիշտ փոխակերպված բարդի:**

- *Նա չէր վախենում գետի հունի խորը լինելուց:*  
Նա չէր վախենում այն բանից, որ գետի հունը խորն է:
- *Այլևս չէր լսվում շրջակայքը կենդանացնողի երգը:*  
Այլևս չէր լսվում այն երգը, որ կենդանացնում էր շրջակայքը:
- *Ես այդ ձեռնարկի հաջողություն ունենալու հույս բնավ չէի փայփայում:*  
Ես բնավ հույս չէի փայփայում, թե այդ ձեռնարկը կարող է հաջողություն ունենալ:
- *Շշմարտությանը շատ ավելի մոտ կլինեինք նոր տիրակալին թարմ սափրած այտերով դերասանների հետ համեմատելին:*  
Շշմարտությանը շատ ավելի մոտ կլինեինք, եթե նոր տիրակալին համեմատեինք թարմ սափրած այտերով դերասանների հետ:

**54. Պարզ (դերբայական դարձվածով) նախադասություններից քանի՞ն են սխալ փոխակերպված բարդի:**

- *Զնայած կենսական պայմանների դժվարին լինելուն՝ հայրենասեր մարդը չաետք է լրի հայրենի հողը:*  
Հայրենասեր մարդը, եթե կենսական պայմանները դժվարին են, չաետք է լրի հայրենի հողը:
- *Քաղաքի բնակչության կեսից ավելին դեռ մինչև հիմա էլ հիշում է զնացքի՝ նորակառուց կայարանին մոտենալու օրը:*  
Քաղաքի բնակչության կեսից ավելին դեռ մինչև հիմա էլ հիշում է, թե երբ զնացքը մոտենավ նորակառուց կայարանին:
- *Մարդիկ զարմացած ու նախանձով նայում էին հեռավոր քաղաքներից եկողներին:*  
Մարդիկ զարմացած ու նախանձով նայում էին նրանց, ովքեր գալիս էին հեռավոր քաղաքներից:
- *Նրանք հիմա նստած են վաղուց իր դարձ ապրած մի սենյակում՝ ուսուցչանոցում:*  
Նրանք հիմա նստած են ուսուցչանոցում, որը վաղուց իր դարձ ապրած մի սենյակ է:

**55. Բարդ ստորադասական նախադասություններից քանի՞ն են ճիշտ փոխակերպված պարզի:**

- *Ու մնում է մի դատարկ տարածություն, որ ավելի է բարձրացնում կամրջի հմայքը քաղաքացիների աչքին:*  
Ու մնում է քաղաքացիների աչքին կամրջի հմայքը ավելի բարձրացնող մի դատարկ տարածություն:
- *Եթե ժողովուրդը տասներկու առաքյալներին էլ չհաշվեր, էլի Առաքելոց եկեղեցին ոչինչ չէր կորցնի իր դարավոր հմայքից:*  
Ժողովուրդի՝ տասներկու առաքյալներին էլ չհաշվելու դեպքում էլի Առաքելոց եկեղեցին ոչինչ չէր կորցնի իր դարավոր հմայքից:
- *Ես այս եմ ուզում, ինչ բոլորն են փնտրում:*  
Իմ ուզածը բոլորի փնտրածն է:
- *Մարդիկ հարստանում եմ նրանով, որ զրկում են ուրիշներին:*  
Մարդիկ հարստանում են ուրիշներին զրկելով:

**56. Բարդ ստորադասական նախադասություններից քանի՞ն են ճիշտ փոխակերպված պարզի:**

- *Մարսելը, երբ հարևանի պարտեզի դրուք բույլ ճռնչաց, զիսի ընկապ նրա կնոջ հեռանալը:*  
Մարսելը պարտեզի դրան բույլ ճռնչալու ժամանակ զիսի ընկապ հարևանի կնոջ հեռանալը:
- *Մեզ թվում էր՝ կանաչի մեջ քաղված այս դրախտը ամենից լավ տեղն է ողջ աշխարհում:*  
Մեզ թվում էր կանաչի մեջ քաղված այս դրախտի՝ ամենից լավ տեղը լինելով ողջ աշխարհում:
- *Մեր օրերում անհրաժեշտություն է դարձել, որ յուրաքանչյուրը ծանոք լինի տեղեկատվական տեխնոլոգիաներին:*  
Մեր օրերում անհրաժեշտություն է դարձել յուրաքանչյուրի ծանոքությունը տեղեկատվական տեխնոլոգիաներին:
- *Ծովն այնքան հանդարտ էր, որ թվում էր շրեղ կտավից իջած անշարժ պատկեր:*  
Ծովը շրեղ կտավից իջած անշարժ պատկեր թվալու չափ հանդարտ էր:

**57. Բարդ ստորադասական նախադասություններից քանի՞ն են սխալ փոխակերպված պարզի:**

- *Նրանք չեն տրտնջում իրենց ծանր աշխատանքից, քանի որ իրենց համար է ստեղծված այդ լայնածավալ, խորհրդավոր ու գեղեցիկ ծովը:*  
Նրանք չեն տրտնջում իրենց ծանր աշխատանքից՝ այդ լայնածավալ, խորհրդավոր ու գեղեցիկ ծովի՝ իրենց համար ստեղծված լինելու պատճառով:
- *Կառամատույցից ես դիտում էի, թե ինչպես է խարիսխը կամաց-կամաց դուրս գալիս ծովից:*  
Կառամատույցից ես դիտում էի կամաց-կամաց ծովից դուրս եկող խարիսխը:
- *Մարդը չի ստում, երբ գործում է ենթագիտակցարար:*  
Ենթագիտակցարար գործող մարդը չի ստում:
- *Մեզ համար տհած է, երբ մեզանից բույլերը խարում են մեզ:*  
Մեզ համար տհած է մեզանից բույլերի՝ մեզ խարելը:

**58. Բարդ ստորադասական նախադասություններից քանի՞ն են սխալ փոխակերպված պարզի:**

- *Վտանգավոր է, երբ անարժանը քարօն գնահատական է ստանում հեղինակավոր մարդուց:*  
Վտանգավոր է անարժանի՝ հեղինակավոր մարդուց քնահատական ստանալը:
- *Պետք է խոստովանենք, որ երբեմն մենք ենք մեր խոսակիցներին մղում ստախոտության:*  
Պետք է խոստովանենք՝ մեր խոսակիցներին երբեմն ստախոտության մղելու նասին:
- *Այն օրից, երբ սկսել եմ քայլել, ճաշակել եմ կյանքի դառնությունը:*  
Քայլել սկսելու օրից ճաշակել եմ կյանքի դառնությունը:
- *Թեև զավակներ չուներ, նա հարգված էր բոլորից:*  
Զնայած զավակներ չունենալուն՝ նա հարգված էր բոլորից:

## 59. Ուղղակի խոսքի փոխակերպումներից քանի՞ն են ճիշտ:

- **Խոսքը «Գեղարվեստ» հանդեսում տպագրված Ձեր բանաստեղծության մասին է,- ասաց նև և իջավ ամրիոնից:**  
Նա ասաց, որ իր խոսքը «Գեղարվեստ» հանդեսում նրա տպագրած բանաստեղծության մասին է, և իջավ ամրիոնից:
- **Չրուցակիցը, չորս կողմը նայելով, ասաց երիտասարդին.**  
- Ես այն հասկացա, որ Դուք Աստծուն ել չեք հավատում:  
Չրուցակիցը, չորս կողմը նայելով, ասաց երիտասարդին, որ ինքն այն հասկացավ, որ նրանք Աստծուն ել չեն հավատում:
- **Գրիգոր, արշավույսին իմաստասերների հետ սկսի՛ր մագաղաթների ընտրությունը,-իրահանգեց Որոտնեցին:**  
Որոտնեցին իրահանգեց, որ արշավույսին Գրիգորը իմաստասերների հետ սկսի մագաղաթների ընտրությունը:  
• - **Հոգենոր հայրեր, թաքցրե՛ք մատյանները,- ասաց նա,- իսկ մետաղը կարող է սպասել:**  
Նա ասաց, որ հոգենոր հայրերը թաքցնեն մատյանները, իսկ մետաղը կսպասի:

## 60. Ուղղակի խոսքի փոխակերպումներից քանի՞ն են ճիշտ:

- **Եթե եղայրը նկարչությամբ է պարապում, - ասացի օրիորդին, - ես կարող եմ ձեզ օգտակար լինել ցուցահանդեսի հարցում:**  
Օրիորդին ասացի, որ եթե իր եղայրը նկարչությամբ է պարապում, ես կարող եմ իրեն օգտակար լինել ցուցահանդեսի հարցում:  
• - **Դու Վրեժին այդ օրը ասացիր.**  
- Ես չեմ կասկածում քո ազնվությանը, սիրելին, բայց մեր գործում դու պետք է նաև մի փոքր հաշվենկատ լինի:  
Դու Վրեժին այդ օրը ասացիր, որ չես կասկածում նրա ազնվությանը, բայց ձեր գործում նա պետք է նաև մի փոքր հաշվենկատ լինի:  
• - **Նշի՛ր մի թղթի կտորի վրա այն ամենը, ինչ որ անհրաժեշտ ես համարում, - ասաց մայրը որդում:**  
Մայրն ասաց որդուն, որ նա նշի մի թղթի կտորի վրա այն ամենը, ինչ որ անհրաժեշտ է համարում:  
• - **Ես քաղաքում չեմ ուզում մնալ, - լացակումած ասում եր երեխան, - հայր, ես ուզում եմ քեզ հետ վերադառնալ մեր գյուղը:**  
Երեխան լացակումած ասում էր հորը, որ ինքը չի ուզում քաղաքում մնալ, ինքն ուզում է նրա հետ վերադառնալ իրենց գյուղը:

## 61. Անուղղակի խոսքի փոխակերպումներից քանի՞ն են սխալ:

- **Մի խումբ երիտասարդներ խմբագրին ասացին, որ իրենք նրա մոտ են եկել իրենց գյուղի հողերը թշնամու ուսնձգություններից պաշտպանելու հարցով:**  
Մի խումբ երիտասարդներ խմբագրին ասացին.  
- Մենք Ձեզ մոտ ենք եկել մեր գյուղի հողերը թշնամու ուսնձգություններից պաշտպանելու հարցով:
- **Աշխենն ասաց, որ ինքը ուզում է մի ներկայացում տալ բարեգործական նպատակով, և դառնալով Եվային՝ հարցրեց, քեզ նա չէր համաձայնի արդյոք խաղաղ Ուուզանի դերը:**  
- Ես ուզում եմ մի ներկայացում տալ բարեգործական նպատակով, - ասաց Աշխենը և դառնալով Եվային՝ հարցրեց. - դու չի՞՞ն համաձայնի խաղաղ Ուուզանի դերը:  
• - **Նա քեզ համոզում էր, որ ինքը միայն ճշնարսությունն է ասել:**  
Նա քեզ համոզում էր.  
- Ես միայն ճշնարսությունն եմ ասել:
- **Թագուհին հրամայել էր քեզ, որ պատվով ընդունես սուրհանդակին և նրան անմիջապես առաջնորդես իր ընդունարանը:**  
- Պատվով ընդունիր սուրհանդակին և անմիջապես առաջնորդիր նրան քո ընդունարանը, - հրամայել էր քեզ բագուիին:

## 62. Անուղղակի խոսքի փոխակերպումներից քանի՞սն են սխալ:

- Աշխենն իր նամակում Եվային գրել էր, որ ինքը զարմացած է, որ նա ոչինչ չի գրում վերջին դեպքերի մասին:  
«Զարմացած եմ, որ ոչինչ չես գրում վերջին դեպքերի մասին», - իր նամակում գրել էր Աշխենը Եվային:
- Ստեփանը քրոջը հորդորում էր, որ այս սառնամանիքին տանը մնա, թեն ինքը հասկանում է, թե որքան է նա ուզում իր հետ կայարան գնալ:  
- Այս սառնամանիքին կմնաս տանը, - հորդորում էր Ստեփանը քրոջը, - թեն հասկանում եմ, թե որքան ես ուզում նրա հետ կայարան գնալ:
- Դիմելով մեզ՝ Ստ. Չորյանն ասաց, որ կան գրական շատ խնդիրներ, որոնցով չեն գրադարձում ոչ իրենք՝ գրողները, ոչ էլ մենք՝ քննադատները:  
Դիմելով մեզ՝ Ստ. Չորյանն ասաց.  
- Կան գրական շատ խնդիրներ, որոնցով չեն գրադարձում ոչ իրենք՝ գրողները, ոչ էլ նրանք՝ քննադատները:
- Եվան հարցրեց իորը, թե նա պատկերացման է արդյոք, թե ինչ սարսափելի հարված կլիմի Աշխենի համար, երբ նա գա և իմանա, որ Արմենակն այլևս չկա:  
- Պատկերացնո՞ւմ ես, հայրիկ, թե ինչ սարսափելի հարված կլիմի Աշխենի համար, երբ նա գա և իմանա, որ Արմենակն այլևս չկա, - հարցրեց Եվան:

## 63. Տրված նախադասության մեջ քանի՞ ստորակետ պիտի դրվի:

Վաղեմի ծանրիս զարմանալի է չնեղացավ խոսքից բայց հաճելի զարմանք ապրելով ժպտաց քի տակ այսինքն ցուցաբերեց մեծահոգություն ու անտարբեր դարձավ այգու նատարանին նատած կնոջը որ գրի մեջ խորացած չէր էլ լսում մեր գրույցը:

## 64. Տրված նախադասության մեջ քանի՞ ստորակետ պիտի դրվի:

Փրկրահույզ ծովս էլ ասում են մարդու պես հոգի ու ճակատագիր ունի և մարդու պես թափածում է ու ցնծում պոռքկում փոթորկվում է ու հանդարտվում տառապում սառցե շղթաների ներքո և զարնան առաջին շողերի հետ մոլեգնում ու կարեվեր խոցված զազանի նման փշրում է կապանքները:

## 65. Տրված հատվածում քանի՞ ստորակետ պիտի դրվի:

Թեև պայմանավորվել էինք որ սեղանի շուրջ չեինք խոսելու բանավեճի մասին այնուամենայնիվ նա խախտեց պայմանը: Հիշեց ներկայացումներ որոնք պետք է մեր որոնումների իինքը դառնային և ներկայացումներ որոնց մեջ իբր բատերական նոր ձևերի որոնումներ կային այնինչ իրականում տանում էին ձևի ավերման: Ասաց այն ինչ կենսական էր համարում իր խոսքն առավելապես ուղղելով դերասաններից մեկին:

## 66. Տրված հատվածում քանի՞ ստորակետ պիտի դրվի:

Ինքը կոնս Տերենտը հուզված երթևեկում էր իր առանձնարանում և հաճախ շուրջը դնում ատամների տակ ու գլուխ օրորում կամ նուրբ ձեռքով բռնում ձերմակող մորուքը: Նրա աշքերում երևում էր մերք երկյուղ և մերք բարկություն անգամ զայրույթ: Քայլերը նույնպես անհանգիստ էին ու անհատատ: Երբ կատաղի քամին մութն ընկնելուց հետո ցնցում էր լուսամուտի փեղկերը նա հուզված հետ ու առաջ էր անում իր սենյակում:

## 67. Տրված հատվածում քանի՞ ստորակետ պիտի դրվի:

Դվինի վրա իջել էր գարնան մի մութ երեկո և երեկոյի հետ սկսվել էր մի մոլեգին քամի որը դիվական պտույտներ գործելով քաղաքի փողոցներում ու հրապարակներում վնագում էր կամ սուլում շարախինդ: Այդ ժամանակ թվում էր թե ամեն ինչ վերջացավ և քաղաքում կտիրի սովորական անդորրը բայց մի քանի վայրկյան հետո զազակած քամին նորից էր սկսում իր պտույտները և քաղաքը նորից լցնում աղմուկով:

## 68. Տրված հատվածում քանի՞ ստորագետ պիտի դրվի:

Նա բավականաշափ հոգնած ու քաղցած լինելով համաձայն էր ճաշելու և հանգստանալու ցանկացած վայրում համեստ մի խորտկարանում կամ աղքատիկ մի խցում: Փողոցի ծայրի շրջադարձի մոտ մի թրթոռուն լույս էր երևում դա աղյուսե գինետուն էր: Գինետան առջև սյունից կախված լապտերի կողքին կար մի թիվի սրա ճյուղերը մասամբ ծածկում էին լույսը և հեռվից այն թրթուացող էր թվում:

## 69. Տրված նախադասություններից քանիսո՞ւմ բացահայտչից հետո ստորագետ չպիտի դրվի:

- Մովսես Խորենացին հայոց գիտական պատմոթյան հիմնադիրն էլ հալածվել է և դժվարին օրեք ապրել:
- Ահա հպարտորեն կանգնած է հայտնի պատրիկը Սմբատ Բագրատունին բնավ չընկճվելով աղմուկ-աղաղակից:
- Նոր բացվող ծաղիկները մանուշակը վարդը կակաչն ու մեխակն էին զարդարել այգու գողտրիկ անկյունը:
- Սաադին երջանկության ու սիրո բանաստեղծը ապրեց հարյուր տարի:
- Հայոց մարզպանի Վասակի ամրոցում իր զավակներին էր սպասում նրա կինը:

## 70. Նախադասություններից քանիսո՞ւմ բութ պիտի դրվի:

- Իմ դիմանկարչիս սովորության համաձայն խոսեցնում եմ որ չծանձրանա չկորցնի ակտիվությունը խոսեցնում եմ իրեն հուզող թեմաների շուրջ:
- Ես ճիշտն ասած չեմ սիրում պատասխանել հարցերի որ ունենալով վաղուց հայտնի պատասխաններ հաճախ տրվում են այս կամ այն առիրով:
- Մազերը փոքր-ինչ ալիքավոր խիտ ու ճակատին բափկած նրան տալիս են առանձնահատուկ տեսք:
- Նրան պաշտում էին բոլորը գիտնականից մինչև բանվորն ու գյուղացին ծերունուց մինչև այբուբենը նոր սովորող երեխան:

## 71. Նախադասություններից քանիսո՞ւմ բութ պիտի դրվի:

- Ճանապարհորդ Լիվինգստոնը երկու հազար վեց հարյուր վարսուն կիլոմետր երկարություն ունեցող Զամբեզի գետի վրա հայտնաբերեց մի հոյակապ ջրվեժ որն էլ ի պատիվ Անգլիայի բազուհու կոչվեց Վիկտորիա:
- Գետը իր ճանապարհին հանդիպելով սանդղավանդի գահավիժում է հարյուր քսան մետր բարձրությունից և գոյանում է մի փրփրահորդ ջրվեժ որի լայնությունը հազար ութ հարյուր մետր է իսկ ջրի անընդեղ ծախսը մեկ վայրկյանում հավասար է հազար չորս հարյուր խորանարդ մետրի:
- Լիվինգստոն քաղաքում դեռևս զգացվում է ջրվեժի գրվություն պարզեցն շունչը:
- Եթե քամի է փշում ծիածանը տարրալուծվում է իսկ ջրի փոշին տարածվում մի քանի կիլոմետր և ցած բափկում հորդ անձրևի պես:

## 72. Տրված հատվածում քանի՞ բութ պիտի դրվի:

Վահանին որպես պատվավոր հյուրի առաջարկեցին նատել թեմում կազմակերպիչների կողքին: Պողոս Մակինցյանի բավական ոգեշունչ խոսքից հետո սկսվեց դասախոսությունը: Դահլիճը քարացած էր ոչ մի շշուկ ոչ մի ծպտուն: Վահանը հանդիսականների լարված դեմքերին նայելով ուրախանում էր: Այս քաղաքում գրականության հանդեպ դեռ հետաքրքրություն կա ամեն ինչ կորած չէ:

## 73. Տրված հատվածում քանի՞ բութ պիտի դրվի:

Ուորեն Մաշուրյանը նստել էր մարզկենտրոնի դեկանարի ընդունարանում և ներքին խոռվքը ցրելու համար ուշադիր դիտում էր առաջնորդի պատին փակցված մեծադիր նկարը: Լույսը բացվելուց անմիջապես հետո նա Արուսի հետ դուրս էր եկել Քարակերտից գնացել պահեստ ապրանք ստանալու և ժամից ավելի է նստած է այստեղ և սպասում է դեկանարի գալուն: Մարդիկ դժգոհ քրթմնջալով դուրս ու ներս են անում տարակուսած նայելով միջյանց երեսի:

#### **74. Տրված հատվածում քանի՞ բութ պիտի դրվի:**

Սյունաշարի տակից ելնելով այգու վերին տափարակը նա տեսավ արմավենիներ արմավենիներ փոշոս օրվա տապից խեղդված ու կարծես միանգամից ընկալեց ողջ քաղաքը իր համար վաղուց ատելի դարձած: Հենց դիմացը վեր էր խոյանում զլխավոր տաճարը մարմարյա ու վեհաշուք:

#### **75. Տրված հատվածում քանի՞ բութ պիտի դրվի:**

Մինչ քարտուղարի խորհրդակցության մասնակիցներին հավաքելը կուսակալը հանդիպեց մի մարդու դիմքը կիսով չափ ծածկած կնքուղով թեև արկի ճառագայթները այդ սենյակում չեն կարող նրան անհանգստացնել: Կուսակալը կարծ խոսեց անհմաստ համարելով բացատրություն տալ մի գործի մասին որի շուրջ կայացրած վճիռն իրեն փորձառու առաջնորդին նոլորության մեջ էր զցել անշուշտ նման տարօրինակ գործ առաջին անգամ էր քննել:

#### **76. Տրված հատվածում քանի՞ բութ պիտի դրվի:**

Երկիհարկանի բաց դեղնավուն մի տուն կար օղակած պուրակի մոտ շրեղ մի տուն նայրից անջատված քանդականախչ ցանկապատով: Տան առջևի ոչ մեծ հրապարակն ասֆալտած էր և ձմռանն այդտեղ ձևաբում էր լինում մեջը բահ տնկած խոկ ամռանը նոյն տեղում մրգավաճառի սայլն էր կանգնում մրգով ի արկդերը վրան: Այն Գրիբոյեդովի տուն էին անվանում հավատացնելով թե գորդն իր նշանավոր գործը «Խելքից պատուհասը» հենց այդտեղ է գրել: Տերն խսկապես Գրիբոյեդովն է եղել մինչ օրս էլ ստույգ հայտնի չէ:

#### **77. Տրված հատվածում քանի՞ բութ պիտի դրվի:**

Զարմանքից աչքերը չոելով նա տեսավ փոքրիկ սեղանի վրա մատուցարան է դրված որի վրա կտրտած սպիտակ հաց կա փոքրիկ սկահակի մեջ ձկան խավիար և ափսեի մեջ թրու դրած սպիտակ սունկ կաթսայում էիլ ինչ-որ բան և օդի հաստափոր գրաֆինի մեջ: Երևում էր օդին սառը մնալու համար էին սառույցի մեջ դրել: Անձանորը թույլ չտվեց որ դիմացինի զարմանքը հիվանդագին չափեր ընդունի և վարժ շարժումով օդի լցրեց նրա բաժակը:

#### **78. Տրված հատվածում քանի՞ միջակետ պիտի դրվի:**

Ըստ կուսակալի ներքին վերլուծությունների իրենց ծանրությամբ իրոք լիովին անհամեմատելի են Բարբարայի ու Յեշուայի հանցանքները եթե երկրորդը բացահայտ խելազար մի մարդ մեղավոր է անհերեթ ճառեր արտասանելու հարցում որոնք տարբեր տեղերում միայն խոռվություն են հրահել առաջինի մեղքն անչափ ծանր է խոռվության ուղղակի կոչեր է թույլ տվել իրեն նաև սպանել է պահակախմբի զինվորներից մեկին դա անկասկած նրան առավել վտանգավոր է դարձնում:

#### **79. Տրված հատվածում քանի՞ միջակետ պիտի դրվի:**

Ամեն ինչ անհմաստ էր վճիռը կայացվել էր: Կուսակալը այդ պահին հասկանում էր մի բան դա Յեշուայի անդարձ հեռացումն էր և իր դաժան զլխացավն ապարհնող չկար: Նա անզոր կախեց գլուխը ներքեւում դատարկություն էր: Հանկարծ նրան զարմացրեց մի միտք դատապարտյալ հետ խոսելս ակնհայտորեն ինչ-որ բան մինչ վերջ չէր ասվել: Ինքն էլ չհասցրեց ընկալել ամենակարևորը Յեշուան խոսում էր հանելուկային անմահությունից խոկ թե ում անմահության մասին էր խոսում ինքն այդպես էլ չի իմանա:

#### **80. Նախադասություններից քանիսո՞ւմ կետադրական նշան չպիտի դրվի:**

- Նախքան մայրաքաղաք տեղափոխվելը Կարեն Ավագյանը որպես վիրարույժ աշխատում էր հեռավոր շրջաններից մեկի հիսուն տարի առաջ կառուցված և երբեք չվերանորոգված մի հիվանդանոցում:
- Այսօր էլ մեր գրահրատարակչական առօրյայում իրենց տաղանդով առանձնապես չփայլող գրողներից բավական հաճախ կարելի է լսել Հաստ ու բարակ մի գին է չարչրկված ասացվածքը:
- Դեպի մայրամուտ թեքվող արկի վերջին ոսկեզօծ ճառագայթները ողողել էին բուսականությունից գործի լեռան ստորոտում ծվարած անհրապույր քաղաքը և նրա առջև սփռված ծովի մակերևույթը:
- Հանկարծ ծխնիների ահասարսութ ճռնչոցով հետ զնացին հինավորց ամրոցի պղնձապատ դրները և ճռոցի արձագանքն ու բացվող դրների հետևում լայնացող խավարը հարցականի պես կախվեցին սկված ամբոխի զլխին:

## 81. Տրված հատվածում կետադրական քանի<sup>o</sup> նշան պիտի դրվի:

Ծենքը լուր էր ոչ ոք չկար: Այդ մարդն էր սոսկ քարշ գալիս հետևից ու շրջվելով տեսնում էի որ իմ հանդեպ նա ցուցաբերում է հավատարմության ու բերկրանքի լուր նշաններ այն պատճառով որ եկել եմ ու թեև հետևից է գալիս քայլ դեկավարում է ինձ տանելով այնտեղ ուր գտնվում է բեմադրիչը: Այդ պահին քաղաքից այն կողմ հեռուներում փայլատակեց կայծակը:

## 82. Տրված հատվածում կետադրական քանի<sup>o</sup> նշան պիտի դրվի:

Դրսում տնքում էր աշնան քամին շխչչուկացնելով տանիքի վաղուց պոկված թիթեղը ապակիների վրա անձրև էր սողում շիթ առ շիթ: Այն երեկոյից հետո շատ դեպքեր տեղի ունեցան որոնց մասին հիշելն իսկ տիրեցնում է ինձ ու չեք պատկերացնի ինչ շաբաթներ անցկացրի մինչև մի փոքր հանգստացա ու խաղաղվեցի: Վերջին փողերը ծախսելով վեար պատրաստեցի ու տարա մի հաստափոր ամսագրի խմբագրություն և օրեր անց հետ ստացա ձեռագիրը շատ կարծ մակագրությամբ չի համապատասխանում:

## 83. Տրված հատվածում առողանության քանի<sup>o</sup> նշան պիտի դրվի:

Քափ-քրտինք մտսած մատուցողները գարեջրի փրկիրապատ գավաթներ էին տանում գլուխներից բարձր բռնած խոպաճայն գոչելով Ներեցեք քաղաքացի: Ինչ-որ սեղանից ոչ ավելի ճիշտ այզու բացօթյա տաղավարից գոռգոռում էին

Պատվարժան տիկնայք աննման տիկնայք ըմպում ենք ձեր միայն ձեր հավերժ գեղեցկության կենացը: Դատարկենք գավաթները մինչև վերջ ոչ մի պատճառաբանություն չի ընդունվում:

## 84. Տրված հատվածում քանի<sup>o</sup> շեշտ պիտի դրվի:

Այս վշտի ալիք բարձրացավ նրա մահվան լուրից ոչ ճիշտ կլիներ ասել ահավոր բոքից: Գրողների միության նեղ սրահում ինչ-որ մեկը բղավում էր

Հենց հիմա անմիջապես հեռագրեք կենտրոն ծանուցում ուղարկեք պատկան մարմիններին ուշանում ենք:

Հա հասկանում եմ քայլ կմկնում էր նիհարավուն երիտասարդը դա հո իմ պարտականությունը չէ: Հետո որ իմանան ինքնազուխ եմ վարվել գլուխս կրոշի:

Դուք գիտեք հետո կմեղադրեն թե չհայտնեցիք չզանգեցիք ու քաղմանը մարդ չկար:

## 85. Տրված հատվածում առողանության քանի<sup>o</sup> նշան պիտի դրվի:

Այ տղա դիմեց նա ինձ տանը ուտելու ոչինչ չկա հիմա ինչ պիտի անեմ ինչով հյուրասիրեմ այս մարդկանց: Կամ մնա տանը զրադեցրու հյուրերին կամ ինքը իշիր խանութ ուտելիք բերելու:

Երբ խանութից վերադարձա Չարենցը մանկան նման հրճվեց

Տղաս որ հետները չգայիր ինչ պիտի անեի:

## 86. Տրված հատվածում չակերտների և փակագծերի գործածության քանի<sup>o</sup> դեաք կա:

Նոյեմբեր միության նախաձեռնությամբ Պետական թատրոնում այժմ Հ. Պարոնյանի անվան երաժշտական կոմեդիայի թատրոն կազմակերպվել էր զրական երեկո: Սկրտիչ Արմենը այն ժամանակ նա չափած էր զրում պիտի արտասաներ Գազային երազ պոեմը Գուրգեն Մահարին Քառասունք Նամակ քանաստեղծին և այլ երկեր:

## 87. Տրված հատվածում ուղղակի խոսքի կետադրության քանի<sup>o</sup> սխալ կա:

Տարիներ հետո Չարենցին հանդիպեցի Երևանում: Սենք զերմորեն ժպտացինք իրար:

- Երևանո՞ւմ ես ապրում, հարցրեց:

- Այո՛, տեղափոխվել ենք այստեղ:

Նա մի պահ լրեց: Ընտանիքո՞վ...

- Առայժմ այդպես է:

### **88. Նախադասություններից քանի՞սն են ճիշտ կետադրված:**

1. Եթե քանդվեց եկեղեցին և հրապարակվեց որոշում, որ այդտեղ հրապարակ պիտի կառուցվի, և այն պիտի կրի Շահումյանի անունը, շատ ուրախացավ:
2. Քսաններորդ դարի սկզբներին՝ Թիֆլիսում, տարածված էին հովարով մանկական գլխարկներ՝ ծովային համազգեստի նմանողությամբ կարված:
3. Այստեղ նարդին է շինկում, օդում՝ գարեջրի և սուրճի բուրմունք, դրսում՝ անձրև, աշնան մեղմ ու դանդաղ անձրև...
4. Սարդկանց դեմքերը ուրախ են, անգամ տոնական. այսուհետ հացը վաճառվելու է առանց կտրոնների ու «ազատ հացի» զգացողությունը այլ կարգի հրճվանք է ամենքի համար:

### **89. Տրված հատվածում կետադրական քանի՞ս սխալ կա:**

Հայաստանի երկինքներից արեգակներ վար բերելու կարիք չկա, որովհետև անարև է մեր երկիրը, իսկ ինչ վերաբերում է երկինքն ի վեր արեգակներ շարտելուն... Օ՛, դա շատ անհրաժեշտ է և հատկապես արեգակներ, որովհետև մի արևը չի կարող չորացնել նախրյամ երկրի արյունն ու արցունքը, որտեղ գարունը նշանափորվել է կույր կոռուսկներով, ամառը հոգևոր և ֆիզիկական ժանտախտով, աշունը միլիոնավոր անանուն շիրհմների վրա կոծող անձրևներով, ձմեռը մահ ու սարսափով: Չե, մի արևը չի կարող հասցնել այնքան ծաղիկ, որ գոնե մի զերեզմանին մի ծաղիկ հասնի:

## **II ՏԵՍԱԿ**

### **90. Նշվածներից որո՞նք նախադասության անդամների շարահյուսական պաշտոնների անվանումներ չեն:**

1. եճթակա
2. կապ
3. հանգման անուղղակի խնդիր
4. ձևի մակրայ
5. տեղի պարագա

### **91. Նշվածներից որո՞նք նախադասության անդամների շարահյուսական պաշտոնների անվանումներ չեն:**

1. հատկացուցիչ
2. հիմունքի պարագա
3. բուն բացահայտիչ
4. ածական
5. չափի մակրայ

### **92. Նշել պարզ նախադասությունների համարները:**

1. Թագավորն ընկավ մտածունքների մեջ և մորուսով ծնոտը հենեց աջին:
2. Ամենքը հետաքրքրված առաջ էին գալիս՝ տեսնելու սպանվածի կնոջը՝ անծանոք իշխանութուն:
3. Արշակը շփորչված մտածում էր այդ լուրը ամբողջ երկրում տարածելու և ամեն տեղ հասցնելու մասին:
4. Զանցած մի քանի վայրկյան՝ ներս մտավ իշխանը՝ ըստ սովորության՝ ճգված կանգնելով բոլորի առջև:
5. Հայ ժողովուրդը՝ անզեն, սակավաթիվ, անպաշտպան, սարսափի ու անորոշության մեջ էր:
6. Բայց այդ առյուծը իր ծերուկ ծնողի առջև գառնուկի պես հեզ է, իր գյուղի աղջիկների դիմաց շիկնում է ամորխած:

### **93. Նշել բարդ համադասական նախադասությունների համարները:**

1. Սիրելին՝ ես կուզեի ևս մի քանի խոսք ասել եղած դժգոհությունների և այդ դժգոհությունները վերացնելու նպատակների մասին:
2. Այս երկիրը ունի շատ նախարարություններ, և դրանցից շատերը մանր են, անշան:
3. Հանգիստ իշխելու համար պետք է, այն՝ վախ ազդել, անզամ ահարելել:
4. Եվ այս ամենը Մանվելին հաճախ թվում էր անբացատրելի, իսկ երբեմն՝ առեղծվածային:
5. Այդպես խոսում էր, բայց և ուշիուշով հետևում մայրաքաղաքում կատարվող բոլոր իրադարձություններին:
6. Որքան էլ խորհում էր, հասու չէր լինում Մուշեղի սպանության պատճառներին:

### **94. Նշել բարդ համադասական նախադասությունների համարները:**

1. Սկզբում Գևորգ պապը որոշել էր տղային քահանա դարձնել, բայց վերջինս կտրականապես հրաժարվել էր և չէր ցանկացել սև սրբն հազմել:
2. Որպես գրագետ ու զարգացած մարդու՝ նրան շատ դեպքերում էին դիմում Աղքակի քրդերը. այդ պատճառով հաճախակի բացակայում էր գյուղից:
3. Սակայն Հասան բեկը նորից էր պահանջել արագացնել մեր ընտանիքի տեղափոխությունը, հակառակ դեպքում վաստ կիներ մեզ համար:
4. Մեր ճանապարհն անցնում էր քրդական գյուղերով, այնպես որ չորս օրվա ընթացքում ոչ մի հայ մարդու չհանդիպեցինք:

### **95. Նշել բարդ ստորադասական նախադասությունների համարները:**

1. Չնայած արևն արդեն մայր էր մտել, ես վճռեցի հետ չդառնալ:
2. Մեկ տարի առաջ ես դա թողել էի նույն խոտերի մեջ, որտեղ թուրք ոստիկանները քաքցրել էին շատախցիներից թալանած խորչինները:
3. Մենք դեռ փոքր հասակից այնքան էինք մտերմացել մեկս մյուսին, որ կարծես մեկ մորից ծնված հարազատ եղբայրներ լինեինք:
4. Ամառվա օրերին՝ վաղ առավոտյան, գաղտնի կերպով հեռանում էինք ամառանցից դեպի սարերը, հետո՝ խոլ տեղեր՝ նպատակ ունենալով հարձակվելու հարուստ Օմար աղայի և նրա ցեղակիցների վրա:

### **96. Նշել բարդ ստորադասական նախադասությունների համարները:**

1. Գահապահից դուրս գալով՝ Բաքը որոշեց թագավորի առաջարկի մասին խորհրդակցել ավագների հետ, քանի որ իր մերձավորները չկային արդեն:
2. Բայց ավագները՝ Կենան Ամատունին, Զենոն Գնունին և Օքա Ապահունին, համամիտ չեղան, անզամ բացահայտ դժգոհեցին:
3. Մերատ Բագրատունին, Դվինից հեռանալով, առանց որևէ տեղ կանգ առնելու, հասավ իր հայրական կալվածքը՝ Սպերը:
4. Օքը մի քանի անգամ նրանք նայում էին ամրոցի շուրջը տարածվող դաշտերի հեռուն՝ պարզելու՝ չի երևում արդյոք թշնամական մի շարժում, ասպատակելու մի խումբ:
5. Նախ երկու քանաստեղծներն էլ ներկայացնում են միևնույն տարեքը, ապա հայտնաբերում ցեղային նկարագիրը մայրենի գրականության մեջ:
6. Հայ քանաստեղծների մեջ դժվար կարելի է ցույց տալ մեկին, որ իր բոլոր գործերով այսքան հարազատ լինի բուն ժողովրդին:

### **97. Նշել այն նախադասությունների համարները, որոնցում բաղադրիչ թերի նախադասություն կա:**

1. Սա մի բացառիկ երևույթ է, որ ինքնին ապացուցում է բանաստեղծի մեծությունը:
2. Այս է պատճառը, անշուշտ, որ Թումանյանի սարերի երգը մեզանում ամենք կողմից չի ընկալվում իր բովանդակ էռիքամբ, և հաճախ կարիք է զգացվում մեկնաբանությունների:
3. Նախ նկատենք, որ սա լեռնային կյանքի մի շատ յուրահատուկ նկարագիր է, որ հեղինակը վարպետորեն խոտացրել է մի քանի տողի մեջ:
4. Լեռնային ոչխարի հոտը գիշերները մակաղում է վրաներից ոչ այնքան հեռու, իսկ առավոտյան սփովում է սարով մեկ:

**98. Նշել այն նախադասությունների համարները, որոնցում բաղադրիչ թերի նախադասություն կա:**

1. Տարիներ հետո քեզ տեսա նորից,  
Սիրտս արտապեց, բայց ժպտացի ես:
2. Լինե՞ր հեռու մի անկյուն,  
Լինե՞ր մանկան արդար քուն...
3. Սարը եղավ կմքահայրս, ցողը՝ մյուսոն կենսավետ,  
Ու կնքողս նա ինքը եղավ, որ սահմանեց ինձ պոտետ:
4. Աղմուկն անտառից այնպես է քաշվել,  
Որ մենք կարող ենք հեշտությամբ հաշվել  
Սադարքների մեջ քնած քոչունին:

**99. Նշել այն նախադասությունների համարները, որոնցում բաղադրիչ թերի նախադասություն կա:**

1. Աչք ենք բացել քեզնից հեռու, քո կարոտով ծերացել...
2. Մընեց իմ հոգում երկինք ու արև,  
Ամպեր են դիզվել իմ հոգու վրա:
3. Լոեց իմ սրտում խնդրություն ու երգ,  
Տիսու՞ր են կանչում աղբյուրներս հիմի:
4. Դու այնպես դանդաղո՞ւ՞մ ես, արև՝,  
Այնպես պաղ, դմկամ ես արևում:
5. Այսօր լցված է հոգիս ցնծությամբ,  
Ինչպես այս այզը՝ թոշնի դայլայլով:

**100. Նշել այն նախադասությունների համարները, որոնցում բաղադրիչ թերի նախադասություն կա:**

1. Վերջին մշուշն էլ կանցնի շուտով,  
Կփովի լույսը խոր ճորերին:
2. Ես չգիտեմ՝ ինչ ես շահում քո քնահաճ խաղից,  
Բայց ես՝ մի ողջ պատանություն ու մի մաքուր բախիծ:
3. Սա՛յր իմ ժողովուրդ, դեպի քեզ կզամ,  
Կզամ դեպի քեզ, հայրենի՛ աշխարի:
4. Իմ կնունքին երկինքը՝ ժամ, արևը՝ ջահ սրբազն,  
Ծիածանը նարոտ եղավ, ամենքի սերը՝ ավազան:

**101. Նշել այն նախադասությունների համարները, որոնցում անենքակա նախադասություն կա:**

1. Ի՞նչ լավ է լինել առաջինը միշտ,  
Բաց անել ճամփան քո խսկ ձեռքերով:
2. Ուր որ նայում ես, դեղին բոցեր են,  
Դեղին հրդեհ է, և դեղին ծովի:
3. Երբ ծառը բողոքել է ուզում,  
Ոչնչով նրան չես սպառնա:
4. Լուր էր շուրջն այնպես: Չկար շշուկ ու ձայն,  
Իրիկուն էր, ու զով, լուրջուն էր միայն:
5. Երկնին, իմ երկի՞ր, հավատով անմար,  
Սուրբ է քո ուղին, և պսակդ՝ վեհ:

**102. Նշել այն նախադասությունների համարները, որոնցում անենքակա նախադասություն կա:**

1. Լուրիքուն է, մութ է այնտեղ, սակայն իմ  
Սրտում արդեն արշալուս է, հարություն:
2. Ելնել ճանապարհ, խնդրուն հեռանալ,  
Զվարդ և թերե բափառել ազատ:
3. Փա՛ռք գետի վրա կամուրջ կապողին,  
Ճանապարհից լավ ի՞նչ կա աշխարհում:
4. Կյանքի՛, մահի՛ այս ամենի աղջամուղում  
Ողջակիզվող հոգիներին ողջու՞յն, ողջու՞յն:
5. Երեկ զարուն էր, աշուն է այսօր.  
Ե՞րբ դեղին դարձաք, կանա՛ տերևներ:

**103. Նշել այն նախադասությունների համարները, որոնցում բայական անդեմ նախադասություն կա:**

1. Ողջունել սիրով անցուդարձողին,  
Օրիներգել կյանքը, աշխարհին ժպտալ:
2. Դալուկ դաշտեր, մերկ անտառ,  
Սահացողի տխուր կյանք:
3. Աստվածային հզոր ծիրքով էս ցած կյանքից հեշտ ու անքն  
Թոշել երկինք, վերև, վերև:
4. Ան գիշե՞ր, և հուշե՞ր, և խոհե՞ր անհամար,  
Սնուացված երազներ՝ շուշաններ թառամած:
5. Ուտքերը հանգիստ ժայռից կախած՝  
Նստել Պառնասի երջանիկ գիսին  
Ու բարձրից նայել էս անմիտ խալխին:

**104. Նշել այն նախադասությունների համարները, որոնցում միակազմ նախադասություն կա:**

1. Սիա հատկանիշներ, որոնք չունի նախորդ և իրեն ժամանակակից հեղինակների մեծ մասը:
2. «Անուշի» ողբերգությունը գյուղական աղջկեների ողբերգությունն էր, «Հառաջանքի» ծերունին ապրում էր բոլոր հայ գյուղերում:
3. Նա անընդհատ խորհում էր. «Խսանութի մեջ ձեռնափայտով և լայնեզր գլխարկո՞վ ընդունել հյուրին, թե՞ ոչ»:
4. Այդ ինքնատիպ գործից հասկացա, որ նրա հեղինակը ունի հարուստ երևակայություն:

**105. Նշել այն նախադասությունների համարները, որոնցում համառոտ նախադասություն կա:**

1. Ավա՞ն, այնտեղ հանդիպում է նույն ատելությանը, նույն հալածանքներին:
2. Եվ տարիներն այսպես անցնում են, ու ոչինչ չի փոխվում նրա կյանքում:
3. Նա, սակայն, չի համակերպվում և հեռանում է երկրից:
4. Նա դիմում է Էջմիածին՝ որոշելով կրոնավոր դառնալ, բայց, ցավոք, մերժվում է:
5. Աբովյանի արձակն այլ բան չէ, բան հայ ոգու կուտակումն ու խտացումը:
6. Նրա ոճը բացառապես անձնական է, խոսքը՝ հայադրոշմ:

**106. Նշել այն նախադասությունների համարները, որոնց տեսակը սխալ է նշված:**

1. Շատերն էին զալիս այնտեղ գործով կամ զրոյց անելու և ժամանակ անցկացնելու համար: (*բարդ*)
2. Այս անգամ իմ տերը հայ էր՝ այն ժամանակվա խոշոր գործարանատերերից մեկը: (*բարդ*)
3. Այստեղ ես ավելորդ չեմ համարում մի քանի կրծատումներով և առանց փոփոխելու վկայակոչել իմ այն ժամանակվա հատուկ ոճն ու լեզուն: (*բարդ*)
4. Չնայած որ գործարանները միմյանցից հեռու են, ծխերը, իրար խառնվելով, կազմում են մի անթափանաց բանձրություն: (*բարդ*)

**107. Նշել այն նախադասությունների համարները, որոնցում շարադասության սխալ կա:**

1. Նշանավոր Գավգամելայի ճակատամարտը սկսվել է պարսկական մանգադավոր մարտակառքերի գրոհով:
2. Վրացուիի Աննա Նովիլաձեն որոշել է կապված ձեռքերով լողալ Դարդանելի նեղուցով:
3. Լատիներներ մեռած լեզու է, որը հիմք է եվրոպական մի շարք լեզուների համար և գործածական է միայն Վատիկանում:
4. Մեծարգո հյուրի պատվին մատուցվեց ճոխ տոնական ընթրիք:

**108. Նշել այն նախադասությունների համարները, որոնցում դերքայով արտահայտված ենթակա կա:**

1. Եվ բավական է, հասկացե՛ք ընդմիշտ, որ Աստծուն նույնիսկ հայողողները Շատ ավելի են գերադասելի ...
2. Նման եմ ուղտի ևս մի բանում. Է՛հ, մեկ էլ տեսար, Պար գալս բռնեց Խարխուլ ու ճոճկան կամքջի վրա:
3. Ես արքնացնող մի ժամացույց եմ՝ Ըստ ձեր ցանկության՝ Ձեր ձեռքով լարված:
4. Նրանք զարկել են, հարվածել, ծեծել, Բայց ինձ ոչ մի զարկ չի հասել բնավ...

**109. Նշել այն խոսքի մասերի համարները, որոնցով արտահայտված ենթակա կա տրված հատվածում:**

Զարհուրելի կոտորած էր սկսվել: Փողոցի միջով դանդաղ ու հանդիսավոր անցնում էր ձիավորների մի մեծ խումբ: Նրա առջևից գնում էր շրեղ զգեստներով փաշան՝ շրջապատի կոտորածին անտարբեր: Եկողները թուրքեր էին, և ոչ չեր համարձակվում նայել նրանց կողմը: Գորգին, ճնշող ուժի տակ հետ-հետ գնալով, ընկավ փողոցի առուն, բայց խկույն դրւս եկավ ու շարունակեց խորանալ փողոցում:

1. գոյական, 2. ածական, 3. թվական, 4. դերանուն, 5. բայ

**110. Նշել այն նախադասությունների համարները, որոնցում ենթակայի արտահայտությունը սխալ է նշված:**

1. Աշխարհում այս աղոտ եսքնուշ  
Մի հերիաք հյուսեցի քո մասին: (*ղերանուն*)
2. Տիրությունս անուշ է որպես  
Հեռավոր, հեռավոր կարկաչյուն:  
(ածական)
3. Ու եկողներն ել խորհուրդ չեն տալու  
Փօտորեա անհնարն ու անկարելին: (ածական)
4. Թող ամենքը ինձ նոռաման առհավետ,  
Ու թող ոչ ոք գերեզմանին մոտ չգա: (*ղերանուն*)

**111. Նշել այն նախադասությունների համարները, որոնցում բաղադրյալ ստորոգյալ կա:**

1. Զգիտեմ՝ որտեղից է գալիս  
Զութակի հեկեկանքը տրտում:
2. Դու չկաս արդեն, դարձել ես զրոյց,  
Երազ ես դարձել, հայրենական տուն:
3. Ես հեռու եմ, ես օտար,  
Ասացեք՝ թող հեռան:
4. Աղոքս պարզ է և նրբահյուս,  
Սեռնողի վերջին կանչ,  
Հայտնվիր որպես լուս արշալույս  
Իմ հոգուն մահատանց:
5. Բացված է արդեն նի ուրիշ երկիր,  
Ես այստեղ եմ, բայց ուրիշ եմ իհմա:

**112. Նշել այն խոսքի մասերի համարները, որոնցով արտահայտված ստորոգելի կա տրված հատվածում:**

Հազարավետը, որ հավասարակշռված մարդ էր և խուսափում էր առհասարակ իր կարծիքը հայտնելուց, Զենոն Գնունուն ոչինչ չասաց: Իսկ Գնունուն հետաքրքրությունն իրոք մեծ էր, քանի որ պարզ նկատելի էր, որ Վարազդատ բազավորն ինքը զիտի ինչ-որ բան, և այդ իմացածն է այն մեծագույն գաղտնիքը, որ պիտի լույս սփոյի բոլոր իրադարձությունների վրա: Եվ դա այն էր, ինչից այդքան վախենում էր Զենոնը:

1. գոյական, 2. ածական, 3. թվական, 4. դերանուն, 5. բայ, 6. մակրայ

**113. Նշել այն նախադասությունների համարները, որոնք ունեն պարզ ստորոգյալ:**

1. Ամրոցի երկաթակուռ դարպասներով ներսուդուրս էին անում սպառազեն հեծյալներ,  
սաղավարտավոր զինվորներ:
2. Աշնան ոսկեզօծ արևի տակ շրջակա բլուրների անտառապատ լանջերը դառնում էին ավելի հրապուրիչ:
3. Բանակում իր ծառայությունն ավարտելուց հետո վերադառնալով հայրենի գյուղ՝ Սերոբը աշխատում էր անտառանյութ վերամշակող գործարանում:
4. Նաժիշտների օգնությամբ բազուիին զուգվել-զարդարվել էր՝ բազավոր ամուսնուն ըստ պատշաճի դիմավորելու համար:

**114. Նշել այն նախադասությունների համարները, որոնցում բաղադրյալ ստորոգյալ կա:**

1. Աստվածուի Հերան առաջվա պես ատելությամբ էր լցված Զևսի որդու հանդեա:
2. Հերակլեսը բնակություն հաստատեց Տիրինթոսում և թուլակազմ ու երկշոտ Էվրիաթեսի ծառան դարձավ:
3. Էվրիսթեսը զիտեր, որ Արլադիայում ապրում է մի զարմանահրաշ եղջերու, որին Արտեմիս աստվածուին էր ուղարկել մարդկանց պատժելու համար:
4. Հելիոսին նվիրաբերված տասներկու ցուլերը կարապների պես ճերմակ էին, իսկ ցուլերից մեկը, որ աշքի էր ընկնում արտասովոր գեղեցկությամբ, շողում էր աստղի ննան:
5. Թեև մեծ չեր Հերակլեսի ջոկատը, բայց փառապան հերոսներ շատ կային նրա մեջ:

**115. Նշել այն բառերի համարները, որոնք տրված նախադասություններում ստորոգելի են:**

Լաուրան անշափ 1. **զոհ** էր: Նրան այդ պահին բոլորի խոսքերն ել շատ 2. **կարևոր** էին թվում: Այլևս չեր կարծում, որ ինքը շարունակ 3. **միայնակ** կլինի ու 4. **լրված**: Բոլորին ժայիտներ էր շոայլում, հյուրասիրում 5. **քաղցրավենիք**: Հավաքված 6. **հյուրերն** անկեղծ ուրախ էին. միայն մեկը նրան 7. **հիվանդ** թվաց. ո՞չ խոսում էր, ո՞չ ուտում:

**116. Նշել այն նախադասությունների համարները, որոնցում գոյականով արտահայտված ստորոգելի կա:**

1. Ինձ թվում է, որ ընդօրինակելը միշտ էլ տհաճ բան է:
2. Փոխարերությանը մարմին տվողը գրողն է, իսկ հոգի՝ ընթերցողը:
3. Ծնողները ափսոսում էին, որ իրենց զավակը, որի վրա այլքան դրամ էին ծախսել, բանաստեղծ է դառնում:
4. Աշխարհիս չարիքի պատճառը հաճախ հին օրենքները, հին սովորույթները, հին կրոնը անմտորեն պաշտելու հետևանքն է:
5. Սովորաբար ասում են, որ մարդն ապահովում է պաշտոնը, մինչդեռ իրականում պաշտոնն է ապահովում մարդուն:

**117. Նշել այն նախադասությունների համարները, որոնցում ածականով արտահայտված ստորոգելի կա:**

1. Լսած արտահայտության միտքը շատ ճապաղ էր:
2. Զգացնունքը շատ հաճախ ընդարձակ է, իսկ բանականությունը՝ համառոտ:
3. Ամենագունագեղ թռչուններն ամենից վաս են երգում. դա վերաբերում է նաև մարդկանց:
4. Այդ գրողն իր երևակայության զավակներին, ճիշտ է, մի քիչ տարօրինակ ձևով պահպան է, բայց դա չի խանգարում, որ սիրենը նրանց:
5. Ես բախտավոր եմ համարում այն մարդկանց, ովքեր հասել են ներդաշնակության:

**118. Նշել այն նախադասությունների համարները, որոնցում դերանունով արտահայտված ստորոգելի կա:**

1. Վաս գրողներն առավելապես նրանք են, որոնք իրենց պարզունակ մտքերն արտահայտում են լավ գրողների մտքերով:
2. Հեգնանքի լավագույն ձևն այն է, որ պաշտպանում են քերություններով լի մի գործ:
3. Քարելոնի վարպետներն են աղյուս թրծել և կառուցել պարիսապներն ու սյուները, նրանք են տնկել ու խնամել հազվագյուտ ծաղկներն ու ծառերը:
4. Հենց փարավոնի անունն էլ այդ է վկայում. *Քուր-ան-Խասնն* բառացի նշանակում է *Ամռն աստծու զավակ*:
5. Այդ զարմանալի կորողները սերունդների համար ամեն ինչ են, քանի որ նոր հայտնագործությունների հիմք են ծառայում և բացում շատ գաղտնիքներ:

**119. Նշել այն նախադասությունների համարները, որոնցում գոյականական անդամի լրացում չկա:**

1. Օգոստոսին Նյու Յորքում շոգ էր, և ցերեկները երկնքում միշտ փայլում էր արևը, բայց դա ինձ դուր էր զայխ, որովհետև մեզ մոտ էլ անընդհատ արև է լինում:
2. Այստեղ կեռումեխմերը թռչում են ծառից ծառ, իջնում կանաչներին ու կտուցներով խոտերի մեջ ինչ-որ բան որոնում:
3. Նրանց կարելի է տեսնել այն ժամանակ, երբ գլուխները հանկարծակի դուրս են հանում մի ակնքարթ ու էլի հայցեազ բաքնվում:
4. Թիթեռները ոչ թե աշխատորնեն պտույտներ են գործում, այլ ծույլ-ծույլ թռչում են՝ ասես արևից քաքնվելու համար:

**120. Նշել այն հատվածների համարները, որոնցում գոյականով արտահայտված որոշիչ կա:**

1. Եվ հերքարների լոյս փերիները մայր արմավենու քննորոշ սոսյունով Համբույր ու ողջույն ուղարկում էին և կանչում նրան գաղտնի խոստումով:
2. Այս զիշեր տեսա մի անուշ երազ. Ես հայրենի տունն էի նորոգում:
3. Միրտս լցվում է վիշտ ու մորմորով Մեր ծով արտերի մի հասկի համար...
4. Ծիրան եզր խոռով մնաց. Էլ հորովել լսող չկա:

**121. Նշել այն հատվածների համարները, որոնցում իրար դերանունը գործածված է որպես ուղիղ խնդիր:**

1. Ուրեմն արի ել չկրվենք,  
Ել չտանջենք մենք իրար...
2. Եղել է արդեն երանելին.  
Այս ի՞նչ իրաշըռով իրար գտանք:
3. Բոլորը իիմա ձուլվել են իրար  
Եվ իմ սրտի մեջ նոր սեր են վառում:
4. Լույսի խտութից զարթնած սարերը,  
Իրար շալակած, սարը բարձրացան:

**122. Նշել այն բառերի համարները, որոնք ուղիղ խնդիր են:**

Սինչ Աննան շարված 1. **տերողորմյան** կիանձներ 2. **Դավթին**, ես անմիջապես նրա ձեռքից վերցրի 3. **այն** ու կախեցի Շուշանիկի 4. **Վզին**, միաժամանակ միամտաբար 5. **ձեռքով** խառնեցի նրա գեղեցիկ ու երկար 6. **մազերը**:

**123. Նշել այն բառերի համարները, որոնք ուղիղ խնդիր են:**

Թագավորի 1. **շքամքի** 2. անդամները զրոսնում էին իինավուրց 3. **մայրաքաղաքում** և ուշադիր դիտում 4. **շրջակայքը**, և 5. **նրանց** ապշեցնում էր բաղադրի աշխույժ 6. **եռուզեռը**:

**124. Նշել այն բառերի համարները, որոնք հանգման անուղղակի խնդիր են:**

Լուսնկա մի երեկո, երբ տասնիններորդ 1. **դարը** դեռ չէր հասել իր մեկ երրորդի 2. **վերջին**, մի դեռատի 3. **սողամարդ** ու կին մոտենում էին Զմյուռնիայի գյուղերից 4. **մելին**:

**125. Նշել այն նախադասությունների համարները, որոնցում դերքայական դարձված կա (նախադասությունները կետադրված չեն):**

1. Հովհաններին բողած ամեն տագնապ ու հուշ  
Տար լեռների հովին կարուներդ անուշ:
2. Հարցուփորձ անելով գտա բժշկի նոր տունը:
3. Հովի շարժվելով ու խշշացնելով անցնում էր ծառերի սաղարթների միջով:
4. Եվ հայացը հառած արեգակի շողին քայլեց դեպի արտը:
5. Լեռան թիկունքից կրակե թարթիչները կկոցելով դուրս լողաց Լուսաստղը:

**126. Նշել այն նախադասությունների համարները, որոնցում դերքայական դարձված կա (նախադասությունները կետադրված չեն):**

1. Բերդապահը սարսափած նայեց բերդին մոտեցող թշնամու զորաբանակին:
2. ճրագի շուրջը նստողների ստվերները թրթոում էին պատերի վրա:
3. Նանեն անակնկալի եկավ երբ իրեն հայտնեցին այդ լուրը:
4. Բոցերը մաքանելով ներհակ հոսանքի դեմ կլանում էին առաստաղը:
5. Պարտվածները ուզում էին փրկվել և հաշվի չառնելով հակառակորդի հզրությունը անցան գետը:

**127. Նշել այն նախադասությունների համարները, որոնցում դերքայական դարձված չկա (նախադասությունները կետադրված չեն):**

1. Ծովն ընկնողը փրփուրին էլ ձեռք կցցի:
2. Եղնիկը խաղալով ու խայտալով վազում էր ամտառի բացատում:
3. Որդու այրված տան պատկերը չէր հեռանում նրա մտքից:
4. Հուզված ու իրեն կորցրած ջանում էր ինչ-որ բան ապացուել:
5. Դահլիճում Մարիան հանդիպեց ուրախությունից շողացող Սոնային:

**128. Նշել այն հատվածների համարները, որոնցում դերքայական դարձվածը կատարում է անուղղակի խնդիրի պաշտոն:**

1. Զարմանքով նայում էր լճի սառը ջրում լողացողներին:
2. Ստուգում էր ձայնագրված ժապավենները՝ պարզելու դրանց պարունակությունը:
3. Արվեստի երկու հսկաների հոգում անբեղված կայծը հրդեհ է դառնում ներկա ժամանակի մարդու համար:
4. Բոլորը հուզված սպասում էին դատավորի ներս մտնելուն:
5. Տանջանքից փախչողները դառն ու թշնամի անապատում գտան իրենց մահը:

**129. Նշել այն հատվածների համարները, որոնցում հարակատար դերքայր կատարում է ձևի պարագայի պաշտոն:**

1. Քնար չկա ձեռքիս, և ոչ սրինգ անուշ,  
Որ քեզ երգեմ, Աստղիկ, կի՞ն դո՛՝ հավերժ բեղուն,  
Ցնորք դարձած դու կի՞ն՝ արդեն մեռած վաղուց,  
Քարի կոտրած քեկոր՝ անդարձ կորած հոդում։
2. Գիշերը հոգնած նատել սենյակում,  
Նայել շորերիդ ծալքերին լուսեն,  
Ու լույսը լամպի տիսրությամբ անհուն  
Գուրգուրի հոգուս հոգնությունը սև։
3. Եվ մի՞թե, մի՞թե սիրտս ավերված  
Ավերակներիդ լոկ պիտի պարզեմ,  
Զոն տեղ փայտիայն ստվերդ մեռած,  
Զոն սուրբ խոսքի տեղ իմ լացը լսեմ։

**130. Նշել այն նախադասությունների համարները, որոնցում ընդգծված դերքայական դարձվածի պաշտոնը սխալ է նշված։**

1. Այդ օրերին նրան համարում էին **միջոցառումների լավագույն վարողը**, և շատերը չեին համարձակվում նրան դիմել։ (*Ենթակա*)
2. - Է՛հ, Դուք իրավունք ունեք,- ավելացրի ես՝ **նատելով մոտիկ դրված աքոռին**։ (*Մեղի պարագա*)
3. Հաճախ մի շաբաթվաս հացի փողը ես ծախսել էի միայն նրա համար, որ գնամ՝ **գոնե մի բռյալ նրան տեսնելու**։ (*Ապատակի պարագա*)
4. **Իմ մասին ասված** այս միամիտ գովասանքը ինձ մի փոքր մխիթարեց։ (*Որոշիչ*)
5. Այդ դեպքում սերը դառնում է ահավոր դժբախտություն։ նա ստիպում է ձեզ բազում տաճանքներ կրել։ (*Ուղիղ խնդիր*)

**131. Ո՞ր նախադասություններում է ընդգծված անդամի պաշտոնը ճիշտ նշված։**

1. Եվ աստծուն լսելի եղան Խայամի **տրտութջն ու հանդիմանությունը**։ (*Ենթակա*)
2. Իշխաննը ձին ասպաննակեց ու արագ հեռացավ **այլտեղից**։ (*Անջատման անուղղակի խնդիր*)
3. Աղջկա հետևից հասանք, և **ամեն ինչ պարզ դարձավ մեզ համար**։ (*Ենթակա*)
4. Երկար խոսեցին այդպիսի **վերաբերմունքի շուրջ** ու ոչ մի եզրակացության էլ չեկան։ (*Վերաբերության անուղղակի խնդիր*)
5. **Պայուսակները մեջքներին կապած ու պայուսակը որպես բեռ քաշող մի քանի պատաճիներ էին**։ (*մասնական բացահայտիչ*)
6. Հետո անձրև սկսվեց, և անձրևի առաջին կարիւների հետ անջրանցիկ **կտորով** ծածկեցին ցորենը։ (*Միջոցի անուղղակի խնդիր*)

**132. Ո՞ր նախադասություններում է ընդգծված անդամի պաշտոնը սխալ նշված։**

1. Եվ արդեն սովորական քան էր հայկական փոքրիկ քաղաքներում այդ երևույթը։ (*Սոորոգելի*)
2. Սինչև **կիսուն** տարեկանը նա ծխական դպրոցում ուսուցիչ էր։ (*Չափի պարագա*)
3. Անգրագետների նամակ գրողն էր ու նամակները **կարդացողը**։ (*Ենթակա*)
4. Իր այդ **արարքի համար** հայրը մի քանի ամսի քանտ նատեց։ (*Ապատակի պարագա*)
5. Նրան զարմացրեց **այն**, որ այդ ամբողջ հասարակությունը միարան էր։ (*Ուղիղ խնդիր*)
6. **Տեղը տեղին** վճարելով վարորդիմ՝ իջավ մերենայից։ (*Մեղի պարագա*)

**133. Նշել նախադասության շարահյուսական վերլուծության սխալ տարրերակների համարները։**

**Ծառերի սաղարթները ներկյուսվել էին, իսկ գիշերվա մթի մեջ նրանք ավելի սարսափազու էին։**

1. **Ծառերի** - հատկացուցիչ, **սաղարթները** - Ենթակա
2. **Ներկյուսվել էին**- պարզ ստորոգյալ, **գիշերվա** - պարագայական բացահայտիչ
3. **ավելի** - չափի պարագա, **սարսափազու** էին - պարզ ստորոգյալ
4. **մթի** - հատկացուցիչ, **նրանք** - Ենթակա

**134. Նշել նախադասության շարահյուսական վերլուծության միավական տարրերակների համարները:**

Կենդանական մի հաճույք էր ապրում Պետին գարնան սկզբին, և նրա երակներում արյունն ավելի էր եռում:

1. կենդանական - որոշիչ, մի -չափի պարագա
2. ապրում էր -պարզ ստորոգյալ, նրա - հատկացուցիչ
3. երակներում - տեղի պարագա, ավելի - ձևի պարագա
4. արյունն - ուղիղ խնդիր, եռում էր - պարզ ստորոգյալ

**135. Նշել նախադասության շարահյուսական վերլուծության միավական տարրերակների համարները:**

Զինվորները դուրս են զայիս միահամուռ ուժերով գուած բարստոցից, սպանում են պահակազորին, բացում երկարից դարպասները:

1. դուրս են զայիս - բաղադրյալ ստորոգյալ, բարստոցից - տեղի պարագա
2. գուած - ձևի պարագա, սպանում են - պարզ ստորոգյալ
3. պահակազորին -հանգման անուղղակի խնդիր, միահամուռ - որոշիչ
4. երկարից - անջատման անուղղակի խնդիր, դարպասները -ուղիղ խնդիր

**136. Նշել նախադասության շարահյուսական վերլուծության ճիշտ տարրերակների համարները:**

Մի անգամ լուր տարածվեց, որ հենց նա է դառնալու բաժանմունքի պետ, և դա շատ անսպասելի էր:

1. մի անգամ - շափի պարագա, լուր - ենթակա
2. հենց - ժամանակի պարագա, նա - ենթակա
3. պետ - ստորոգելի, բաժանմունքի - հատկացուցիչ
4. դա - ենթակա, անսպասելի - ստորոգելի

**137. Նշել նախադասության շարահյուսական վերլուծության ճիշտ տարրերակների համարները:**

Երազում էի անդրբրավետ մի անկյուն, ուր կտանեի իմ դաշնամուրն ու գրասեղանը, կկարողանայի ամփոփել ինքս իմ մեջ, բորբին հանձնել երգերս, որ հետնորդներս շարունակեն իմ գործը:

1. երազում էի - պարզ ստորոգյալ, անդրբրավետ - որոշիչ
2. անկյուն - ուղիղ խնդիր, ուր - տեղի պարագա
3. դաշնամուրը - ենթակա, իմ մեջ - տեղի պարագա
4. բորբին - հանգման անուղղակի խնդիր, երգերս - ուղիղ խնդիր
5. հետնորդներս - ենթակա, իմ - հատկացուցիչ

**138. Նշել նախադասության շարահյուսական վերլուծության ճիշտ տարրերակների համարները:**

Երեկոները մենք հաճախ էինք հավաքվում, սիրով պատմում մեր անցյալից, երգում էինք բախսուտ և ուրախ երգեր, արտավում, որովհետև հայր միշտ էլ զգացնունքային է:

1. երեկոները - ժամանակի պարագա, մենք - ենթակա
2. հաճախ - որոշիչ, հավաքվում էինք - պարզ ստորոգյալ
3. սիրով - ձևի պարագա, միշտ - ժամանակի պարագա
4. մեր - հատկացուցիչ, անցյալից - վերաբերության անուղղակի խնդիր
5. բախսուտ - որոշիչ, զգացնունքային է - բաղադրյալ ստորոգյալ

**139. Նշել ստորադաս նախադասությունների համարները:**

Թվում է՝ 1. լեռների լուրբյունն է իշել, և 2. Արամի նստած քարից լուրբյուն է բարձրանում: Պարզ լսվում էր, որ այնտեղ՝ անտառում, դարավոր կալմիներն ու լմկուզենիները ճակատում էին հողմի դեմ, 3. աղմկում, 4. գրում: Եվ քամին անընդհատ բերում էր անտառի այդ լիակուրծք խշշողը, 5. ու թվում էր՝ 6. հենց մեր դռան առջև է աղմկահույզ անտառը: 7. Ինչ չէր արել թուրքական փնքի հրետանին, 8. արեց մեն մի բառ:

**140. Նշել այն նախադասությունների համարները, որոնցում ենթակա ստորադաս նախադասություն կա:**

1. Այդ պահին ինձ զարմացնում էր, որ նա այդքան անտարբեր էր ուրիշի ցավի հանդեպ:
2. Երկի հենց իմ պահվածքից էր, որ նա ավելի համարձակ էր կարդում նանակը:
3. Գնալով նա ավելի էր զարմանում, որ իրեն ոչ ոք չէր նկատում:
4. Հրամանագրում ասվում էր, որ բոլորը պետք է ներկայանան քաղաքապետարան:

**141. Նշել այն նախադասությունների համարները, որոնցում ստորոգելի ստորադաս նախադասություն կա:**

1. Մի ակնրաբրում հայտնի դարձավ, որ նա էր թալանել այդ բանկը:
2. Տարիների ընթացքում աղջկը դարձավ այն, ինչ մայրը երազել էր ողջ կյանքում:
3. Մենք հանգամանալից պետք է դառնանք այն հարցին, թե ինչպես կառավարենք տվյալ իրավիճակը:
4. Պատը խորամանկորեն դասնում է բոռանը, թե ով է անցյալ գիշեր բացել գոմի դուռը և ձին դուրս բերել:

**142. Նշել այն նախադասությունների համարները, որոնցում որոշիչ ստորադաս նախադասություն կա:**

1. Հենց այդ պատճառով էր, որ այս խաղերի ժամանակ ընդհատվում էին պատերազմներն ու ներքին վեճերը:
2. Յոթերորդ իրաշալիքը Արտեմիդա դիցուհու տաճարն է, որ կառուցված էր Հռնիայի Եփեսու քաղաքում:
3. Հրաշալիքների մասին խոսելիս չի կարելի չնշել, թե ինն հույների մոտ ինչպիսի մեծ դեր է խաղացել դիցարանությունը:
4. Օլիմպիայի հրապարակը, որտեղ հավաքվում էին մրցության մասնակիցները, զարդարվում էր հույների նվիրական ծառով՝ ձիթենիով:

**143. Նշել այն նախադասությունների համարները, որոնցում որոշիչ ստորադաս նախադասություն կա:**

1. Այն գյուղը, որտեղ ծնվել են պապիս պապերը, գտնվում էր Վասպուրականի Նորդուզ գավառի հարավարևմտյան շրջանում՝ հեռու-հեռու ճյունածածկ լեռների մեջ:
2. Տիգրիս գետի ձախ կողմում դեպի երկինք էր խոյացել մի սրանչելի սար, որի լանջերը զարդարված էին մշտադալար ու փարթամ բույսերով:
3. Այդ հնությունները ցույց էին տալիս, որ մի ժամանակ այդտեղ եղել են հոյակապ շենքեր, անխորտակելի բերեր, վանքեր, որոնք կառուցվել են մեր ժողովրդի կողմից:
4. Շոշափելով քարայրի խորքը տանող քարախորչի պատերը՝ մենք զգուշորեն շարժվում էինք առաջ՝ հաշիվ չտալով, թե ուր կարող է տանել մեզ այդ խավար ուղին, որը նմանվում էր առասպելական քարե զնդանի:

**144. Նշել այն նախադասությունների համարները, որոնցում ուղիղ խնդիր ստորադաս նախադասություն կա:**

1. Այդ պահին խիստ անհանգստացա՝ կարծելով՝ նա կորցրել է գիտակցությունը:
2. Ինձ մի պահ թվաց՝ նա կորցրել է հիշողությունը:
3. Առավոտից իրիկուն մտածում էր՝ ինչո՞ւ այդպես ստացվեց:
4. Ես եղել եմ այն, ինչ դու չես էլ պատկերացրել:

**145. Նշել այն նախադասությունների համարները, որոնցում ուղիղ խնդիր ստորադաս նախադասություն կա:**

1. Նկատելով հավաքվածներին՝ նա հասկացավ, որ պատերազմի լուրը գյուղ է հասել:
2. Զգում էի, որ իմ սրտի ծանրությունն այդ մոռայլ ձորերն էին:
3. Երրորդ անգամ ես չտեսա՝ ինչպես հանգան ճրագները:
4. Լևոնը սրտնեղել էր նրանից, որ երկուսն էլ ոգևորված խոսել էին սովորելու, աշխատանքի ու պայծառ ապագայի մասին:

**146. Նշել այն նախադասությունների համարները, որոնցում անուղղակի խնդիր ստորադաս նախադասություն կա:**

1. Ուսիմ զցելուց առաջ մի անգամ էլ նայեց աստաղին, որից բարակ թելերով կապել էր փողի կապողը:
2. Նա ընկավ գետնին և չտեսավ, թե ինչպես իր գլխի վրայով քոան կոտրված ապակու կտորներ:
3. Գյուղացիները ահով լսում էին այն մասին, որ բուրքը շատ է մոտեցել սահմանին:
4. Նա մտածում էր կրտսեր եղբոր մասին, որ երկու ամիս առաջ էր վերադարձել ծառայությունից:

**147. Նշել այն նախադասությունների համարները, որոնցում պարագա ստորադաս նախադասություն կա:**

1. Նրանք հավաքվեցին խարույկի շուրջը, հենց կրակի բոցերը մի փոքր մեղմացան:
2. Երբ հասան լեռնաշղթայի փեշերին, երեխանները ցրվեցին տարբեր կողմեր:
3. Թեպետ Մարտար գործը կատարում էր անթերի ու արագ, տնօրենը դարձալ դժգոհում էր:
4. Բոլորը հասկացան՝ հենց Արամայիսը խանգարեց գործի կարգավորմանը:

**148. Նշել այն նախադասությունների համարները, որոնցում պարագա ստորադաս նախադասություն կա:**

1. Ու թեկուզ գարնանամուտ էր, բայց և այնպես բուխարիկում վառվում էին կաղնու չոր փայտեր:
2. Պատերազմի լուրը պայթեց, ինչպես որոտը կպայթի երկնքում:
3. Նրան բոլորովին հաճելի չէր, երբ երեխանները կենդանիների հետ խաղախս չարչարում էին նրանց:
4. Կանչում էին, որ կարդար եկած հրամանը պատերազմի և զորահավաքի մասին:

**149. Նշել այն նախադասությունների համարները, որոնցում պարագա ստորադաս նախադասություն կա:**

1. Եթե ոչ ոք չէր լսում իրեն, մենակությունից կամ ձանձրույթից բացում էր շարականի գիրքը:
2. Նախքան մուրը կընկներ, նա արդեն հավաքած ու կուտակած էր լինում օրվա վառելիքը:
3. Քանի որ Կարոն չէր լսում տասի հորդորները, շուտ-շուտ էր հիվանդանում:
4. Նա ձեռքը թիկունքին տարավ, ապա դուրս եկավ՝ վրանի դրանը անձայն հեկեկար:

**150. Նշել այն պարզ (դերբայական դարձվածով) նախադասությունների համարները, որոնք ճիշտ են փոխակերպված բարդի:**

1. *Ուժեղ բազավորների՝ ուժեղ կամք ուժենալու դեպքում է բուլացած երկիրը հզորանում:*  
Եթե ուժեղ բազավորները ուժեղ կամք են ունենում, բուլացած երկիրը հզորանում է:
2. *Դեպքերն ու իրողությունները մոռացության շտալու նպատակով դու պետք է անցնես վեպի շարադրանքին:*  
Այն նպատակով, որ դեպքերն ու իրողությունները չմոռանաս, դու պետք է անցնես վեպի շարադրանքին:
3. *Հնկերներին հանդեպ անարդարացի լինելուս պատճառը այդպես էլ մնաց շհասկացված:*  
Այդպես էլ մնաց շհասկացված այն բանի պատճառը, որ ընկերներին հանդեպ անարդարացի էի:
4. *Ստուկա սրճարան գնացողների մեջ էր նաև ամերիկահայ գորգավաճառը:*  
Նաև ամերիկահայ գորգավաճառն էր նրանց մեջ, ովքեր գնում էին մոտակա սրճարան:

**151. Նշել այն պարզ (դերբայական դարձվածով) նախադասությունների համարները, որոնք ճիշտ են փոխակերպված բարդի:**

1. *Չնայած այդ վարրագիծը տեսնելուն՝ հանդուրժում էր կնոջ գոյությունը:*  
Չնայած այդ վարրագիծը տեսնում էր, հանդուրժում էր կնոջ գոյությունը:
2. *Իսկ Վարդանի կամուրջը՝ գետի մեջտեղն արքայաբար նստած, չորացնում էր իր թրջած կողերը:*  
Իսկ Վարդանի կամուրջը, որ գետի մեջտեղն արքայաբար նստած էր, չորացնում էր իր թրջած կողերը:
3. *Սեծահարուստի՝ քաղաքի կենտրոնում գտնվող շրեղ առանձնասունը բոլորի աշքի փուշն էր:*  
Սեծահարուստի շրեղ առանձնատունը, որ գտնվում էր քաղաքի կենտրոնում, բոլորի աշքի փուշն էր:
4. *Հիմա՝ այդ խանութի մոտով անցնելին, նրա սիրտը լցվում է տիկունքամբ:*  
Հիմա, երբ այդ խանութի մոտով անցնում է, նրա սիրտը լցվում է տիկունքամբ:

**152. Նշել այն պարզ (դերբայական դարձվածով) նախադասությունների համարները, որոնք ճիշտ են փոխակերպված բարդի:**

1. *Ծրջանավարտը իր եղույթն ընթերցելիս հանկարծ բոլորի համար անսպասելի հուզվեց:*  
Եթե շրջանավարտն իր եղույթն էր ընթերցում, հանկարծ բոլորի համար անսպասելի հուզվեց:
2. *Իմ հետ պատահածը բոլորովին էլ սովորական բան չէր այն, ինչ պատահեց ինձ հետ:*  
Բոլորովին էլ սովորական բան չէր այն, ինչ պատահեց ինձ հետ:
3. *Իմշապե՞ս չանապատվեի այդ գարշելիին՝ ազգին ինքնասիրությունը վիրավորողին:*  
Ինչպե՞ս չանապատվեի գարշելիին, որ վիրավորում է ազգին ինքնասիրությունը:
4. *Գրքերը բաժանելուն պես ուսուցուիին բացեց պահանջված էջը:*  
Եթե գրքերը բաժանեց, ուսուցուիին բացեց պահանջված էջը:

**153. Նշել այն պարզ (դերբայական դարձվածով) նախադասությունների համարները, որոնք ճիշտ են փոխակերպված բարդի:**

1. *Ամսան հարգանքով ողջունում էր դահլիճ մտնողներին:*  
Աննան հարգանքով ողջունում էր նրանց, ովքեր դահլիճ էին մտել:
2. *Հնտանիքի թերի կողմերը տեսնելով՝ երիտասարդը տանջվում էր:*  
Երիտասարդը, եթե տեսնում էր ընտանիքի թերի կողմերը, տանջվում էր:
3. *Հնկերոց հետ խոսելիս Արուար հուզմունքից կարմրեց:*  
Եթե Արուար խոսում էր ընկերոջ հետ, հուզմունքից կարմրեց:
4. *Աչքին առջև են իմ մանկության՝ տիրությամբ ու բախիծով լցված օրերը:*  
Աչքին առջև են իմ մանկության այն օրերը, որոնք լցված են տիրությամբ ու բախիծով:

**154. Նշել այն պարզ (դերբայական դարձվածով) նախադասությունների համարները, որոնք ճիշտ են փոխակերպված բարդի:**

1. *Նրանց՝ հայոց ժողով գումարելուն մնացել էր ընդամենը մի շաբաթ:*  
Մնացել էր ընդամենը մի շաբաթ, որ նրանք հայոց ժողով գումարեին:
2. *Կիրակի զիշերը՝ Միսիքարի՝ իր սենյակում մտատանջ քայլելու ժամանակ, ներս մտավ Արամը:*  
Եթե կիրակի զիշերը Միսիքարը իր սենյակում մտատանջ քայլում էր, ներս մտավ Արամը:
3. *Այդ ահարկու մարդը երբեք չէր երկնչում պատճենական քաղաքների վրա գրոհի գնայիս:*  
Այդ ահարկու մարդը երբեք չէր երկնչում, եթե սլավոնական քաղաքների վրա գրոհի էր գնում:
4. *Կայծակի արագությամբ գահավիժող քարեղեն զանգվածները մի վայրկյանում հասան ճանապարհին:*  
Քարեղեն զանգվածները, որ կայծակի արագությամբ գահավիժում էին, մի վայրկյանում հասան ճանապարհին:

**155. Նշել այն պարզ (դերբայական դարձվածով) նախադասությունների համարները, որոնք ճիշտ են փոխակերպված բարդի:**

1. *Նրանք ինձ ժամանակի զգացողությունն կորցնելու չափ սիրալիր ընդունեցին:*  
Նրանք ինձ այնքան սիրալիր ընդունեցին, որ կորցրի ժամանակի զգացողությունն:
2. *Գիրքը բացելուն պես աչքերի առաջ մթնում էր:*  
Գիրքը բացում էր թե չէ, աչքերի առաջ մթնում էր:
3. *Նախքան իրամանը տալը նաև երկար-բարակ մտածում էր եղածի մասին:*  
Նախքան իրամանը տալը նաև երկար-բարակ մտածում էր այն մասին, ինչ եղել էր:
4. *Դահլիճում հավաքվածների հայացքը չդարձավ նրա կողմը:*  
Նրանք, ովքեր հավաքվել էին դահլիճում, հայացքը չդարձրին նրա կողմը:

**156. Նշել այն պարզ (դերբայական դարձվածով) նախադասությունների համարները, որոնք ճիշտ են փոխակերպված բարդի:**

1. **Գյուղի բնակիչները վախից կծկվել էին բարձրաբերձ լեռան՝ ներքեցից չերևացող անմատչելի ծերպերում:**  
Գյուղի բնակիչները վախից կծկվել էին այն բարձրաբերձ լեռան անմատչելի ծերպերում, որ ներքեցից չէին երևում:
2. **Ազատության հուրը վառվում է կյանքից հոգնածների սրտերում:**  
Ազատության հուրը վառվում է նրանց սրտերում, ովքեր հոգնել են կյանքից:
3. **Դրանք ուրիշների վիշտը չհարգող եղակի անհատներ են:**  
Դրանք անհատներ են, ովքեր չեն հարգում ուրիշների եղակի վիշտը:
4. **Իշխանուհու գրեթե միշտ խոնարհված կուպերը քողարկում էին աչքերի կենսաթրթիո հուրը:**  
Իշխանուհու կուպերը, որ գրեթե միշտ խոնարհված էին, քողարկում էին աչքերի կենսաթրթիո հուրը:

**157. Նշել այն պարզ (դերբայական դարձվածով) նախադասությունների համարները, որոնք սխալ են փոխակերպված բարդի:**

1. **Կարճ ժամանակ անց պարզեց նրա՝ բոլորին խարելը:**  
Կարճ ժամանակ անց պարզեց այն, որ նա բոլորին խարում է:
2. **Մենք մտածում էինք երեխայի ծանր հիվանդության լուրը առայժմ գաղտնի պահել ծնողներից և ինքներս խնամել նրան:**  
Մենք մտածում էինք այն մասին, որ երեխայի ծանր հիվանդության լուրը առայժմ գաղտնի պահենք ծնողներից՝ ինքներս խնամելով նրան:
3. **Հանկարծակի եկած աղջկը չհասցրեց պատասխանել տղայի հարցին:**  
Աղջկը, որ հանկարծակի էր եկել, չհասցրեց պատասխանել տղայի հարցին:
4. **Ես միշտ էլ աշակցել եմ իմ կարիքը ունեցողներին:**  
Ես միշտ էլ աշակցել եմ նրանց, քանի որ ունեցել եմ իմ կարիքը:

**158. Նշել այն պարզ (դերբայական դարձվածով) նախադասությունների համարները, որոնք սխալ են փոխակերպված բարդի:**

1. **Միսիթարը իր լրտեսմերի հաղորդած լուրերը գաղտնի էր պահում հայոց մելիքներից:**  
Միսիթարը հայոց մելիքներից գաղտնի էր պահում այն լուրերը, որ իրեն հաղորդում էին լրտեսները:
2. **Երեկոյան սպարապետը հրամայեց գավաթները դեռ նետել և խմել կուլաներով:**  
Երեկոյան սպարապետը հրամայեց, որպեսզի գավաթները դեռ նետեն և խմեն կուլաներով:
3. **Հաճախ Էջմիածնի սմանկացած հոգևորականները աղերսագրերով ազուլիսիներին էին դիմում՝ հոգալու իրենց ծանր պարտքերը և անհատնում կարիքները:**  
Հաճախ Էջմիածնի այն հոգևորականները, որ սմանկացած էին, աղերսագրերով ազուլիսիներին էին դիմում՝ հոգալու իրենց ծանր պարտքերը և անհատնում կարիքները:
4. **Զիու թամրին նստած սի սպա ձեր էր քսում խափանված ասործանակին:**  
Սի սպա, որը նստած էր ձիու թամրին, ձեր էր քսում խափանված ասործանակին:

**159. Նշել այն բարդ ստորադասական նախադասությունների համարները, որոնք ճիշտ են փոխակերպված պարզի:**

1. **Վարագույրը բացվեց թե չէ, անմիջապես երևացին համերգի կազմակերպիչները:**  
Վարագույրը բացվելուց անմիջապես հետո երևացին համերգի կազմակերպիչները:
2. **Երբ անսպասելի նրանց դեմ ելավ Նշանը, նրանք զարմանքից քարացան:**  
Նշանի՝ նրանց դեմ անսպասելի ելնելուն պես նրանք զարմանքից քարացան:
3. **Դա «պսակի շարժանացած» օրիորդն էր, որ հայտնի պատճառով հնարավորություն չէր ունեցել ավարտելու գիմնազիան:**  
Դա «պսակի շարժանացած» օրիորդն էր՝ հայտնի պատճառով գիմնազիան ավարտելու հնարավորություն չունեցած:
4. **Հայրենիքը կանչում է ձեզ, որ դեռ չեք մոռացել ձեր սուրբ հավատը:**  
Հայրենիքը կանչում է ձեզ՝ ձեր սուրբ հավատը դեռ չմոռացածներիդ:

**160. Նշել այն բարդ ստորադասական նախադասությունների համարները, որոնք ճիշտ են փոխակերպված պարզի:**

1. *Այն մեծ մտքից, որ մարդ եմ, վեհանում է միշտ հոգիս:*  
Սարդ լինելուս մեծ մտքից վեհանում է միշտ հոգիս:
2. *Մարդու մասին կարելի է դատել այն բամով, թե նա ինչի վրա է ծիծաղում:*  
Սարդու մասին կարելի է դատել նրա՝ ինչի վրա ծիծաղում:
3. *Վերադարձին եկանք զյուղի ծուռումուն փողոցներով, որպեսզի անցնենք նրանց տան առջևով:*  
Նրանց տան առջևով անցնելու համար վերադարձին եկանք զյուղի ծուռումուն փողոցներով:
4. *Մարդաշատ սրահում միայն նա չէր նկատել իր կրտսեր դստերը սիրահետեղը, թեև երիտասարդի վարքագիծը աղմկահարույց դառնալու չափ անպարկեցտ էր:*  
Սարդաշատ սրահում միայն նա չէր նկատել իր կրտսեր դստերը սիրահետեղը երիտասարդի վարքագիծի՝ աղմկահարույց դառնալու չափ անպարկեցտ լինելու պատճառով:

**161. Նշել այն բարդ ստորադասական նախադասությունների համարները, որոնք ճիշտ են փոխակերպված պարզի:**

1. *Զալալօղու դպրոցում Թումանյանը բանաստեղծություն է գրում, որը նվիրված էր հույն քարհաս Սավային:*  
Զալալօղու դպրոցում Թումանյանը բանաստեղծություն է գրում՝ նվիրելով հույն քարհաս Սավային:
2. *Չորյանը պատկերում է, թե ինչպես է խրամատում սկզբնավորվում ու ծավալվում բարեկամությունը:*  
Չորյանը պատկերում է խրամատում սկզբնավորված ու ծավալված բարեկամությունը:
3. *Այդ մարդու հոգեկան աշխարհի երկվորյունը վճռվում է նրանով, որ նա խզում է իր կապերը մտերիմ մարդու հետ:*  
Այդ մարդու հոգեկան աշխարհի երկվորյունը վճռվում է նրա՝ մտերիմ մարդու հետ իր կապերը խզելով:
4. *Դավթի ծնողների վիշտը խորացավ, երբ հարս հեռացավ իրենց տնից:*  
Դավթի ծնողների վիշտը խորացավ հարսի՝ իրենց տնից հեռանալուց հետո:

**162. Նշել այն բարդ ստորադասական նախադասությունների համարները, որոնք ճիշտ են փոխակերպված պարզի:**

1. *Դա հերանուսական ժամանակի սովորություն էր, որ հին դարերից պահել էին բոլոր նախարարական տները:*  
Դա բոլոր նախարարական տների՝ ինն դարերից պահվող հերանուսական սովորություն էր:
2. *Չնայած արդեն եկել էր այդքան մարդ, բայց Նար իշխանը անհամբեր սպասում էր մյուս հրավիրյալներին:*  
Չնայած Նար իշխանի՝ մյուս հրավիրյալներին անհամբեր սպասելուն՝ արդեն եկել էր այդքան մարդ:
3. *Փոխադարձ հարցուապատասխանը և թերև գրույցը ավարտվեցին թե չե, մերս մտավ ապարանքի տիրուիին իր դուստրերի հետ:*  
Փոխադարձ հարցուապատասխանը և թերև գրույցը ավարտվելուն պես ներս մտավ ապարանքի տիրուիին իր դուստրերի հետ:
4. *Նա լցվում էր երախտազիտության զգացումով, որը երբեմն արտահայտվում էր մեկ-երկու զուսակ բառերով:*  
Նա լցվում էր երախտազիտության զգացումով՝ երբեմն այն արտահայտելով մեկ-երկու զուսակ բառերով:

**163. Նշել այն բարդ ստորադասական նախադասությունների համարները, որոնք սխալ են փոխակերպված պարզի:**

- Երբ նավակը բռնեց վերադարձի ճանապարհը, Սերուժանը փորձեց ճանաչել եկողներին:  
Նավակի՝ վերադարձի ճանապարհը բռնելուց հետո Սերուժանը փորձեց ճանաչել եկողներին:
- Վերջին օրերին զայիս էին սպառնալից լուրեր այն մասին, որ պարսիկներն այդ պարտությունից հետո կրկին շարժվում են դեպի հայոց սահմանը:  
Վերջին օրերին զայիս էին սպառնալից լուրեր պարսիկների՝ այդ պարտությունից հետո դեպի հայոց սահմանը կրկին շարժվելու մասին:
- Նոր հետախույզներ ուղարկելու մասին հանձնարարությունը տալու պահին զգաց, որ մուրի մեջ մեկն շտապում է դեպի ինքը:  
Նոր հետախույզներ ուղարկելու մասին հանձնարարությունը տալու պահին զգաց մուրի մեջ դեպի ինքը շտապու մեկին:
- Հասնելով հրամանատարներին, որոնք զգաստ կանգնած էին իրենց հարյուրյակների առջև,  
Մուշեղը բարձրացրեց զրահավոր բազուկը:  
Հասմելով իրենց հարյուրյակների առջև զգաստ կանգնող հրամանատարներին՝ Մուշեղը բարձրացրեց զրահավոր բազուկը:

**164. Նշել այն բարդ ստորադասական նախադասությունների համարները, որոնք սխալ են փոխակերպված պարզի:**

- Չնայած արդեն ուշ երեկո էր, բայց մի քանի վայրկյանում կարողիկոսի հիվանդության լուրը տարածվեց միաբանության մեջ:  
Չնայած ուշ երեկո լինելուն՝ մի քանի վայրկյանում կարողիկոսի հիվանդության լուրն արդեն տարածվեց միաբանության մեջ:
- Այն օրից, երբ Հրահատը վիրավորվեց, նրան սպարապետի կարգադրությամբ պահեցին մի զյուղում:  
Հրահատի վիրավորվելուց հետո նրան սպարապետի կարգադրությամբ պահեցին մի զյուղում:
- Հաճախ տղայի ջերմությունը բարձրանում էր այնքան, որ նա ըմկնում էր գրեթե ուշակորույս վիճակի մեջ:  
Հաճախ տղայի ջերմությունը նրա՝ գրեթե ուշակորույս վիճակի մեջ ընկնելու չափ բարձրանում էր:
- Դա, իրոք, սպարապետի Շերմակն էր, որ հպարտորեն բերում էր իր տիրոջը:  
Դա, իրոք, սպարապետի՝ հպարտորեն իր տիրոջը բերած Շերմակն էր:

**165. Նշել այն բարդ ստորադասական նախադասությունների համարները, որոնք սխալ են փոխակերպված պարզի:**

- Ամեն որ զիտի, որ նրա վեմ-բարի ներքևում նաիրցի վարպետները պահած են եղել հազար փութ ուժանակ:  
Ամեն որ զիտի նրա վեմ-բարի ներքևում նաիրցի վարպետների կողմից հազար փութ ուժանակ պահելը:
- Տարօրինակ դեպքեր պատահեցին նաիրյան այդ քաղաքում, դեպքեր՝ ծածկված խորհրդավորության անքափանց քողով:  
Տարօրինակ դեպքեր պատահեցին նաիրյան այդ քաղաքում, դեպքեր՝ ծածկված խորհրդավորության անքափանց քողով:
- Մենք գործ ունեինք մի հիվանդի հետ, որն իր զառանցական տեսիլների մեջ պատզամ էր առել առաջյալներից:  
Մենք գործ ունեինք իր զառանցական տեսիլների մեջ առաջյալներից պատզամ առնող մի հիվանդի հետ:
- Ո՞վ է այդ երեխան, որ այդպիսի համարձակ հարց է կարողանում տալ նման մի ժողովում:  
Ո՞վ է նման մի ժողովում այդպիսի համարձակ հարց տալ կարողացող այդ երեխան:

**166. Նշել այն բարդ ստորադասական նախադասությունների համարները, որոնք սխալ են փոխակերպված պարզի:**

1. *Այդ օրերին կարծես թե անազորույն ճակատագիրը որոշեց կալանավորներին ևս մեկ անգամ հիշեցնել, որ նրանք մշտնշենական բանտարկության են դատապարտված:*  
Այդ օրերին կարծես թե անազորույն ճակատագիրը որոշեց կալանավորներին ևս մեկ անգամ հիշեցնել նրանց՝ մշտնշենական բանտարկության դատապարտված լինելը:
2. *Երբեմն զնում էի այնտեղ՝ տեսնելու ինչպես են սովորում աշակերտները:*  
Երբեմն զնում էի այնտեղ՝ տեսնելու աշակերտների սովորելը:
3. *Այն հասկացա, որ դրամի պես մաշվել են արդեն բառերը բոլոր:*  
Բոլոր բառերի՝ դրամի պես արդեն մաշվելը հասկացա:
4. *Ես սիրով լսեցի ոչ միայն տուժածներին, այլև նրանց, ովքեր այդ պահին հավաքված էին այդտեղ:*  
Ես սիրով լսեցի և՛ տուժածներին, և՛ այդ պահին այդտեղ հավաքվածներին:

**167. Նշել այն բարդ ստորադասական նախադասությունների համարները, որոնք սխալ են փոխակերպված պարզի:**

1. *Մենք ստեղծել ենք արտահայտություններ, որոնք գործածվում են միայն սուտը քողարկելու համար:*  
Մենք ստեղծել ենք արտահայտություններ սուտը քողարկելու նպատակով գործածելու համար:
2. *Կառով ճամփորդությունն այնքան էր հոգնեցրել ինձ, որ ամրող մարմինս ջարդվում էր:*  
Կառով ճամփորդության՝ ինձ հոգնեցնելու պատճառով ամրող մարմինս ջարդվում էր:
3. *Եթե բոլոր մարդիկ միանգամից հրաժարվեն ստեղոց, աշխարհում աներևակայելի խառնաշվոր կառաջանա:*  
Բոլոր մարդկանց՝ ստեղոց միանգամից հրաժարվելու դեպքում աշխարհում աներևակայելի խառնաշվոր կառաջանա:
4. *Աշխատեք հեռու մնալ մարդոց, ում սիրում եք:*  
Աշխատեք հեռու մնալ ձեր կողմից սիրված մարդոց:

**168. Նշել այն բարդ ստորադասական նախադասությունների համարները, որոնք սխալ են փոխակերպված պարզի:**

1. *Խոսակցություն վարելու առիթը հեշտությամբ զիջում ենք նրան, ով հաստատում է մեր սուտը:*  
Խոսակցություն վարելու առիթը հեշտությամբ զիջում ենք մեր սուտը հաստատողներին:
2. *Մարզիկը ժամանակին նկատեց, որ կատաղի կենդանին մոտենում է ճաղավանդակին:*  
Մարզիկը ժամանակին նկատեց ճաղավանդակին նոտեցող կատաղի կենդանուն:
3. *Չատ ստեղ կան, որոնք մեր ամենօրյա ցավերի պես սովորական են դարձել մեզ համար:*  
Մեզ համար մեր ամենօրյա ցավերի պես սովորական դարձած շատ ստեղ կան:
4. *Այդ կենսախինդ մարդու մեջ զնահատելին այն էր, որ երբեք խրատներ չեր տալիս:*  
Այդ կենսախինդ մարդու մեջ զնահատելի էր երբեք խրատներ չտալիս:

**169. Նշել այն բարդ ստորադասական նախադասությունների համարները, որոնք սխալ են փոխակերպված պարզի:**

1. *Ես հավատում էի, որ Գասպարի համար անկարելի բան չկա ծովային աշխարհում:*  
Ես հավատում էի ծովային աշխարհում Գասպարի համար անկարելի բան չին,լուն:
2. *Նա շարունակում էր հրամաններ տալ մի խումք երիտասարդների, որ երկի իր փոքրավորներն էին:*  
Նա շարունակում էր հրամաններ տալ մի խումք երիտասարդների՝ երկի իր փոքրավորներին:
3. *Ներս էր մտնում թե չէ, Խաչանը հերթով հարցնում էր բոլորին իրենց առողջության մասին:*  
Ներս մտնելուն պես Խաչանը հերթով հարցնում էր բոլորին իրենց առողջության մասին:
4. *Յավոր, նա է ավելի սիրված ու հարգված, ով ամենից քիչ է խղճի հետ հաշվի նստում:*  
Յավոր, ավելի սիրվածն ու հարգվածը խղճի հետ ամենից քիչ հաշվի նստողն է:

**170. Նշել այն բարդ ստորադասական նախադասությունների համարները, որոնք սխալ են փոխակերպված պարզի:**

1. *Այն ժամանակ Արծրունին դեռ չէր գրկվել իր ահազին կալվածքից, որ Թիֆլիսի խոշորագույն շինուարձուն էր:*  
Այն ժամանակ Արծրունին դեռ չէր գրկվել Թիֆլիսի խոշորագույն շինուարձունից՝ իր ահազին կալվածքից:
2. *Իմ միտքն սկսել էր զրադշի այդպիսի հարցերով, որոնք կապ չունեն պաշտոնիս հետ:*  
Իմ միտքն սկսել էր զրադշի պաշտոնիս հետ կապ չունեցող հարցերով:
3. *Այն օրվանից, երբ իմ անոնը տպագրված տեսա, այլևս ճակատագիրն ինձ համար խորք մայր չէր:*  
Իմ անոնը տպագրված տեսնելուս օրվանից այլևս ճակատագիրն ինձ համար խորք մայր չէր:
4. *Նա դառնում էր պոչը փորի տակ թաքցրած աղվես, հենց որ դիմում էր իր մեծավորներին:*  
Նա դառնում էր պոչը փորի տակ թաքցրած աղվես իր մեծավորներին դիմելուն պես:

**171. Նշել այն բարդ ստորադասական նախադասությունների համարները, որոնք սխալ են փոխակերպված պարզի:**

1. *Որքան շատ են շքացահայտված արարքները, այնքան մեծ է քանսարկուների հետաքրքրությունը:*  
Քանսարկուների հետաքրքրությունը շքացահայտված արարքների շատ լինելու չափ մեծ է:
2. *Անտանելին Հակոբ պապի համար այն է, որ իր մոտ սուս են խոսում:*  
Անտանելին Հակոբ պապի համար իր մոտ սուս խոսելու է:
3. *Դա այն օրն էր, երբ գիշերը իջևանատանը այրեց փաստաբորբերը:*  
Դա գիշերը իջևանատանը փաստաբորբերը այրելու ժամանակն էր:
4. *Զրվեծի հմայքը մեծ է հատկապես վաղորդայմին, երբ արևի ոսկեզօծ ճառագայթները փոխվում են երփելերանգ ծիածանի:*  
Զրվեծի հմայքը մեծ է հատկապես վաղորդայմին՝ արևի ոսկեզօծ ճառագայթների՝ երփելերանգ ծիածանի փոխվելու ժամանակ:

**172. Նշել այն տարրերակների համարները, որոնցում ուղղակի խոսքը ճիշտ է փոխակերպված:**

1. *- Միևնույն է,- ասացի ես,- զիսավորը դա չէ, այլ այն, որ ես տասնինգ օր է՝ այստեղ եմ, հույսս Դուք եք:*  
Ես ասացի, որ միևնույն է, զիսավորը դա չէ, այլ այն, որ ես տասնինգ օր է՝ այստեղ եմ, հույսս ինքն է:
2. *- Հիմա դու իսկապես ուզո՞ւմ ես, որ քեզ հետ պասկվեմ,- հարցրեց երիտասարդը աղջկան և ավելացրեց,- քո պատաժիանն այս վայրկյանին պիտի ստանա:*  
Երիտասարդը հարցրեց աղջկան, թե իման նա իսկապես ուզում է, որ նա իր հետ պասկվի, և ավելացրեց, որ նրա պատաժիանը այս վայրկյանին պիտի ստանա:
3. *Նազարն ասում է կնոջը.*  
*- Ի՞նչ է, ես ումի՞ց պակաս տղամարդ եմ. ողջ զյուղի գիտումը ես եմ, բայց ես բախս չունեմ:*  
Նազարն ասում է կնոջը, թե ինչ է, ինքն ումից պակաս տղամարդ է. ողջ զյուղի գիտունը ինքն է, բայց ինքը բախս չունի:
4. *Ես ասացի հարևանիս.*  
*- Դու չե՞՞ն իմանում, այս հարևան, թե որտեղ ես. դու իմ ու քո հողի վրա ես:*  
Ես ասացի հարևանիս, թե ինքը արդյոք չի իմանում, թե որտեղ է. ինքը իմ ու իր հողի վրա է:

**173. Նշել այն տարրերակների համարները, որոնցում անուղղակի խոսքը ճիշտ է փոխակերպված:**

1. **Անդրանիկն ասաց ոռու գեներալին, որ ինքը հույս ունի, որ մեծարզու գեներալը այդպես չի մտածում իր մասին:**  
Անդրանիկն ասաց ոռու գեներալին.  
- Ես հույս ունեմ, մեծարզով գեներալ, որ այդպես չեք մտածում իմ մասին:  
2. **Վահագն Դավթյանը մի առիթով գրել է, որ ինքը գրաբարից երբեք թարգմանություններ չի կատարել, բայց ներքուստ զգում էր, որ դա շատ ավելի դժվար է, քան որևէ օտար լեզվից թարգմանելը», - մի առիթով գրել է Վահագն Դավթյանը:  
3. **Նա ինձ ասաց, որ Մոսկվայում հանդիպել է եղբորս, և նա ասել է, որ շուտով վերադառնալու է:**  
- Մոսկվայում հանդիպել եմ եղբորդ, և նա ասել է, որ շուտով վերադառնալու է,- ասաց նա ինձ:  
4. **Վահանը Բաղամյանին վրդովված ասաց, որ նա սկսեց բարձր նոտաներից, և հենց սկզբում էլ նրա ձայնը խզվեց:**  
Վահանը Բաղամյանին վրդովված ասաց.  
- Դու սկսեցիր բարձր նոտաներից, և հենց սկզբում էլ քո ձայնը խզվեց:**

**174. Նշել այն տարրերակների համարները, որոնցում անուղղակի խոսքը ճիշտ է փոխակերպված:**

1. **Մակեդոնացիներից մեկը զոռաց, թե բերդի աշտարակից հայերը լավաշ են կախել, և ապա զեկուցեց Մակեդոնացուն, որ բերդում պաշարվածները անձնատուր են լինում:**  
- Բերդի աշտարակից հայերը լավաշ են կախել,- զոռաց մակեդոնացիներից մեկը և ապա զեկուցեց Մակեդոնացուն.- բերդում պաշարվածները անձնատուր են լինում:  
2. **Մակեդոնացին ասաց, որ հայերը հացապաշտ ազգ են, իսկ հացը խաղաղության խորհրդանշն է, և կտրուկ կարգադրեց, որ վերացնեն պաշարումը:**  
-Հայերը հացապաշտ ազգ են, իսկ հացը խաղաղության խորհրդանշն է,-ասաց Մակեդոնացին և կտրուկ կարգադրեց.-Վերացրե՛ք պաշարումը:  
3. **Մարկ Տվենը, զնացրի ուղեկցորդին մոտենալով, ասաց, որ Դիմոն քաղաքին չհասած՝ արթնացնեն իրեն և իջեցնեն զնացրից:**  
- Դիմոն քաղաքին չհասած՝ արթնացրե՛ք ինձ և իջեցրե՛ք զնացրից,-զնացրի ուղեկցորդին մոտենալով՝ ասաց Մարկ Տվենը:  
4. **Մի անգամ Արշակ Երկրորդը դիմում է Տիրան արքային, որ նա խորհուրդ տա իրեն, թե ինչ հուշարձան կառուցի, որ անմահացնի իր և նրա անոնք:**  
Մի անգամ Արշակ Երկրորդը դիմում է Տիրան արքային.  
- Խորհուրդ տուր ինձ, թե ինչ հուշարձան կառուցեմ, որ անմահացնեմ մեր անունը:

**175. Նշել այն տարրերակների համարները, որոնցում անուղղակի խոսքը սխալ է փոխակերպված:**

1. **Նա ինձ ասաց, որ ինքն ինձ չի հասկանում, որովհետև ես ինքս ինձ չեմ հասկանում:**  
- Ես քեզ չեմ հասկանում, որովհետև ես ինքս ինձ չեմ հասկանում,- ասաց նա ինձ:  
2. **Անուշն ասաց, որ ես շարունակ կրկնում եմ Արամի խոսքերը, որ նա ասել է իրեն օրեր առաջ:**  
Անուշն ասաց.  
- Դու շարունակ կրկնում ես Արամի խոսքերը, որ նա ասել է քեզ օրեր առաջ:  
3. **Հայրը կշտամբեց որդուն, թե կարող է արդյոք ինքը հանդուրժել նման մի արարք իր որդու կողմից:**  
Հայրը կշտամբեց որդուն.  
- Կարո՞՞ն եմ հանդուրժել նման մի արարք իմ որդու կողմից:  
4. **Իշխանն ասաց զորապետներին, որ համաձայն չէ ինքը. թող զգավեն ամրոցը գիշերով, այլ սպասեն լուսաբացին:**  
- Համաձայն չեմ ես,- ասաց իշխանը զորապետներին.- մի՛ զրավեք ամրոցը գիշերով, այլ սպասե՛ք լուսաբացին:

**176. Նշել այն նախադասությունների համարները, որոնցում Հ-ից առաջ ստորակետ պետք է դրվի (նախադասությունները կետադրված չեն):**

1. Առաջին ճարտարապետը նկատում է որ աշտարակը զգալի թեքվել է և գործը կիսատ է թողնում:
2. Նա շարունակում է գործը աշտարակը բարձրացնելով մինչև վեցերորդ հարկ և դրանից հետո ամբողջացնում է կորոռը:
3. Տրդատը վեց օր սուզ է անում անհուն կարոտով հիշելով Հռիփսիմեին և յոթերորդ օրը որոշում է որսի գնալ Փառական Շեմակաց դաշտը:
4. Թագավորը խոզի կերպարանը առած անջատվում է վայրի խոզերի երամակներից և քաղաքի մոտ ընդառաջ է գալիս Գրիգոր Լուսավորչին:
5. Արիասիրու երիտասարդ էր Պարթևաց աշխարհի զորապետ Սուրենը և ոչ մի հաղթանամ պարթե չէր կարող մրցել այս քաջի հետ:

**177. Նշել այն նախադասությունների համարները, որոնցում բացահայտչից հետո ստորակետ չափանիշի դրվի (նախադասությունները կետադրված չեն):**

1. Կոմիտասի հայրը Գևորգ Սողոմոնյանը կոշկակար էր իսկ մայրը Թագուհի Հռվիաննիսյանը Բրուսսա քաղաքից էր:
2. Երգահանը 1910 թվականին գարնանն է մեկնում Կոստանդնուպոլիս:
3. Ավստրիայի հանրահայտ երգահանի Մոցարտի կյանքը երեք էլ դյուրին չի եղել:
4. Հենց այստեղ Միլանում էլ նա խորապես տարվում է Չուզեպպե Վերդիի օպերային ստեղծագործությամբ:
5. Նկարիչը եկել է Երևան հետո բերել մի կտավ կնոջ մի նկար և խնդրում է գնել այն:

**178. Նշել այն նախադասությունների համարները, որոնցում երկու ստորակետ պիտի դրվի:**

1. Ամեն անգամ երբ Ավետը ձեռքը տանում էր դեպի ցավոտ վերքը և շոշափում այն ասես ասեղներով ծակձկվում էր ողջ մարմինը:
2. Քիչ հետո ձորի մեջ զնզում էր կատաղի գամփորի ծայնը տարածվում ողջ գյուղով մեկ:
3. Նա լայնաբերան կճուճը վերցրեց աղջկանից նայեց նրա ներսը և շուր տալով դրեց որսկանի գլխին:
4. Մի արձիվ թևերը թափահարելով թռավ լեշի վրայից ու կանգնեց Շահանդուխտի ժայռի գլխին ու սկսեց կտուցը սրել:
5. Անշուշտ մարդուն մեծ վնասի տակ գցեցինք ու չկարողացանք մի հարմար քան մտածել նրա կյանքը հեշտացնելու համար:
6. Հասրաքանը իսկույն ճանաչեց գրությունը ու ասես մքնեցին նրա աչքերը թուլացան ձեռքերը:

**179. Նշել այն նախադասությունների համարները, որոնցում ստորակետ չափանիշի դրվի:**

1. Մտնելով նրա արդեն ճաշակով կահավորված առանձնասենյակը և հանդիպելով կատարյալ լոռության անմիջապես գլխի ընկա այստեղ ինչ-որ քան այն չէ:
2. Աղելինան հագել էր մետարսյա զգեստ կիսակարծ թևերով և մազերը հավաքել նուրբ ժապավենով:
3. Հաշվի առնելով իր Զարենցի մեծ հեղինակությունը բոլորս տեղի տվեցինք նրա տեսակետը անհնար էր վիճարկել:
4. Իրար հանդիպում էինք վերիշելու քանականների Երևանը և հաճախ էինք քննարկում ներկան ու ապագան:

**180. Նշել այն նախադասությունների համարները, որոնցում ստորակետ չափանիշի դրվի:**

1. Մի քանի վայրկյանից հետո բացվեցին բերդի երկու աշտարակների միջև գտնվող երկարյա դրները խուլ ճռնչալով:
2. Դոյլակի եկեղեցու ժամհարը զարկեց կոչնակը մարդկանց հրավիրելով աղոթքի և աճապարանքով իջավ գավիր:
3. Նորից իհն մտքերից խռովվեց հոգիս և որոշեցի գնալ Ասպրամի խուցը դուրս բերելու այդ թշվա կնոջը աշտարակից և վերադարձնելու նրան իր տիկնությունը:
4. Ես իմ տանջված սիրտը կուրախացնեմ և վրեմի ծարավից տոշորվող հոգուս հրճվանք կպատճառեմ տեսնելով Աշոտ Երկարին իմ պատրաստած դժոխքի մեջ տանջվելիս:

**181. Նշել այն նախադասությունների համարները, որոնցում բութ պիտի դրվի:**

- Կարգադրությունը պահանջում էր առանձնացնել այն մարդկանց գործերը որոնք բանտարկված էին որպես ժողովրդի թշնամիներ և ոչնչացնել դրանք այն է այրել:
- Բնական է զլիսի շարժումը դիմախաղը ազատ դիմագծերը հայկական:
- Նախրի երկիրը ծնեց Զարենցին որ փորորկահույզ իր օրերում ժողովրդին ու հայրենիքին ճանապարհներ ցոյց տալու համար ելքեր որոնի:
- Երբ երգչուին դուրս եկավ թատրոնից երկրագուներով շրջապատված ուրախությունից Իցկոյի աչքերը փայլեցին:

**182. Նշել այն նախադասությունների համարները, որոնցում բութ պիտի դրվի:**

- Լավ էր նվազում Լևոնը թե վատ ես չեմ կարող ասել միայն զիտեմ որ ազդում էր ունկնդրի սրտին և հոգուն:
- Այդ գերեզմանային լրությունը խախտում էին միայն իրենց տերերից զրկված շները որոնք լունչները երկինք մեկնած հուսակտոր կաղկանձում էին և նրանց կաղկանձը թվում էր մենսագործ մարդկությանն ուղղված անբարբար անեծքը:
- Ամեն հինգշաբթի հերոսներին նվիրված հաղորդումն ավարտելիս մի տարօրինակ ու ինքնակեղերիչ զգացումն է պարուրվում իմ հոգին:
- Հոգնած նյարդայնացած բացեց սենյակի դուռը և նորից պառկեց բայց բախտի ճռոցն ու անհանգիստ մտքերը բույլ չեն տալիս նրան քուն մտնել:

**183. Նշել այն նախադասությունների համարները, որոնցում մեկից ավելի բութ պետք է դրվի  
(նախադասությունները կետադրված չեն):**

- Շուրջողորդ ամեն ինչ կենդանի է շարժումները մարդկանց աչքերն ու դեմքերը Ջրիստոսը իրական հավաստի կերպարանքով:
- Սկսվեց ճակատամարտը Ավարայրի դաշտում Տղմուտ գետի ափին ինչպես երկրաշարժ որ մի հարվածով ամեն ինչ տակնուիրա էր անում:
- Երբ գրեթե հավասարվել էինք շեշտակի նայելով ինձ մի ակնթարք վարանեց նրա աչքերում առկայօնեց մահկան սարսուր:
- Մեր դարերի խորքից եկող երաժշտագիտական գրականության մեջ ընդունված է այն թյուր կարծիքը թե Չուխաջանի հայկական երգ-երաժշտության վրա հենված երաժշտական լեզուն իբրև թե հայկական չէ:
- Նրան տեսնելիս մի տարօրինակ հաճույք էի զգում ինձ թվում էր նա մի առանձին սեր էր զգում դեպի մանուկները չնայած զավակներ չունենալուն:

**184. Նշել այն նախադասությունների համարները, որոնցում բութը դրված է ստորոգյալի գեղշման տեղում:**

- Կարդալով Երվանի Օսյանի գործերը՝ հանգել էի այն համոզման, որ նա՝ որպես երգիծաբան, ավելի ինքնատիպ է և յուրօրինակ:
- Խսկույն ճանաչեցի Երվանի Օսյանին. նրա աչքերը բաց կապույտ էին, հոնքերը՝ սև, քիքը՝ կեռ:
- Ռաֆֆին այլևս չկա. դադարել էր բարախել նրա՝ վերքերից բզկտված զգայուն սիրտը:
- Մի քանի ակնթարք մարդը մնաց այդ դրության մեջ անշարժ ու անէացած. կարելի էր կարծել՝ նա մեռավ:
- Բեմը Հասմիկի համար ինչ կախարդական ուժ ուներ՝ անհասկանալի էր:

**185. Նշել այն նախադասությունների համարները, որոնցում մեկից ավելի բութ պիտի դրվի:**

- Քյուզանդացի զիմանքները հուճապահար փախչում էին նզովքը շուրթերին նետվում Ախուրյանի ալիքների մեջ հուսալով փրկվել:
- Հավատացնում էին թե այնտեղ մի պողպատյա պահարանի մեջ Ալիմյանը փայփայելով պահում է այն տրեխները որոնցով գաղթել է իր ծննդավայրից տասնիննազ տարեկան հասակում:
- Մարտան թաշկինակի տակից զաղտուկ դիտում էր բոլորին իմանալու ինչ ազդեցություն է գործում իր ողբք շրջապատողների վրա:
- Ովքեր տեսել էին Փափազյանին ճշմարիտ արվեստի հաճույքը մի անգամ էլ զգալու համար էին եկել ովքեր չեն տեսել սրտատրոփ սպասում էին վարագույրի բացվելուն հազվագյուտ խաղ տեսնելու վայելքը կանխավ ապրելով:

### **186. Նշել այն համարները, որոնց տեղում բութ պիտի դրվի:**

Երկու շաբաթից ավելի էր (1) նա գտնվում էր այդ գետնափորում և մենության մեջ դառն ու անհուսալի խոհերը հետզիետ ջլատելով նրա ուժերը (2) գերեզմանային թմրություն էին բերել հոգուն: Խավարի մեջ հազիկ գծագրվող դեմքն այժմ արտահայտում էր խոր հուսահատություն և շողերի վրա գանձած աչքերն անշարժ էին (3) ինչպես մեռյալի աչքերը: Նա բարձի փոխարեն գլխի տակ էր դնում կաշեկազմ «Նարեկը» (4) այն ընթերցելու և հոգով ապաշխարելու: Ամեն առավոտ օրվա ուստելիքը բերելիս (5) սպասավորը միշտ դժգոհում էր որ հայր սուրբը սպասին ձեռք չի տվել: Արեղան տխուր ժամանում էր (6) հանգստացնում պատանուն (7) ասելով (8) լավ է զգում: Ու սկսում էր հարցուփորձը (9) ակնկալելով նորություններ դրսի աշխարհից:

### **187. Նշել այն նախադասությունների համարները, որոնցում բութ պիտի դրվի (նախադասությունները կետադրված չեն):**

1. Դեռ Կալիգուլայի օրոք Բուռոսը իր ծառայությունն սկսել էր որպես կայսեր կողմնակից և մասնակցել էր շատ ճակատամարտերի: 2. Նրա նժույգը գնում էր դեպի ճամբար ուր տեղավորված էր քաղաքամայր Հռոմի մոտ գտնվող հավաքայանը: 3. Նժույգն իր տիրոջ հետ այցրան էր անցել այդ ուղին որ անսխալ գիտեր ճանապարհ երթեր չեր սխալվի: 4. Մի վարձկան գետնին նստած գարեհաց էր ուսում: 5. Յենտուրիոնները գրուցում էին անցուղարձ անելով: 6. Բուռոսը խանդադատանք էր ապրում ծանոք տեսարաններից և ներծծում էր ոսպնական ճամբարի առնական սուր հոտը ուսնգերն ուցնելով: 7. Նա ուղերզեց այնտեղ ուր ծածանվում էր կապույտ դրոշը դա հեծյալների ճամբարն էր: 8. Այստեղ լսվում էին ծիերի վրնջոցներ իսկ զինվորները պատրաստվում էին քննելու: 9. Բուռոսը նստեց իր վրանի մոտ աթոռի վրա:

### **188. Նշել այն թվերը, որոնց տեղում բութ պիտի դրվի (նախադասությունները կետադրված չեն):**

Ինչքան էլ աշխատում էի ինձնից վանել այդ գաղափարը (1) երիտասարդի անհետացումը իմ մտքում անխուսափելիորեն կապվում էր օրիորդի համար լրության հետ: Երբ տուն վերադարձա տեսա (2) նա հենց այդ շարաբաստիկ նամակներն էր կարդում (3) ամենին ուշադրություն շղարձնելով իմ գալուստին: Ես նրան ասելով որ անկարող եմ այլևս մնալ հոգեկան այսպիսի վիճակի մեջ անմիջապես հեռացա սենյակից: Նա մեծ դժկամությամբ (4) ինձ ցույց տվեց իր ազգականների (5) մի քանի օր առաջ ուղարկած նամակները: Նրանք գրում էին որ պարտավոր են նախազգուշացնել (6) ինչ կլինի օրիորդի անակնակալ մեկնումի արդյունքում: Ես աշխատում էի հիշել թե Փարիզ տեղափոխվելուց ի վեր (7) իմ վարքագծի մեջ ինչ արատավոր բան է եղել նրա ազգականներին ստիպելով (8) այդպես վարվել: Ըստ նրանց կարծիքի (9) այդ կապը ծայրահեռ բուլության արդյունք էր:

### **189. Նշել այն նախադասությունների համարները, որոնցում բութ չափանիկ դրվի:**

1. Այստեղ-այստեղ երևում էին գլուխներին սպիտակ թաշկինակ կապած հնձվորների խմբեր:
2. Իսկ դու Արշակ դեռևս լավ չես ճանաչում այդ մարդուն ասաց ընկերը:
3. Գուցե քեզ համար անսպասելի լինի բայց ես ուղարկի կասեմ նա նենց մարդ է:
4. Լևոնը հանգամանորեն պատմեց այդ օրվա իր և գործընկերոջ միջև տեղի ունեցած ընդհարման մասին:
5. Արդյոք չափից ավելի անողոք չվարվեցի Արևիկի նվիրական զգացումների հետ կարծես թե արհամարհեցի նրա անկեղծ սերը:
6. Ես հեռանում եմ հեռանում եմ ամոքահար ու փշրված սրտով:

### **190. Նշել այն նախադասությունների համարները, որոնցում միջակետ պիտի դրվի:**

1. Ծաղրածուի խոսքերը վարսունամյա Լիր արքայի սրտում կասկած են ծնում միքն կրտսեր դրատքն էլ նման է մյուսներին:
2. Նոյյան հանգրվանը Մասհար շատ չոր է ու լերկ ոչ ծառ կգտնես նրա լանջին ոչ թուփ:
3. Նրա հիշողության մեջ հետզիետ գծագրվում էր այդ ամենը հայրենի գյուղը անտառի փեշին կծկված իրենց տունը գետակի ափին մանկության ընկերները...
4. Ամենակատաղի մարտերում անգամ գնդակների տարափի միջից նա դուրս էր գալիս անվնաս մահը փախչում էր նրանից:

**191. Նշել այն նախադասությունների համարները, որոնցում կետադրական սխալ կա:**

- Պետականության, ամեն պետականության հիմքը հացն է,- ասաց,- հաց ունես, ամեն ինչ ունես, հաց չունես, ոչինչ չունես:
- Ո՞ւր է պարոն Նշանը, գուցե մի փակ պատուհանից նայում է այս հերիաքային երթին ու մտածում. Սի՞թե Եվրոպան չի միջամտի...:
- Ինչպես էր՝ չզիտեմ, բայց իմ ու ընկերոջս ամենօրյա գրույցները հաճախ, շատ հաճախ ավարտվում էին նրանց տան առաջ:
- Պանինի սարսափը հեռաներում էր տարածված, և նրա մասին բերներերան պատմություններ էին անում, նրան տեսնելիս՝ սարսում էին:

**192. Նշել այն նախադասությունների համարները, որոնցում կետադրական սխալ կա:**

- Անտառում աքլորին պատահած աղվեսը իմացավ աքլորի՝ աշխարհ տեսնելու մտադրության մասին և առաջարկեց ընկերակցություն:
- Ես համաձայն եմ,-ասաց աքլորը,- տես ընկերս է՞լ է համաձայն:
- Սրա ընկերը երկի իր նման հիմար ու փքված մեկը կլինի,- մտածեց աղվեսը:- Դրան էլ կուտեմ ճաշի ժամանակ:
- Հազիվ թիերին հասած՝ նկատեց հովվի շանը ու փախավ, ո՞նց փախավ:
- Կա՞ց, աղվե՞ս ախալեր, մի՞ շտապիր, մենք էլ ենք գալիս,- ծառի գլխից ծղրտաց աքլորը.- միասին չե՞նք գնում:
- Աշխարհ տեսնելու ժամանակ այլևս չեր մնացել, ու աղվեսը, լեղին ջուր կտրած, փախչում էր շնից:

**193. Նշել այն նախադասությունների համարները, որոնցում կետադրական սխալ կա:**

1. Ժուկով-ժամանակով ապրում էր մի արքա՝ չար ու կամակոր: 2. Հայտնի էր բոլորին իր քմահաճույքներով՝ չարչարում էր հպատակներին՝ անհերեթ ու անիրազրդելի հրամաններ արձակելով: 3. Ու արքայի դամանությանը չափ չկար՝ հաճույք էր զգում մարոկանց պատճառած նեղությունից: 4. Օրերից մի օր, պարապությունից ձանձրացած, հրամայում է՝ իր համար վերմակ կարել՝ իր հասակից ո՞չ կարճ, ո՞չ երկար: 5. Վերմակ կարող դերձակներից ոչ մեկի բախտը չի բերում. բոցնում է նրանց գլուխները. ոչ մի վերմակ իր ուզած շափին չեր: 6. Գալիս է մի իմաստուն դերձակ, որ ճիպոտը ձեռքին՝ պատժում է կամակոր արքային՝ խորհուրդ տալով ոտքն իր վերմակի շափով մեկնել:

**194. Նշել այն նախադասությունների համարները, որոնցում կետադրական սխալ կա:**

1. Օմար Խայամը՝ Խորասանի փառաբանված բանաստեղծը, նստած ծաղիկների մեջ, գինի էր ըմպում: 2. Հանկարծ մի խենք քամի բարձրացավ և վայր զցեց նրա ձեռքի գավը՝ ազնիվ գինին հեղեղով հողին: 3. Քամին հրճվում էր ասես իր չարածճիությամ՝ ինչպես մի շար դև: 4. Դարձացած Խայամը Աստծուն լեմ խոսք արտաքերելով՝ մեղանչեց ու պատժեց՝ զրկվելով խոսելու ունակությունից: 5. Ասա խորհեց, թե ո՞ր հողածինն է անմեղ, ու եթե իր մեղքի համար Աստված պատժում է իրեն, ո՞րն է իր և Աստծու տարբերությունը: 6. Աստված, լսելով Խայամի իմաստուն խոսքը, զարմացավ հողեղենի մտքի խորությունից և վերադարձրեց նրան խոսելու ունակությունը:

**195. Նշել այն նախադասությունների համարները, որոնցում կետադրական սխալ կա:**

- Հայոց զորքի կոտորածը, որ տեղի պիտի ունենար թե՛ հաղբանակի և թե՛ պարտության դեպքում և որի մասին մտածելն անգամ վիշտ էր պատճառում նրան, թագավորը չեր ուզում հիշել այս տարածամ պահին:
- Առավոտյան անուշ հովերը, որոնք Գեղա լեռան լանջերը քերելով՝ մտնում էին Այրիվանից ձորը՝ Ազատի ալիքները համբուրելու, մեղմում էին արևի տապը, որն արդեն զգալի էր դառնում այդտեղ:
- Եվ ահա վիմափոր տաճարի դրներից դրւս եկան սպիտակազգեստ դպիրները, նրանց հետևից՝ սարկավագները, իսկ վերջում՝ բարձրաստիճան եպիսկոպոսներն էին ու վարդապետները:
- Մովսես վարդապետը, որ, ընթրիքի ժամանակ կարդալով Հովհաննեսի ավետարանը, դրանով կարողիկոսի ուղևորությանն արգելը էր դարձել, ծնկի իջավ հայրապետի առջև՝ բողոքյուն ինդրելու:

**196. Նշել այն նախադասությունների համարները, որոնցում կետադրական սխալ կա:**

1. Երբ ծնվեց երկրորդ աղջիկը, նա ասում էր.- Ես էլ Թումանյանի նման վեց աղջիկ պիտի ունենամ:
2. - Դե՛, ի՞նչ պատահեց,- մոտենալով ինձ՝ ասաց Արշակը: Տվե՛ք, ինքո կուղղեմ:
3. Նա գրեց. «Քոչարյանի կատարումից հետո ես հասկացա, թե դա ինչ հրաշալի գործ է»:
4. «Մի քանի օրից լինելու եմ Երևանում», - գրել էր ինձ ուղղված նամակում, - «եթե ժամանակ ունես, այցելի՛ր, կզրուցենք»:

**197. Նշել այն նախադասությունների համարները, որոնցում կետադրական սխալ կա:**

1. Հոմերոսի մարդկությանը հիացրած պոեմները հին աշխարհի արձագանքն են՝ հունական շողջողուն առասպեկտների տեսքով:
2. Դարաշրջանի վաղնջական շունչը, սակայն, տիրել էր նրանց, քևաթափ արել. հաջողությունը հետզինու թերքում էր նոր ցեղի կողմը:
3. Հելլենական ափերի և Սիցերկրականի կենտրոնում գտնվող կղզիների բնակիչները տեսնում էին՝ ինչպես են ծովի խորքից ավելի ու ավելի շատ առաջատանքեր գալիս դեպի իրենց կողմը:
4. Բացված ձեռագրի մի կեսը թվում է՝ կապույտ ստվերի մեջ է, մյուսը՝ երկարյա եռաժանի մոմակալի դեղնակարմիր կայծկլտությների տակ, և նրա վրա փայլվելով նշմարվում էին նոտրագիր տողերը:
5. Նրանից քիչ հեռու՝ կաղնեփայտե սևացած գրակալի առջև՝ կապարե գրիշը ատամների մեջ սեղմելով, քսանամյա Աստվածատուրը թերքում էր հայ-լատիներեն քառարանը:

**198. Նշել այն նախադասությունների համարները, որոնցում կետադրական սխալ կա:**

1. Իմ՝ ինժեներական դպրոց ընդունվելու արիուվ սրտի ավելորդ գեղումներ չեղան, որոնք սվարտվում են գրկախառնումներով կամ մեջք թփրփացնելով:
2. Մարդ պեսք է վարժ լիներ նրանց՝ խորաքարույց և խոսուն աշքերի շարժումներին, որպեսզի կարողանար նկատել, որով մեկը մյուսին հայտնում էր՝ ժամանակն է:
3. Այցելողը կարող է տեսնել մարդկության վաղնջական ժամանակների՝ առեղծվածներով լի կյանքի պատկերը՝ Հին Եգիպտոսն իր քենոներով, Բարելոնն ու Ասորեստանն իրենց գրանիտե մորուքավոր ցլամարտերով:
4. Հայր Վրբանեսի՝ կղզու մասին պատմությունն ինձ ծանոթ էր. Սիսիար Սեբաստացին այն ստացել է Վենետիկի հոգենոր խորհրդից և հայ կաթոլիկական միաբանություն հիմնադրել:
5. Թող ինձ ներեն աշխարհի չորս ծագերում ապրող վանեցիները, եթե իմ վեպի՝ ընթերցողին անսովոր մեծ ու փոքր կերպարները ներկայացվեն ոչ որպես սրբեր:

**199. Նշել այն նախադասությունների համարները, որոնցում կետադրական սխալ կա:**

1. Ահա և ինքը՝ վարտունվեցամյա Վիլյամ Սարոյանը՝ Ֆրեզնոյի հյուրանոցներից մեկի նախարարում կանգնած:
2. Ես, կանգնած տաճարի կենտրոնում, նայում եմ վեր. հպարտ եմ, որ այնտեղ՝ ամենավերևում՝ երկնքին մոտիկ՝ այն հրաշք զմբերն է, որ վերակառուցել է Տրդատ ճարտարապետը:
3. Մեր ուղեկարը՝ շատ գեղեցիկ մի թրքուիկ՝ Ստամբուլի համալսարանն ավարտած, ամենայն մանրամասնությամբ պատմում էր համարյա բոլոր որմնանկարների ու խճանկարների մասին:
4. Մեզ պատմում է նաև միջնադարյան զմբերի կործանվելու և վերակառուցվելու մասին, բայց, հասկանալի է չի տալիս Տրդատ ճարտարապետի անունը:
5. Սուրբ Սոֆյայի տաճարն անգամ չորս կողմից շրջապատված է մինարեներով. քիստոնեական շքեղաշուր տաճարը հետագայում մզկիթի է վերածվել և կցվել են այդ չորս մինարեները:

**200. Նշել այն նախադասությունների համարները, որոնցում կետադրական սխալ կա:**

1. Սարոյանը ինձ հարցրեց հորս՝ Մայրլ Առլենի մասին, որի հետ մտերիմ էր, որքան էլ նրանք՝ իբրև գրչեղբայրներ, տարբեր էին միմյանցից:
2. Շուրջըոլորը՝ ճամփեզրյա ողջ տարածում, միմյայն տախտակաշեն տնակներ էին երևում՝ ճանապարհաշինարարների ժամանակավոր կացարանները:
3. Ներքևում անդմիղային խորություններն էին, որտեղից հազիվ լսելի էր լինում անցնող գետերի խոլ դրդյունը, վերևում ուղղաձիգ ժայռեր, որ ամեն րոպէ սպառնում էին խորտակվել և ամեն ինչ ծածկել իրենց ահարկու փլատակների ներքո:
4. Մարդիկ, այդ անթափանց ու սաղարթախիտ անտառներին մերձենալիս, այնքան զարհուրելի զազաններից չէին վախենում, որքան քավուտ որջերում ապրող բնակիչներից:
5. Բայց եթե զա այն պահը, երբ դու քեզ վեր զգաս հասարակությունից, անմիջապես քո՞յ քեմը և զնա՞ Փարիզի արվարձանները. դու այնտեղ կգտնես շատ պարուիների, ինչպիսին դու ես:

**201. Նշել այն նախադասությունների համարները, որոնցում կետադրական սխալ չկա:**

1. Ախուրյան գետի արևմտյան ափին, ուր Տեկորի վտակը խառնվելով բարձունքից գահավիժող ջրերին՝ ստեղծում է ջրապարփակ մի եռանկյունի, կառուցված էր հինավոր քաղաք Բագարանը:
2. - Քո խոնարի ծառան, մեծափառ տե՛ր, գոհ է արդեն այս ընդունելությունից, որին երևի արժանի չէ,-ասաց իշխանը համեստությամբ:
3. Միջնաբերդ տանող ճանապարհը, անցնելով ապառաժների ու դարուփոսերի վրայով, դառնում էր դժվարագնաց, իսկ խմբով այցելողների համար ընդհանրապես անանցանելի էր:
4. Նա չէր նայում իր առջև քացվող գեղեցիկ տեսարաններին՝ ո՞չ Արագածը, ո՞չ Երասխը, ո՞չ Արշարունյաց ձորահովիտը և ո՞չ գեղադիր Բագարանը չէին գրավում վեհափառ հոր ուշադրությունը:

**202. Նշել այն նախադասությունների համարները, որոնցում կետադրական սխալ կա:**

1. Հակառակ դրա, Կոմիտասը պարապում էր զօրուգիշեր:
2. Տպավորությունը ցնցող էր՝ ունկնդիրներից ոմանք աշխատում էին վերարտադրել լսած հոգեցունց մեղեղիները:
3. Գերմանիայի մայրաքաղաքի՝ աշխարհում հայտնի երաժշտական դպրոցի ռեկտորը քննում էր հայաստանցի հոգևորականին:
4. Կոմիտասը բացատրում է, ինչքան են երգերի բառերն ու մեղեղիները համահուն:
5. Գոյություն ունի անվիճելի մի ճշմարտություն. այս կամ այն ժողովրդի ներկան հասկանալու համար, անհրաժեշտ է իմանալ նրա վաղնջական պատմությունը:

**203. Նշել այն նախադասությունների համարները, որոնցում կետադրական սխալ կա:**

1. Երիտասարդը հետ նայեց. դիմացը կանգնած էր փարթամ մորուքով մի վանական՝ մագաղաքը սեղմած դալուկ ձեռքերի մեջ:
2. Բայրոնը հափշտակությամբ ծանրացավ վանքի հնագույն մագաղաքներին, նրան անշափ հուզել էին հայերի հարուստ մշակույթն ու արյունալի պատմությունը:
3. Մատենադարանում համակ ուշադրություն դարձած՝ լուր էին ու ներամփոփ, ինձ թվում էր՝ նրանց ակնկալիքները հօդս էին ցնել:
4. Ես չանդրադարձա հունգար բարեկամիս խոսքին. այն ժամանակ ես դեռ անհաղորդ էի Մատենադարանի հիմքերին ու արմատներին:
5. Սարոյուր Առաջինը ասութերեն իր մի հիշատակարանը փորագրել է տվել մի քանի տեղ, միայն Վանի ժայռին՝ շինարարական քարերի վրա, նրանցից երեք հատ է գտնվել:

**204. Նշել այն նախադասությունների համարները, որոնցում դերբայական դարձվածները չպահպանվեն:**

1. Ցորեն տեսնելիս ճնճղուկի աչքին թակարդ չի գալիս:
2. Աշտարակի գլխից մեկն ահա ծայն է տալիս քարափը քարձրացողին:
3. Բոցերի լեզուները ընդհարվելով բնության հակառակ տարրի ջրի հետ արձակում էին դիվային քրքիջներ:
4. Նա չէր տեսնում մոխրի մեջ խաղացող երեխաներին:
5. Երիտասարդի ամենամեծ երազանքը Վանա լճի անկրկնելի գեղեցկությունը նորից տեսնելն էր:

**205. Նշել այն նախադասությունների համարները, որոնցում դերբայական դարձվածները չպահպանվեն:**

1. Դարպասի մոտ իրիկնապահին նստելը պապիս հին սովորությունն էր:
2. Լառ-Մարգարի համար ամենից մեծ հաճույքը այգին ու արտերը ջրելն էր:
3. Ներս մտավ Շուշանիկը դաշտային ծաղիկների մի փունջ քոնած:
4. Մի վայրկյանում շողի դառնալով ջուրը ավելի էր բորբոքում կրակը:
5. Հոգնած երկար ճանապարհից հեծյալը իջավ ձիուց և նստեց ծառի տակ:

**206. Նշել այն նախադասությունների համարները, որոնցում տրոհության միայն մի տեսակի նշան (ստորակետ, բութ կամ միջակետ) պիտի դրվի:**

1. Առաջին անգամ ես զգացի թե արտաքին կոպտության կեղևի տակ ինչպիսի նուրբ լիրիկական հոգի ունի նա բարդ բազմակողմանի շատ հակասություններից հյուսված հոգի որի հետ սակայն ահեղ պատերազմի մեջ էր:
2. Լույս տեսավ Զարենցի նոր ժողովածուն «Գիրք ճանապարհի» վերնագրով նոր տագմապներ բերելով բանաստեղծի տագմապներով լի առօրյային:
3. Մեծ է այն մարդու ուրախությունը որը հանդիպելով իր սիրած հեղինակին ծանոթանում է նրա հետ մանավանդ այն տարիքում երբ ինձ թվում էր թե բանաստեղծները չեն ուսում չեն խմում և որ նրանց խորք է այն ամենը ինչ մարդկային է առօրեական:
4. Ես իմացա որ նա կարսեցի է սովորել է տեղի ռեալական դպրոցում պատերազմի ժամանակ եղել է հայկական կամավորական մի խմբում ապա անցել է Հյուսիսային Կովկաս այնտեղից Ռուսաստան:

**207. Նշել այն նախադասությունների համարները, որոնցում տրոհության միայն մի տեսակի նշան (ստորակետ, բութ կամ միջակետ) պիտի դրվի:**

1. Քանի որ Իզաբելլան իմ հայրենակիցն է անկասկած ընտանիքի լավ մայր կլինի շնայած հայերեն լավ չգիտի:
2. Դուրս գալով բատրոնից և ամենքին իրաժեշտ տալով դիմեց մոտակա սրճարանը հուսալով կտեսնի երեկով առջևան խարտյաշ խոպովներով ու նուրբ դեմքով:
3. Ես գիտեմ մարդկանց որոնց եսամոլությունը սահման չի ճանաչում և ցավոք սրտի նրանց մեջ կան նաև տաղանդավոր մարդիկ որ հասարակությանը զգալի օգուտ են տվել:
4. Խմբագրական աշխատանքների ժամանակ երբ Զարենցը կարդում էր Թումանյանի երկերի և հայտնի և անհայտ հատվածները նրա մեջ նկատում էի ոգևորություն առաջներում երբեք չնկատված:

**208. Նշել այն նախադասությունների համարները, որոնցում կետադրական որևէ նշան չպահպանվի:**

1. Այդ աշնանը իրատարակչության համարարությամբ ուսումնասիրում էի բանաստեղծի ձեռագրերն ու արխիվը և ամեն մի ձեռագիր թերեկիս կարծես մի նոր աշխարհ հայտնագործում ինձ համար:
2. Ինչպիսի ցնցող տպագորություն քողեց մեզ երիտասարդ գրողներիս վրա նրա նոր գիրքը:
3. Սիրում էր հազնել երկար խալար կամ մտավոր աշխատանքով տարված մարդկանց հատուկ մեկ այլ տարօրինակ շոր և երբեք չէր հանդուրժում որևէ մեկի կողմից իր հագուստի վերաբերյալ արված որևէ դիտողություն կամ հեգնանք:
4. Բոլորին մեկ առ մեկ աչքի անցկացնելուց հետո հանդիսավոր կեցվածքով վեր կացավ նստած տեղից ու մոտենալով հերթով բարեւեց յուրաքանչյուրիս:

**209. Նշել այն նախադասությունների համարները, որոնցում կետադրական որևէ նշան չպիտի դրվի:**

- Պատուհանի մոտ ծերունին հին գլխարկը գլխին անձրևանոցի մեջ կուշ էր եկել և ծխում էր ու նայում դրւու:
- Խմբագրությունում նստած էին երկու գրողները և սովորականի նման քարձրաճայն քննարկում էին ինչ-որ գործնական հարց կամ երկի բանավիճում նոր գրականության ու նրա նշակմերից որևէ մեկի ստեղծագործության շուրջ:
- Նրա բնավորության զծերը լրացնելու համար պետք է ավելացնեմ զրույցների ու քննարկումների ժամանակ նրան հասուկ անհամբերությունն ու հակառակորդների հետ վիճաբանելիս դրսորվող կրոպտությունը:
- Եվ ահա նրա համար ծանր այդ օրերին ինքս էլ ակամա մասնակից դարձա նրա հակառակորդների կազմակերպած հալածանքներին:

**210. Նշել այն նախադասությունների համարները, որոնցում կետադրական որևէ նշան չպիտի դրվի:**

- Արձանագրությունը կազմելուց ու չորս հոգով ստորագրելուց հետո նրանք անմիջապես վերադարձան գրասենյակ և շարունակեցին կիսատ թողած գործը:
- Արուսի հայացքը կանգ առավ Ռուբենի վերնաշապկի սպիտակ թելով կարած սև կոճակին:
- Կարծես ինքը կանգնած էր բորբոքված խարույկի մոտ և նրա այտերն այրվում ու այրվում էին ներքին ջերմությունից:
- Առավոտվա ժամերգությունից հետո Ռուբենը երկար կանգնած մնաց եկեղեցու վեհաշուր և սալարկված բակում:
- Հեգնական ժայռու շրջունքներին Ավետը նայում էր տնօրենին ու սպասում նրա հրամաններին:

**211. Նշել՝ տրված համարների դիմաց գրվածներից որոնք կան տվյալ հատվածում  
(նախադասությունները կետադրված չեն):**

*Լևնի ծանր հառաջանքները ողբը հեծկլտամքը կտրատում էին սիրտս: Սայրը Ամասսը հուսահատությունից չփառեր ինչ ամեր: Ծանոթ նախատիմները խնդրում էին Լևնին շարունակել հաճախել պանդոկները և նվազել խոստանալով նրա համար նոր կիրառ գնել: Մի օր վերջապես նա գնաց «Արքայական յախտա» մի նոր կիրառ ձեռքին: Մի չնչին գումար դարձյալ վերականգնեց նրա վշտերից փշրված հոլյսերը:*

- բացահայտիչ
- տրոհվող հատկացուցիչ
- բազմակի անդամներ
- տրոհվող որոշիչ
- տրոհվող դերբայական դարձված

**212. Նշել՝ տրված համարների դիմաց գրվածներից որոնք կան տվյալ հատվածում  
(նախադասությունները կետադրված չեն):**

*Երբ հասավ բերդասարի ստորոտիմ երևաց Գարդմանը սպիտակ պարիսպներով հզոր աշտարակներով որոնք բարձրանում էին բերդի արևմտյան կողմից և աջ ու ձախ ծգվելով միանում հյուսիսային մասի անմատչելի լեռնալանջին: Իշխանը հիշեց որ թե ինը տարի առաջ յուր և արքայորդու Աշոտի մուտքն այս ամրոցը: Այն ժամանակ արդարև նոյնական չէր իր սիրտը:*

- տրոհվող դերբայական դարձված
- բացահայտիչ
- տրոհվող հատկացուցիչ
- բազմակի անդամներ
- տրոհվող որոշիչ

## ԲԱԺԻՆ 5 ԿԱՊԱԿՑՎԱԾ ԽՈՍՔ

### 1. Նշել այն մտքերի համարները, որոնք չեն բխում տեքստի բովանդակությունից:

16 երկրներից հավաքված 250 հոգուց բաղկացած զիտական մի բնկերություն գրաղվում է զիտուրյան համեմատաբար նոր բնագավառով՝ մումիաների արտադրումով, որի նպատակը վերջիններիս բժշկական քննության ենթարկելն է: Խորի հանդիպումներից մեկը կայացել է վերջերս Դետրոյուտում: Ուսումնասիրության առարկան մի եզրակացնություն մումիա էր՝ շիրմված 2000 տարի առաջ: Հետազոտության ընթացում քննվեցին բոլոր օրգանները՝ բացի ուղեղից. այն բացակայում էր: Կա տեսակետ, ըստ որի՝ մինչ բաղամացումը եզրակացները հեռացրել են ուղեղը, ապա ամրող մարմինը ծածկել են քանի շերտ հեշտ ներծծվող կտորով և պատել սուպայագիպով հագեցած խուսափվ: Բազմաթիվ մումիաների քննությունը պարզեց նաև, որ հնադարում նոյնապես մնձ տարածում են ունեցել սրտամության, հողային հիվանդությունները, իսկ ռենտգենոսկոպիկ սարքերը փաստեցին ողնաշարային ախտերի տարածվածության մասին:

1. Արտաշիրիմված մումիաների ուղեղը հանվել է մահացածների քթանցքերով:
2. Դետրոյուտ եզրական մումիաների մերօրյա հետազոտությունների կենտրոնն է:
3. Գիտնականները վերջին տարիներին փաստում են ռենտգենոսկոպիկ սարքերով հայտնաբերվող ողնաշարային տարբեր հիվանդությունների երիտասարդացում:
4. Ուսումնասիրությունները փաստում են, որ հին ու նոր ժամանակների մարդիկ հաճախ տառապել են նույնատիպ հիվանդություններով:

### 2. Նշել այն մտքերի համարները, որոնք չեն բխում տեքստի բովանդակությունից:

Երկրաշարժի ուժգնությունը չափվում է էրգով. այն ֆիզիկայում ընդունված միավոր է (մեկ կիլովատ-ժամը հավասար է 36 միջիարդ էրգի): Ի դեպ, Հերոսիմայի վրա ընկած ատոմային ռումքի էներգիան հավասար էր 8 անգամ 10-ի 20 աստիճան էրգի: Մարդկությունը վաղուց է գլուխ կոտրում երկրաշարժը կանխագուշակող կամ գրանցող սարքեր ստեղծելու վրա: Մ.թ.ա. 132 թ. շինացի Զժամ Խենքը հնարել էր սեյսմոսկոպ՝ բաղկացած զանգից և ներառում կախված լեզվակից: Զանգի շրջագծի վրա կային անցրել, որոնցից դրաս էին զայխ վիշապի գլուխներ. նրանց բերանում մեկական գնդիկ կար: Հենց երկրաշարժ էր սկսվում, լեզվակը ծոճվում էր, հարվածում գնդիկներից մեկին, որն ընկնում էր ցածում նատած մնացած գորտի թերամը: Գնդի հարվածից գորտը տուր ձայն էր հանում աղդարաբերով ստորգետնյա ցնցման մասին և ցույց տալով նրա ուղղությունը: Նոյն սարքի գնդիկները 1703 թ. ֆրանսիացի ֆիզիկոս Ժան Օտֆրոն փոխարինեց սնդիկով լի փոքր գուտով: Մեկ դար անց սարքը համարվեց իր ռեգիստր ունեցող պտտվող թմրուկով, որը նշում էր երկրաշարժի սկսվելու ժամանակը: 1888 թվականից սկսեց կիրառվել տրումնետրը՝ ճոճանակ՝ ծայրին ասեղով, որը գժեր էր խազում մրուտած բորին՝ ցույց տալով երկրաշարժի պատկերը: Նման սարքերի հետազա կատար, լազորումը թույլ տվեց գրանցել անգամ 0.001 միլիմետրի տատանումները:

1. Ժամանակակից սեյսմիկ սարքերը տատանումները չափում են միլիմետրերով:
2. Երկրաշարժ գրանցող առաջին սեյսմոսկոպի հեղինակը ցնցումները գրանցում էր գորտերի զգայունության շնորհիվ:
3. Ֆրանսիացի ֆիզիկոս Ժան Օտֆրոն արդի սեյսմոգրաֆի հեղինակն է, որը պտտվող թմբուկ և ասեղ է ներմուծել սարքի մեջ 1888 թվականին:
4. Երկրաշարժի ուժգնությունը չափվում է էրգերով, որը հավասար է 8 անգամ 10-ի 20 աստիճանի:

### 3. Նշել այն մտքերի համարները, որոնք չեն բխում տեքստի բռվանդակությունից:

21-րդ դարը ցոյց տվեց, թե որքան կործանարար կարող են լինել կլիմայական փոփոխությունները: 2002 թվականի ջրհեղեղներից Եվրոպայում մի քանի հազար մարդ մահացավ. նույնը կարելի է ասել 2013թ. Ռուսաստանի արևելքում աշնանային հեղեղումների մասին: 2003-ի տապար Եվրոպական մասում 35.000 մարդու մահական պատճառ դարձավ: Գիտնականներն ավելի մոռայլ կանխատեսումներ են կատարում ապագայի վերաբերյալ, ինչպես՝ արևադարձային Քրիտանիա, մալարիայով տառապող Ֆրանսիա, անապատային Բապանիա: Արևադարձային մոծակները սպառական քան կլիմեն բարխարու գոտիներում, և դրանց բնակչություններու կազմունքը կատարում է վնասատուներ, երաշտները կիանգեցնեն ջրի պակասի, հաճախակի կդառնան համաձարակները, մոլորակի վրա պայքար կզնա ոչ թե էներգետիկ ռեսուրսների, այլ սննդի և ջրի համար: Վերջին հարյուրամյակում օդի ջերմաստիճանի բարձրացում է գրանցվել 0,3-0,7 աստիճանի սահմաններում, ինչի հետագա ավելացումները կիանգեցնեն Սառուցյալ օվկիանոսի սառուցների հալեցման, օվկիանոսի մակարդակի բարձրացման և շատ վայրերի ջրասուզման. կազմի մարդկանց մեծ տեղաշարժ մի վայրից մյուտը:

1. Թունավոր արտանետումներն ստեղծել են մոլորակի գլոբալ տաքացման վտանգ:
2. Եվրոպական երկրներում կկատարվեն կլիմայական փոփոխություններ, ինչից զերծ կմնան Եվրասիայի արևելյան հատվածները:
3. Կլիմայական փոփոխությունների պատճառով բարեխառն գոտիների բնակչությունը կիրանդան մինչ այդ անվնաս միջատների տարածած հիվանդություններու:
4. Համաշխարհային օվկիանոսի մակարդակի բարձրացումը կիանգեցնի աղետների և հատկապես էներգետիկ ռեսուրսների համար մղվող պայքարի սրացման:

### 4. Նշել այն մտքերի համարները, որոնք չեն բխում տեքստի բռվանդակությունից:

Հնում արևի վրայի բծերը մարդիկ համարում են սատանայի դավեր՝ չհասկանալով ո՞չ մագնիսական փոթորիկների բուն պատճառը, ո՞չ դրանց թողած ազդեցությունը: 19-րդ դարում նկատեցին, որ երր լուսատուն «քծավոր է դառնում», հաճախանում են հյուսիսափայլերը, գրանցվում են մագնիսական փոթորիկներ: Արդեն 20-րդ դարում ուսու տաղանդավոր գիտնական Ալ. Չիմևսկին նկատեց կենդանի օրգանիզմների վրա արևի ակտիվության ազդեցությունը և կիրառեց «արեգակնային եղանակ» տերմինը: Պարզեց, որ գեռնագնիսական դաշտում «ցնցումներից» առաջանում են ցածր հաճախության ուսուիսալիքներ, որոնք ազդում են մարդու արյան վրա՝ փոխելով նրա մածուցիկությունը: Մագնիսական փոթորիկներին արձագանքում է մարդկանց 60 տոկոսը: Ամենց շատ այդ ալիքները վնասակար են սրտին. հաճախացնելով սրտի զարկը՝ կարող են անսպասելի բարձր ճնշման և մահվան պատճառ դառնան: Նույն ազդակից խոտանում է արյունը, դանդաղում նրա հոսքը, առաջանում են զիսացավեր, միզրեններ, արագ և չպատճառարարանված թուլություն, խորեստերինի բարձրացում: Առաջանում է անքննություն, սրվում են նկրողները:

